

ԵՈՋՂԱՏԻ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒԹԵԱՆ
ՎԱԻԵՐԱԳՐԱԿԱՆ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

9(47.925)
2-11

ԵՈԶՂԱՏԻ ՀԱՅԱՍՏԱՆՈՒԹԵԱՆ ՎԱԻԵՐԱԳՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Պատրաստեց՝ ԳՐԻԿԷՐ

2165

Կախաղանեն

Կառավարիչ Քենալ կը յայտարարէ.
«Սիրելի ազգակիցներ,
ես թուրք պաշտօնեայ մըն եմ:
Ես գործադրեցի այն հրամանը զոր
ստացայ: Իմ պարտականութիւնս
կատարեցի խղճամիտ կերպով:
Կ'երդնում որ ես անմեղ եմ:»

ՆԻԻ ԵՈՐԹ

1980



Ո՞վ է հեղինակը

Գրիկէր միջին արեւելեան ծնունդ է:

Յաճախած է համալսարաններ թէ՛ Արեւելքի եւ թէ՛ Եւրոպայի մէջ:

Հմտացած է արեւելեան եւ արեւմտեան լեզուներուն:

Լուրջ հետազօտութիւններ կատարած է միջին արեւելեան, երոպական, ամերիկեան մատչելի դիւաններուն մէջ, երկար տարիներ:

Զանազան է միշտ փնտռել եւ հասնիլ սկզբնաղբիւր վաւերագրերու բնագիրներուն:

Երբեք գոհացած չէ հրատարակուած ապացոյցներով եւ կարծիքներով որոնք ուսումնասիրութեան կարօտ են վաւերագրերու վաւերականութեան եւ հասկացողութեան տեսակէտներով:

Հաստատած է սկզբնաղբիւր վաւերագրերու վաւերականութիւնը նախ զանոնք գործածելէ առաջ, եւ անոնց իրարու հետ աւրընչութիւնը:

Խորապէս ուսումնասիրած է հրատարակուած եւ հրատարակելի վաւերագրերը, յատկապէս թուրք պաշտօնական վաւերագրերը իրենց սկզբնական թէ՛ պարզութեան եւ թէ՛ բարդութեան մէջ: Այս պաշտօնական վաւերագրերը առաջին անգամ ըլլալով լոյս կը տեսնեն այս համառօտ հատորին մէջ:

Սկզբնաղբիւր վաւերագրերու բնագիրները, զանազան լեզուներով թարգմանութիւնները բաղդատուած են իրարու հետ:

Խորհրդակցած է կարող պատմագէտներու հետ, վաւերագրեր թարգմանող մասնագէտներու, քննադատներու, քաղաքագէտներու հետ որոնք իրենց գրութեանց մէջ շատ բան ծածկած են:

Փորձած է մօտենալ թրքական դիւաններու մօտ 296 թղթածրարներուն. հանդիպած է Թուրքերու, մասնաւորապէս Թուրք Պատերազմական Ատեանէն վերապրողի մը հետ:

ԵՌԶՂԱՏԻ ՀԱՅԱՍՏԱՆՈՒԹԵԱՆ ՎԱԻԵՐԱԳՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Պատրաստեց

ԳՐԻԿԷՐ

Ամէն իրաւունք վերապահուած է գրողին:
Ոչ ոք թոյլատրուած է մասնակի կամ ամ-
բողջական հատուածներ վերարտադրել
կամ թարգմանել առանց կանխապէս գր-
րաւոր արտօնութիւն առնելու:

KRIEGER
PO Box 357
Forest Hills, N.Y. 11375

YOZGADI HAYASBANUTIAN
VAVERAKRAGAN BATMUTIUN

(Documentary History of the Armenocide in Yozgat.)

Copyright © 1980 by Krieger.

Library of Congress Catalog Card Number 79-693349.

No part of the documents published in this book for the first time may be reproduced or translated in any language without written permission from the publisher.

Printed in the United States of America.

ՆԻԻԹԵՐՈՒ ՑԱՆԿ

	Էջ
Նախաբանի տեղ թրքական խոստովանութիւն	11
Նիւթերու ցանկ	
Ներածութիւն	
Խոստովանութիւններ	13
Վաւերագրերու ուսումնասիրութիւն	31
Պատերազմական ատեաններ	39
Օսմանեան Մերակոյտը եւ Երեսփոխանական ժողովը մեծագոյն խոչընդոտ արդարութեան	46
Թուրք Պատերազմական Ատեանը կը հաստատէ թուրք պաշտօնական վաւերագրերու վաւերականութիւնը	56
Ո՞ւր են վաւերագրերը	67
Հայասպանութեան վերաբերեալ վաւերագրերու հաւաքում.	81
Գլուխ Ա. Եոզղատ գաւառ 1914ին	99
Գլուխ Բ. Զինուորական եւ քաղաքային նուիրապետութիւնը Անգարայի նահանգին եւ Եոզղատի գաւառին մէջ.	102
Գլուխ Գ. Զինուորական եւ քաղաքային ինչխանու- թիւններէն գրեաղաս՝ Երիտասարդ Թուրքերու Կուսակցութիւնը	104
Գլուխ Դ. Զինահաւաք	112
Գլուխ Ե. Եոզղատի Հայերու կոտորածին յապաղումը	117

Գլուխ Զ. Ճէմալ Պէյ եւ Սալիմ Պէյ ալ Պատասխանատու Եողղատի Հայերու կոտորածին	130
Գլուխ Է. Կոտորածի պատրաստութիւն եւ արդարացում	138
Գլուխ Ը. Կրօնափոխութիւն	162
Գլուխ Թ. Ճէմալ Պէյի վկայութիւնը	176
Գլուխ Ժ. Առաջնորդ Ներսէս Դանիէլեանի Եպիսկոպոսական մատանին	185
Գլուխ ԺԱ. Հայ պաշտօնեաներու պաշտօնանկութիւնը	198
Գլուխ ԺԲ. Արդարութեան նախարարի մեծ դերը	207
Գլուխ ԺԳ. Երկու տեսակ Թէչքիլաթը Մախսուսա	215
Գլուխ ԺԴ. Տեղահանութիւն եւ Կոտորած գործնականապէս նոյնիմաստ	265
Գլուխ ԺԵ. Պաշտօնական կահացուցակ	273
Գլուխ ԺԶ. Գերման Զօրավարներ կը ստորագրեն Հայերու Տեղահանութիւնը	290
Գլուխ ԺԷ. Թուրք Պատերազմական Ատեանի Մահավճիռը	297
Գլուխ ԺԸ. Մահավճիռի վերլուծումը	305
Գլուխ ԺԹ. Կառավարիչ Քէմալ Պէյի կախաղանը	322
ՅԱԻԵԼՈՒԱԾՆԵՐ	
Ա. Եողղատի Զօրակայքի Հրամանատար Հազարապետ Սալիմ Պէյի պաշտօնական վկայութիւնը	341
Բ. Պաշտօնական Հարցարան	365
Թէվֆիգ Պէյի	365
Քէմալ Պէյի	371
Քէմալ Պէյի եւ Թէվֆիգ Պէյի	375
Ֆէյեազ Պէյի	378
Շահապէտին Պէյի	381
Պատերազմական Նախարարութեան	385

Գ. Բատի Պէյի պաշտօնական վկայութիւնը	387
Դ. Եողղատի Աւագ Թուրք Միւֆթէրի Բիֆաաթի խնդրագիրը	396
Ե. Քէմալ Պէյի պաշտօնական վկայութիւնը	404
Զ. Էօթէնի Վառվառեանի պաշտօնական վկայութիւնը	422
Է. Հայ զինուոր Արտաշէս Թաշճեանի պաշտօնական վկայութիւնը	431
Ը. Եողղատի ներկայացուցիչ Երեսփոխան Շաքիր Պէյի պաշտօնական վկայութիւնը	446
Թ. Եողղատի Միւթէսարըֆ Լեւոն Էֆէնտիի վաւերագրական տեղեկագիրը	449
Անձնանուններու ցանկ	455

ՆԱԽԱԲԱՆԻ ՏԵՂ

ԹՐԲԱԿԱՆ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ

Պոլիս հրատարակող թուրք կիսապաշտօն Ալեմտար օրաթերթը ակնարկելով թուրք Պատերազմական Ատեանի արձակած առաջին մահավճռին կը հաստատէր թէ Պոլիս արդարութեան Պալատին ճակատը ոսկետառ կը փայլի հետեւեալ նշանարանը.

«ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱՔԱՐՆ Է:»

Ալեմտարի խմբագիրը հարց կու տար. «Արդե՞օք թուրք ազգը արդարութիւն կ'ընէ:» Ալեմտար այս հարցումին կը պատասխանէր թէ անոնք որոնք քարոզչութիւն կ'ընեն ազգին դէմ որ թուրք կառավարութիւնը հաստատած էր իրր պետական մնայուն քաղաքականութիւն անարդարութեան կիրարկումը ոչ-իսլամ ազգերու դէմ: Արաբներն ալ նկատուած էին ոչ թուրք:

Ալեմտար կը շարունակէր իր խոստովանութիւնը. «Տեղահանութեան եւ կոտորածներու դատաւարութեան ընթացքին հաստատուած խժոժութիւնները երեւան հանեցին իրենց ամբողջական մերկութեամբ թէ այս երկրին մէջ իրաւունք եւ արդարութիւն չէ որ կը տիրեն, այլ կեղեքում ու ոճիր կը կազմեն կառավարութեան որդեգրած վարքագիծը:

«Զփորձենք Հայերուն վերագրել յանցանքը, որովհետեւ չըկարծենք որ աշխարհ ապուշ է:

«Կողոպտեցինք ինչքերը այն մարդերուն զորոնք տեղահանեցինք եւ ջարդեցինք:

«Գողութիւնը իբր օրէնք վաւերացուցինք մեր Խորհրդարանին եւ Մերակոյտին մէջ:

«Մեր Երեսփոխանները եւ մեր Մերակուտականները անկանոն ջրհանկիրներու (Թուլումպաճի Գ.) զօրանոցին անդամներ ընտրուած չէին:

«Մեր Արդարութեան Նախարարը բանտերու դռները բացաւ:

«Կազմակերպեցինք հրոսախուժքեր մորթելու համար հայ մանուկները, ծերերը, այրերն ու կիները:

«Այսուհանդերձ մեր Արդարութեան նախարարը բարձր կըրթութիւն ստացած էր:

«Այս բոլորը մենք ըրինք:

«Միութենականներու անկումէն ետք ի՞նչ կ'ընենք մենք վերջնականապէս հեռանալու համար այս անցեալէն: Ապացո՞յց կու տանք ազգային կորովի մը կիրարկելու համար օրէնքը այն հրոսախուժքի պետերուն դէմ որոնք ոտնակոխ ըրին Արդարութիւնը եւ քուրջի վերածեցին մեր պատիւը եւ մեր ազգային գոյութիւնը:»¹

ՆԵՐԱՄՈՒԹԻՒՆ

Ուսումնասէր հետազօտողը կրնայ թուրք պաշտօնական եւ անպաշտօն խոստովանութեանց հատորներ կազմել եթէ ժամանակ եւ դրամ նուիրէ եւ լրջօրէն աշխատի:

Խալիտէ Էտիպ Հանըմ 21 Հոկտեմբեր 1918 կիսապաշտօն յայտարարութիւն մը հրատարակեց Վազիթ թերթին մէջ.

«Մեր զօրաւոր օրերուն՝ քրիստոնեաները եւ մասնաւորաբար Հայերը միջնադարեան դրութեամբ աշխատեցանք բնաջնջել ծառայութիւն մատուցանելու համար թուրքերուն:

«Այսօր մեր ազգային կեանքի ամէնէն տխուր եւ սեւ օրերը կ'ապրինք: Ամերիկա եւ Անգլիա մեզ կը նկատեն տէրութիւն մը, որ իր անմեղ հպատակները եւ անոնց զաւակները ջարդած է:

«Այժմեան մեր կառավարութիւնը կը յայտարարէ թէ Հայերը իրենց տեղերը պիտի վերադարձնէ:

«Կը հաւատանք կառավարութեան բարեացակամութեան, բայց չենք հաւատար որ նահանգներու գործադիր իշխանութիւնը պիտի կարենայ այս գործը գլուխ հանել արդարութեան սահմանին մէջ:

«Օտարներն ալ այս կարծիքն ունին:

«Եւ որպէսզի կարելի ըլլայ հաւատք ընծայել թէ մեր կառավարութիւնը իսկապէս որոշած է Հայերը իրենց տունները վերադարձնել, հարկ է հայկական հարցին մէջ Հայերու նպաստաւոր թուրքերէ, ինչպէս նաեւ Հայերէ եւ Ամերիկացիներէ խառն յանձնաժողով մը կազմել եւ անոր տալ ամէն իրաւասութիւն:»¹

Աւելի ուշ, Խալիտէ Էտիպ Հանըմ ԵԷԱԻ Կիւնի մէջ շատ կարեւոր յօդուած մը գրեց, դատապարտելով Երիտասարդ թուրքերու կուսակցութիւնն ու կառավարութիւնը Հայերու դէմ գործուած ոճիրներու մասին, որոնք կը ծանրանան ամբողջ թուրք ժողովուրդին վրայ: Ան իր յօդուածը կը վերջացնէր ըսելով. «Քաղաքակրթութեամբ ժողովուրդները պէտք չէ ենթարկուին թուրքերու ո-

1. Արարատառ թրքերէն Ալեմտարէն գաղղիերէն թարգմանութիւնը տես La Renaissance, թիւ 139, Դշ. 14 Մայիս 1919: Ալեմտար թուրք կառավարութեան կիսապաշտօն թերթն էր, Բարձրագոյն Դրան եւ Սուլթանի Պալատին բանբերը:

գործածութեան. Թուրքերը ապացոյց տուին որ իրենք անկարող են քաղաքակրթուած կառավարութիւն մը կազմելու:»²

Նախասյւս Հալէպի ապա Գոնիայի Կուսակալ
Ճէլալ Պէյի վկայութիւնը

Ճէլալ Պէյ՝ Պոլիս հրատարակուող Վագիթ Թուրք օրաթերթին ըրաւ հետեւեալ յայտարարութիւնները, որոնցմէ կը քաղենք մաս մը:

«Հայերու տեղահանութիւնը սկսաւ ամէն կողմ:

«Սկիզբը մենք դէպի Գոնիա ղրկեցինք այն Հայերը որոնք կը հասնէին (Հալէպ Գ) ամէն կողմերէ:

«Իսկոյն հրաման ստացանք (Պոլսոյ կառավարութենէն Գ) զանոնք Տէր Զոր ղրկելու:

«Կը խոստովանիմ թէ ես չէի հաւատար որ այս հրամանները եւ գործողութիւնները կը հետապնդէին Հայերու բնաջնջումը: Որովհետեւ չէի կրնար ենթադրել թէ մեր կառավարութիւնը կրնայ երբեք կարող ըլլալ այս կերպով բնաջնջել իր իսկ հպատակները, որոնք իր իսկ մարդկային դրամագլուխը կը կազմեն եւ որոնք պէտք է նկատուին երկրին գլխաւոր հարստութիւնը:

«Եւ ես կարծեցի թէ այս միջոցառումները տեղի կ'ունենային զինուորական պատճառներու համար ժամանակաւորապէս Հայերը ռազմաճակատի գօտիներէն հեռացնելու դիտաւորութեամբ:

«Եւ այս պատճառով հեռագիր ղրկեցի ներքին գործերու նախարարին խնդրելու համար մասնաւոր գումարներ՝ բնակարաններ կառուցանելու եւ անոնց մէջ հաստատելու համար (տեղահանուած Գ) Հայերը:

«Փոխանակ դրամական յատկացումներու՝ ինծի ղրկեցին մարդ մը «տարագրեալները տեղաւորելու համար գործակատար» տիտղոսով, որ իրապէս պաշտօն ունէր տարագրելու (տեղահանուած Գ) Հայերը զանգուածային կերպով:

1. Փամսնակ, 22 Հոկտեմբեր 1918:

2. Լա Րընէսան, թիւ 13, Կիրակի, 22 Դեկտեմբեր 1918, առնուած Սոփ Կիսմէն:

«Հեռագրով ու նամակով շարունակ յիշեցուցի Բարձրագոյն Դրան որ այս միջոցառումները որոնք կը գործադրուէին Հայերու դէմ, ամէն տեսակէտով հակառակ էին երկրի շահերուն:

«Ի մէջ այլոց գրեցի հետեւեալը. «Հայ ցեղը (Թուրքիոյ Գ) բնակչութեան կարեւոր մաս մը կը կազմէ:»

«Հանրային հարստութեան գրեթէ քառորդը Հայերու ձեռքն է:

«Հայերը իրենց ձեռքին մէջ ունին երկրի վաճառականութեան եւ ճարտարարուեստին գրեթէ կէսը:

«Բնաջնջել (Հայերը Գ) համագոր է կայսրութեան քանդումին, կորուստ մը որ կարելի պիտի չըլլայ վերագտնել դարերու ընթացքին:

«Եթէ աշխարհի վրայ մեր բոլոր թշնամիները իրարու միանային մեզի դէմ եւ ուզէին այսպիսի մեծագոյն կորուստ մը պատճառել մեզի, պիտի չկարենային յաջողիլ:

«Կառավարութենէն ոչ ոք ուզեց լսել իմ խորհուրդս:

«Պոլիս գացի եւ ջանացի հասկցնել իսկական իշխանութեանց այս նախաձեռնութեան վնասները:

«Դժբախտաբար, ոչ ոք ինծի մտիկ ըրաւ:

«Իմ կարծիքս երբեք չձածկեցի: Պոլիս եւ Գոնիա ամէնուն յայտարարեցի որ ես այս միջոցառումը մեր երկրին համար կործանարար կը գտնեմ եւ չեմ կրնար մասնակցիլ անոր:

«Այս յայտարարութիւնս կրկնեցի Գոնիայի երեսփոխաններուն որոնք այն ատեն Գոնիա կը կենային: Այս երեսփոխաններէն մին մայրաքաղաքէն վերադարձին ինծի հաղորդեց Կեդրոնական Կոմիտէի անդամներէն մէկուն (Նազըմ Պէյի Գ) խնդակցութիւնը թէ՛ այս միջոցառումները վճռուած էին Կեդրոնական Կոմիտէի խորախորհուրդ կշռադատումէն ետք եւ թէ անոնք չէին կրնար որեւէ փոփոխութեան ենթարկուիլ, եւ թէ Հայերու տեղահանութիւնը, որ այժմ տեղի կ'ունենայ, մաս կը կազմէ (Թուրք Գ) ազգային գաղափարականին, եւ թէ ես ալ պարտաւոր էի այս գաղափարականին զոհել իմ անհատական համոզումներս:

«Երեսփոխանը ինծի զգացուց որ եթէ հակառակ էի այս ձեռով, իմ տեղս ուրիշ մը պիտի ղրկուէր (Հալէպի Կուսակալ Գ):

«Այս բոլոր սպառնալիքները չկրցան փոխել իմ ընթացքս...»³

3 Լա Րընէսան, թիւ 5, Ուրբ. 13 Դեկտեմբեր 1918, Թարգմանուած Վագիթ Թուրք օրաթերթէն:

Կիսապաշտօն Ալեմտար հետեւեալ կերպով կ'արտայայտուի Սաիտ Հալիմ եւ Թալաաթ Փաշաներու մասին:

«Վախեցին, սպաննեցին, աքսորեցին, մորթեցին եւ միեւնոյն ատեն անոնք Հայերը մորթել, աքսորել եւ սպաննել տուին:»

«Անոնք կրկնակի մարդասպաններ են որովհետեւ հրամաններ արձակեցին սպաննելու եւ սպաննեցին:»⁴

Թուրք Հատիսաթ օրաթերթը կը բացատրէ Հայերու տեղահանութեան օրէնքը. «Կոտորածներու հեղինակները ստիպեցին կառավարութիւնը որ պատրաստէ եւ հրատարակէ տեղահանութեան օրէնքը: Եւ իրականացնէ կոտորածի գործը:

«Եթէ անոնք ատեանի առջեւ հանուին, Օսմանեան Կայսրութեան ժողովուրդը կրնայ քաղաքակրթուած աշխարհէն արդարութիւն պահանջել:»⁵

Թուրք սպայ Ահմէտ Պէյ պաշտօնապէս վկայեց հետեւեալը.

«Գիշեր ատեն զինուած մարդիկ եկան զիս արթնցնելու: Ինծի յանձնեցին կնքուած պահարան մը, որ կը պարունակէր Հայերու տեղահանութեան հրամանը:

«Իմ հրամաններուս ենթակայ քաղաքային պաշտօնեայ մը կարգեցին: Ինծի տրուած էր լիազօր իրաւասութիւն խնայելու նոյն պաշտօնեային կեանքը, եւ կամ զայն սպաննելու, եթէ չհնազանդէր իմ հրամաններուս:

«Նոյն իրաւունքը տրուած էր նաեւ զինուորական հրամանատարին որ իմ մեծաւորս էր. ասիկա կրնար զիս մեռցնել եթէ չկատարէի իր հրամանները: Այսպէս է զրութիւնը բարձրագոյն հրամանատարէն սկսեալ մինչեւ ամէնէն ստորակարգ սպան:

«Հրամանը բացարձակ էր, եւ իբր զինուորական ես հնազանդեցայ:»⁶

Հալէպի կուսակալ ձէլալ Պէյ ներքին գործերու նախարար Թալաաթ Պէյէն Սեպտեմբեր 1914ին ստացած էր մասնաւոր հրաման տարագրելու Զէյթունի Հայերը:

Օսմանակ, 18 Նոյեմբեր 1918, ձէլալ Պէյի յայտարարութիւնը:

4. Լա Բընէսան, թիւ 127, Դշ. 30 Ապրիլ 1919:

5. Նոյն:

6. Նոյն, թիւ 114, Կիրակի, 13 Ապրիլ 1919:

Նոր Կեանք, թիւ 168, 13 Ապրիլ 1919: Տասներորդ նիստ:

Յիւնապետ Ահմէտի վկայութիւնը:

Իսթիքլալ Թուրք Թերթը «Արդար ըլլանք» յօդուածով կը հարցնէ. «Ինչո՞ւ համար սահմանադրութիւն հաստատեցինք:

«Միթէ՞ մեր նպատակը չէր վերջ տալ բռնակալութեան, զեղծումներու, յոռի վարչութեան, անարդարութեան, շահապատութեան... եւն:

«Այս հարցերուն պատասխանենք մեր ձեռքերը դրած մեր կուրծքերուն վրայ: Այսպիսի նախաձեռնութեան մէջ որեւէ յաջողութիւն արձանագրեցի՞նք:

«Ընդհակառակը, մենք հնարաւորութիւն ցոյց տուինք բազմացնելու անարժան դէպքեր զորոնք անհետացնել որոշած էինք եւ պակսեցնել մեր շարագործութիւնները:

«Համաշխարհային առաջին պատերազմը մեր մէջ յառաջացուց անասնութեան եւ անբարոյականութեան ոգին մինչեւ վերին աստիճան:

«Ուրանալ դառն ճշմարտութիւնը կը նշանակէ ուրանալ արեւու լոյսը:

«Այսօր մենք կը նմանինք նաւու մը որ ալիքներով ծածկուած է, եւ կորսնցուցած է իր նաւավարը եւ ղեկը:

«Մենք առանձին մնացած ենք, քիչ ատենէն նաւը պիտի ոչընչացնենք, մեր նուիրական շահն ու կեանքը պիտի կորսնցնենք:»⁷

* * *

Տիվանիէի երեսփոխան Ֆուատ Պէյի խոստովանութիւնը.

Օսմանեան Խորհրդարանի մէջ 4 Նոյեմբեր 1918ին, Հիւսէին Ճահիտ Պէյի նախագահութեան տակ գումարուած երեսփոխանական նիստի ընթացքին քննուեցան Հայերու տեղահանութիւնն ու կոտորածը:


Տիվանիէի երեսփոխան Ֆուատ Պէյի տասն յօդուածներով պահանջազիրը կարդացուեցաւ, որ կը դատասպարտէր Սաիտ Հալիմ եւ Ահմէտ Թալաաթ Փաշաներու երկու զահլիճները եւ կը պահանջէր անոնց անդամները յանձնել բարձրագոյն ատեանի դատավարութեան:

Ֆուատ Պէյի ամբաստանագրին հինգերորդ յօդուածը կ'ըսէր.

«Մարդկային օրէնքներու եւ մասնաւորապէս երեսփոխանա-

7. Լա Բընէսան, թիւ 173, Ծք. 22 Յունիս 1919:

2165



կան ժողովի ոգիին հակառակ առժամեայ օրէնքներ հրապարակելով երկիրը ոճիրներու թատերավայր դարձուցինք:»⁸

* * *

Ծերակոտական Ահմէտ Րիզայի խնդրագիր պահանջը

Ահմէտ Րիզա Պէյի նախագահութեան տակ Օսմանեան ծերակոյտը նիստ գումարեց 2 Դեկտեմբեր 1918ին: Նախագահը կարդալ տուաւ իր գրաւոր պահանջը. «Պատերազմի մեր մասնակցութենէն (30 Հոկտեմբեր 1914 Գ) մինչեւ Թալաթ Փաշայի դահլիճին անկումը (7 Հոկտեմբեր 1918 Գ) կառավարութեան կողմէ գործուած սխալներուն եւ ոճիրներուն, ջարդի, հրապարակային ոճրագործութիւններու, անձնական ապահովութեանց, կալուածներու եւ շէնքերու բռնագրաւումի պէս բոլոր Օսմանցիներուն հանդէպ հարստահարութիւններ եւ ոճիրներ գործուած ըլլալու համար պահանջած էի որ ընդհանուր դատախազութիւնը հանրային իրաւանց անունով դատ բանայ եւ ժամ առաջ երեւան հանուին ոճրագործներն ու արդարութեան յանձնուին:»⁹

Այս Թագրիդը Ծերակոյտին որոշումով 25 Նոյեմբեր 1918ին զրկուեցաւ գործադիր իշխանութեան:»⁹

Ահմէտ Րիզա Պէյի պահանջագրին պատասխանելով արդարութեան նախարար Ալի Մուլա Պէյ Հայերու կոտորածին պատասխանատուները դասաւորեց հետեւեալ կերպով.

«1. Իսկական յանցաւորները որոնք պիտի դատուին բարձր դատարանի մը առջեւ եւ որոնց վրայ կառավարութիւնը որեւէ իշխանութիւն պիտի չունենայ:

«2. Պաշտօնեաները որոնց մասին տարակարծութիւն կայ Նախարարներու Խորհուրդին եւ Պետական Խորհուրդին միջեւ: Կառավարութիւնը կ'ուզէ որ անոնք դատուին արտակարգ դատարաններու կողմէ մինչդեռ Պետական Խորհուրդը կը պնդէ որ անոնք դատուին պաշտօնեաներու համար ի զօրու եղող սովորական դատավարութեամբ:

8. Ժամանակ, 5 Նոյեմբեր 1918:

9. Նոյն, 13 Դեկտեմբեր 1918:

«3. Հասարակ ժողովուրդը որու մասին ոչ մէկ որոշում պիտի առնուի առ այժմ: Այս դասակարգի յանցաւորները պիտի դատուին հասարակ դատարաններու կողմէ հետզհետէ երբ անոնց դէմ դատ բացուի:

«Այն ոճիրները որոնք գործուած են ամբոխի զանգուածներու կողմէն պաշտօնեաներու հաւանութեամբ եւ մեղսակցութեամբ: Ասոնց դատավարութեան մասին ալ տարակարծութիւն կայ:»¹⁰

Արդարութեան նախարար Ալի Պէյ հետեւեալ յայտարարութիւնն ըրաւ Ծերակոյտի նիստի ընթացքին Ահմէտ Րիզա Պէյի պահանջի ընթերցումէն ետք. «Տարագրութեան ընթացքին՝ ջարդ ընողները կամ ջարդին մասնակցողները, անոնք կուսակալ ըլլան թէ զինուորական, ամէն պարագայի տակ սովորական անձերու նման պարզ դատարաններու առջեւ պիտի դատուին:

«Օրէնքի մէջ տրամադրութիւն մը կայ, որու համեմատ զինուորական պաշտօնեաները առանց արտօնութեան չեն կրնար դատի քաշուիլ: Իմ պնդումիս վրայ այդ տրամադրութիւնը ջնջուեցաւ:

«Պաշարման վիճակ գոյութիւն չունեցած տեղերը այդ զինուորականները պարզ դատարաններու կողմէ պիտի դատուին:

«Վստահ եղէք որ կառավարութիւնը միտքը դրած է վճռապէս պատժելու յանցաւորները:»¹¹

* * *

Նոյն առթիւ ներքին գործերու նախարարը դատապարտեց Սաիտ Հալիմ եւ Թալաթ Փաշաներու զոյգ դահլիճները հետեւեալ յայտարարութեամբ.

«...Կառավարութիւն մը պէտք է հետապնդէ միայն յանցաւորները: Ցաւալի է ուրեմն որ մեր այն ատենի ղեկավարները ներչնչուած աւազակութենէ՝ տարագրութիւնը կիրարկեցին այնպիսի ձեւով որ նոյնիսկ ամէնէն յանդուգն եւ արիւնարբու աւազակները պիտի չկարենային ընել այդպէս... Կառավարութիւնը որ հրամայեց Հայերը դէպի Տէր Զոր աքսորել, ոչ իսկ մտածած էր զանոնք տեղաւորելու եւ սնունդ հայթայթելու անոնց՝ արաբական ցեղախումբերու մէջ:

10. Լա Րընէսան, թիւ 2, Գշ. 10 Դեկտեմբեր 1918:

11. Ժամանակ, 25 Դեկտեմբեր 1918:

«Ի՞նչ էր կառավարութեան նպատակը...»

«Դժբախտաբար կարելի չէ ուրանալ եւ կամ հարցը անտեսել:

«Ուղեցին բնաջնջել (Հայերը Գ) եւ բնաջնջեցին: Ինչպէս որ կարելի չէ ծածկել որ (բնաջնջումի Գ) որոշումը տրուեցաւ Կուսակցութեան Կեդրոնական Կոմիտէի ազդեցիկ անդամներու կողմէ եւ գործադրուեցաւ կառավարութեան կողմէ...»

«Անոնք նախընտրեցին բնաջնջել Հայերը:»¹²

* * *

Թուրք օրաթերթ Թասֆիրի Էվքետր «Պալատէն դէպի բանտի Չնտան» յօդուածով կը դատապարտէ կուսակալներն ու իշխանութիւնները:

«Իսկապէս ցաւալի է տեսնել որ այս անձերէն շատերը ասկէ երկու ամիս առաջ ամէնուն կողմէ պատիւի եւ փառքի կ'արժանանային մեր մեծագոյն նահանգներու մէջ եւ այսօր բանտ կը տարուին իբր հասարակ ոճրագործներ: Դժուար է հասկնալ թէ ինչու այս անձերը չմտածեցին թէ օր մը իրենք հաշիւ պիտի տային այն բոլոր ոճիրներուն համար որոնք գործուեցան Թալաթ Փաշայի կառավարութեան կողմէ, նոյնիսկ եթէ պատերազմէն մենք յաղթական դուրս գայինք:»¹³

Թագաժառանգ Իշխան Ապտիւլ Մէճիտի յայտնութիւնները Morning Postի թղթակցին:

«Արդէն ծերացած Սուլթան Մէհմէտ Ե. քաղաքային հարցերով չէր զբաղեր եւ Երրոպայի քաղաքական հարցերու մասին տեղեկութիւն չունէր: Իր կեանքը կ'անցնէր հարէմի մէջ եւ երբեք հակառակած չէր Երիտասարդ Թուրքերու Կեդրոնական Կոմիտէի: Համաշխարհային առաջին պատերազմի սկիզբը ես իմ կարելիս ըրի Թուրքիան չէզոք պահելու: Այս մասին Սուլթանի հետ խօսեցայ. պարզ ժամանակի վատնում էր:

«Կոտորածները ամէնէն անջնջելի արատներն են որոնք մեր ազգն ու ժողովուրդը նսեմացուցին:

«Կոտորածը Թալաթի եւ Էնվէրի գործն էր:

12. Լա Րըմէտան, թիւ 6, Շք. 14 Դեկտեմբեր 1918:
13. Լա Րըմէտան, թիւ 7, Կիրակի, 15 Դեկտեմբեր 1918:

«Բնաջնջումի գործը սկսելէն առաջ Էնվէրի հարցուցի թէ կոտորածի ծրագիր ունէին:

«Ան պարզապէս պատասխանեց թէ այս մասին վճռական որոշումներ կային որոնք իրենց ծրագրին մաս կը կազմէին:

«Սուլթանին դիմեցի աղաչելով որ միջամտէ: Խոստացաւ խօսիլ Էնվէրի սակայն մեծ բան չէր սպասեր:

«Եթէ Գերմանիա ուզէր, կրնար այս սպանդները արգիլել. բայց այս ուղղութեամբ ոչինչ ըրաւ:»¹⁴

* * *

Երիտասարդ Թուրքեր, Թէքիլաթ Մախսուսայի հրոսակներ, եւ տասն հազար թուրք ամբոխ 11 Ապրիլ 1919ին ազգային թաղում կազմակերպեցին կախաղան բարձրացած կառավարիչ Քէմալ Պէյի:

Թուրք պատերազմական ատեանը որ մահուան դատապարտած էր թուրք ջարդարար կառավարիչը, պահանջեց կառավարութենէն որ արգիլէ նման ցոյցեր ոճրագործի մը թաղումին համար:

Թուրք կիսապաշտօն Ալէմտար կառավարիչ Քէմալի դատապարտութիւնը կը բաղդատէ թուրք ազգին դատապարտութեան հետ որ դատուելու վրայ է Բարիզի Խորհրդաժողովէն:

«Ի՞նչ են տեղահանութիւն եւ կոտորած, կը հարցնէ թուրք թերթը:

«Յիմար ծրագրի մը գործադրութիւնը քանի մը գաղափարապաշտ հայրենասէրներու կողմէ որոնք մէկ ազգի խարուսիկ արտաքին պատրանքէն տարուած էին:

«Բնաջնջումի այս քաղաքականութիւնը իրագործուեցաւ կոտորածներով եւ կողոպուտներով:

«Երիտասարդ Թուրքերու Կուսակցութեան Կեդրոնական Կոմիտէն եւ իր գործադիր մարմինը, նախարարներու Խորհուրդը, ինչպէս նաեւ պաշտօնեաները ամէնավերէն ամէնավար պատասխանատու են:

«Երբ հոս Պատերազմական Ատեանը տարագրութեան եւ կոտորածի ոճիրները կը դատէ, մեր կառավարութիւնը եւ Ազգն ալ կը դատուին անդին Բարիզի Գերագոյն Ատեանի առջեւ: Հոս ապ-

14. Նոյն, թիւ 10, Դշ. 18 Դեկտեմբեր 1918:

րողներ անշուշտ Բարիզ պիտի հասցնեն արձագանգը այն հրատա-
րակութեանց որոնք ի նպաստ ոճրագործներու ցոյցերը կը գովեն
եւ համակրանքի զգացումներ կը յայտնեն անոնց հանդէպ:

«Ոճրագործները ազատելու փորձերը, մեծագոյն սխալները
ինչպէս համակրանքի ցոյցեր կախաղան բարձրացած ոճրագործի
մը հանդէպ չեն կրնար հաշտուիլ մեր ազգային պատուին հետ,
այլ նաեւ մեր պետութեան շահերը կը վտանգեն:

«Խորհրդարանը եւ Մերակոյտը պաշտօն ունէին օրէնքներ
դնելու եւ զանոնք պահպանելու, սակայն անոնք լքեալ գոյքերու
օրէնքը մէջտեղ հանեցին եւ օրինական ձեւ տուին կողոպուտին:

«Մեզի համար փրկութեան միակ միջոցը կը կայանայ հեռու
մնալ կոտորածէներէն, բարձր ազազակել քաղաքակրթուած աշ-
խարհին առջեւ թէ իսկապէս եւ փաստացի կերպով արդարութիւնը
պիտի կիրարկենք բոլոր անոնց որոնք յանցաւոր են:

«Եթէ Պայագիտի հրապարակը մեր ոճրագործներուն կախա-
ղանները չտեսնէ, Բարիզ մեր պետութեան եւ ազգային դատա-
պարտութեան վայրը պիտի ըլլայ:»¹⁵

* * *

Թրքական օրաթերթ Սապահ բաց նամակ մը ուղղած է արդա-
րութեան նախարար Փիրիզատէ Իպրահիմ Պէյի ուղղելով անոր
սուր հարցումներ. «Միթէ՞ դուն Միուլթիւն եւ Յառաջդիմութիւն
կուսակցութեան հրոսախումբին պետ Թալաաթի հետ չէիր:

«Միթէ՞ հրոսապետ Թալաաթ չէր որ քեզ Սալոնիկի կուսակալ
ըրաւ, եւ անկէ քեզ կանչեց արդարութեան նախարար ըլլալու,
հուսկ ան քեզ ծերակուտական ըրաւ:

«Միթէ՞ դուն չէիր որ ամէն առաւօտ անցնելով քու բարերար
տիրոջ Թալաաթի քովէն կը ստանայիր, իբր արդարութեան նա-
խարար, բռնակալին հրամանները:

«Երիտասարդ Թուրքերու կուսակցութեան հրոսապետներու
ժողովատեղի կեդրոնին մէջ առնուած որոշումին համաձայն չէ՞ր
որ բանտերէն ազատ արձակել տուիր ամէնէն սարսափելի ոճրա-
գործները՝ միակ նպատակով մը Հայերը իրենց օրինաւոր բնակա-
րաններէն դուրս արտաքսելու, եւ հակառակ անոնց բացարձակ
անմեղութեան, զանոնք բնաջնջել տուիր վայրագութեամբ:

15. Լա Ռընէսան, թիւ 116, Դշ. 16 Ապրիլ 1919:

«Միթէ՞ դուն չէիր որ կազմակերպեցիր ամէնավայրագ ոճրա-
գործները, վայրենի հրոսակները, որոնք Պոլսոյ կեդրոնական
բանտի կալանաւորք էին, միեւնոյն ատեն հրամաններ ղրկելով
գաւառները (բանտերէն ոճրագործները ազատ արձակելու Գ):

«Միթէ՞ ոճրագործներու այս հրոսախումբը չէր որ կազմուե-
ցաւ եւ կազմակերպուեցաւ վերաքննիչ ատեանի ընդհանուր դա-
տախազի գրասենեակին մէջ արդարութեան նախարարութեան
դահլիճին կից:

«Դուն չէիր միթէ՞ որ նշանակեցիր ընդհանուր դատախազ մը
եւ բարձրաստիճան սպայ մը պատերազմական նախարար էնվէրի
կողմէ չկանչուեցա՞ւ արիւնարբու ոճրագործներու հրոսակներ
կազմելու:

«Միթէ՞ բժիշկ մը պաշտօն չստացաւ, քու փափաքիդ համա-
ձայն, քննելու եւ որոշելու ոճրագործներու ֆիզիքական կարողու-
թիւնները բնաջնջումի բարրարոսական գործին համար: Միթէ՞
այս հրոսախումբին կազմութիւնը շարաթներ չտեսեց:

«Նոյն շրջանին՝ բանտի արիւնարբու ոճրագործները օրէ օր
չէի՞ն գար հաւաքուիլ (արդարութեան պալատին Գ) գաւիթին մէջ
ճիշդ այն տեղը որ կը գտնուի ատեանի եւ ընդհանուր դատախազի
խորհրդակցութեանց եւ ամբաստանութեանց սենեակին միջեւ:

«Միթէ՞ դուն չէիր որ տուիր, քու տիրոջ Թալաաթի հետ հա-
մաձայնելէ ետք, հրամաններ եւ հրահանգներ անձնակազմի տնօ-
րէնին անմիջապէս պաշտօնազրկելու հայ պաշտօնեաները այն տե-
ղերէն ուրկէ Հայերը պիտի տարագրուէին ապահովելու եւ փու-
թացնելու համար արտաքսումը եւ բնաջնջումը, ինչպէս նաեւ ատե-
աններու հայ դատաւորները, եւ նահանգներու գլխաւոր քաղաք-
ներու, գաւառներու եւ գիւղերու հայ բնակչութիւնը:

«Միթէ՞ դուն չէիր որ կը հրճուէիր հայ դատաւորներու եւ հայ
ժողովուրդի սպանդի տեսարանին առջեւ որ կը գործադրուէր
տապարի, ուրագի, եւ բրիչի հարուածներով:

«Ո՞ւր եւ ո՞ր ատեաններու մէջ այսօր իրենց պաշտօնները կը
վարեն նահանգներու, գաւառներու եւ գիւղերու հայ դատաւոր-
ները, եթէ իսկապէս ասոնք չեն սպաննուած հրոսախումբերու
կողմէ: Ուղղամիտ վկաներ, Աստուծոյ սիրոյն համար, ճշմար-
տութիւնն ու ապացոյցները երեւան պիտի հանեն:»¹⁶

16. Լա Ռընէսան, թիւ 40, Կիրակի, 19 Յունուար 1919. Թարգմանուած

Վարչապետ Տամատ Ֆէրիտ Փաշայի պաշտօնական յուշագիրը
Բարիզի Վեհաժողովին:

«Պատերազմի ընթացքին գրեթէ ամբողջ քաղաքակրթուած
աշխարհը յուզումով ցնցուեցաւ լսելով զրոյցները այն ոճիր-
ներուն որոնք գործուեցան Թուրքերու կողմէ:

«Ինձմէ շատ հեռու է այս ոճիրները խեղաթիւրելու գաղափա-
րը, ոճիրներ որոնք մարդկային խիղճը սոսկումով ընդմիշտ ցնցե-
լու բնոյթն ունին:

«Իեռ աւելի ես պիտի չուզեմ մեղմացնել այս մեծ ողբերգու-
թեան հեղինակներու յանցաւորութեան աստիճանը:

«Նպատակ ունիմ աշխարհի առջեւ պարզելու, փաստական
տուեալներով, թէ որոնք են ճշմարիտ պատասխանատու հեղինակ-
ները այս սարսափելի ոճիրներուն...»

«Ժամանակէ մը ի վեր ճշմարտութիւնը թափանցել սկսաւ եւ-
րոպական հանրային կարծիքէն ներս: Պոլսոյ մէջ Միութենական-
ներու մեծ դատավարութիւնները ցոյց տուին պատասխանատու-
թիւնը Կոմիտէի պետերուն որոնք պետութեան ամենաբարձր պաշ-
տօնները գրաւած էին, պատասխանատուութիւնը նկատմամբ պա-
տերազմի եւ Արեւելքի ողբերգական եղելութիւններուն...»¹⁷

Թրքական մտայնութիւն Զամանի համաձայն

«Նուանդի եւ ցնծութեան այն երկունքը, որով կ'արտայայտ-
ուին Հայերը, կը զգենու հիւանդագին նկարագիր մը եւ որ պիտի
չարունակէ իր ընթացքը:

«Անոնք կը մոռնան թէ պիտի գայ օր մը երբ պիտի ստիպուին
իրենք Թուրքերու հետ համաձայնիլ:

«Որպէսզի թուրք մտայնութիւնը պարտուի, հարկ է որ երկնա-
կամարին տակ մէկ թուրք իսկ չմնայ:»¹⁸

* * *

Սապաթ թուրք օրաթերթէն:

17. Լա Բրնէսան, թիւ 197, Կիրակի, 20 Յուլիս 1919:

18. Լա Բրնէսան, թիւ 64, Եշ. 13 Փետրուար 1919. Թարգմանուած Զաման
օրաթերթէն:

Յանցաւորներու ընդհանուր ներում

«Չենք ուզեր որ ընդհանուր ներումը կիրարկուի Միութիւն
եւ Յառաջդիմութիւն կուսակցութեան անդամներուն:

«Ի՞նչ էինք եւ ի՞նչ եղանք:

«Անսահման կայսրութիւն մը ոչինչի վերածուեցաւ:

«Իշխանութեան այս յափշտակիչները, այս արիւնարբուները
հասարակաց իրաւունքի դէմ գործուած ոճիրներէն զատ, կուտա-
կեցին հրէշային խժդժութիւններ, կոտորածներ, տեղահանու-
թիւններ:

«Ներում չնորհել այս իսկական ոճրագործներուն աւելի
ստորնանալ է քաղաքակրթուած աշխարհի առջեւ:»¹⁹

Իրապէս 23 Դեկտեմբեր 1918ին Սուլթան Մէհմէտ Զ. Վահի-
տէտտին երեք յօդուածներով կայսերական հրովարտակ մը հրա-
պարակեց որով ընդհանուր ներում կը չնորհէր յանցաւորներուն:
Սակայն երկրորդ յօդուածը կը հրամայէր ընդհանուր ներումի
կիրարկումէն դուրս պահել Հայերու տեղահանութեան եւ կոտո-
րածի պատասխանատուները եւ մեղսակիցները: Նոյն շրջանի Օս-
մանեան արտաքին գործերու նախարարը՝ հրովարտակը զրկեց
Պէոն, Զուլիցերիա, հրատարակութեան համար. իսկ ներքին գոր-
ծերու նախարարն ալ զայն զրկեց նահանգներու եւ գաւառներու
բոլոր կառավարիչներուն:²⁰

* * *

Բոլոր թուրքերը մասնակցած են կոտորածներու եւ կոզոպուտի

...«Կ'ըսուի թէ բոլոր Թուրքերը մասնակցած են Միութենա-
կաններու գործած ոճիրներուն եւ զգուելի պղծումներուն. եթէ
Թուրքերը իսկապէս այս արարքներուն մեղսակից եղած չեն, գո-
նէ սրտանց հաւանութիւն տուած են. եթէ այդպէս եղած չըլլար,
կառավարութիւնը որուն անդամները երկրին ամէնէն ողջամիտ
կարծուած անձերէն ընտրուած էին, անմիջապէս պատժած պիտի
ըլլային այս ոճիրներու հեղինակները եւ այդպէսով արդարութիւն

19. Լա Բրնէսան, թիւ 63, Դշ. 12 Փետրուար 1919. Թարգմանուած Սեօզ
թրքերէն օրաթերթէն:

20. Լա Բրնէսան, թիւ 16, Դշ. 25 Դեկտեմբեր 1918.

* * *

Արդարութիւն

«Մենք (Թուրքերս, Գ) ամբաստանուած ենք ոճիրով մը եւ բռնուած ենք անբուժելի հիւանդութենէ մը որ ժանտախտէն աւելի սոսկալի է... այո՛, մենք ժանտախտէ վարակուածներ ենք:

«Մարդկութիւնը կը տատամսի մօտենալ մեզի, մինչ մենք կ'ուզենք որ ան մեզի ձեռք երկարէ որովհետեւ համոզուած ենք որ այդ օգնութեան շնորհիւ պիտի կարենանք ազատուիլ:

«Ասոր համար հաստատեցինք արտակարգ պատերազմական ատեան մը պատժելու համար յանցաւորները արդարութեան համեմատ:»²²

Մեծագոյն սխալը

«Ընդհանուր պատերազմին մեր մասնակցութիւնը սխալ մըն էր, բայց պատերազմի մէջ մեր մուտքը Գերմաններու կողքին եղաւ անհաշիւ սխալ մը:

«Բայց եւ այնպէս, այս սխալներէն շատ աւելի մեծ սխալ մը գործեցինք. մենք որդեգրեցինք բնաջնջումի քաղաքականութիւնը զոր գործադրեցինք մեծագոյն բռնաբարութեամբ միւս տարրերու նկատմամբ եւ հետապնդեցինք այնպիսի կատաղութեամբ մը այն քաղաքականութիւնը զոր ուզեցինք իրագործել տարագրութեամբ, կոտորածներով եւ յափշտակութեամբ:»²³

* * *

21. Լա Րընէսան, թիւ 26, Կիրակի, 5 Յունուար 1919, Թարգմանուած Թուրք Սապահ օրաթերթէն:

22. Լա Րընէսան, թիւ 128, Եշ. 1 Մայիս 1919, Թարգմանուած Ալեմտարէն:

23. Լա Րընէսան, թիւ 131, Կիրակի, 4 Մայիս 1919, Թարգմանուած Ալեմտարէն:

Այս երկու խմբագիրները երկար խմբագրականներով վէճ յարուցին իրենց թերթերուն մէջ հայաստանութեան պատասխանատուները հաստատելու համար: Սապահի խմբագրապետը եղբակցութեան հասաւ: «Աշխարհ գիտէ, եւ ասիկա է ճշմարտութիւնը, որ Հայերու կոտորածները կազմակերպուեցան Կեղրոնական Կոմիտէի հրամաններով: Այս հրամանները հաղորդուեցան մասնաւոր պատուիրակներու միջոցով եւ գործադրուեցան իր իսկ հսկողութեան տակ աւագակներու միջոցով:

«Այս բանը երեւան հանել միթէ՞ Թուրքերուն եւ թրքութեան դատին ծառայել չէ: Կ'ուզես որ ետ կենանք այս բանն ընելէ եւ մենք ալ նոյն ամբաստանութեան տակ իյնանք:»²⁴

Վերամբաստանութիւն

«Եթէ այսօր մեզ (Թուրքերս Գ) առանձին թողուն, մէկ շարաթէն, ամէնէն ուշ, մէկ ամիսէն, միայն մէկ բան կրնայինք ընել՝ յարձակիլ Բարձրագոյն Դրան վրայ, ջարդեր կազմակերպել, եւ կախաղաններ բարձրացնել մեր պատմական հրապարակներուն վրայ, ինչ որ անդորրութեան եւ բարեկեցութեան ծարաւի մարդկութիւնը չի կրնար հանդուրժել:

«Այս ճշմարտութիւնները շատ բիրտ են, բայց պէտք է կրկին ու կրկին վերյիշուին:

«Հոս պիտի չուզեմ վերամբաստանել միայն Միութենականները: Չանոնք կոչեցէք ինչպէս որ կ'ուզէք, սակայն այն մարդիկը որոնք տարբեր անուններու տակ նոյն մտայնութեան կը ծառայեն եւ կ'ընթանան բռնութեան ուղիէն, միայն կրնան հասնիլ միեւնոյն օրհասական արդիւնքին:»²⁵

* * *

24. Լա Րընէսան, թիւ 7, Կիրակի, 15 Դեկտեմբեր 1918:

25. Լա Րընէսան, թիւ 173, Կիրակի, 22 Յունիս 1919, Թարգմանուած Թիւրք-ճէ Ստամպուլ օրաթերթէն:

«Այսօր մենք (Թուրքերս Գ) կը գտնուինք ամէնէն առաջ մեր գոյութիւնը պաշտպանելու անհրաժեշտութեան առջեւ:

«Արդ, մեր բոլոր յոխորտանքները, մեր կազմած խմբակցութիւնները, ծերակուտականներու հաւաքոյթները, խորհուրդները, համագումարները, Թուրքերու բոլոր միացեալ ջանքերը չեն կրնար ծածկել այն ոճիրները որոնք կը ճնշեն թրքութեան ուսերուն վրայ եւրոպական հանրային կարծիքին առջեւ:

«Ի՞նչ պիտի ընենք այս հաւաքոյթներու ատեն. ներո՞ւմ պիտի խնդրենք:

«Պիտի ըսենք թէ Հայերն էին որ ջարդեցին Թուրքերը:

«Այս պաշտպանութիւնը շատ հեշտին է մեր ժողովուրդին որոշ մէկ հատուածին համար:

«Սակայն ուրիշ երկիրներու մէջ, օրէնքը եւ խիղճը չեն թոյլատրեր որ ամենզ մը այսպէս ամբաստանուի. իր կիներն ու զաւակները մորթուին, որպէսզի մենք կարենանք այդպէսով ինքզինքնիս չքմեղացնել Եւրոպայի աչքերուն առջեւ:

«Վանի մէջ կեղեքիչ ոճիրներ գործուեցան քանի մը անհատներու կողմէ, մինչ կառավարական ոյժը պարտաւոր էր բնաջնջել այս ոճիրներու հեղինակները միայն, մեր կառավարութիւնը որոշեց ջարդեր կատարել, մորթել տուաւ մարդկային զանգուածներ, կողոպտել տուաւ անոնց ինչքերն ու հրապարակեց լքեալ գոյքերու օրէնքը, այսինքն գրաւելու համար այն կալուածները որոնք կարելի եղած չէր յափշտակել:

«Այսպէսով մեր կառավարութիւնը պաշտօնական նկարագիր տուաւ չարագործութեան եւ յափշտակութեան: Այս բոլորը չի կազմեր, ոչ մէկ կերպով, օրինաւոր եւ արդար պաշտպանութիւն:

«Մեր՝ Թուրքերուս կողմէ առաջ բերուած պատճառաբանութիւնները, որոնց համեմատ Հայերը Վանի մէջ նախ մեր վրայ յարձակողներն եղան եւ թէ մենք Անատոլուի մէջ փոխ վրէժի դիմեցինք, գոհացում կրնան տալ միայն անոնց որոնք «զգայնականութեամբ» կը գործեն, ոչ թէ գիտական եւ իրաւական պատճառներով. ասիկա չունի այն բնոյթը մեր դատը պաշտպանելու Եւ-

* * *

Ներքին գործերու նախարարութեան յայտարարութիւնը
Վազիթ թրքական օրաթերթին

«Ստոյգ է որ քանի մը Հայեր օգնեցին մեր թշնամիին եւ քանի մը Հայ երեսփոխաններ Թուրք ազգին դէմ ոճիրներ գործեցին:

«Սակայն Թուրք կառավարութեան պարտականութիւնն էր ձերբակալել ոճրագործները եւ միայն այս վերջինները պատժել:

«Կարելի չեղաւ այդպէս ընել. կառավարութիւնը պէտք չէր գործել իբր թշնամի այլ իբր բարեկամ. տեղափոխել այդ շրջանի Հայերը ուրիշ տեղ մը:

«Սակայն հրոսապետ մը կրնայ ընել ամէն ինչ, որովհերեւ աւազակապետ է: Ան կանխապէս տեղեակ էր թէ ինչ պիտի ըլլայ իր վախճանը եթէ բռնուի:

«Կառավարութիւն մը հետապնդելու է միայն յանցաւորները: Շատ ցաւալի է որ մեր այն ատենի ղեկավարները աւազակութեան ոգիով լեցուած էին, կիրարկեցին տեղահանութեան օրէնքը այնպէս որ ամէնէն յանդուգն արիւնարբու աւազակները պիտի չկարենային ընել այնպէս:

«Անոնք որոշեցին բնաջնջել Հայերը եւ բնաջնջեցին զանոնք:

«Այս որոշումը Երիզասարդ Թուրքերու Կեդրոնական կոմիտէի կողմէ վճռուեցաւ եւ կառավարութեան կողմէ գործադրուեցաւ:»²⁷

* * *

26. Լա Բընէսան, թիւ 77, Շր. 1 Մարտ 1919, թարգմանուած Թիւրքէ Սթամպուլ օրաթերթէն:

27. Լա Բընէսան. թիւ 6, Կիրակի, 14 Դեկտեմբեր 1918, թարգմանուած Թուրք Վազիթ օրաթերթէն:

Թիրքճէ Ստամպուլ թուրք օրաթերթը կը դատապարտէ ծերակուտականները եւ երեսփոխանները:

«Մեր երկրին նախկին ղեկավար ծերակուտականները եւ երեսփոխանները պէտք է անապատ քաշուին եւ հոն քաւեն իրենց մեղքերը:

«Ամէնէն աւելի անտրամաբան է խօսիլ երբ մարդ պէտք է լուսի, եւ լուս մնալ երբ պէտք է խօսի:»²⁸

Ծերակուտականները եւ երեսփոխանները չբողոքեցին երբ թուրք կառավարութիւնը սկսաւ տեղահանել Հայերը, զանոնք կոտորել եւ կողոպտել անոնց ինչքերը:

Թրքական օրաթերթ Փէյեսաւ
կը պնդէ թէ թուրքերը սուտ կը խօսին

«Եւրոպայի հետ մեր յարաբերութիւնները սկսելէն ի վեր սը-խալ սխալի վրայ գործեցինք անդադար մեր մոլորանքին եւ անգի-տութեան պատճառով:

«Մենք ուրացանք ճշմարտութիւնը. ջանացինք հաւատացնել թէ լուսինը արեւ էր եւ գիշերը՝ ցորեկ:

«Որո՞ւ, գիտէ՞ք:

«Աշխարհի մեծագոյն խորհողներուն, քաղաքագէտներուն:»²⁹

Պոլսոյ Բրիտանական իշխանութիւնը 28 Մայիս 1919ին Պոլսոյ Պէքիր Աղա Պէօլիկի բանտէն 67 բարձրաստիճան թուրք պաշտօնեաներ եւ զինուորականներ Մալթա աքսորեց: Հետագային աքսորեալներու թիւը բարձրացաւ 164ի:

Թուրք արդարութեան նախարարը հետեւեալ յայտարարու-թիւնն ըրաւ թուրք լրագրողներուն.

«Իմ կարծիքովս Անգլիացիք Միութենական կալանաւորները տարին (Մալթա Գ) միայն այն պատճառով որ մենք շատ դանդա-ղեցանք զանոնք դատելու: Եթէ զանոնք շուտով պատժած ըլլա-

28. Լա Բընէսան, թիւ 59, Ուրբ. 7 Փետրուար 1919, Թարգմանուած Թիրքճէ Ստամպուլ օրաթերթէն:

29. Լա Բընէսան, թիւ 277, Կիր. 19 Հոկտեմբեր 1919:

յինք, Անգլիացիներու միջամտութիւնը պիտի չզգացուէր:»³⁰

Թալսիի Էֆքեսար թուրք օրաթերթը աւելցուց. «Մենք ինքնին պատասխանատու ենք այս բոլորին՝ զինադադարի կնքումէն ի վեր:

«Չկրցանք որեւէ կերպով արդարութիւն կատարել մեր երկրի աղէտին այս պատասխանատու հեղինակներուն նկատմամբ եւ ոչ ալ հասկցանք թէ որքան ատեն զանոնք անպատիժ թողունք մենք պիտի չկարենանք ներկայանալ իբր ազգ, իբր քաղաքակիրթ պե-տութիւն:

«Տամատ Ֆէրիտ Փաշա որ յաջորդեց Թէվֆիզ Փաշայի, չկրցաւ անոր պէս ինքն ալ, գործունէութիւն ցոյց տալ, արդարութիւն եւ համագործութիւն, արդարութեան գործերու մէջ հետեւողական ոգի:

«Ան ձերբակալեց փաղանգ մը անհատներու, յետոյ զանոնք ազատ արձակեց եւ այսպէսով դաշնակիցներուն ներշնչեց այն զգացումը թէ մեր մօտ արդարութեան կիրարկումը վճռականապէս պահանջ մը չէ եւ թէ ինչ որ եղաւ պարզապէս աչքերու վրայ փոշի ցանելու համար էր:

«Անգլիացիներու ընթացքը մեր կալանաւորներու հանդէպ ու-րիշ բան չէ եթէ ոչ անվճռականութիւն եւ վարչական անհոգու-թեան հետեւանքը ինչ որ վեց ամիսներէ ի վեր ցոյց տուինք:»³¹

Թուրք պաշտօնական եւ անպաշտօն խոստովանութիւններու եւ դատապարտութիւններու շարքը կարելի պիտի ըլլար շատ երկա-րել, սակայն այս համառօտ հատորի պատմութիւնը կրնայ ծառա-յել հայ եւ թուրք ժողովուրդներու մերձեցումին, փոխադարձ հասկացողութեան թէ բիրտ ոյժը միայն կրնայ ջնջել Փիզիքական գոյութիւնը, սակայն աւելի կ'ամրապնդէ բնաջնջուող ժողովուր-դին հաստատուն իրաւունքները, մէկ կողմէն, եւ կը պարտադրէ միւս կողմէ բնաջնջող պետութեան պարտաւորութիւնը հատու-ցանելու:

Հայաստանութեան այս վաւերագրական առաջին ուսումնա-սիրութիւնը կը լրացնէ, գոնէ մասամբ, երկու թերիներ հայ եւ թուրք պատմագրութեան մէջ. այս երկու պատմութիւնները անբա-

30. Լա Բընէսան, թիւ 153, Ուրբ. 30 Մայիս 1919:

31. Նոյն,

ժան են իրարմէ առարկայական կերպով:

Մինչեւ այսօր դեռ գրուած չէ Հայաստանութեան վաւերական պատմութիւնը: Ասիկա Հայերու թերացումն է մէկ կողմէն, եւ թուրքերու ուրացումն ու չկամութիւնն է միւս կողմէ:

Թուրք պատմագիրներ մինչեւ այսօր միակողմանի եւ դիտումնաւոր հատորներով փորձած են միայն արդարացնել Հայաստանութեան անլուր ոճիրը կամ ուզած են զայն ծածկել անթափանցելի քողով մը:

Ներկայ հատորը փորձ մըն է մասամբ գոնէ լրացնելու մին եւ միւսը:

Կարելի է զայն իբր լրացուցիչ յաւելուած կցել բոլոր թուրք պատմագիրներու հատորներուն լրացնելու համար անոնց առարկայօրէն թերի ճշմարտութեան արտայայտութիւնը:

Անշուշտ այս փորձը կատարեալ պատմութիւն չէ Հայաստանութեան. ուրիշ հատորներ պիտի գան ամբողջացնել եւ կատարելագործել:

Եողղատ փոքր գաւառ մըն է մօտ վաթսուն հայ գիւղերով եւ մօտ 35.000 հայ բնակչութեամբ: Հայաստանութեան պատասխանատուները դատող թուրք Պատերազմական Ատեանը իրարու քով բերած է պաշտօնական վաւերագրերու թղթածրարներ:

Ինչպիսի համեմատութեան պիտի հասնէր եթէ հրապարակուէին Պատերազմական Ատեանի բոլոր թղթածրարները, մասնաւորապէս Տրապիզոնի, Պիթլիսի, Կարինի, Սեբաստիոյ, Խարբերդի, Տիգրանակերտի, Ատանայի, Անգարայի, Հալէպի, Տէր Չորի վերաբերող թղթածրարները:

Ներկայ ուսումնասիրութեան պատրաստութեան համար գործածուած են առհասարակ թուրք պաշտօնական վաւերագրեր, որոնք առաջին անգամ ըլլալով լոյս կը տեսնեն: Նոյն անտիպ վաւերագրերը քաղուած են թուրք Պատերազմական Ատեանի թղթածրարներէն:

Վաւերագրական ստոյգ պատմութիւն գրելու համար անպատճառ եւ բացարձակապէս անհրաժեշտ չէ դիմել թուրքիոյ խստօրէն անմատչելի դիւաններուն մէջ պահուած վաւերագրերուն: Հարկ է յիշել որ Հայերը կողմ էին Հայաստանութեան պատասխանատուները դատող թուրք Պատերազմական Ատեանին առջեւ, եւ իրենց այդ հանգամանքով իրաւունք ունէին ունենալու նոյն ատեանի թղթածրարներուն պարունակած վաւերագրերուն կամ գոնէ ասոնց

վաւերացուած պատճէնները:

«Ընդհանուր Դատախազ Սամի Պէյէն ետք (Պատերազմական Ատեանի Նախագահի կողմէ Գ) խօսք տրուեցաւ Լեւոն Բէմգի Էֆէնտիի, որ ըսաւ թէ ինք պատերազմական ատեանի առջեւ կը ներկայացնէ փոխանորդարար իր հարիւր տասն եւ հինգ ազգականները որոնք սպաննուած են Եողղատի (գաւառին մէջ Գ) եւ որոնց անունները տուաւ մէկիկ մէկիկ, եւ ատեանին յանձնեց խնդրագիր մը, որով կը պահանջէր մէկ ու կէս միլիոն ոսկի»³² որ այսօրուան արժէքով կը ներկայացնէ 525 միլիոն տոլար:

Հայերը Պատերազմական Ատեանի թղթածրարներու վաւերագրերը կը պահեն իբր թանկագին գանձ թուրք եւ հայ պատմութեան համար:

Հայաստանութեան պատասխանատուները դատելու համար Սուլթան Մէհմէտ Զ. Վահիտէտտինի կայսերական հրովարտակով 1918 Դեկտեմբեր ամսուան մէջ հաստատած թուրք Պատերազմական Արտակարգ Ատեանի առաջ բերած բոլոր փաստաթուղթիւնները հիմնուած են նախ թուրք կառավարութեան պաշտօնական վաւերագրերու բովանդակութեան, զանազան պաշտօնական եւ կիսապաշտօն վկայութիւններու վրայ, ինչպէս նաեւ Հարցաքննիչ Յանձնախումբի պաշտօնական քննութիւններուն ատենագրական արձանագրութեանց եւ պաշտօնապէս հաւաքուած վաւերագրերուն վրայ:

Այս փաստական մանրամասնութիւնները շատ բան կ'ապացուցանեն, մասնաւորապէս թուրք Պատերազմական Ատեանի 293 թղթածրարներուն մէջ Հայաստանութեան վերաբերեալ թուրք պաշտօնական եւ կիսապաշտօն բազմաթիւ վաւերագրերու գոյութիւնը: Այս վաւերագրերէն մաս մը հրատարակուած է Պատերազմական Ատեանի պաշտօնաթերթ Թագուիմը Վագայի Տիվանը Հարպի Էօրֆի Մուհաքէմաթը Չապրթ ճերիտէսիի մէջ: Այս պաշտօնական վաւերագրերը սակայն մատչելի չեն պատմաբաններուն եւ ուսումնասէրներուն, որովհետեւ աշխարհիս վրայ շատ քիչեր միայն կրնան կարգալ արաբատառ թրքերէն լեզուով գրուած Թագուիմը Վագայի պաշտօնաթերթը, որ շատ հազուագիւտ է աշխարհի գրախաւոր դիւաններուն եւ մատենադարաններուն մէջ: Նոյն արաբա-

32. Ժամանակ, Եակատամարտ, 6 Փետրուար 1919:

տառ թրքերէն լեզուն կարդացող եւ հասկցող անձեր պիտի չուզեն իրենց ժամանակը նուիրել, դրամ ծախսել, եւ լծուիլ տաժանելի աշխատանքի:

Պաշտօնաթերթ Թագուիմը Վագայիէն զատ աշխարհի մամուլը հետեւած է հայասպանութեան դատավարութեան: Շատ մը թուրք պաշտօնական եւ կիսապաշտօն վաւերագրեր հրատարակուած են զանազան թերթերու մէջ:

Թրքական Մամուլ. ԱԳՇԱՄ, ԱԳՎԱՄ, ԱԼԷՄՏԱՐ, ԱՏԱԼԷԹ, ԵՆԻ ԿԱԶԷԹ, ԵՆԻ ԿԻԻՆ, ԵՆԻ ՄԷՇՄՈՒԱ, ԶԱՄԱՆ, ԹԱՍՎԻՐ, ԹԱՍՎԻՐԻ ԷՖԵՔԱՐ, ԹԱՐԻԳ, ԹԷՐՇԻՄԱՆ ԹԷՐՇԻՄԱՆԸ ՀԱԳԻԳԱԹ, ԹԻՐԲ ՏԻՆԵԱՍԸ, ԹԻՐԲԶԷ ՍՏԱՄՊՈՒԼ, ԻԳՏԱՄ, ԻԼԷՐԻ, ԻԾԹԻՀԱՏ, ԻԾԹԻՐԱԳ, ԻՍԹԻԳԼԱԼ, ԻՍԼԱՄ, ԻՏՐԱԳ, ԻՖՀԱՄ, ԽԱՊԷՐ, ՀԻԼԱԼ, ՀՈՒԳՈՒԳԻ ՊԷՇԻՐ, ԾԻՐՍԻ ՄԻԼԷԹ, ՄԷՄԼԷԲԷԹ, ՄԷՍՈՒԼԻԷԹ, ՄԻԶԱՆ, ՄԻՄՊԷՐ, ՄՈՒՎԱԳԳԱԹ, ՄԻԹԷՎԱԳԻԹ, ՇԷՅԹԱՆ ՍԱՊԱՀ, ՍԷՐՊԷՍԹԻ, ՍԷՕԶ, ՓԷՅԵԱՄ, ՓԷՅԵԱՄ ԷՅԵԱՄ, ՖԷՐՏԱ, ԵԼԱՅԼՆ:

Հայկական Մամուլ. ԱՐԱՐԱ, ԱՐԵՒԵԱՆ ՄԱՄՈՒԼ, ԱՌԱԻՕՏ, ԱՐԻԱՄԱՐՏ, ԴԱՇԻՆՔ, ԴԱՐՄԱՆ, ԵՐԿԻՐ, ԺՈՂՈՎՈՒՐԴ, ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԶԱՅՆ, ԺԱՄԱՆԱԿ, ԿԻԼԻԿԻԱ, ՀԱՅ ԶԱՅՆ, ՀՈՐԻԶՈՆ, ԾԱԿԱՏԱՄԱՐՏ, ՆՈՐ ԱՅԳ, ՆՈՐ ԿԵԱՆՔ, ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ, ՎԵՐԶԻՆ ԼՈՒՐ, ՕՐԷՆՔ, ԵԼԱՅԼՆ:

Յոյն Մամուլ. ԲԱԹՐԻՍ, ԹԱԽՏՐՈՄՈՍ, ԽՐՈՆՈՍ, ՆԷՈԼՈՂՈՍ, ՓՐՈՅԵԱ, ՓՐՈՏՈՍ, ԵԼԱՅԼՆ:

Գաղղիական Մամուլ. LE BOSPHORE, L'ECLAIR, L'ENTENTE, L'INFORMATION D'ORIENT, LA RENAISSANCE, LE SPECTACLE, LE SPECTATEUR D'ORIENT, LE JOURNAL DES DEBATS.

Անգլիական Մամուլ. THE ORIENT NEWS.

Պոլսոյ Դաշնակից դեսպաններ եւ ներկայացուցիչներ ստէպ թերթերէն օրինակներ կամ պատառիկներ ղրկեցին իրենց արտաքին գործերու նախարարութեան, սակայն շատ դժուար է գտնել նոյնիսկ ամէնաճոխ մատենադարաններու մէջ վերեւ յիշուած թերթերէն կատարեալ հաւաքածոներ, նոյնիսկ ամէնաճոխ դիւաններու մէջ:

Թուրք Պատերազմական Ատեանի նիստերը դռնփակ չէին. ոչ թէ միայն լրագրողներ, այլ ամէն դասակարգէ հետաքրքիրներ հաւաքուած էին ատեանի սրահներուն մէջ: Շատեր ալ տոմսեր չէին կրցած ապահովել ներս մտնելու համար: Օրաթերթերէն շատեր հաւատարմութեամբ արձանագրած են ատեանի նիստերուն ատենագրութիւնները, ուրիշներ ալ միայն համառօտած են ատենա-

գրութիւններու կարեւոր մասերը եւ պաշտօնական վաւերագրերու օրինակները:

Պաշտօնաթերթ Թագուիմը Վագայի նոյնութեամբ արձանագրած է Պատերազմական Ատեանի նիստերուն ատենագրութիւնը, բայց ոչ ամէնը, այլ կարեւորները. տուած է բազմաթիւ թուրք պաշտօնական վաւերագրեր, որոշումները, վճիռներ եւ կարեւոր աղբիւրներ:

Թուրք Պատերազմական Ատեանի թղթածրարները շատ առատ նիւթ կը հայթայթեն հայասպանութեան ուսումնասիրութեան համար Թուրք կառավարութեան կանխամտածութեամբ կազմակերպած եւ պաղարիւն կերպով գործադրել տուած բնաջնջումի պետական քաղաքականութիւնը:

Ուսումնասիրողը պիտի տեսնէ թէ Թուրք պաշտօնաթերթ Թագուիմը Վագայի ոչ թէ միայն յիշած է թուրք պաշտօնական վաւերագրերը այլ անոնցմէ շատեր նոյնութեամբ հրատարակած է: Այս վաւերագրերը կը հաստատեն վերջնականապէս թէ Երիտասարդ Թուրքերու Կուսակցութիւնը 1914 Յուլիս ամիսէն սկսեալ կազմակերպեց Թէշքիլար Մահսուսալի հրոսպետները եւ հրոսակները (չէթէ) որոնց պաշտօն տրուեցաւ հայ կարաւաններ կոտորել եւ յափշտակել ինչքերն ու գոյքերը: Երբ Թագուիմը Վագայի կը յիշէ եւ մէջբերումներ կ'ընէ Օսմանեան Երրորդ Զօրաբանակի Ընդհանուր Հրամանատար Վէհիպ Փաշայի 5 Դեկտեմբեր 1918 թուակիր երկարաշունչ տեղեկագրէն, երբեք դժուար չէ հետեւցնել թէ նոյն պաշտօնագիրը կը գտնուի Թուրք Պատերազմական Ատեանի թղթածրարներուն մէջ:

Հայասպանութեան պետական քաղաքականութեան իրագործումէն մինչեւ այսօր արդէն անցած են վաթսուն հինգ տարիներ, եւ դեռ միջազգային պատմաբաններ, հետազօտիչներ եւ քննադատներ չեն հասած վերջնական եզրակացութեան՝ Օսմանեան Կայսրութեան մէջ գործուած առաջին ցեղասպանութեան մասին:

Ի՞նչ է իրական պատճառը այս թերութեան եւ անհասկացողութեան: Դժբախտաբար, ասիկա արտառոց եւ անհասկնալի կը թուի, որովհետեւ պատմաբաններ, հետազօտիչներ եւ քննադատներ չեն կրցած հասնիլ առաջնակարգ աղբիւրներու եւ վաւերագրային հաստատ ապացոյցներու: Երկու գլխաւոր պատճառներու համար: Առաջինը, որովհետեւ Թուրք իշխանութիւնները կը մերժեն մատչելի դարձնել դիւանական վաւերագրերը, եւ երկրորդ, որովհե-

տեւ շատ քիչ հետազոտողներ կան աշխարհի վրայ, որոնք կրնան կարգաւ եւ հասկնալ, մեռեալ լեզու դարձած արաբատառ թրքերէն լեզուն, եւ անոնցմէ դեռ շատ աւելի քիչեր պիտի փափաքէին իրենց ժամանակը նուիրել, իրենց միջոցները զոհել այսպիսի դժուարին եւ բարդագոյն ուսումնասիրութեան մը համար:

Հայաստանութեան վերաբերեալ գրեթէ բոլոր սկզբնաղբիւր վաւերագրերը գրուած են արաբատառ թրքերէն լեզուով:

Լուրջ երկեր արտադրելու համար ուսումնասիրողէն կը պահանջուի շատ երկար ժամանակ, մտաւորական կորովի սպառում, յարատեւութիւն եւ յոգնաջան աշխատանք անհրաժեշտ են:

Առաջնակարգ աղբիւրէ պաշտօնագրեր գտնելու համար հարկ է երկարատեւ հետազոտութիւն, վաւերական աղբիւրները հաստատելու խոր ճգնութիւն առանց նկատի առնելու անսակարկ նուիրումը եւ անհաշիւ դրամական վատնումը: Շատ դժուար է հետազոտութիւն կատարել, ձանձրացուցիչ ճիգեր թափել, կորով սպառել երբեմն ջնջին արդիւնքի մը յանգելու համար: Յատկապէս չափէն աւելի նեղացուցիչ է յստակօրէն հաստատել ամէն մէկ առաջնակարգ վաւերագրութիւն վաւերականութիւնը զայն իբր վաւեր ապացոյց գործածելէ առաջ:

Շատ անգամ տաղտկալի է ամրապնդել սկզբնաղբիւր վաւերագրերու առնչութիւնը իրարու հետ: Շատ դժուար է գետեղել առաջնակարգ աղբիւրէ վաւերագիրն իր իսկ ճշգրիտ եւ յարմարագոյն տեղը ցրուելու համար ամէն տեսակի տարակոյս եւ յանգիլ համեմատական ստուգութեան: Մասնաւորապէս արաբատառ հին թրքերէն վաւերագրերու ընդմէջէն հասնիլ շատ աննշան եւ թեթեւ արդիւնքներու հաստատելու համար պատմական իրարընդմէջ կապակցութիւնը եւ վերահաստատել ժամանակագրական կարգերը, լրացնել շրջանակի մը օղակները նոյն շրջանակի օղակ մը կապելու համար, սկզբնաղբիւր վաւերագրութիւնը միջեւ ցրուելու համար ամէն գիտական կարելի եւ երեւակայական տարակոյս եւ հասնիլ համոզկեր եւ ստուգագոյն ապացոյցներու:

Նոյնիսկ արաբատառ հին թրքերէնի եւ լատինատառ արդիական թրքերէնի բառերը այլեւս նոյն եւ նոյնիմաստ չեն: Արաբատառ թրքերէնի մէջ գործածուած թրքերէն բառերու իմաստը չի համապատասխաներ արդի լատինատառ թրքերէնի բառերու իմաստին: Բազմաթիւ բառեր արաբատառ թրքերէնի մէջ փոփոխութեան ենթարկուած են եւ փոխարինուած են արդի լատինատառ թրքերէնի մէջ:

Թուրք պաշտօնական սկզբնաղբիւրները մեծ մասով գրուած են արաբատառ հին թրքերէնով եւ այս վաւերագրերը մեծ լոյս պիտի սփռեն հայաստանութեան գաղտնի ծախքերուն եւ Օսմանեան Պետութեան որդեգրած բնաջնջումի քաղաքականութեան վրայ: Ասոնցմէ ոմանք Թուրք Պատերազմական Ատեանը հրատարակած է պաշտօնագրերի Թագուիմը վազայիի մէջ: Այս հատորին մէջ միայն առաջնակարգ վաւերագրական աղբիւրներ պիտի գործածուին:

Երբեմն վաւերագիր մը կամ քանի մը վաւերագրեր չկարենան թերեւս լրիւ եւ յստակ առնչութիւն հաստատել պատմական մանրամասն իրադարձութիւններու, եղելութիւններու, մասնաւոր պարագաներու, անձերու եւ գործօն հաւաքական խումբերու: Ամէն շփոթ հարկ է փարատուի: անստուգութիւնը հարթուի, եւ պատմական ճշմարտութիւնը արեւու պէս շողայ աչքերու առջեւ, որոնցմէ ոմանք անշուշտ պիտի դժկամակին տեսնել եւ կոյր ձեւաւ իրենց կանխակալ գաղափարաբանութեան համեմատ յատկապէս բռնի ոյժի գործածութեան տեսակէտով:

Աւելի քան երեսուն տարիներ տարակոյսը տիրեց թրքական պաշտօնական վաւերագրի մը իսկական վաւերականութեան մասին: Նոյն վաւերագրին գլուխն ու ոտքերը պակաս էին հակառակ որ պաշտօնական հրատարակութեանց մէջ երեւցած էր եւ հեղինակաւոր մասնագէտներ զայն իւրացուցած էին իրենց գործերուն մէջ: Նոյն վաւերագիրը գետեղուած ³³ էր Օսմանեան կառավարութեան պաշտօնապէս հրատարակած հատորի մը մէջ լուսանցքի ծանօթագրութեան ձեւով:

Նոյն վաւերագրին գաղղիերէն թարգմանութենէն առնելով 1919ին Յովհաննէս Լեբսիուս իր վաւերագրական հատորին մէջ արտադրեց ³⁴ առանց տարակուսելու որ կրնար մկրատուած ըլլալ: ³⁵

33 Էրմէնի Քօմիտէլէրիմի ամալը վէ հարեքնաթը իխթիլալիլէսի իլանը Մէշրութիլէթէն Էվվէլ վէ սօնրա, Իսթանպուլ, 1333, արաբատառ թրքերէն, Հայ Կոմիտէներու յեղափոխական ձգտումներն ու արարքները Օսմանեան Սահմանադրութեան հռչակումէն առաջ եւ վերջ: էջ 237-238:

34. Aspirations et agissements révolutionnaires des Comités Arméniens avant et après la Proclamation de la Constitution Ottomane, Constantinople 1917, page 316.

35. Deutschland und Armenien, Diplomatischer Actenstücke, Potsdam 1919. Page 71, No. 71.

Վերեւ յիշուած արարատառ հին թրքերէն պաշտօնական հրատարակութենէն կամ գաղղիական թարգմանութենէն օգտուելով էսատ Ուրաս 1950ին վերածեց զայն արդի լատինատառ թրքերէնի³⁶ առանց որեւէ լոյս սփռելու մկրատուած պաշտօնական թուրք վաւերագրին վրայ:

Արարատառ թրքերէնի լուսանցքի ծանօթագրութեան մէջ զետեղուած երեք յօդուածներով տեղահանութեան օրէնքը Հ. Գ. Ղազարեան կը բաղդատէ այն օրէնքին հետ զոր ինք գաղտնօրէն ընդօրինակած էր թուրք նաւային նախարարութեան դիւանէն 1920ին:

Հ. Գ. Ղազարեան կը հաստատէ թէ դիւանի վաւերագիրը ունէր ութ յօդուածներ: Մինչ Օսմանեան պաշտօնագիր Թագուիմը Վազայի մէջ հրատարակուած է միայն չորս յօդուածներով ստորագրուած Սուլթան Բէշատէն, Սաիտ Հալիմ Փաշայէն իբր Վարչապետ եւ էնվէր Փաշայէն իբր Պատերազմական Նախարար եւ Օսմանեան զօրաբանակներու Ընդհանուր Փոխ Հրամանատար:

Դժբախտաբար, թուրք կառավարութիւնը արարատառ հատորին եւ գաղղիերէն թարգմանութեան մէջ փորձած է վարագուրել նոյն պաշտօնական վաւերագրին պաշտօնականութիւնը:

Ժամանակագրական կարգով կան ուրիշ գրողներ որոնք ոչ իսկ տեղեակ են տարագրութեան օրէնքին գոյութեան, կամ անոր պաշտօնականութեան կամ խեղաթիւրումին:³⁷

36. Tarihte Ermeniler ve Ermeni Meselesi, Ankara 1950, page 617.

Արարատառ թրքերէն եւ գաղղիերէն թարգմանութեան մէջ տարագրութեան օրէնքը դրուած է լուսանցքի ծանօթագրութեան մէջ:

Լերսիուսի աղբիւրն է գաղղիերէն թարգմանութիւնը, իսկ էսատ Ուրասի աղբիւրը արարատառ թրքերէն հաւաքածոն:

Հայկազն Գ. Ղազարեան 1968ին նոյն մկրատուած վաւերագրի հայատառ թրքերէնը եւ հայերէն թարգմանութիւնը հիւրընկալեց իր գրքին մէջ: Յնդասպան Թուրքը, Հ. Գ. Ղազարեան, Տպարան Համագրային, Պէյրութ 1968, էջ 69-70 եւ 179, ուր կը յիշուի արարատառ թրքերէն հատորի 237 էջը, եւ էջ 180, տարրերակներ էջ 69-70 եւ 180-181 հայերէն թարգմանութեան մէջ:

37. Armenia, the Case for a forgotten Genocide, by Dicran H. Boyajian, Educational Book Crafters, Westwood, N.J. 1972.

The Armenian Question and International Law, By Shavarsh Toriguian, Hamaskaine Press, Beirut 1973.

Տիգրան Պոյաճեան ոչ իսկ յիշած է տեղահանութեան օրէնքը: Մինչ Շաւարշ Թորիկեան, որ կը խօսի օրէնքի եւ միջազգային օրէնքի մասին, ոչ իսկ կ'ակնարկէ որ Օսմանեան կառավարութիւնը 1915ին հրատարակած է Հայերու տեղահանութեան օրէնքը:

Տեղահանութեան եւ կոտորածի Պատասխանատուները դատելու համար թուրք Պատերազմական Ատեաններ

Զինադադարէն ետք ամբողջ շարաթ մը Օսմանեան խորհրդարանի նիստերուն ամէնէն կարեւոր նիւթն էր Հայերու կոտորածը:

Նախարարներու, ծերակուտականներու եւ երեսփոխաններու ճառերէն շատեր հրատարակուած են թուրք պաշտօնաթերթ Թագուիմը Վազայի մէջ, իսկ ուրիշ ամէն լեզուներով օրաթերթեր նոյն պաշտօնաթերթէն քաղելով տուած են նոյն պաշտօնական կարծիքները, ոմանք ամբողջապէս, ուրիշներ ալ՝ մասնակի կերպով:

Երկուշաբթի 25 Նոյեմբեր 1918ին Պոլսոյ Մերակուտական Ժողովի ընթացքին կարդացուեցաւ Ահմէտ Բիգայի բողոքագիրը:

«Նկատելով որ կազմուած Գերագոյն Ատեանը պատերազմի մասնակցութեան եւ գործուած սխալներուն պատասխանատուները միայն պիտի դատէ եւ զբաղի ուրիշ խնդիրներով, մինչդեռ աննախընթաց եւ անօրինակ ոճիրներ գործուած են նախորդ դահլիճներու կողմէ Արաբ, Հայ եւ Յոյն հայրենակիցներու դէմ, կը պահանջեմ որ, առանց որեւէ յապաղումի, դատարան յանձնուին ոճրագործները:

«Այս կերպով ներկայ կառավարութիւնը ապացոյցը տուած կ'ըլլայ թէ գիտէ իր խոստումները յարգել ի յարկին:»³⁷

Մահմուտ Փաշա ալ ներկայացուց բողոքագիր մը բանաձեւուած հետեւեալ կերպով:

1. Մեծ ոճրագործները պիտի դատուին Գերագոյն Ատեանի առջեւ:

2. Մեծ ոճրագործներու հետ գործակցող պաշտօնեաներու դատավարութիւնը պիտի կատարուի օրինական դատարաններու առջեւ, մինչդեռ թուրք Պետական Խորհուրդը այդ մասին տարբեր կերպով կը մտածէ եւ կ'ուզէ զանոնք դատել պաշտօնեաներու յատուկ օրէնքով:

37. Արդարամարտ, 26 Նոյեմբեր 1918:

3. Հասարակ ժողովուրդի եւ ամբոխի դատը պիտի տեսնուի օրինական դատարաններու առջեւ:

4. Պաշտօնեաներու եւ ժողովուրդի միասին դատավարութեան ձեւը յիշեցի է: ³⁸

Տրապիզոնի երեսփոխան Հաֆրզ Մէհմէտ Պէյ փաստերով հաստատեց թէ Հայերու կոտորածը կազմակերպուած էր մանրամասնօրէն թուրք կառավարութեան կողմէ եւ գործադրուած՝ Երիտասարդ թուրքերու կողմէ կազմուած Թէշքիլար Մախսուսապի հրոսակապետներու եւ հրոսակներու միջոցով: ³⁹

Արդարութեան նախարարը իբր եզրակացութիւն յայտնեց թէ բոլոր կարգադրութիւնները եղած են պատժելու համար Հայերու կոտորածի հեղինակները, պատասխանատուները եւ մեղսակիցները: «Միակ միջոց մը կայ ներկայ կառավարութեան համար պատժել վալիներէն սկսեալ ամբողջ կառավարական կազմը:»... ⁴⁰

Ուրիշ երեսփոխան մը յայտարարեց. «Անոնց (ոճրագործներու Գ) անունները թուելով խօսքս չեմ ուզեր երկարել: Անոնք սահմանափակ չեն թուով... Եթէ անոնց անունները մէկիկ մէկիկ ըսեմ, օրը գիշեր կ'ըլլայ:» ⁴¹

Տիվանիէ երեսփոխան Ֆուատ Պէյ առաջարկեց նախորդ նախարարները դատելու համար կազմել ատեան մը որ ներկայացնէ ամբաստանագիրը:

Նախագահի հրամանով կարդացին Ֆուատ Պէյի տասն կէտերով պահանջագիրը. «Կ'առաջարկեմ որ Սաիտ Հալիմ եւ Թալաաթ Փաշաներու դահլիճները ատեանի առջեւ դատուին հետեւեալ պատճառներուն համար.

«1. Առանց պատճառի եւ անժամանակ կերպով պատերազմի մասնակցեցան:

«2. Պատերազմի ձեռնարկելու պատճառներու մասին երեսփոխանական ժողովի առջեւ սուտ ու սխալ յայտարարութիւն ըրին:

«3. Զօրաշարժէն ետք եւ պատերազմի սկսելէն առաջ համաձայնական տէրութիւններու կողմէ եղած պատուարներ եւ շահաւոր

38. Լա Րոմէսան, թիւ 2, 10 Դեկտեմբեր 1918:

39. Ժամանակ, 13 Դեկտեմբեր 1918:

40. Նոյն,

41. Ժամանակ, 4 Նոյեմբեր 1919:

առաջարկները մերժեցին առանց Գերմանիայէն երաշխաւորութիւն առնելու եւ շահ մը ապահովելու պատերազմի մասնակցութենէն առաջ:

«4. Պատերազմի գործողութիւնները ապիկար անձերու յանձնեցին, ռազմագիտութեան հակառակ յիմարական ձեռնարկներ ըրին, եւ անձնական շահեր ապահովելու համար հայրենիքին կենսական ոյժերը սպառեցին:

«5. Մարդկային օրէնքներու եւ մասնաւորապէս երեսփոխանական ժողովի ոգիին հակառակ առժամեայ օրէնքներ հրատարակեցին եւ երկիրը ոճիրներու թատերավայր դարձուցին:

«6. Ռազմագիտութեան հետ առընչութիւն չունեցող, հետեւապէս ծածկելու որեւէ պատճառ չունեցող եղելութիւններ չտեղեկացուցին պարզապէս իրենց զիրքերը չխախտելու նպատակով: Նոյնպէս օր մը մէյմէկ պատճառով հայրենիքը ոտնակոխ ընել տուին թշնամիին եւ նուիրական հայրենիքի մէկ մասին ապագային ազգը չլուսարանեցին:

«7. Պատերազմի տարիներուն, մասնաւորապէս Ռուսիոյ կազմալուծուելէն ետք համաձայնական տէրութիւններու կողմէ քանիցըս կրկնուած հաշտութեան առաջարկները մերժեցին եւ այսպէս այսօրուան ցաւալի վախճանը հրաւիրեցին ազգին եւ հայրենիքին վրայ:

«8. Պատերազմի պատճառած դժուարութիւններու մէջ, փոխանակ ժողովուրդին օգնելու միջոցներ գտնելու, քանի մը մարդերու հարստութիւնը ապահովելու համար զեղծումի դոներ բացին:

«9. Անտանելի եւ ապօրէն, զինուորական եւ քաղաքական գրաքննութիւն մը հաստատեցին եւ եւրոպական մամուլին մուտքը արգիլեցին:

«10. Երկրին մէջ իրարանցում մը առաջ բերին կեանքի, ինչքի եւ պատիւի վրայ յարձակող կարգ մը հրոսախումբերու օգնելով:» ⁴¹

Երեսփոխանական ժողովը որոշեց նկատի առնել պահանջագիրը:

«Այս պահանջագիրը կարդացուելէ ետք... վէճի նիւթ եղաւ այն կէտը թէ նախարարները ինչ օրէնքով պիտի դատուին բարձրագոյն ատեանի առջեւ քանի որ առանձին օրէնք մը գոյութիւն չունի:

41. Նոյն, 26 Նոյեմբեր 1918:

Ճիշդ է որ Օսմանեան պատմութեան մէջ Թուրք վարչութիւնը պարբերաբար կատարել տուած է զանազան թիւով, կոտորածներ եւ բնաջնջումներ, սակայն թուրք օրէնսդրական ժողովները երբեք չեն մտածած օրէնքի մասնաւոր տրամադրութիւններ պատրաստել կոտորածներու պատասխանատուները դատելու քանի որ կոտորածի դրութիւնը միշտ եղած է ներքին քաղաքականութեան անբաժան մաս:

Ճիշդ է նոյնպէս որ Երիտասարդ Թուրքերու կուսակցութեան, 1909ին Կիլիկիոյ մէջ կազմակերպած կոտորածներուն յաջորդեց դատավարութիւն մը ոչ թէ նոյն ինքն իրական պատասխանատուները դատելու, այլ տեղական քանի մը անհատներ. նոյն ատեն դարձեալ չմտածեցին հաստատել օրէնք մը որով կարելի ըլլար կոտորածներու հեղինակները դատել: Միջազգային օրինագրքերու մէջ ալ գոյութիւն չունէր օրէնք մը կամ մասնաւոր տրամադրութիւն մը դատելու պետական ներքին քաղաքականութեան որդեգրած բնաջնջումի պատասխանատուները եւ նոյնինքն ոճիրներու հեղինակները:

Օսմանեան Խորհրդարանի մէջ եղան երեսփոխաններ որոնք ըսին թէ սովորական ձեւով «թո՛ղ անձնական դատախազներ դատարան դիմեն» այս ընդհանուր օրէնքին դէմ բողոքելով դատաւորի պաշտօն վարող երեսփոխան մը պնդեց որ Թուրք կառավարութիւնը պէտք է ըսէ. «թո՛ղ անձնական դատախազները դատարան դիմեն»: Եւ հարցուց. «անոնց (Չարդուած Հայերու Գ) անձնական դատախազները ո՞ր են: Անոնցմէ շատերուն տուները քանդեր են, փճացեր են, արդէն մեծ ու պզտիկ, ծեր ու տղայ, ամէնքն ալ մեռած են: Կառավարութիւնը մասնաւոր պաշտօնեաներ ունի, ընդհանուր դատախազներուն պաշտօնն է գործուած յանցանքներուն փաստերը հաւաքել, յանցաւորները բռնելով դատարան դրկել եւ հոն դատել տալ:

«Կառավարութիւնը իր պաշտօնեաներուն, ընդհանուր դատախազներուն պէտք է խստիւ հրամայէ որ այդ բոլոր ոճրագործները հետապնդել եւ դատի քաշել տայ, որպէս զի մենք իբրեւ արդարութեան եւ ազատութեան գաղափարին ընտելացած, հաշտութեան սեղանին գլուխը երթալ կարենանք:

«Այս մեծ ոճիրին մասնակցող պաշտօնեաները պէտք է պատժել:»⁴²

42. Փամանակ, 27 Նոյեմբեր 1918, էջ 2, սիւնակ 1-2:

Ուրիշ երեսփոխան մը եզրափակելով կ'ըսէր. «Ինչպէս խոստացուած է դահլիճի ծրագրին մէջ, մեր երկրին մէջ օրէնքի նոր թուական մը բանանք: Արդարութիւն ի գործ դնենք:»⁴³

Իսկ արդարութեան նախարարը տեղահանութեան եւ կոտորածներու պատասխանատուները բաժնեց դասակարգելու.

«1. Իսկական յանցաւորները պէտք է բարձրագոյն ատեանի մը առջեւ դատուին, եւ որոնց վրայ կառավարութիւնը ոչ մէկ ինչխանութիւն ունի:

«2. Պաշտօնեաները որոնց մասին նախարարներու Խորհուրդին եւ Պետական Խորհուրդին միջեւ տարակարծութիւն կայ, կառավարութիւնը կ'ուզէ որ անոնք դատուին արտակարգ դատարանի մը կողմէ, մինչ Պետական Խորհուրդը կը պնդէ որ անոնք դատուին հետզհետէ այն իրաւակարգով որ ի գործ է պաշտօնեաները դատելու:

«3. Հասարակ ժողովուրդը, որու մասին ոչ մէկ որոշում պիտի գոյանայ: Այս դասակարգի յանցաւորները պիտի դատուին հասարակ դատարաններու առջեւ հետզհետէ երբ ներկայացուին անոնց ամբաստանագիրները:

«Ամբոխի զանգուածի կողմէ գործուած ոճիրները պաշտօնեաներու հաւանութեամբ եւ մեղսակցութեամբ՝ պիտի դատուին հետզհետէ հասարակ դատարաններու կողմէ:»⁴⁴

Պոլսոյ մէջ Սուլթանական հրովարտակով կազմուեցան թիւ 1, 2, 3 պատերազմական ատեանները դատելու համար հայաստանութեան պատասխանատուները, ինչպէս նաեւ նահանգներու եւ գաւառներու մէջ կազմուեցան պատերազմական ատեաններ տասը շրջաններու մէջ դարձեալ դատելու համար տեղահանութեան եւ կոտորածի պատասխանատուները:

Շաբաթ օր 14 Դեկտեմբեր 1918ին կազմուած յանձնաժողովները թուրք սահմանադրութեան 88րդ յօդուածի տրամադրութեան համաձայն չեն կրնար դատել բոլոր յանցաւորները, որոնց թիւը տասնեակ հազարներու կը հասնի:

Որոշուեցաւ Օսմանեան Կայսրութեան նահանգները բաժնել

43. Փամանակ, 29 Նոյեմբեր 1918, էջ 2, սիւնակ 4:

44. Լա Բրնէսան, թիւ 113, Շաբաթ, 12 Ապրիլ 1919, Թարգմանուած Ալեմտարէն:

տասն դատաստանական շրջաններու եւ իւրաքանչիւր շրջանի համար նշանակել ընդհանուր դատախազներ եւ հարցաքննիչ դատաւորներ:

1. Երջան. Անգարայի եւ Գասթէմուռի կուսակալութիւնները եւ Պոլուի առանձին անկախ գաւառը (Միւսթագիլ Սանճագ):
2. Երջան. Տրապիզոնի նահանգը եւ Սամսոնի գաւառը:
3. Երջան. Պուրսայի նահանգը, էտիրնէի նահանգը եւ Չաթալճայի գաւառը:
4. Երջան. Այտրնի կամ Զմիւռնիոյ նահանգը, Չանազգալէի գաւառը եւ Գարասիի առանձին անկախ գաւառը (Միւսթագիլ Սանճագ):
5. Երջան. Գոնիայի նահանգը, էսկիշէհիւրի, Գարահիսարի, Բէօթահիայի եւ Անթալիոյ գաւառները:
6. Երջան. Սեբաստիոյ նահանգը, Կեսարիոյ եւ Եոզղատի գաւառները:
7. Երջան. Տիգրանակերտի եւ Պարբերդի նահանգները:
8. Երջան. Կարինի, Վանի եւ Պիթլիսի նահանգները:
9. Երջան. Ատանայի նահանգը եւ Մարաշի գաւառը:
10. Երջան. Ուրֆայի, Այնթապի եւ Զորի գաւառները: ⁴⁵

Այս տասն շրջաններու համար առանձին առանձին կազմուեցան մասնաւոր դատական մարմիններ, յատկապէս հարցաքննիչ դատաւոր մը, դատախազ մը եւ քարտուղար մը, եւ իւրաքանչիւր շրջանի դատական պաշտօնեաներուն համար որոշուեցաւ ճամբու ծախս տալ օրական երեք թրքական ոսկի:

Երբ Սաիտ Հալիմ եւ Թալաաթ Փաշաներու զոյգ դահլիճներուն անդամները ձերբակալուեցան եւ բանտ տարուեցան դատուելու համար, Ալէմտար թուրք օրաթերթը առաջարկեց մասնաւոր օրէնք մը եւ իրաւակարգ մը պատրաստել դահլիճներու անդամ նախարարները եւ բարձրագոյն պաշտօնեաները դատելու համար: «Մենք կը կարծենք թէ, կը գրէր Ալէմտար, պատերազմական վիճակի մասին գոյութիւն ունեցող օրէնքները եւ կանոնները բաւարար չեն իրենց բնոյթով արդարութիւն ապահովելու, որովհետեւ գործուած խժոժութիւնները, հինգ վեց տարիներու ընթացքին, անբեւակայելի են:

45. Լա Բրնէսան, թիւ 34, Բշ. 13 Յունուար 1919 եւ Այն թիւ 36, Դշ. 15, Յունուար 1919:

«Հետեւաբար, այդ իսկ պատճառով, իրաւաբաններէ բաղկացած յանձնախումբ մը պէտք է պատրաստէ օրէնք մը եւ կիրարկէ տեանի իրաւակարգ մը, եւ այդ տեանի առջեւ դատէ արգելափակեալները» ⁴⁶ այսինքն՝ վարչապետ եւ նախարարներ, կուսակալներ, կառավարիչներ, ինչպէս նաեւ զինուորական հրամանատարներ, զօրավարներ, սպաներ, ծերակուտականներ, երեսփոխաններ եւ զինայրերու հրամանատարներ:

Պոլիս հրատարակուող զանազան լեզուներով թերթերը ուրիշ կերպով դասաւորած են ոճիրները եւ ոճրագործները, եւ պահանջած են անոնց պատիժը արդարութեան եւ օրէնքի տրամադրութիւններու համեմատ:

Գաղղիական լեզուով Վերաճնուող օրաթերթը թուրք Սապահէն առնելով ոճրագործները կը դասաւորէ հետեւեալ կերպով.

«Ամէն ոք ջանաց լեցնել իր դրօշակները եւ պտուկները: Եթէ այսօր խժոժութիւններու պատասխանատու հեղինակներուն չկիրարկենք իրենց արժանի պատիժները, ապագայ սերունդը խաթարած եւ ապականած պիտի ըլլանք:

«Նոյնիսկ եթէ կարենայինք խուսափիլ ամբողջական բաժանումէ, մեր ժառանգորդները պիտի չկրնան ազատիլ գերութենէ եւ աւերումէ...»

«Հարկ է, այս շատ կարեւոր գործին մէջ, դասաւորել ոճիրները ամէն բանէ առաջ.

- «1. Իսկական հեղինակները:
- «2. Անոնք որոնք անոնց (հեղինակներուն) պատնէշին ետեւ պահուելով, ծածկաբար գործեցին: Միութեան եւ Յառաջդիմութեան Կեդրոնի ազդեցիկ անդամները, նահանգային ակումբներու նախագահները եւ անոնք որոնք ջուրին երեսը լողացին, եւն:
- «3. Անոնք որոնք մաս կազմեցին գաղտնի կազմակերպութիւններու, ինչպէս ստորակարգ սպաները եւ բանտերէն ազատ արձակուած սրիկաները:
- «4. Այն երեսփոխանները որոնք չբողոքեցին, որոնք հաւանութիւն տուին (գործուած) ոճիրներուն, եւ մասնակցեցան կողոպուտի գործին:
- «5. Հրապարակիչները, որոնք ծափահարեցին բոլոր ոճիրները:

46. Լա Բրնէսան թիւ 113, Շրթ. Ապրիլ 12, 1919: Կիսապաշտօն Ալէմտարէն:

րը եւ արարքները, որոնք գործուեցան վերջին տասն տարիներու եւ մասնաւորապէս ընդհանուր պատերազմի ընթացքին, եւ որոնք հանրային կարծիքը մոլորեցուցին ամէն տեսակ խաբերայութիւններով եւ ստախօսութիւններով, ինչպէս նաեւ այն խմբագիրները որոնք իբր թղթակիցներ ճամբորդեցին, ըլլա՛յ Գերմաններու եւ Աւստրիացիներու հանդէպ համակրանք չահելու, ըլլա՛յ վերջապէս փաշաներէն ոմանց իբր գաղտնի պատուիրակներ ղրկուեցան եւ վարչական կազմակերպութիւններու համար:

«6. Անոնք որոնք շահաբեր գործեր հետապնդեցին վաճառականութեան քողին տակ եւ որոնք իրենց արարքներով նպաստեցին նախկին վարչակարգը շարունակելու եւ պատերազմը երկարաձգելու:

«7. Լէգէոն մը փաշաներու եւ պէյերու որոնք շրջապատեցին աւարառուները եւ եղան անոնց քծնողները եւ խնկարկուները:»⁴⁷

Օսմանեան Մերակոյտը եւ Երեսփոխանական Ժողովը Մեծագոյն Խոչընդոտ Արդարութեան

Օսմանեան զոյգ դահլիճները 1913-1918 կազմուած էին գլխաւորապէս Երիտասարդ Թուրքերու կուսակցութեան երեւելի ղեկավարներէն: Ահմէտ Թալաթ Փաշայի դահլիճին հրաժարականէն ետք 7 Հոկտեմբեր 1918ին, Սուլթան Մէհմէտ Զ. Վահիտէտտին նոր դահլիճի կազմութեան պաշտօնը յանձնեց Լոնտոնի նախկին ղեսպան ծերակուտական Թէվֆիգ Փաշայի: Այս վերջինը հակառակ էր Երիտասարդ Թուրքերու կուսակցութեան բռնակալական քաղաքականութեան: Ան փորձեց իր կազմելիք դահլիճէն հեռու պահել կուսակցական անդամները Սուլթանէն ստացած իր հրահանգներուն համաձայն: Թէվֆիգ Փաշա չյաջողեցաւ կազմել դահլիճը:¹

Սուլթանը հրաւիրեց 9 Հոկտեմբեր 1918ին նախկին պատերազմական նախարար Մարշալ Իզզէթ փաշան որ կազմէ դահլիճը: Ասիկա շուտով կազմեց զայն որովհետեւ վարչութեան մէջ առաւ Ֆէթ-

հի Պէյը (Օգեար) իբր ներքին գործերու նախարար, Ճավիտ Պէյը իբր տնտեսական նախարար, Խայրի Պէյը իբր արդարութեան նախարար, Հիւսէին Բաուֆ Պէյը իբր նաւային նախարար եւ դեռ ուրիշ կուսակցականներ:

Այս նախարարները ամէնքն ալ մոլեռանդ միութենականներ էին որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով պատասխանատու էին Հայերու տեղահանութեան եւ բնաջնջումին:²

Ֆէթհի Պէյ նախագահն էր Թէճէտտուտի որուն վարագոյրին ետեւ կը գործէին նախկին Միութենականները:

Հուրիյէթ Իթթիլաֆի նախագահ Մուսթաֆա Սապրի Պէյ կը գրէր հետեւեալը Սապահ թրքերէն օրաթերթի մէջ.

«Էնվէրի յառաջապահը եղող Ահմէտ Իզզէթ Փաշան էր որ իր ընկերներով Իթթիլապտականներու փախուստը ապահովեց, եւ ահազին պատերազմի մը արհաւիրքներուն վաւերաթուղթերուն փճացման միջոց եւ կարելիութիւն տուաւ:»³

Իզզէթ Փաշայի դահլիճը Հայերու բնաջնջումին պատասխանատու Երիտասարդ Թուրքերու կուսակցութեան ղեկավարներուն պատեհ առիթ ընծայեց փախչելու Թուրքեայէն եւ ապաստան գտնելու մասնաւորապէս Գերմանիոյ մէջ:

Ուրբաթ գիշեր 1 Նոյեմբեր 1918ին հայասպանութեան պատասխանատու նախարարները եւ Երիտասարդ Թուրքերու ղեկավարները իրենց հետ տարին Գերման զրահաւորի մը մէջ, տարագրուած Հայերէն կողոպտուած մեծագումար զրամներ եւ թանկարժէք իրեղէններ:³

Հայասպանութեան պատասխանատու նախարարներու եւ Երիտասարդ Թուրքերու ղեկավարներու Թուրքիայէն փախուստը ստեղծեց շփոթութիւն, անհասկացողութիւն եւ անվստահութեան մթնոլորտ: Վարչապետ Իզզէթ փաշա եւ իր նախարարները անոնց փախուստին պատասխանատու նկատուեցան: Եթէ ասոնք գաղտնօրէն կազմակերպած չէին փախուստը գոնէ թոյլատրած էին որ անոնք փախչէին:

2. Լա Բրնէսան. թիւ 2, Եջ. 10 Դեկտեմբեր 1918, Թարգմանուած Հատիսաթէն:

3. Նոր Կեսնք. թիւ 107, 3 փետրուար 1919:

3ա. Լա Բրնէսան. թիւ 2, 10 Դեկտեմբեր 1918, Թարգմանուած Հատիսաթէն: Նոյն. թիւ 99, 27 Մարտ 1919:

47. Լա Բրնէսան. թիւ 19, Կիրակի Դեկտեմբեր 1918: Սապահէն:

1. Թիւրքիյէ Ինթիլափընըն Իշ Եիզի, Մեւլանգատէ Բիֆաթ, Հալէպ 1929, էջ 319, 277, 305-306:

Սուլթան Վահրտեստին Իզզէթ Փաշայի մասնաւոր հրահանգ տուաւ որ իր դահլիճէն հեռացնէ միութենական նախարարները եւ ձերբակալել տայ փախուստի պատասխանատուները: ⁴

Երիտասարդ Թուրքերը իրենց կուսակցութեան պաշտօնական լուծումէն ետք կը գործէին Թէճէտտիւտ նորակազմ կուսակցութեան վարագոյրին ետեւէն: Անոնք Իզզէթ Փաշայի վրայ ծանր ճնշում բանեցուցին որ տեղի չտայ Սուլթանի առաջարկին: Վարչապետը Սուլթանին գրեց կարճ զեկոյց մը, խիստ ոճով, թէ Սուլթանը սահմանադրութեան շնորհած առանձնաշնորհումներէն վեր կ'ելլէ եւ դեռ անդին կ'անցնի: ⁵

Սուլթան Վահրտեստին Բարձրագոյն Դուռ հրաւիրեց Ահմէտ Բիգա Պէյը. որ ծերակոյտի նախագահ էր: Անոր թելադրեց որ քըննէ վէճի առարկայ հարցը: Ծերակոյտի խորհուրդին առջեւ հանուեցաւ Սուլթանի եւ վարչապետի միջեւ յարուցուած իրաւասութեան խնդիրը:

Ծերակոյտը հաստատեց թէ Օսմանեան սահմանադրութեան տրամադրութիւնը նպաստաւոր էր Սուլթանի իրաւասութեան:

Իզզէթ Փաշայի դահլիճը սրիպուեցաւ հրաժարիլ 9 Նոյեմբեր 1918ին, Թէվֆիգ Փաշա այս անգամ յաջողեցաւ կազմել նոր դահլիճը որմէ դուրս մնացին Երիտասարդ Թուրքերու կուսակցութեան անդամները: ⁶

Սակայն նոր դահլիճը չկրցաւ գործել Սուլթանի հրահանգներուն համեմատ եւ ստեղծել ներքին եւ արտաքին նոր քաղաքականութիւն մը: Սուլթանի քաղաքականութիւնն էր սկիզբը գոնէ արդարութիւն ընել Հայերուն, Բարիզի խաղաղութեան վեհաժողովին ներկայանալէ առաջ: Այսպիսի քաղաքականութիւն մը կիրարկել գրեթէ անկարելի էր որովհետեւ Միութենականները կառավարութեան պաշտօնատուներու, թէ՛ Պոլսոյ թէ՛ նահանգներու մէջ, մեծամասնութիւն կը կազմէին, մասնաւորապէս ծերակոյտի եւ ե-

4. Հարպ Հաթըրապարըմ, Պատերազմի յուշերս, Ալի Իհսան Սապիհ, 5րդ հատոր, Անգարա 1951, էջ 10-11:

5. Պելկերքլէ Թիւրք Թարիխի Տէրկիսի, Թիւ 21, Յունիս 1969, էջ 3-4. Թիւ 23, Օգոստոս 1969, էջ 37:

6. Թարգմանութիւն Օսմանեան սահմանադրական օրէնքներու... Պաղատաւ, 12 Մարտ 1921, հրատարակուած Արդարութեան նախարարութեան կողմէ, էջ 3, բարեփոխուած մաս 30, 31, 32, 33:

րեսփոխանական ժողովին մէջ: Կարճ ժամանակի ընթացքին անկարելի էր պահանջուած փոփոխութիւնները ներմուծել Օսմանեան վարչական կազմին մէջ:

Քանի որ Երիտասարդ Թուրքերու կուսակցութիւնը գրաւելէ ետք իշխանութիւնը, ծրագրեց, կազմակերպեց եւ գործադրեց Հայերու բնաջնջումը կառավարութեան գործադիր մարմիններու միջոցով եւ գործելով Թէշքիլարը Մախսուսայի հրոսակներու կամ մարդու մսագործներու միջոցով եւ քանի որ անոնք աստ եւ այժմ մեծամասնութիւն կը ներկայացնէին յատկապէս ծերակոյտի եւ երեսփոխանական ժողովի մէջ, գրեթէ անկարելի էր բնականոն միջոցներով նախարարներ, ծերակուտականներ, երեսփոխաններ, բարձրաստիճան պաշտօնեաներ եւ բարձրագոյն սպաներ ձերբակալել եւ ատեանի առջեւ հանել:

Որեւէ ատեն մեծամասնութիւն կազմող խմբակցութիւնը կըրնար առաջ բերել նախարարական տազնապ, տապալել եւ փոխել կառավարութիւնը որ պիտի ուզէր յանդգնիլ արդարութեան յանձնել գլխաւոր յանցապարտները: Արդարութեան տրամադրութիւնը կիրարկելու համար հարկ էր որ կառավարութիւնը կարենար երեսփոխանական ժողովի եւ ծերակոյտի մեծամասնութիւնը չէզոքացնել, հեռացնել գոնէ բնաջնջումի քաղաքականութեան պատասխանատուները: Դահլիճի գոյութիւնը եւ շարունակումը կախում ունէին մեծամասնականներու վճռական գործունէութենէն:

Արդարեւ, պատրաստութիւններ տեսնուած էին մեծամասնական խմբակցութեան կողմէ վստահութեան հարցը առաջ բերելու Թէվֆիգ Փաշայի դահլիճին դէմ: Մինչ վարչութիւնը պատրաստուած էր հակազդելու եւ անհրաժեշտ պարագային լուծելու նաեւ երեսփոխանական ժողովը: Թրքական քաղաքականութեամբ Թէվֆիգ Փաշայի կառավարութիւնը յանձն առած էր խորտակել մեծամասնութիւնը անոնց որոնք կազմակերպած եւ գործադրած էին Հայերու բնաջնջումը, որոշած էր զանոնք արդարութեան ատեանի առջեւ բերել Բարիզի արդարութեան ատեանին ներկայանալէ առաջ:

Իր ձերբակալութենէն առաջ Իզզէթ Փաշայի դահլիճին մէջ ներքին գործերու նախարար Ֆէթհի Պէյ իբր մեծամասնութեան ղեկավար եւ իր համախոհները որոնք իրեն թիկունք կը կանգնէին Օսմանեան երեսփոխանական ժողովի մէջ սկսան խստօրէն քննադատել Թէվֆիգ Փաշայի դահլիճը:

Ֆէթհի Պէյի եւ իր համակիրներէն ստորագրուած հարցարան մը Թէվֆիգ Փաշայի ապահովեց իր փնտուած պատճառները: Իր վարչութիւնը պատրաստեց հարցումներու պատասխանները եւ այդ մասին տեղեակ պահեց երեսփոխանական ժողովի նախագահը:

Հանրային կարծիքն ու թերթերը սկսան զօրաւոր արշաւ մը Թէվֆիգ Փաշայի դահլիճին դէմ: Ֆէթհի Պէյի համակիր երեսփոխաններ ապահոված կը կարծէին յաղթանակը:

Ուրբաթ օր 20 Դեկտեմբեր 1918ին Թէճտտուտի վարագոյրին ետեւ պահուրտող Երիտասարդ Թուրքերը հաւաքոյթ մը գումարեցին եւ որոշեցին Թէվֆիգ Փաշայի դահլիճին տալ անվստահութեան քուէ երեսփոխանական ընդհանուր հաւաքոյթի ընթացքին, ուր ներկայ պիտի ըլլային նաեւ ծերակուտականները, երեսփոխանները եւ նախարարները: Նիստէն առաջ արդէն Թէճտտուտի անդամները գաւիթին մէջ անկիւն մը քաշուած կը վիճաբանէին. կը կարծէին որ դահլիճը պիտի իյնար մեծամասնութեան անվստահութեան քուէներով: ⁷

Շաբաթ օր 21 Դեկտեմբեր 1918ին Օսմանեան Խորհրդարանի լիագումար նիստի ընթացքին՝ մեծամասնականները բուռն վէճ մը առաջ բերին որ հետզհետէ աւելի սաստկացաւ:

Ներքին գործերու նախարար Մուսթաֆա Արիֆ Պէյ սկսաւ կարդալ հարցումներու պատասխանները իր խօսքը ուղղելով Ֆէթհի Պէյի եւ ասոր համակիր երեսփոխաններուն: Այս պատասխանները իսկապէս վաւերական ամբաստանութիւններ էին Թէճտտուտի վարագոյրին ետեւ ծածկուած երիտասարդ Թուրքերու եւ ասոնց կազմակերպած եւ գործադրած ոճիրներուն հրապարակային մերկացումն էին: Պատասխանները մասնաւորապէս ցոյց կու տային թէ Երիտասարդ Թուրքերը կանոնաւոր կառավարութիւն երբեք կազմած չէին, ծերակուտականներ եւ երեսփոխաններ երբեք օրինաւորապէս ընտրուած չէին, յատկապէս անոնք կազմակերպած եւ իրագործած էին տեղահանութիւն եւ կոտորած կուսակցութեան կեղերոնական կոմիտէի հրահանգներով որոնց հետեւանքը եղած էր ներկայի աղէտը:

Նոյն վայրկեանին երեսփոխանական ժողովի մէջ սաստիկ փո-

7. Լա Բընէսան. թիւ 12, Շր. 21 Դեկտեմբեր 1918:

թորիկ մը յուզուեցաւ երբ Ֆէթհի Պէյ եւ իր համախոհները խօսք ուղեցին պատասխանելու համար եղած հրապարակային ամբաստանութիւններուն:

Մինչ ներքին գործերու նախարարը յայտարարեց պաշտօնապէս.

«Պարոններ, ներողամիտ եղէք, քիչ մը համբերութիւն, կայսերական հրովարտակը պիտի կարդացուի, մտիկ ըրէք...» ⁸

Խորհրդարանի լուծումը անհրաժեշտ ըլլալով աւագագոյն պատճառներու համար, եւ անհրաժեշտ պարագային, Խորհրդարանի լուծումը մեր գերագոյն իրաւունքին մաս կազմելով, սահմանադրութեան բարեփոխուած եօթներորդ յօդուածի մասնաոր տրամադրութեան համաձայն կը վճռէր Խորհրդարանը լուծել այսօր իսկ:

21 Դեկտեմբեր 1918:

Ստորագրուած/Մէհմէտ Զ:» ⁹

Ընթերցումէն ետք նախարարը յայտարարեց ակնարկելով հայ ժողովուրդի բնաջնջումին. «Աղօտ լոյս մը կը սփռուի Հայերու դէմ գործուած վայրագութեանց վրայ, վայրագութիւններ որոնք ամբողջ մարդկութեան զգուանքը յառաջացուցին. մեր երկիրը մեզի յանձնուեցաւ վերածուած հսկայական սպանդանոցի մը:» ¹⁰

Խորհրդարանի լուծման պատճառները

Սուլթան Վահիտէտտին իր հրովարտակին մէջ «աւագագոյն պատճառներ» կ'ըսէ սակայն չի մանրամասներ կամ յստակօրէն չի յայտնէր երեսփոխանական ժողովի լուծման խորագոյն դրդապատճառները:

Խորհրդարանի լուծումէն ետք երեսփոխանները եւ ծերակուտականները զրկուեցան իրենց անձեռնմխելի առանձնաշնորհումէներէն: Քսան չորս երեսփոխաններ ձերբակալուեցան եւ դատա-

8. Լա Բընէսան. թիւ 13, Կիրակի, 22 Դեկտեմբեր 1918:

9. Թագուիմը Վագայի, Թուրք կառավարութեան պաշտօնաթերթ, թիւ 3425, 22 Դեկտեմբեր 1918, էջ 1:

Սահմանադրութեան բարեփոխուած եօթներորդ յօդուածը տես նոյն ընդ վերեւ թիւ 6.

10. Լա Բընէսան. թիւ 13, Կիր. 22 Դեկտեմբեր 1918:

րան տարուեցան: Ուրիշ շատեր ծակէ ծակ փախան: Ապա երբ ընդհանուր ձերբակալութիւնները սկսան, իզգէթ փաշայի դահլիճին նախարարները ձերբակալուեցան, իսկ Բրիտանական Բարձր Գործավարը Պոլսոյ մէջ արգելք հանդիսացաւ որ նոյնինքն վարչապետ իզգէթ Փաշա ձերբակալուի եւ բանտ դրուի: Տասնեւմէկ երեսփոխաններ Մալթա աքսորուեցան, Երզնկայի երեսփոխան Հալէդ Պէյ մահուան դատապարտուեցաւ Պատերազմական Ատեանի կողմէ: ¹¹

Թուրք, Հայ, Անգղիական, Գաղղիական, Յունական, Պուլկարական, եւ ուրիշ թերթեր մեկնեցին կայսերական հրովարտակը:

«Քանի մը տողերէ բաղկացած կայսերական հրովարտակը վերցուց վերջապէս այն վարագոյրը որ կը ծածկէր եւ կը պաշտպանէր չարագործներու լէգէոն մը, որոնք դեռ երէկ, օրէնքներ կը հաստատէին:

«Ոճրագործներ կան, որոնք հազիւ Խորհրդարանէն դուրս ելլեն, պէտք է դատարան տարուին:» ¹²

«Այս ներկայացուցչական ժողովը կազմուած էր Երիտասարդ Թուրքերու կողմէ: Անոնք պատերազմական երկու դահլիճներու խնկարկուններն էին:» ¹³

«Երկրորդ պատճառը, որուն համար Խորհրդարանը գումարուելու իրաւունքը կորսնցուց, այն է որ երեսփոխանները կը կրէին ամէնաձանր պատասխանատուութեան բեռը, այնպիսի պատասխանատուութիւն մը, զոր ոչ մէկ խորհրդարան ունեցած է:

«Ամօթի նախատինքը ծանրապէս կը ճնշէր անոնց վրայ:

«Անհրաժեշտ չէ միթէ՞ զանոնք դատի կանչել:

«Սակայն պատշաճ չէ լռութեամբ անցընել եղելութիւն մը որ արդիւնքն է ոճիրներու երկար շարքի մը:

«Խորհրդարանը, իր կարգին, մեղսակից եւ գործակից եղած էր Երիտասարդ Թուրքերուն:

«Մեղսակից, այն լռութեամբ զոր գիտակցաբար պահեցին, ամէնազգուելի ոճիրներու գործադրութեան ընթացքին, տեղեակ

11. Լա Բրնէսան. Թիւ 13, Կիր. 22 Դեկտեմբեր 1918: Փրոտոս Յոյն թերթէն թարգմանուած:

12. Լա Բրնէսան. 27 Դեկտեմբեր 1918:

13. Նոյն, Փրոտոս Յոյն թերթէն թարգմանուած:

ըլլալով հանդերձ ոճիրներու կազմակերպութեան, որոնք տեղի ունեցան իրենց աչքերուն առջեւ:

«Գործակից, որովհետեւ երեսփոխաններէն շատեր անձամբ վարեցին կոտորածները:

«Անոնք քուէարկեցին շարք մը ժամանակաւոր օրէնքներ, անօրէն օրէնքներ, եղեռնագործ օրէնքներ:» ¹⁴

Թուրք Պատերազմական Ատեանը դատելու սկսաւ տասնեւմէկ թուրք երեսփոխաններ, որոնք անձամբ վարած էին կոտորածը, իսկ տասներեք ուրիշ երեսփոխաններու թղթածրարներն ալ աւարտելու վրայ էին Պատերազմական Ատեանի յանձնուելու համար, եւ երեսփոխաններն ալ բանտարկուած էին:

«Տարիներ շարունակ այս երեսփոխանական ժողովը թոյլատրեց որ գործուին պատմութեան մէջ աննախընթաց կոտորածներ, կողոպուտներ, գողութիւններ եւ ապօրինութեանց անհամար շարք մը:» ¹⁵

«Ժողովուրդը անօթի մեռաւ, երեսփոխանները ծափահարեցին:

«Վարչական պաշտօնատուներու մէջ զեղծումները բազմապատկուեցան երկինք հասնելու չափ, անոնք ծափահարեցին:

«Թուրքեր կախուեցան, անոնք ծափահարեցին:

«Հայերը կոտորուեցան, անոնք ծափահարեցին:

«Յոյները տարագրուեցան, անոնք ծափահարեցին:

«Արաբներ բնաջնջուեցան, անոնք ծափահարեցին:» ¹⁶

«Օսմանեան երեսփոխանական ժողովը կազմուած էր այո՛, այո՛ կրկնող մարդերով:

«Ժողով մը որ նշանաւոր էր ամէն առաջարկներու իր տուած հաւանութեամբ, նոյնիսկ Ներոնի ատենէն ասդին գոյութիւն ունեցող ոճրագործներու առաջարկներուն:» ¹⁷

«Պատերազմի ընթացքին Թուրքերը երբեք չդադրեցան մինչեւ ամպերը, մինչեւ ութերորդ երկինք բարձրացնել մարդկութեան դէմ իսկական ոճրագործները, կայսրը, Հինտէնպուրկ, Էնվէր,

14. Լա Բրնէսան. Թիւ 14, Բշ. 13 Դեկտեմբեր 1918:

15. Լա Բրնէսան. Թիւ 15, Գշ. 24 Դեկտեմբեր 1918:

16. Արիամարտ, Թիւ 29 (1844), 23 Դեկտեմբեր 1918:

17. Նոյն,

Թալաաթ եւ բոլոր նման աշխարհակալութեան սրիկաները եւ արիւնարբուները:»¹⁸

Ներքին գործերու նախարարը Պատերազմական Արտակարգ Ատեանի նախագահ էսատ Փաշայի հաղորդեց նախկին երեսփոխաններուն ցանկը եւ պահանջեց որ ան նշանակէ անոնք որոնք Հայերու բնաջնջումին մեղսակից եղած էին: Այս երեսփոխանները պիտի չկրնային իբր թեկնածու ներկայանալ ընտրութեան ատեն: ¹⁹

Եւնի Կիւն փորձեց հերքել այսպիսի ցանկի մը գոյութիւնը մինչ Թերնիսանը Հագիգաթ սպառնաց հրատարակել երեսփոխաններու այդ ցանկը զոր ներքին գործերու նախարարը յանձնած էր Պատերազմական Ատեանի նախագահին զանոնք դատելու համար: ²⁰

Գոնիայի ոստիկանապետ Սաստէտտին Պէյ տեղահան եղած Հայերու երեսն ի վեր յայտարարեց. «Երիտասարդ Թուրքերու Կեդրոնական Կոմիտէի որոշումով, Օսմանեան կառավարութիւնը հրամաններ հանեց, եւ Երեսփոխանական Ժողովը վաւերացուց նոյն որոշումը, որ վերապրող Հայերը անապատ պիտի զրկուին հոն վրաններու տակ ապրելու համար:» ²¹

Թէ ինչու Թէնտտուտի վարագոյրին ետեւ պահուած Երիտասարդ Թուրքերը հզօր ջանքեր կ'ընէին վարչապետ Թէվֆիզ Փաշայի դահլիճը տապալելու որովհետեւ ան մերժած էր պատրաստել տալ մասնաւոր իրաւախոհութիւն մը դատել տալու համար պատերազմի զոյգ դահլիճներու վարչապետներն ու նախարարները, երիտասարդ Թուրքերու ղեկավարները, ծերակուտականներն ու երեսփոխանները:

18. Լա Բրնէսան. Թիւ 32, 11 Յունուար 1919, Թարգմանուած Ալէմտարէն:

19. Նոյն.

20 Լա Բրնէսան. Թիւ 361, Կիրակի, 1 Փետրուար 1920:

21. Լա Բրնէսան. Թիւ 14, Բչ. 23 Դեկտեմբեր 1918:

Հայաստան թրքերէն բնագիր

Թէվֆիզ Փաշա Իթթիհաթըլարըն եարկըլանմալարը իշին միթատ գանուհի իշլէմլէրէ լիզում կէօրմիլէրէք հէմէն էօրֆի հարպ տիվանընա սէվգ էտիմէլէրիհի իսթէտիլսէ տէ, Վահիտէտտիհն պունու անայասայա այքըրը պուլարաք ռէտէթթի:

Այրընա քէնտիսիհնէ մապէյն պաշ քէաթիփլիղի վասըթասըլլէ հիլիմէթիհն տէօրթ այտըր կէօթէրտիլի ատալէթ վէ ահիզտէն տօլալը թէսիֆլէրիհի պիլտիրտի:

Թէվֆիզ Փաշա, պունու իզլէրիհն 3 Մարդ 1919 թարիսիստէ իսթիֆասընը վէրտի:

Էրթէսի կիսիս տէ Տամատ Ֆէրիտ Փաշա սատարէթէ կէթիրիլտի: ²²

Հայերէն թարգմանութիւն

Թէվֆիզ Փաշա անհրաժեշտ չընկատեց պատրաստել տալ իրաւախոհութեան ձեռնարկն համար պիտի դատուէին Միութեանականները, այլ ան ուզեց գանոնք դատել տալ սովորական ոճրագործներու պէս:

Թէն ինք ուզեց անմիջապէս Արտակարգ Պատերազմական Ատեանի առջեւ բերել գանոնք, սակայն Սուլթան Վահիտէտտիհն մերժեց որովհետեւ կը կարծէր որ այդ՝ սահմանադրութեան տրամադրութեանց համաձայն չէր: Դեռ ատլի զայն պալատի սենեկապետ նշանակելով անոր հասկցուց թէ կառավարութիւնը անգործ եղած էր անցեալ չորս ամիսներու ընթացքին եւ ցաւ յայտնած էր:

Ասոր վրայ, Թէվֆիզ Փաշա ներկայացուց հրաժարականը 3 Մարտ 1919ին:

Երկրորդ օրը Տամատ Ֆէրիտ Փաշա վարչապետ եղաւ:

* * *

22. Պէլկէլէրլէ Թիքթ Թարիսի Տերկիսի, Պարբերաթերթ Թուրք վաւերագրական պատմութեան, Թիւ 22, Յուլիս 1969, էջ 28:

Թուրք Պատերազմական Ատեանը կը հաստատէ
Թուրք Պաշտօնական Վաւերագրերու Վաւերականութիւնը

Թուրք պաշտօնական եւ կիսապաշտօն վաւերագրերու վաւերականութիւնը հաստատելու համար Թուրք Պատերազմական Ատեանը գործածած է զրուիւն մը որով անխուսափելի կերպով երեւան կու գայ տեղահանութեան եւ կոտորածներու վերաբերեալ Թուրք պետական պաշտօնեաներու, զինուորական սպաներու, կուսակցական ղեկավարներու եւ Թէշքիլաթը Մախսուսալի հրամանատարներու կողմէ ստորագրուած եւ զրկուած վաւերագրերու վաւերականութիւնը:

Ատեանի Նախագահը, Ընդհանուր Դատախազը եւ Դատաւորները Թուրք ամբաստանեալներու եւ Թուրք վկաներու առջեւ կարգալ կու տան անոնց ստորագրութիւնը կրող վաւերագրեր, բնագիր կամ պաշտօնապէս հաստատուած պատճէններ, եւ անոնց կ'ուղղեն հարցումներ թէ վաւերագրերու զրուիւնը իրենցմէ է եւ ստորագրութիւնը իրենց ստորագրութիւնն է:

Ամբաստանեալ եւ վկայ իրարմէ կը տարբերին միայն մէկ հանգամանքով թէ ամբաստանեալը բանտարկուած է եւ ատեան կը բերուի դատուելու համար, մինչ վկան ենթակայ է ձերբակալուելու, ամբաստանուելու եւ ատեան բերուելու դատուելու համար: Վկաները երկու տեսակ են, ոմանք ատեանի կողմէ կանչուած են ճշմարտութեան համար վկայելու, ոմանք ալ կանչուած են ամբաստանեալներու կողմէ վկայելու ամբաստանեալներու անմեղութիւնը փաստարկելու համար:

Ամբաստանեալներ եւ վկաներ պարտաւոր են Ատեանի Նախագահին կողմէ իրենց եղած հարցումներուն պատասխանելու դրապէս, բացասապէս եւ կամ խուսափողական կերպով, ուրիշ խօսքով ամբաստանեալներու եւ վկաներու պատասխանները կամ խոստովանութիւններ կամ ուրացումներ եւ կամ ալ խուսափողական անորոշ պատասխաններ են:

Երբ ամբաստանեալներ եւ վկաներ կը ճանչնան եւ կ'ընդունին իրենց զրուիւնները եւ ստորագրութիւնները, խնդրի առարկայ պաշտօնական կամ կիսապաշտօն վաւերագրերու վաւերականութիւնը կը հաստատուի նոյն ինքն Ատեանի առջեւ եղած խոստովանութեամբ:

Երբ ամբաստանեալներ եւ վկաներ ուրանան թէ իրենք խրաբարած եւ ստորագրած չեն խնդրի առարկայ վաւերագրերը այն ատեն Ատեանի Նախագահը նորանոր հարցումներով կը ջանայ ամբաստանեալներն ու վկաները հասցնել խոստովանութեան եւ կամ խոստովանութեան համագոր յայտարարութեան:

Եթէ ամբաստանեալներն ու վկաները իրենց ուղղուած հարցումներուն խուսափողական պատասխաններ տան, Ատեանի Նախագահը կամ Դատախազը կամ Դատաւորներէն մին կամ միւսը կը հետապնդեն նորանոր հարցումներով մինչեւ որ ամբաստանեալներ եւ վկաներ ճշմարտութիւնը յայտնելով հաստատեն վաւերագրերու վաւերականութիւնը:

Երբեմն Ատեանը մէկ կամ աւելի ամբաստանեալներ եւ վկաներ իրարու հակասական դիրքի մէջ կը դնէ, մէկուն կամ միւսին խոստովանութիւնը բաւարար կը նկատուի հաստատելու համար վաւերագրերու վաւերականութիւնը:

Կան նաեւ վաւերագրեր որոնք կը կրեն հաւաքական ստորագրութիւններ: Այս պարագային՝ ստորագրող ամբաստանեալներէն եւ կամ վկաներէն մէկուն խոստովանութիւնը կը հաստատէ վաւերագրերու վաւերականութիւնը, նոյն իսկ եթէ ստորագրողներէն մէկը կամ միւսը ուրանայ եւ կամ անորոշ պատասխան տայ:

Նկատելի է նաեւ ուրիշ պարագայ մըն ալ. երբ ամբաստանեալներ եւ վկաներ կ'ուրանան իրենց զրուիւնը կամ ստորագրութիւնը, կը կանչուին ուրիշ վկաներ կամ անձեր որոնց ուղղուած են վաւերագրերը: Երբ այս նոր վկան հաստատէ թէ ամբաստանեալը կամ ստորագրութիւնը ուրացող վկաները իրապէս իրեն զրկած են խնդրի առարկայ վաւերագրերը, այն ատեն կը հաստատուի վաւերագրի վաւերականութիւնը, նոյնիսկ եթէ ամբաստանեալներ եւ վկաներ հաստատուն մնան իրենց ուրացումին վրայ:

Եռզղատ գաւառի Պողազլեան քաղաքի զինուորական կայքի հրամանատար Գնդապետ Մուսթաֆա Պէյ իր անմիջական մեծաւորին, այսինքն՝ Կեսարիոյ տասնեւհինգերորդ Զօրաբաժնի հրամանատար Հազարապետ Շէհապետին Պէյի կը տեղեկագրէ 14 եւ 22 Յուլիս 1915 թուակիր հեռագիրներով թէ Պողազլեանի գայմազամ Բէմալ Պէյի հրամանով անգամ մը երեք հարիւր,¹

1. Լա Բրնէսան, թիւ 69, 20 Փետրուար 1919:

ուրիշ անգամ մը հազար հինգ հարիւր,² եւ 23 Յուլիս 1915 թուականի հեռագրով ալ կ'իմացնէ որ երեք հազար վեց հարիւր վաթսուն³ Հայեր կոտորուած են:

Կեսարիոյ տասնեւհինգերորդ զօրաբաժնի հրամանատար Հազարապետ Շէհապէտտին Պէյ ալ իր կարգին նոյն տեղեկութիւնները օրը օրին կը հաղորդէ իր անմիջական եւ նուիրապետական մեծաւորին՝ այսինքն՝ Անգարայի Հինգերորդ Զօրաբանակի հրամանատար Խալիլ Բէճայի Պէյի: Այս վերջինը, իր կարգին նոյն տեղեկագիրները Անգարայէն ծածկագիր հեռագիրներով կը հաղորդէ Պոլիս Պատերազմական Նախարար Էնվէր Փաշայի:

Պատերազմական Ատեանի առջեւ այս հեռագիրները կը կարգացուին Պողազլեանի Գայմագամ եւ Եոզղատի Միւթէսարըֆի փոխանորդ ամբաստանեալ Քէմալ Պէյի ներկայութեան, որ պարզապէս կ'ուրանայ նոյն հեռագիրներու բովանդակութիւնը:

Ատեանի առջեւ կը հրաւիրուի Շէհապէտտին Պէյ, իբր վկայ, որ բոլորովին չ'ուրանար հեռագիրները, սակայն յստակ պատասխան մը չի տար որ լոյս սփռէ իրական եղելութեան վրայ:

Շէհապէտտինի խուսափողական պատասխաններուն վրայ, Ատեանի առջեւ կը կանչուի վկայելու Անգարայի Հինգերորդ Զօրաբանակի հրամանատար Խալիլ Բէճայի Պէյ, որ կը վկայէ եւ կը հաստատէ թէ ինք Կեսարիայէն Շէհապէտտինի ղրկած հեռագիրները ստացած է եւ տեղեկագրած է Պոլիս Պատերազմական Նախարար Էնվէր Փաշայի մանրամասնելով որ Զօրաբաժնի հրամանատարը այդ հեռագիրները ստացած էր Պողազլեանի զօրակայքի հրամանատար Մուսթաֆա Պէյէն:

Վերստին կը կարգացուին հեռագիրները. Շէհապէտտին Պէյ մարմրուք կ'ունենայ կամ մարմրուք կը ձեւացնէ փափուկ կնոջ մը պէս: Երբ իր մարմրուքէն կ'արթննայ, Ատեանի Նախագահի հրամանով կրկին կը կարգացուին Շէհապէտտին Պէյի ստորագրութիւնը կրող հեռագիրները եւ անոր կ'ուղղեն միեւնոյն հարցումները: Շէհապէտտին Պէյ կ'ընդունի եւ կը խոստովանի որ տեղի ունեցած են կոտորածներ, սակայն ինք չի յիշեր նոյն կոտորածներու հեղինակները կամ պատասխանատուները: Պատերազմական

Ատեանի Ընդհանուր Դատախազը կը յայտարարէ թէ Շէհապէտտին Պէյի ստորագրութեամբ հեռագիրները եւ ուրիշ հեռագիրներ ալ պաշտօնական եւ վաւերական են հակառակ եղած ուրացումներուն եւ տատամսոտ պատասխաններուն: Կատարիչ Քէմալ Պէյ ալ հուսկ կը խոստովանի որ կոտորածներ տեղի ունեցած են իսկապէս:

Հաստատելէ ետք Թուրք պաշտօնական վաւերագրերու վաւերականութիւնը, Պատերազմական Ատեանը մահուան կը դատապարտէ կատարիչ Քէմալ Պէյը:

Պատերազմական Ատեանի Նախագահը կը հարցնէ Շէհապէտտին Պէյի. «Եոզղատի Հայերէն հարիւր երեսուն հոգիի՝ ձէվիլլի Խան սպանուած ըլլալը իմացուցեր էք ձեր պետին: Պաշտօնական հեռագիր կայ. այս մասին ի՞նչ կ'ըսէք: Քննութիւն կատարեցի՞ք: Ի՞նչ կը յիշէք:»⁴

Շէհապէտտին կը պատասխանէ տարակուսական կերպով. «Այս մասին կարելի է բան մը իմացուցեր եմ...»⁵

Մինչ Ընդհանուր Դատախազը կը հաստատէ թէ չկրցաւ լուսարանել, եւ կը հաստատէ ըսելով. «Սակայն հեռագիրներուն վաւերականութիւնը երկբայելի չէ...»⁶

Շէհապէտտին Պէյ կը ստիպուի դիմել դէպի լոյս. «Գրաւոր տեղեկութիւնները Կեսարիա կը գտնուին. կրնայ քննուիլ, ինծի բերանացի տեղեկութիւն չէ տրուած:»⁷

Ատեանի Նախագահին հրամանով ատենագիր քարտուղարը հանրութեան առջեւ կ'ընթեռնու թիւ 207 հեռագիրը. «Կարդացուցաւ Շահապի մէկ հեռագիրը 23 Յուլիս թուականով որով 3160⁸ Հայերու սպանուած ըլլալը կը յայտնէր:»⁹

Տատամսոտ Շէհապէտտին Պէյ կը պատասխանէ. «Չեմ յիշեր այս խնդիրը:»¹⁰

2. Նոյն, թիւ 81, 6 Մարտ 1919, իններորդ դատավարութիւն:

3. Նոյն, թիւ 81, 6 մարտ 1919, իններորդ դատավարութիւն:

4. Փամանակ, Մարտ 1919, Նոյն. 29 Մարտ 1919, էջ 1, սիւնակ 4 եւ 5: Տասն-եւ հինգերորդ դատավարութիւն Եոզղատի:

5. Փամանակ, 29 Մարտ 1919:

6. Նոյն:

7. Նոյն:

8. Հեռագրին արաբատառ թրքերէնին մէջ թիւը 3660 է:

9. Փամանակ, 25 Փետրուար 1919:

10. 11. 12. Նոյն:

Ընդհանուր Դատախազը կը պահանջէ որ Շէհապէտտին Պէյ լուսարանէ այս հարցը եւ կը հարցնէ. «Շահապ Պէյ թող որոշապէս ըսէ թէ այդպիսի դէպքեր տեղի ունեցա՞ն թէ ոչ, որովհետեւ հեռագրէն կը հասկցուի որ Քէմալի կողմէ այս ոճիրներու առիթ տրուած է:»¹¹

Շէհապէտտին Պէյ վերջապէս կը խոստովանի. «Այսպիսի դէպքեր տեղի ունեցած են...»¹²:

Ուրիշ հարցումներու դարձեալ Շէհապէտտին Պէյ անորոշ պատասխաններ կու տայ, մինչ Ատեանի Դատաւոր Յարութիւն Մոսթիշեան կը զգուշացնէ Հազարապետ հրամանատարը. «Ամթա՛հար պիտի ըլլաք երբ տեսնէք ձեր ստորագրութիւնը կրող հեռագիրները...»¹³

Հայ իրաւունքներու պաշտպան փաստաբան Րէմզի Էֆէնտի կը հարցնէ Շէհապէտտին Պէյի. «Քանի որ հրամանատար է, պէտք է զիտնայ թէ որքան Հայեր ապստամբած են:»¹⁴

Հազարապետ Շէհապէտտին չպատասխանեց այս հարցումին:

Իբր թէ վրան մարմրուք եկաւ:

«Էֆէնտիներ, աթոռ մը, ըսաւ ան:» Դուրս հանեցին զինքը որ քիչ մը օդ առնէ:¹⁵

Ընդհանուր Դատախազը կը հետապնդէ Շէհապէտտին Պէյի անորոշ ընթացքը եւ կը ջանայ հաստատել վաւերագրերու վաւերականութիւնը. «Երրորդ հեռագիր մը կայ, կ'ըսէ ան, որուն մէջ Շահապ Պէյ կ'ըսէ թէ Պողազլեանի Հայոց ինչքերը կողոպտուած են:»¹⁶

Բաւական վարանումէ ետք Շէհապէտտին Պէյ կը պատասխանէ. «Այդպիսի հեռագիր մը զրկած ըլլալու չեմ...»

«Ընդհանուր Դատախազ. Այս վկան խուսափողական պատասխաններ տալուն համար պիտի չարտօնուի Իզմիր դառնալու:»¹⁷

«Կ'երեւի թէ բան մը չպիտի ըսէ մինչեւ որ իր ստորագրութիւնը կրող հեռագիրները ցոյց չտրուին իրեն: Կ'առաջարկեմ որ յաջորդ դատավարութեան միջոցին այդ հեռագիրները կարգացուին

13. Փամանակ, 22 Փետրուար 1919:

14. Նոյն:

15. Նոյն:

16. Փամանակ, 22 Փետրուար 1919, էջ 4, սիւնակ 1, 2, 3:

17. Մակաւումարտ, 19 Փետրուար 1919:

եւ ըստ այնմ լսուին վկային յայտարարութիւնները...»¹⁸

Կը կարգացուին Շէհապէտտին Պէյի հեռագիրները, յատկապէս հետեւեալ հեռագիրը.

Հայաստան թրքերէն բնագիր

Հայերէն թարգմանութիւն
Թի 207.

Ատէտ 207.

Շիֆրէ մահլուլը

Անգարա Գօլթրու Գումանտանլըղնա

Շիմտիյէ գատար Պողազլըյան գասապասըլլա գուրասը տախիլինտէ պուլունան Էրմէնիլէրին Պողազլըյան գայմագամը վասիթասըլլա իւշպին ալթընիզալթմըշ (3660) Էրմէնիին գաթլէտիլմիշ օլտուդու Շուպէ թիյասէթիին իշարը թէլկրաֆիսիին աթֆէն մա'արուզուր:

23 Թէմուզ 331:

Ֆըրգա Օնպէշ Գումանտան

Վէքիլի'

Շահապէթիին:¹⁹

Շէհապէտտին:

Եողղատի կառավարիչ ձէմալ Պէյ կը վկայէ եւ Ատեանի կը յանձնէ տեղեկագիր մը գրուած եւ ստորագրուած Եողղատի Ոստիկանապետ Թէվֆիզ Պէյի կողմէ:

«Ձէմալ Պէյի ներկայացուցած տեղեկագրէն հասկցուեցաւ որ Թէվֆիզ Պէյ ժամանակին իրեն տուած տեղեկագրին մէջ ըսած է որ Հայերը այդ կողմերը ապստամբութիւն հանելու կը ձգտին, պէտք է կարգ մը զիւղերէ տեղահան ընել» Հայերը:

«Նախագահը հարցուց Թէվֆիզի թէ այդ տեղեկագիրը քո՞ւկդ է:

«Թէվֆիզ. Ես գրած եմ. Մատենի գայմագամը իմացուցած

18. Փամանակ, 22 Փետրուար 1919:

19. Դ. Ե. Թիւ Մ 541:

էր որ Չաթի լեռներէն Հայերը կ'իջնէին Իսլամները կոտորելու, ինչ որ պէտք է, ընելու է:

«Մուսթաֆա Փաշա (Դատաւոր)․ Այս տեղեկագրին վրայ ի՞նչ ըրիք:

Մէմալ․ Ես ալ քննութիւն մը կատարեցի, հասկցայ որ տեղահան եղած Հայերէն մաս մը եւ փախստական զինուորներ հոն ապաստանած են․․․»²⁰

Ընդհանուր Դատախազը անձամբ կը կարդայ նամակ մը․ «Քէմալ նամակ մը տուած է երեք տեղէ կնքուած, որուն վրայ գրուած է․ «Ձեզի յանձնուած պաշտօնը խճամութեամբ կատարեցէք եւ Պաթալ գիւղ հասնելուն պէս, Պագրըճը Մահմուտ, Ապտուլլահ եւ Մէհմէտ Էֆէնտիներու կողմէ ժամն ու թուականը որոշող տեղեկագիր մը պատրաստուելէ վերջ պիտի բացուի:» Այդ պահարանին մէջէն ելող թուղթով մը կը յանձնարարուի ժանտարմա Շիւքրի այդ երեք անձերու հրամանին համակերպիլ, իսկ երկրորդ թուղթով մը որ ստորագրուած է Մուհաւէպէճի Վէհպի կողմէ, կը հրամայուի հայ կիները եւ աղջիկները հսկողութեան տակ առնել եւ անոնց գոյքերը հաւաքելով քաղաք փոխադրել: Հիմա այս մարդոց գոյքերը արդէն քաղաքին մէջ մնացած էին, հետեւաբար երբ կ'ըսուի որ իրենց գոյքերը առէք եւ պահեցէք, պարզապէս յայտնի է որ ասոնք սպաննուելէ յետոյ իրենց վրայէն առնուելիք գոյքերն են․ ուրիշ մեկնութիւն չի վերցներ ասիկա:

«Նախագահ․ Այս պահարանին վրայի կնիքը եւ գիրը քո՞ւկդ են:

«Քէմալ․ Իմ գիրս չէ․ ես այդպիսի հրահանգ չեմ տուած․ ես հրահանգ տուած եմ որ Հայերը պաշտպանեցէք․ իմ մէկ նամակիս պարունակութիւնը այդ է, միւս նամակը չեմ գիտեր թէ ով է գրողը:

«Նախագահ․ Դուք իբրեւ Եոզղատի կառավարիչ երկու հոգիի պաշտօն կը յանձնէք եւ ժանտարմային կը յանձնարարէք որ անոնց հրահանգին համեմատ շարժին:

«Քէմալ․ Ժամանակ անցած է, չեմ յիշեր, կ'երեւայ որ ինծի պէտք ցուցուցած են, ես ալ հրահանգ տուած եմ: Կը կարծեմ որ այս երեք անձերը Էմվալը Մէթրուքէի անդամ ըլլալով դրած ենք այդ պաշտօնին մէջ:

20․ Ժամանակ, 6 Մարտ 1919, 11րդ դատավարութիւն, էջ 5, սիւնակ 4:

«Նախագահ․ Այդ մարդիկ ո՞վ են, գիտէ՞ք:

«Քէմալ․ Չեմ ճանչնար:

«Նախագահ․ Եթէ չէք ճանչնար, ինչո՞ւ պաշտօն յանձնեցիք:

«Քէմալ․ Կ'երեւայ որ ինծի յանձնարարուած էին:

«Նախագահ․ Նախնական հարցաքննութեան մէջ ըսած էք որ տեղահանութեան թուղթերու մէկ մասը այրած ենք, ասիկա ձեր ստորագրութեան տակ է, ո՞ր թուղթերը այրեցիք:

«Քէմալ․ Ես այդ վկայութիւնը դրած ատենս արդէն ճամբորդութենէ նոր եկած, յոգնած, շփոթ վիճակ ունէի․ անապարանօք գրեցի, որովհետեւ միջոց չտուին հանգստանալու: Ատիկա ճիշդ չէ:

«Ընդհանուր Դատախազ․ Ես այդ քննիչ մարմնոյ մէջ էի․ այս հարցումներուն պատասխանը երեք չորս ժամէն գրեց, հետեւաբար իր այս խօսքը ճիշդ չէ:»²¹

Պոլսոյ զօրակայքի հրամանատար եւ Թէշքիլաթը Մախսուաւի վարիչ Ճեւատ պէյ ջանաց ուրանալ ամէն տեսակէտով երկու Թէշքիլաթը Մախսուաներու գոյութիւնը․ այն ատեն Ատեանի Նախագահը կարդալ տուաւ իր առջեւ շատ մը հեռագիրներ, որոնցմէ երեքը կը կրէին իր իսկ ստորագրութիւնը: Նախագահը հարցուց անոր․

«Այս երեք առաջին հեռագիրներուն ստորագրութիւնը ձե՞րն է:

«Մեւատ․ Քննելէ ետք ստորագրութիւնները, այդպէս կը մտածեմ: Անոնք կրնան իմս ըլլալ: Չեմ յիշեր, ժամանակ անցած է:»²²

Այս տատամսոտ խոստովանութենէն ետք Պատերազմական Ատեանի Նախագահը աւելի առաջ երթալով պարզաբանեց իրերու կացութիւնը՝ Ճեւատ Պէյի ուղղուած ուրիշ հարցումներով․

21․ Ժամանակ, 24 Փետրուար 1919․ էջ 1, սիւնակ 1,2,3: Կառավարիչ Քէմալ 15 եւ 16 Դեկտեմբեր 1918ին երկու օրուան մէջ գրեց իրեն եղած հարցումներուն պատասխանները:

22․ Ծակատամարտ, 16 Մայիս 1919:

Հայաստան թրքերէն բնագիր

«**Բէիս.** Թէկրաֆնամէնին գիրինտէ պիր հաշիէ վար: Պէօյլէ միսիմ թէկրաֆլարընըն ասըլլարընըն իսթիրտատը գայտէտէնտիր: Հըֆգօլունմաք իզրէ **Թէշքիլաթը Մախսուսայա տիյօրսունուգ. նէ՛ տէմէթթիր:**

Ճեվաթ Պէյ. Նա՛սըլ. Փաշա Հազրէթլէրի:

Բէիս. Օգույունուգ: (Զապըթ քեաթիպի օգուր). **Թէշքիլաթը Մախսուսայա.**

Թէկրաֆլարըն ասըլլարընըն իստէսի ոսուլու իքթիզասընտան օլմաքլա օրատա հըֆզը:

8 Միսնու: **Ճեվաթ:**

Ճեվաթ Պէյ. Հարպիյէ Նէզարէթի թարաֆընտան թէկրաֆլար պու սուրէթլէ ալընըն տիյէ պիր էմիր վերիլմիշ օլանաք, Փաշա հազրէթլէրի:

Բէիս. Փէքիյի. նէ՛տէն տօլայը պունա լիզում կէօրիլմիշ:

Ճեվաթ Պէյ. Մոթալաքա պիր էմիր տախիլինտէ օլանաք, չիւնքի պունլար տօսիասընտա մէվնութթուր: Զայը օլմուշ տէյի, գամիլէն տուրույօր: Հէր հալտէ պունու սօրուսի անլըյապիլիթիգ, Փաշա Հազրէթլէրի:

Հայերէն թարգմանութիւն

Նախագահ. Այս հեռագրին վարի կողմը լուսանցքի նօթագրութիւն մը կայ. «Այսպիսի կարեւոր հեռագիրներու բնագիրները պէտք է ետ վերադարձուին կանոնի համաձայն: Կ'ըսես զանոնք պահելու համար **Թէշքիլաթը Մախսուսայի թղթածրարներուն մէջ:**» Ի՞նչ կ'ուզես ըսել:

Ճեվաթ Պէյ. Ի՞նչպէս. մեծայարգ Փաշա:

Նախագահ. Կարդացէք: (Ատենադպիրը կը կարդայ). **Թէշքիլաթը Մախսուսայի.**

Օրէնքին հետեւելով անհրաժեշտ է որ հեռագիրներու բնագիրները ետ վերադարձուին:

8 Ընթացիկ ամիս (8 Նոյեմբեր 1914:)

Ստորագրուած/ Ճեվաթ:

Ճեվաթ Պէյ. Պատերազմական նախարարութիւնը հրաման մը տրուած ըլլալու է որ հեռագիրները վերադարձուին, մեծայարգ Փաշա:

Նախագահ. Շատ լաւ. Ի՞նչ բանի համար այդպիսի անհրաժեշտութեան մը կարիք տեսնուած է:

Ճեվաթ Պէյ. Անշուշտ հրամանի մը մէջ ըլլալու է, որովհետեւ թղթածրարները պահուած են, վնասուած չեն: Ամէն պարագայի տակ կրնաք հարցնել եւ հասկնալ, Մեծայարգ Փաշա: Կը կարծես թէ այս հեռագրի հարցը, Պատերազմական Նախարարութենէն...

Բէիս. Քէնտի եազընըզմը՛տըր: **Ճեվաթ Պէյ.** Պագայըմ, էֆէնտիմ, ասըլլարը օլանաք, եիսէ էթթիրիլմիշ, տօսիայա գօնուլմուշ օլանաք:

Բէիս. Հավալէ էթթիրիլմիգ եազը սիզին տէյիլմի՛:

Ճեվաթ Պէյ. Եազը պէնիմ օլանաք, Փաշա Հազրէթլէրի:

Բէիս. Պիր տախա պարսըն:

Ճեվաթ Պէյ. պու եազը պէնիմտիր: Թէկրաֆըն եազըսը պէնիմ տէյիլ:

Բէիս. Հավալէ էթթիրիլմիգ եազը:

Ճեվաթ Պէյ. Էօյլէ զաննէտիօրում քի պէնիմտիր:

Բէիս. Թէքրար կէօսթէրիլմիգ:

Ճեվաթ Պէյ. Պու պէնիմ եազըմ: Թէկրաֆ եազըսը ֆալան պէնտէնիզին տէյիլ, էֆէնտիմ:

Բէիս. Պէօյլէ միսիմ էվրազըն արատան գալտըրըլմասը տօսիալարըն գարմա գարըշըք օլմասընըն ինթան էտիյօր: Պու Տիվանը Հարպի նազարը տիգգաթիսի ճէլայ էտիյօր: Էսպասընը իզան էտէրմի՛սիլմիգ: ²³

Նախագահ. Ասիկա ձեր ձեռագիրն է:

Ճեվաթ Պէյ. Նայիմ. Տէր իմ. բնագիրները պէտք է ըլլան, վերադարձուած եւ թղթածրարներուն մէջ շարուած ըլլալու են:

Նախագահ. Լուսանցքի վարի գրութիւնը ձեր ձեռագիրը չէ՛:

Ճեվաթ Պէյ. Ձեռագիրը իմս պէտք է ըլլայ, գերամեծար Փաշա:

Նախագահ. Թո՛ղ անգամ մըն ալ նայի:

Ճեվաթ Պէյ. Այս ձեռագիրը իմս է: Հեռագրին գիրը իմս չէ:

Նախագահ. Լուսանցքի մէջ գրուած ձեռագիրը:

Ճեվաթ Պէյ. Այնպէս կը կարծես որ իմ ձեռագիրս է:

Նախագահ. Անգամ մըն ալ ցոյց տուէք:

Ճեվաթ Պէյ. Ասիկա իմ ձեռագիրս է: Հեռագրի գիրը եալըն իմ գիրս չէ, Տէր իմ:

Նախագահ. Այն եղելութիւնը որ կարեւոր վաւերագրերը դուրս կը հանուին ցոյց կու տայ թէ թղթածրարները անկարգ անկանոն վիճակի մէջ կը գտնուին: Այս եղելութիւնը Պատերազմական Ատենանի ուշադրութիւնը կը հրաւիրէ: Կրնա՛ս բացատրել:

23. Թագուիմը Վագայի Տիվանը Հարպը Էօրֆի Մոսիաքէմաթը Զապըթ Ճերիտէսի. *Թուրք Պատերազմական Ատենանի Պաշտօնաթերթը*, թիւ 3554, էջ 68:

Մոզզատ գաւառի հայասպանութեան պատասխանատուները
գատող թուրք Պատերազմական Ատեանը ունեցաւ 18 նիստեր սկըս-
եալ 5 Փետրուար 1919էն մինչեւ 8 Ապրիլ 1919: Այդ նիստերու ըն-
թացքին կարգացուեցան շատ մը թուրք պաշտօնական վաւերագ-
րեր, յատկապէս 22 Փետրուար 1919ին:

Վաւերագրերու վաւերականութիւնը հաստատելէ ետք միայն
թուրք Պատերազմական Ատեանը մահուան դատապարտեց կառա-
վարիչ Քէմալ Պէյը, իսկ Ոստիկանապետ Թէվֆիզ Պէյը՝ տասնեւ-
հինգ տարուան թիպարտութեան: ²⁴

24. Նոյն. Պաշտօնաթերթ, թիւ 3617:

Ո՛ւր են Վաւերագրերը

Միայն թուրք հետազօտողներու եւ պատմագիրներու տրա-
մագրելի են թուրքիոյ դիւաններու մէջ հայասպանութեան վերա-
բերեալ թուրք պաշտօնական վաւերագրերը:

Սակայն անոնք կը վախնան գործածել թուրք պաշտօնական
վաւերագրերը որոնք կրնան պատմական լոյս սփռել եւ իրական
ճշմարտութիւնը յայտնել: Անոնք բաւարար կը համարեն գործա-
ծել միայն այն վաւերագրերը որոնք Հայերու դէմ են պաշտպանե-
լու համար թուրք պետութեան գործած հայասպանութիւնը:

Անոնք զիտնալու են թէ արդարացումի որեւէ լուրջ պատճառ
չկայ այն կոտորածներուն որոնք կանխամտածութեամբ գործուե-
ցան Հայերու դէմ:

Սակայն եւ այնպէս, թուրք պաշտօնական վաւերագրերը, գո-
նէ մասամբ, թուրքիայէն դուրս տարուած են: Ներկայիս թուրք
դիւաններու մէջ պահուած պաշտօնական վաւերագրերը դեռ մատ-
չելի չեն Հայ եւ ոչ-թուրք հետազօտողներու եւ պատմագիրներու,
ընդհանրապէս: Միայն թուրք առանձնաշնորհեալներ կրնան մօ-
տենալ անոնց:

Կարճ մէջմերում մը հայ գրողէ մը լոյս կը սփռէ թէ ուր են
թուրք պաշտօնական վաւերագրերը Թորքիայէն դուրս:

«Իսկ այս բոլորէն ետք, անպայման պէտք է ձեռքի տակ ունե-
նալ արխիւային այն հսկայ նիւթը որ փոխադրուեցաւ Պոլսոյ Հա-
յոց Պատրիարքարանէն Երուսաղէմի Պատրիարքարանին մառան-
ները եւ դարանները եւ երբեք ալ յոյս չի ներշնչեր որ օր մը կրնայ
լոյսին տրուիլ:» ¹

Աւելի լաւ հասկնալու համար թէ ուր կը գտնուին հայասպա-
նութեան առաջնակարգ թրքերէն վաւերագրերը թուրքիայէն
դուրս, հարկ է համառօտ կենսագրական գիծեր տալ Զաւէն Պատ-
րիարք Եղիայեանի կեանքէն: Զաւէն Պատրիարք ծնաւ Մուսուլ 8
Սեպտեմբեր 1869ին: Հայրը տէրտէր էր: Զաւէն իր ուսումը աւար-
տեց Արմաշի մէջ եւ կուսակրօն քահանայ օծուեցաւ 1895ին Մա-
ղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեանի ձեռքով:

1. Հայկական Տասնհինգը եւ Հայերու լքեալ գոյքերը,
Քննական ակնարկ ըստ թրքական վաւերագրերու,
Լեւոն Վարդան, Պէյրութ 1970, էջ 298:

Կարինի առաջնորդ եղաւ 1906ին, ապա անցաւ 1910ին Տիգրանակերտի առաջնորդութեան. Մատթէոս Կաթողիկոս Իգմիրլեան զայն բարձրացուց արքեպիսկոպոսութեան:

Ան Պոլսոյ Պատրիարք ընտրուեցաւ 30 Օգոստոս 1913ին: Պոլիս հասաւ 1913 Նոյեմբերին. պաշտօնի ձեռնարկելով քաղաքական յարաբերութիւն մշակեց Պոլսոյ Ռուս Դեսպան Կիրսի հետ: Գործակից էր հայ կուսակցութիւններէ կազմուած միացեալ յանձնախումբին որ որդեգրած էր ռուսական ուղղութիւն՝ եւրոպական պետութիւններու միջոցով հայաբնակ հասանգներու մէջ բարեկարգութիւններ առաջ բերելու հակառակ թուրք կառավարութեան:

Եկան տեղահանութիւն եւ կոտորած...

Երիտասարդ թուրքերու կառավարութիւնը որոշեց Զաւէն Պատրիարքը աքսորել Պաղտատ 28 Յուլիս 1916ին: Բժիշկ Վահրամ Թորգոմեան, որ Սուլթան Բէշատի անձնական բժիշկն էր, Պոլսոյ Առաքելական Նուիրակ Տուլչի դիմեցին Գերման Դեսպան Մէթէրնիխի եւ Բալլավիչիւնի Աւստրիական Դեսպանին, եւ Ամերիկեան դեսպանութեան գործակատարին որ ազատեն Զաւէն Պատրիարքի կեանքը որովհետեւ հսկողութեան տակ աքսորուիլ համազօր էր սպանութեան՝ ճամբու ընթացքին:

Զաւէն Պատրիարք Պոլսէն 10 Օգոստոս 1916ին կը գրէր Բժ. Վահրամ Յ. Թորգոմեանին. «Կ'իմանամ թէ Կոթողիկոսը ընդունած է իրեն տրուած պաշտօնը եւ փոխանորդն ալ նշանակած է: Պաշտօնական հեռագիր եկած է եղբր, բայց իրեն հեռագիրները չեն հասած դեռ:

«Ինչպէս կը տեսնուի, կառավարութիւնը զիս Պաղտատ աքսորել որոշած է, վերջին հարուած մըն ալ տալու համար հայ ազգին: Այնպիսի ժամանակ մը երբ Հալէպէն Պաղտատ եղած ընդարձակ անապատին մէջէն հայ մը մահը աչք առնելով միայն կրնայ անցնիլ: Գիտեմ թէ ինծի պէս եկեղեցական մը ամէն պարագայի մէջ ողջ չի կրնար մնալ, եթէ նոյնիսկ կառավարութեան այս կարգադրութիւնը դաւադրութիւն մը չէ եւ կասկած չկայ թէ այդպէս է:»²

Բժիշկ Թորգոմեան այս նամակը թարգմանեց եւ ներկայացաւ թագաժառանգ Ապտիւլ Մէճիտի եւ Ս. Քահանայապետի ներկայա-

ցուցիչ Գերպ. Տուլչի որպէս զի իրենց միջամտութեամբ ազատեն Զաւէն Պատրիարքի գոնէ կեանքը:

Պատրիարքին ընկերացող ոստիկան սպաներէն զատ անոր հետ կ'երթար հայախօս Հիտայէթ, որ կարգաթող կաթողիկէ հայ վարդապետ մըն էր:

Զաւէն Պատրիարք հասաւ Տէր Զոր 10 Սեպտեմբեր 1916ին: Զորի միւթէսարըՖ Սալիհ Զէքի Պէյ, ոստիկանապետ Մուսթաֆա Պէյ, եւ ոստիկանապետի օգնական Պետրի Պէյ պատրաստեցին Պատրիարքի սպանութեան համար մանրամասն ծրագիր մը: Զէքի Պէյ պաշտօն յանձնեց Պետրի պէյի որ ընկերանայ Պատրիարքին Տէր Զորէն դէպի Պաղտատ: Պետրի Պէյն էր որ պիտի մեռցնէր Պատրիարքը: Հրոսապետներ եւ հրոսակներ պիտի յարձակէին Պատրիարքի կողքին վրայ եւ այդ շփոթութեան ընթացքին Պետրի Պէյ, Պատրիարքը պաշտպանելու պատրուակով, պիտի մեռցնէր զայն:

Հասան Անա գիւղաւանը: Պետրի Պէյ տեսակցութիւն ունեցաւ տեղական գայմազամ Սաիտ Պէյի հետ: Պետրի անոր յայտնեց Տէր Զորի մէջ պատրաստուած ծրագիրը: Սակայն գայմազամը մերժեց գործակցիլ: Մինչ Պետրի կը պնդէր որ Սալիհ Զէքի Պէյի հրամանին համաձայն կը գործէր ինք, Սաիտ Պէյ ընդդիմացաւ, եւ այսպէսով ազատած եղաւ Զաւէն Պատրիարքի կեանքը: ²

Պաղտատ հասան 23 Սեպտեմբեր 1916ին:

Պատրիարքի աքսորէն առաջ թուրք կառավարութիւնը որոշ համաձայնութիւն մը կնքեց, Ճէմալ Փաշայի միջնորդութեամբ, Կիլիկիոյ Սահակ Կաթողիկոս Խապայեանի հետ, որ նախ Հալէպ, ապա Երուսաղէմ աքսորուած էր: Պայմանները հետեւեալներն էին.

ա. Ամբողջովին խզել յարաբերութիւնները էջմիածնի հետ:

բ. Չնջել Հայկական սահմանադրութիւնը եւ հրատարակել նոր կանոնագիր մը պատրաստուած թուրք արդարութեան նախարարութեան կողմէ:

գ. Չնջել Երուսաղէմի եւ Պոլսոյ հայ պատրիարքութիւնները ինչպէս նաեւ Կիլիկիոյ եւ Աղթամարի կաթողիկոսութիւնները:

դ. Երկու պատրիարքական եւ երկու կաթողիլոսական աթոռները միացուելով Սահակ Խապայեան կ'ըլլար Կաթողիկոս-Պատ-

2. Վեմ, 1937, թիւ 2, էջ 50-51:

2ա. Ձեռագիր, Նուպարեան Մատենադարան, Բարիզ:

րիարք Օսմանեան Պետութեան Հայերուն, որոնք արդէն կիսովին բնաջնջուած էին: Կաթողիկոս-Պատրիարքը պիտի բնակէր Երուսաղէմ Ս. Յակոբի Վանքը եւ փոխանորդ պիտի ունենար Պոլիս: ³

Յուլիս 1916ին ջնջուած հայկական սահմանադրութիւնը վերահաստատուեցաւ 11 Նոյեմբեր 1918ին: Պաղտատ մտաւ Անգլիական բանակը. Չաւէն Պատրիարք որոշեց վերադառնալ Պոլիս իր պաշտօնին: Գում Գափու հասաւ 19 Փետրուար 1919ին:

Հազիւ գործունէութեան անցած, Պատրիարքը կազմակերպեց Հայ Տեղեկատուութեան Գրասենեակ մը, որուն գլխաւոր պաշտօնն էր տեղահանութեան եւ կոտորածներու վերաբերեալ պաշտօնական եւ անպաշտօն վաւերագրեր հաւաքել եւ դասաւորել, մասնաւորապէս արձանագրութիւններէն եւ թղթածրարներէն Թուրք Արտակարգ Պատերազմական Ատեանի որ կը դատէր հայասպանութեան պատասխանատուները:

Մուսթաֆա Քէմալի կազմակերպած ազգայնականները քալեցին դէպի Զմիւռնիա եւ Պոլիս Օգոստոս 1922ին:

Խոհեմութեամբ Չաւէն Պատրիարք որոշեց դիւանի մէջ հաւաքուած վարերագրերը փոխադրել Եւրոպա: Նոյեմբեր 1922ին քսանչորս հաստափոր ծրարներ հասան Մանչէսթր:

Չաւէն Պատրիարք հրաժարեցաւ իր պաշտօնէն 9 Դեկտեմբեր 1922ին: Կիպրոս էր 20 Օգոստոս 1924ին Լառնաքայի մէջ կազմակերպելու համար Մելքոնեան Հաստատութիւնը:

Եգիպտոս մնաց 1926 Յունուարէն մինչեւ 2 Դեկտեմբեր 1926:

Բարերար Մելքոնեանի իրեն յանձնած լիազօրութենէն հրաժարեցաւ 18 Դեկտեմբեր 1926ին եւ քաշուեցաւ Պաղտատ, ուր հասաւ 16 Մարտ 1927ին:

Ամառ ատեն 1938ին, պատերազմը սկսելէ առաջ, Պաղտատէն գնաց Երուսաղէմ Մանչէսթրէն հոն հասած վաւերագրերը թղթա-

3. Թագուիմը Վագայի, Թուրք պաշտօնաթերթ, թիւ 2611, հրատարակուած 28 Յուլիս 1916ին: Զնջում սահմանադրութեան եւ նոր կանոնադիր: Յուշեր եւ նօթեր Ս. Երուսաղէմէն, Պոլսէն եւ Դամասկոսէն 1916-1920. Սրբոց Յակոբեանց Վանք, Երուսաղէմ. Եղիշէ Եպիսկոպոս Չիլինկիրեան, 1923, տպագրութիւն, Ստեփանեան Եղբարք, Աղեքսանդրիա, էջ 12, 16, 17.

Նկարագրութիւնը Երուսաղէմի, Հալէպի, Դամասկոսի գաղթականական եւ Վանական զանազան դիպաց եւ անցքերու 1914-1918, Եղիշէ Եպո. Չիլինկիրեան, Տպ. Ա. Ստեփանեան, Աղեքսանդրիա, 1922, էջ 18, 19, 20, 21, 22, 23:

տելու իր պատրիարքական յուշերը լրացնելու համար: Չաւէն Պատրիարք մեռաւ Պաղտատ մինչ Գահիրէի մէջ 1947ին կը հրատարակուէր իր գիրքը:

Որոշ վերապահութեամբ, առանց վաւերագրերու գործածութեան, քննասէրներու եւ պատմագիրներու առջեւ կը զննեք ինչ ինչ դրական եղելութիւններ հայասպանութեան վերաբերեալ դիւանական վաւերագրերու մասին:

Թուրք Պատերազմական Ատեանի վարած դատավարութեանց ընթացքին 1919-1921, Հայեր իրաւական կողմ էին Ատեանի առջեւ եւ այս իսկ հանգամանքով իրաւունք ունէին թուրք վաւերագրերէն պաշտօնապէս վաւերացուած պատճէններ եւ օրինակներ ունենալու:

Ներկայ հատորի մէջ գործածուած վաւերագրերու մեծ մասը առնուած է Պատերազմական Ատեանի թղթածրարներէն:

Դեռ ժամանակը հասած չէ մանրամասնօրէն հանրութեան առջեւ պարզելու վաւերագրական ճշմարտութիւնները եւ եղելութիւնները թէ ինչպէս Պոլսէն ծրարներ զրկուեցան Մանչէսթր: Մէկ կողմ թողելով կարեւոր վաւերագրերու գործածութիւնը, կը գոհանանք Չաւէն Պատրիարքի յուշերէն քաղել ստոյգ տեղեկութիւններ:

Գահիրէի Մտաւորական Սպասարկութեանց Գրասենեակը հրատարակեց Չաւէն Պատրիարքի Յուշերը, 1947ին: Իր նախաբանին մէջ ան գրած էր 7 Մայիս 1947ին. «Պատերազմէն առաջ ձեռնարկեցի գրելու իմ յուշերս որոնց համար դժբախտաբար ինծի կը պակսէին Պաղտատի մէջ գիւրութիւններ, մանաւանդ անհրաժեշտ վաւերագրերը, զորս կրցայ մասամբ ձեռք բերել Երուսաղէմ անցնելով:» ⁴

Չաւէն Պատրիարքի Պաղտատ-Երուսաղէմ ճամբորդութեան մասին Գահիրէի Սպասարկութեանց Գրասենեակը կու տայ կարեւոր տեղեկութիւններ դիւանային վաւերագրերու պահուած վայրերու մասին:

«Բարեբախտաբար իր պատրիարքութեան շրջանի թուղթերը եւ արձանագրութիւնները Կ. Պոլսէն իր հրամանով Մարսիլիա եւ

4. Պատրիարքական Յուշերս, Վաւերագիրներ եւ Վկայութիւններ, Չաւէն Արքեպիսկոպոս, հրատարակութիւն թիւ 7 Մտաւորական Սպասարկութեանց Գրասենեակի, 1947 Տպ. Նոր Աստղ, Գահիրէ, էջ 6.

անկէ Երուսաղէմի վանքը փոխադրուած էին:

«Ուստի Ն. Ամենապատուութիւնը յանձն առաւ (Պաղտատէն) երթալ Երուսաղէմ եւ զանոնք աչքէ անցընել:»⁵

Զաւէն Պատրիարք կը գրէ իր Պաղտատ-Երուսաղէմ ճամբորդութեան ինչպէս նաեւ իր զարմացումի մասին տեսնելով որ հոն խնամքով պահուած են դիւանի վաւերագրերը որոնք իր հրամանով փոխադրուած էին Մանչէսթր:

«Տեղեկատու Դիւանը շնորհիւ իր հմուտ եւ խելահաս երկու գործիչներու ՊՊ. Ալպօյաճեանի եւ Կ. Նուրեանի, դեսպանատուններու պահանջած բոլոր տեղեկութիւնները հայթայթեց եւ օգնեց անոնց:

«1938ին ամառը յատկապէս Երուսաղէմ գացի, աչքէ անցնելու համար Տեղեկատու Դիւանի թղթածրարները, որոնք զրկուած էին 1922 Նոյեմբերին Մանչէսթր Պալաքեան Գրիգորիս Եպս.ի ի պահ եւ Թորգոմ Պատրիարքի ջանքերով փոխադրուած էին վերջը Երուսաղէմ ուր կը պահուին խնամքով:

«Մեծապէս անակնկալի եկայ տեսնելով հոն կատարեալ հաւաքածոյ մը վաւերագրերու եւ արձանագրութիւններու 1918-1922ի բոլոր կարեւոր դէպքերուն:

«Արչակ Ալպօյաճեանի աշխատութիւնը զանոնք հաւաքելու եւ դասաւորելու մէջ մեծապէս գնահատելի է: Դժբախտաբար քանի մը օր միայն կրցայ հոն մնալ զանոնք օգտագործելու համար իմ այս գործիս մէջ:»⁶

Տեղեկատու Դիւանին գործունէութեան վերաբերեալ ներքին կանոնագիրը, որ հաստատուած էր Քաղաքական Ժողովի կողմէ, կը յայտարարէ:

«Տեղեկատու Դիւանին համար շինուած կանոնագիրը որ Քաղաքական Ժողովի կողմէ վաւերացուած է, կ'ըսէ. «Տեղեկատու Դիւանը կազմուած է Քաղաքական Ժողովի յարաբերական Յանձնախումբի անդամներէն միոյն անմիջական հակակշռին ու պատասխանատուութեան տակ:

«Ըստ կանոնագրին հոն պիտի կեդրոնանային Հայաստանի եւ հայկական դատի վերաբերեալ հին թէ նոր ամէն կարգի վիճակագ-

5. Նոյն, էջ 4:

6. Նոյն, էջ 302-303:

րութիւններն... , Հայ հալածանքներու, ջարդերու, տեղահանութեան վերաբերեալ բոլոր դրուագներն ու պատմութիւններ, կողոպտուած ազգային թէ անհատական շարժուն եւ անշարժ գոյքերու մասին վիճակագրական պատկերներ մասնատրապէս վերջին տեղահանութեան միջոցին գործուած շարագործութեանց մասնակցող գլխաւոր յանցապարտ Թուրքերու մասին կարելիին չափ լիակատար տեղեկութիւններ, կենսագրական ծանօթութիւններ եւ անոնց յանցապարտութեան մասին քաղուած վաւերաթուղթեր եւ վկայութիւններ ու իսլամացած երկսեռ հայութեան եւ յափշտակուած որբերու մասին վիճակագրութիւններ...»

«Հին թէ նոր ազգային զանազան կազմակերպութեանց, կուսակցութեանց, ինչպէս նաեւ անկախ միութիւններու եւ ընկերութեանց մասին տեղեկութիւններ, ազգային, կրթական գործունէութեան մասին վիճակագրական տեղեկութիւններ, ազգային հարստութեանց որակը եւ քանակը պատկերացնող ցանկեր, մեր ազգային եւ այլնի մասին Եւրոպացիներու կողմէ գրուածներ, խօսուածներ եւ արտայայտութիւններ: Հայերու վերաբերեալ Թուրքերու պաշտօնական եւ անպաշտօն՝ գրուածքներուն մասին համառօտ ծանօթութիւններ... Հայ թէ օտար մամուլին մեր մասին հաղորդած տեղեկութեանց կեդրոնացումը, եւ այլն:

«Կարապետ Նուրեան, որ Պատրիարքին կողմէ ընտրուած եւ 1920 Յունիս 29ին Ազգային Ժողովի կողմէ վաւերացուած Քաղաքական Ժողովի անդամ ընտրուած էր, նոյն Դիւանին մասին տեղեկագիր մը ներկայացուցած է, որմէ կը քաղեմ հետեւեալ քանի մը հատուածները, որոնք լիովին կը բացատրեն Տեղեկատու Դիւանին կատարած դերը:

«Դիւանին կատարած աշխատութիւնները կը թուէ Կ. Նուրեան սա պէս.

«1. Թուրքերու ընթացքը հանդէպ Հայոց զինադադարէն սկսեալ, ներկայացնել «ստիպողական ըլլալով գրաւած մեծագոյն տեղը Դիւանի զբաղումներուն» «Երեք հարիւր տեղեկագիրներով Բարձր Քոմիտէի թիւնները, ինչպէս նաեւ Հանրապետութիւնը եւ Ազգային Պատուիրակութիւնը տեղեկացուցած են այն բոլոր յարձակումներուն, որոնք Թուրքերու կողմէ կը գործադրուին ընդդէմ Հայոց զինադադարէն սկսեալ, երկու հարիւր քսան երկու տեղեկագիրներով, հայթայթուած են անհրաժեշտ փաստացի վաւերագրեր, տեղահանութեան հեղինակներուն, զորս Թուրքերը կ'ուզեն արդարացնել...»

«2. Ջարդեր եւ տեղափոխութիւններ. Դիւանը կը հաւաքէ... ջարդերու եւ տեղահանութեանց վրայ, բոլոր այն տեղեկութիւնները որոնք ստուգուած եւ հիմնուած են հաւատարիմ վկայութեանց վրայ»: Արդէն հրատարակուած է... գիրք մը Կեսարիոյ եւ ուրիշ մը՝ Տիարպէքիւրի ջարդին վրայ. երրորդ եւ գեղեցիկ գործ մը հայ կղերական նահատակներու վրայ ի մօտոյ մամուլի պիտի յանձնուի...

«3. Վիճակագրութիւններ... Դիւանը ձեռնարկած է պատրաստութեանը հաւաքածոյի մը, որ պատկերացնէ Պատրիարքարանի թեմերուն պատերազմի վաղորդայնին ունեցած իրական վիճակը, այսինքն իւրաքանչիւր առաջնորդութեան եկեղեցիներուն, վանքերու, դպրոցներուն, ազգային սեփականութեանց եւ բնակչութեան թիւը:

«4. Հայաստանի մասին տեղեկութիւններ. Դիւանը կը հաւաքէ ազգային բրոքականտը շահագրգռող ամէն գործ: Անիկա բազմազրած է ու ցրուած է երկրագործական տեղեկագիրը Հայաստանի վրայ... Դիւանը կ'ուսումնասիրէ հայկական հողին հանքային հարստութեանց վրայ ուսումնասիրութեան մը հրատարակութեան խնդիրը...

«5. Վաւերագրերու հաւաքում եւ մատենադարան. Դիւանը կը հաւաքէ եւ կը դասաւորէ... բոլոր շահեկան վաւերագրերը Հայոց ընկերային կեանքին: Այսպէս, հայ ընկերակցութիւններու կամ պաշտօնական մարմիններու կողմէ հրատարակուած վեց հարիւրէ աւելի տեղեկագիրներ, վիճակագրութիւններ եւայլն, դասաւորուած են... Դիւանը ունի մատենադարան մը հայոց մասին խօսող գործերէ բաղկացած: Այս գիրքերուն վրայ աւելցած են երկու հարուստ մատենադարաններ՝ Տիար Հրանտ Ասատուրի եւ Տիար Թէոդիկի, որոնց պահպանութիւնը Դիւանին վստահուած է: Երկու մատենադարանները կը ներկայացնեն հաւաքարար 7,700 հատոր:»⁷

Ինչպէս կը հաստատէ Չաւէն Պատրիարք, տեղահանութեան, կոտորածներու, կալուածներու գրաւման վերաբերեալ պաշտօնական եւ կիսապաշտօն վաւերագրերը, վկայութիւնները եւ վիճակագրութիւնները, որոնք իր հրամանով 1922 Նոյեմբերին Պոլսէն

7. Նոյն. էջ 302-305:

ղրկուեցան նախ Մանչէսթըր, ապա Մարսիլիա եւ հուսկ Երուսաղէմ: Գրիգորիս Մ. Վ. Պալաքեան Առաջնորդ էր Մանչէսթըրի, ուրկէ կանչուեցաւ վարելու Մարսիլիայի առաջնորդութիւնը եւ իր հետ հոն փոխադրեց Մանչէսթըրի վաւերագրերը, որոնք հուսկ փոխադրուեցան Երուսաղէմ, եւ ուր կը մնան մինչեւ այսօր:

Այս բազմահազար վաւերագրերը գրուած են արարատառ թրքերէնով, հայերէն, գաղղիերէն, անգլերէն, ռուսերէն եւ ուրիշ լեզուներով, նախապէս փոխանցուած էին Պոլսոյ դաշնակից պետութիւններու գործավարներուն, որոնք իրենց կարգին զանոնք հաղորդած էին իրենց պատկան արտաքին գործերու նախարարներուն՝ Լոնտոն, Բարիզ, Հռոմ:

Լուրջ հետազոտողներ եւ առարկայական պատմագիրներ կըրնան անշուշտ եթէ ժամանակ եւ տրամադրելի միջոցներ ունին, ուսումնասիրել թուրք պաշտօնական վաւերագրերէն գտնէ մաս մը, յատկապէս թուրք Պատերազմական Ատեանի բազմաթիւ թղթածրարները:

Փոխանակ անապացոյց եւ ձրի յայտարարութեանց, շահեկան պիտի ըլլար որ թուրք պատմագիրներ լծուէին գրելու վաւերագրային իսկական պատմութիւնը, եւ Հայերն ալ խօսեցնէին տրամադրելի վաւերագրերը փոխանակ իրենք խօսելու:

8. Public Record Office, London, E 11654/1340/44, E 14847/13404/4. Մովակալ Տը Բոպէքի հաղորդագրութիւնները Լոնտոն Լորա Գրգընի:

ԽՈՒՉԱՐԿՈՒԹԻՒՆ

Պոլսոյ Թուրք եւ Դաշնակից ոստիկանութիւնը ամէն տեղ եւ ամէն կողմ խուզարկութիւններ եւ հետազոտութիւններ կատարեց յատկապէս Նուր էլ Օսմանիէ, Երիտասարդ Թուրքերու Կեդրոնական Ակումբին մէջ ուր գտնուեցան բազմաթիւ պաշտօնական գրութիւններ եւ հեռագիրներ:

Մայրաքաղաքի Թուրք ոստիկանապետը մասնաւորապէս խուզարկեց Բժիշկ Պէհաէտտին Շաքիր Պէյի փեսայ Ահմէտ Բամէզ Պէյի տունը Բերայի մէջ եւ երեւան հանեց խոշոր պայուսակ մը որ կը պարունակէր բազմաթիւ վաւերագրեր եւ գաղտնի թղթածրարներ, որոնք, վերցուած էին Նուր էլ Օսմանիէէն: Այս պայուսակին մէջ էին գաղտնի ժողովներու ատենագրութիւնները առանձին թղթածրարի մը մէջ: ¹

Մեկանգատէ Բիֆաթ այս ատենագրութիւններէն մասեր հրատարակած է իր գրքին մէջ «Թիւրքիյէ Ինքիլապիհին իչ եիւզի», Հալէպ, 1929, էջ 82-98, եւ 108-117. այս գիրքը Հայերէնի թարգմանուած եւ հրատարակուած է Պէյրութ, 1938ին, «Օսմանեան Յեղափոխութեան Մութ Ծալքերը», էջ 149-166 եւ 185-196. Նոյնը Հայկազ Գ. Ղազարեան թարգմանեց եւ հրատարակեց «Յեղասպան Թուրք»ը հատորին մէջ, էջ 88-97 եւ 338-347:

Սեպուհ Ակունի կանխապէս 1920ին գործածած է նոյն աղբիւրը իր գրքին մէջ «Միլիտն մը Հայերու Զարդի Ամբողջական Պատմութիւնը», Բ. Տպագրութիւն, Պոլիս 1921, էջ 26-29:

Դժբախտաբար Մեկանգատէ Բիֆաթ գաղտնի ժողովներուն ատենագրութիւնները իրարու խառնած է 1914 Յուլիսէն մինչեւ 1915 Յուլիս: Մինչ սեպուհ Ակունի տուած է միայն մէկ գաղտնի ժողովի ատենագրութիւնը հազիւ երեք էջ, 26-29. Նոյնը Մեկանգատէ Բիֆաթի գրքին մէջ 10 էջ է:

Ոստիկանական խուզարկութեամբ գտնուած շրջաբերական հեռագիրներէն քանի մը կարճ օրինակներ կրնան որոշ գաղափար մը դոյացնել:

Ներքին Գործերու Նախարար Թալաաթ հետեւեալ ծածկագիր հեռագիրը զրկած է Մալաթիոյ Երիտասարդ Թուրքերու Կուսակցութեան Ակումբին:

1. Արիամարտ, 18 Դեկտեմբեր 1918, էջ 2, սիւն 2.

«Ձեր գաւառը դրկուած եւ հող հաւարուած Հայերը բնաջիւղը քարոյական եւ հիւթական ամէն պատասխանատուութիւն ինձի պատկանելու պայմանով»: ²

Խուզարկութեան հետեւանքով գտնուեցան նաեւ ուրիշ հեռագիրներ ստորագրուած Բժիշկ Պէհաէտտին Շաքիր Պէյի եւ Բժիշկ Նազըմ Պէյի կողմէ:

«Կէտ առ կէտ գործադրեցէք Հայերը սպաննելու մասին ձեզի տրուած հրամանը»: ³

Երկրորդ հեռագիրը առաջինին կրկնութիւնն է հարցական ձեւով.

«Հայերը ջարդելու մասին ասկէ առաջ ձեզի տրուած հրամանը գործադրեցի՞ք»: ⁴

Բժիշկ Պէհաէտտին Շաքիր Պէյ, Թէշքիլաթը Մախսուսայի Նախագահը, որ իր մարդու մագործներու սպայակոյտը հաստատած էր Կարինի մէջ, կոտորածները սկսելէ առաջ իրր ազդանշան նահանգներու կառավարիչներուն զրկեց երկու ծածկագիր շրջաբերական տալով անոնց ոտանաւորի կշիռ եւ խորք:

Սիլահ փաթիւնաւրն.

Ասքէր եսիմաւրն.

Էրմէնի գալմաւրն:

Պէօյիւլէրի քէսմէլի.

Կիւզէլլէրի սէշմէլի.

Օ պիւլէրի սիւրմէլի:

Թո՛ղ գէնք չպայտի.

Թո՛ղ զինուորը չընէ.

Թո՛ղ հայ չմնայ:

Մեծերը մորթուել.

Գեղուհիներն ընտրել.

Միսները տարագրել: ⁵

Ներքին գործերու նախարար Թալաաթ հետեւեալ շրջաբերական ծածկագիր հեռագիրը զրկած էր կառավարիչներուն.

Պիլա թէրէտտիթ վէ մէրհամէթ պիր այլըգտան տօգսան եաշընա գատար Էրմէնիլէրին իթլաֆը անգագ շէհիր տէրուհիստէն վէ ահալի հուզուրուստա օլմաւրնա տիգաթ:

Առանց որեւէ վարանումի եւ գութի բնաջնջեցէք մէկ ամսականէն մինչեւ իննուսուն տարեկան Հայերը, միայն թէ քաղաքի մէջ եւ ժողովուրդի աչքին առջեւ չըլլայ: ⁶

2. Լա Բընէսան, թիւ 7, Կիրակի, 7 Փետրուար 1919:

3. Ժամանակ, 11 Դեկտեմբեր 1918.

4. Նոյն.

5. Նոյն.

6. The Armenian Review, Vol. XXVII, No 1-1974, page 26.

Այս շրջաբերական հեռագրի արարատառ թրքերէնի լուսանըկարը առնուած է Մելքոն Ասատուրի Հայկական Խաչելութիւնը Զեռագրէն, էջ 98, որ պահուած է Պր. Գրիգոր Պասմաճեանի անձնական գրադարանին մէջ, Գահիրէ: Իտալացի Գնդապետ Ֆրանչէսքոյ Սիտարի նոյն լուսանըկարը արտադրած է իր գրքին մէջ, La questione Armena nella Politica delle Grande Potenze, հրատարակուած Բատուա, Իտալիա 1962ին, էջ 276, առաջին սիւնակ:

ՀԱՅԱՍՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՎԱԻԵՐԱԳՐԵՐՈՒ ՀԱՒԱՔՈՒՄ

Նոյեմբեր 1918ին Պոլսոյ Թուրք պետական խորհուրդի պահանջով Սուլթան Մէհմէտ Զ. Վահիտէտտին կայսերական մասնաւոր հրովարտակով կազմեց գրասենեակ մը Ընդհանուր Ապահովութեան Պաշտօնատան մէջ ստեղծելով Հարցաքննիչ Յանձնախումբ մը, որուն նախագահն էր Մազհար Պէյ, Անգարայի նախկին Կուսակալը, որ 1915 Յունիսին պաշտօնանկ եղաւ որովհետեւ մերժած էր գործադրել ներքին գործերու նախարար Թալաաթ Պէյի իրեն զրկած հրամանները ոչ թէ միայն տեղահանելու այլ բնաջնջելու Անգարայի նահանգի Հայերը:

Դեկտեմբեր 1918ին դարձեալ սուլթանական հրովարտակ մը կազմեց Պատերազմական Արտակարգ Ատեան մը դատելու համար հայերու տեղահանութեան եւ կոտորածի պատասխանատուները, յատկապէս 1914-1918ի շրջանին երկու Օսմանեան դահլիճներու անդամները, նախարարները, կուսակալները, երեսփոխանները, ծերակուտականները, հրամանատարները:

Հարցաքննիչ Յանձնախումբի նախագահը եւ Պատերազմական Ատեանի նախագահը սկսան հաւաքել հայասպանութեան վերաբերեալ պաշտօնական վաւերագրերը:

Պաշտօնապէս 4 Փետրուար 1919ին Ատեանի նախագահը ներքին գործերու նախարարութեանէն պահանջեց որ Ատեանի ղիւանին յանձնուին Հայերու տեղահանութեան եւ բնաջնջումի վերաբերեալ պաշտօնական վաւերագրերու բնագիրները եւ կամ անոնց պաշտօնապէս վաւերացուած պատճէնները:

Նոյնպէս հարցաքննիչ Յանձնախումբի նախագահ Մազհար Պէյ ամէն կողմ պաշտօնական հարցարաններ զրկեց եւ երզումի տակ առնուեցան բերանացի եւ զրուոր վկայութիւններ ականատես եւ ականջալուր Թուրք քաղաքային եւ զինուորական անձնաւորութիւններու, ինչպէս նաեւ, օրինակ, Օսմանեան Երրորդ Զորքանակի Ընդհանուր Հրամանատար զօրավար Վէհիպ Փաշայի, Եոզղատի Զօրակայքի Հրամանատար Հազարապետ Սալիմ պէյի եւ դեռ բազմաթիւ քաղաքային եւ զինուորական անձերու եւ կառավարական պաշտօնական մարմիններու:

Եոզղատէն 8 Դեկտեմբեր 1918ին, վեց երեւելի Թուրքեր Հարցաքննիչ Յանձնախումբի նախագահ Մազհար Պէյի զրկեցին հաւաքական խնդրագիր մը եւ պահանջեցին որ Պոզաղլեանի նախկին ոստիկանական վաշտի հրամանատար Խուլուսի Պէյ դատի կանչուի եւ իրենք վկայեն որ ան Կեսարիոյ շրջանի մէջ հազարաւոր հայ մանուկներ կոտորել տուած էր եւ թէ Կեսարիոյ Պատերազմական Ատեանը զայն ձեւակերպութեան համար միայն երկու ամսուան բանտարկութեան դատապարտած էր: Կը հաստատեն թէ Խուլուսի Պէյ կազմակերպած է Թուրք դասալիքներու հրոսախումբեր եւ կը պահանջեն որ ատեանի առջեւ կանչուի եւ լուրջ դատավարութեամբ մը անոր գործած ոճիրները երեւան ելլեն:

Հայատառ թրքերէն բնագիր

Հայերէն թարգմանութիւն

Մախրէնի Եօզղաթ

Մեկնակէտ՝ Եոզղատ.

8 Գանունուէվլէ 334:

8 Դեկտեմբեր 1918ին

27 Գանունուէվլէ 334.

27 Դեկտեմբեր 1918ին

Փօսթա իլէ կէլմիշտիր:

Թղթածրարով հասած Պոլիս:

Թէլկրաֆնամէ սուրէթի.

Հեռագրի պատճէն.

Էմնիյէթի Ումումի Տաիրէսիսնէ Էրմէնի ֆէնաիի Թահգիգաթընա Մէմուր Գօմիսիօն Բէիսի Մազհար Պէյ Էֆէնտիյէ:

Ընդհանուր Ապահովութեան Գրասենեակի կից Հայերու կոտորածի հարցաքննիչ Յանձնախումբի նախագահ Մազհար Պէյի:

Գազամըզուա Էլէվմ ժանտարմա գումանտանը միլլազիմ Խուլուսի Էֆէնտիսին Բայսէրիյէ Աէֆի Էթմէք իզրէ կէթիւրտիյի պիսիլընէ Էրմէնի մա'ասում վէ մա'ասումէ

Կեսարիոյ շրջակաները հազարաւոր անմեղ հայ մանուկներ ջարդելէ ետք, Խուլուսի Էֆէնտի, այժմ մեր գաւառի ոստիկանութեան հրամանատար է: Ինքն էր որ ա

չօճուզարը Քայսերի կիզերկեա-
հընտա իթթիխազ էթթիյի մագթի-
տե սուրէթի ֆեճիանէտե գաթը
քիւլիւյէթլէ մըգտարտա նուգուտ
վէ էշեա վէ հիւլիյաթընը ախզ
էթթիյիճի, կէշէն սէնէ, իխպար վէ
ֆիիլի մէգթիւրէ ճիւրաէթը թէվա-
թուրէն մէրթէպէի սուպութա իսալ
էտիլմիշ իթէն, հիւքիւմէթէ սապը-
գանա շու ֆիիլիճտէն միւմաիլէյն
Քայսերի տիվանը հարպընճա իթի
այ մէֆգուֆ գալտըթթան սօնրա
թախիլյէ վէ իստէ էտիլտի էրմէ-
նիլէրի սաիգաի մէնֆիաթլա ճէլպ
էթմէյիսի տախիլէ գազատա ճիւնա-
յէթ վէ շէգալէթ կիպի փէթ չօթ
գարըշըգըգըգար գուհուրուճա սէ-
պէպ օլմուշտուր. մարուզաթըմըգ
թահգիգ վէ թէտգիգ պույուրույուր-
աա, քէյֆիյէթ թէզահիւր էտէճէ-
յիճտէն միւթէաըրլարընըն փէն-
շէի ատալէթէ թէսիլմիլէ մուսա-
վաթը հուգուգիյէնիճ իստէ վէ մու-
հաֆազա պույուրույմասը թէէսի
իլէ իճրասաթը ատալէթի ատէի
հագրէթլէրիճտէն իսթիթիսամ էյլէ-
րիս, էֆէնտիս:

8 Գանունուէվվէ 334:
Օսման Նուրի, Հասան, Հիւսէյն,
Մէհմէտ Ալի, Ալի Մուրթատա,
Իպրահիմ Հագգը:
Թարիխի վիւրուտը 28 Գանու-
նուէվվէ 334: *

նոնց գոհարեղէնները եւ անգնա-
հատելի ինչքերը կողոպտած էր:
Այս եղելութիւնը հաստատուած է
նախորդ կառավարութեան կողմէ
եւ վերոյիշեալ Խուլուսի Կեսարիոյ
պատերազմական ատեանի կողմէ
դատապարտուեցաւ միայն երկու
ամսուան բանտարկութեան: Ապա
ազատ արձակուեցաւ:

Վերոյիշեալ կերպով Հայերը
բնաջնջելէ ետք, մեր գաւառի մէջ
ալ կազմակերպած էր հազարաւոր
դասալիք զինուորներէ հրոսա-
խումբեր եւ կողոպտիչ ասպա-
տակներ: Ինք պատճառ եղած է
խառնակչութեան եւ գանգատնե-
րու:

Մեր յայտարարութեան վրայ
կատարուելիք քննութիւն մը երե-
ւան պիտի հանէ ամբողջ ճշմար-
տութիւնը եւ յանցաւորները պիտի
բերուին ատեանի առջեւ:

Կը խնդրենք ուրեմն որ ձեր գե-
րագանցութիւնը բարեհաճի ար-
դարութիւնը գործադրել, Տէր իմ:

8 Դեկտեմբեր 1918:

Օսման Նուրի, Հասան Հիւսէյն,
Մէհմէտ Ալի, Ալի Մուրթատա,
Ահմէտ, Իպրահիմ Հագգը:

Հասնելու թուականն է 28 Դեկ-
տեմբեր 1918:

Վաւերագրերու Հաւաքում

Պոլսոյ Թուրք բարձրագոյն իշխանութիւնները Թալաաթ Փա-
շայի դահլիճին անկումէն ետք 7 Հոկտեմբեր 1918ին սկսան թէ
մայրաքաղաքի եւ թէ նահանգներու մէջ կառավարիչներուն զրկել
հրամաններ եւ հրահանգներ որ Հայերու տեղահանութեան եւ կո-
տորածի վերաբերեալ վաւերագրերը զրկեն պատկան նախարարու-
թեան կամ ուղղակի Հարցաբննիչ Յանձնախումբին եւ կամ Պատե-
րագմական Ատեանին:

Նահանգներու եւ գաւառներու քաղաքային կառավարիչները
եւ զինուորական հրամանատարները սկսան հաւաքել պահանջուած
վաւերագրերը եւ զրկել Պոլիս երբեմն բուն իսկ բնագիրները եւ
երբեմն բնագիրներու պաշտօնապէս վաւերացուած պատճէնները,
իսկ Պոլսոյ մէջ պատկան իշխանութիւնը զանոնք պաշտօնապէս
յանձնեց հայաստանութեան պատասխանատուները դատող Թուրք
Պատերագմական Ատեանին:

Այս վաւերագրերը որոնք գրեթէ ամբողջութեամբ ծածկագիր
հեռագիրներ էին, արդէն կանխապէս վերծանուած եւ թարգման-
ուած էին ծածկագիրներու բանալիներուն համաձայն: Ատեանը
բանալիներու պէտք չունէր զանոնք կարդալու համար:

Քննասէրներ, հետազօտողներ եւ քննադատներ կրնան դիմել
այն մասնաւոր ուսումնասիրութեան որ 1965ին հրատարակուեցաւ
Պէյրուի Յուշամատեան Մեծ Եղեռնի հատորին մէջ 221-258 էջերուն
ուր կը խօսուի յատկապէս վաւերագրերու վաւերականութեան
մասին:

Վաւերագրերէն փոքր մաս մը հրատարակուած է Պոլսոյ
Թուրք Պատերագմական Ատեանի պաշտօնաթերթ Թագուիմը Վագա-
յի Տիվանը Հարպի Էօրֆի Մուհաքէմաթը Զապրթ Ճէրիտէսիի մէջ:
Նոյնպէս բազմաթիւ վաւերագրեր հրատարակուած են պաշտօնա-
կան եւ անպաշտօն ԱՐԱՐԱՏԱՌ ԹՐԲԵՐԷՆ Թերթերու մէջ, ինչ-
պէս նաեւ Հայերէն եւ եւրոպական լեզուներով լոյս տեսնող օրա-
թերթերու եւ պարբերաթերթերու մէջ:

Ծածկագիր հեռագիրները զրկուած էին առ հասարակ կեդրո-
նական կառավարութեան, մասնաւորապէս ներքին գործերու նա-
խարարութեան կողմէ նահանգներու կուսակալներուն եւ փոխա-
դարձաբար, Պատերագմական Նախարարութեանէն բանակներու
հրամանատարներուն եւ փոխադարձաբար, Պոլսոյ Երիտասարդ

Թուրքերու Կեղրոնական Կոմիտէէն նահանգներու եւ գաւառներու կոմիտէներուն ատենապետներուն եւ պատասխանատու քարտուղարներուն եւ փոխադարձաբար, Պոլսոյ Թէշքիլաթը Մախսուսայի պետերէն նահանգներու եւ գաւառներու Թէշքիլաթը Մախսուսայի ղեկավարներուն եւ փոխադարձաբար, եւ յատկապէս Կարինի Թէշքիլաթը Մախսուսայի նախագահի գրասենեակէն մայրաքաղաք եւ նահանգներու ղեկավարներուն եւ փոխադարձաբար:

Հետազոտողներ, պատմաբաններ եւ քննադատներ պէտք չէ մոռնան թէ բանակներու հրամանատարները իրենց զինուորական իրաւասունեան տակ գտնուող նահանգներուն եւ գաւառներուն ղրկած են հրամաններ եւ հրահանգներ, ինչպէս Կովկասի ճակատի Երրորդ Զօրաբանակի Ընդհանուր Հրամանատար Մահմուտ Քեամիլ Փաշա իր զինուորական իրաւասութեան տակ գտնուող Կարին, Տրապիզոն, Պիթլիս, Վան, Խարբերդ, Տիգրանակերտ եւ Սերաստիա նահանգներու կուսակալներուն ղրկած է շրջաբերական հրամաններ: Պոլսոյ իշխանութիւնները 1918-1919 նոյն նահանգներէն եւ գաւառներէն պահանջեցին մասնաւորապէս Մահմուտ Քեամիլ Փաշայի հեռագիրները տրուելու համար Պոլսոյ Պատերազմական Ատենանի: Սակայն նահանգային կուսակալներէն միայն Սերաստիա եւ Տիգրանակերտ հաճեցան ղրկել Մահմուտ Քեամիլ Փաշայէն իրենց ստացած շրջաբերականները, մինչ միւս հինգ նահանգներու կառավարիչները չղրկեցին բնագիրները վախճանով որ օր մը դատարանի առջեւ իրենք պէտք պիտի ունենան անոնց իրենց անձին պաշտպանութեան համար:

Անոնք կ'ուզէին նոյն վաւերագրերը գործածել ատենանի առջեւ ցոյց տալու համար որ իրենք գործած էին բարձրէն իրենց ստացած հրամաններու համաձայն:

Մամուրէթ ուլ Ազիզի զօրակայքի հրամանատար Սիւլէյման Ծայիգ Փաշա ատենանի առջեւ խոստովանեցաւ թէ ինք Կովկասի ճակատի Ընդհանուր Հրամանատար Մահմուտ Քեամիլ Փաշայէն ստացած էր եւ իր քով կը պահէր բազմաթիւ հեռագիրներ որոնք կը հրամայէին Հայերու բնաջնջումը: 9

9. Լա Րոնէսան. թիւ 144, 20 Ապրիլ 1919:

Պոլսոյ Արտակարգ Պատերազմական Ատենանի Նախագահը 22 Փետրուար 1919 թուակիր ծածկագիր հեռագրով Անգարայի կուսակալութենէն կը պահանջէ որ առաջին թղթատարով Պոլիս ղրկուի Պողազլեանի գաւառակին եւ շրջանակներու մէջ կոտորուած հազար հինգ հարիւրէն աւելի Հայերու անուանացանկը պարունակող տետրակը: Պողազլեանի զօրակայքի պետ գնդապետ Մուսթաֆա Պէյ նոյն գաւառակի գայմազամ Քէմալ Պէյէն խնդրած էր նախ 12 Յուլիս 1915ի յուշագրով մը, ապա 13 Յուլիս 1915 թուակիր հեռագրով, եւ հուսկ 14 Յուլիս 1915 թուակիր հեռագրով պահանջած էր նոյն տետրակը փոխանցելու համար գայն բարձրագոյն իշխանութեան եւ քաղաքային կառավարիչը պարզապէս մերժած էր տետրակը յանձնել:

Հայատառ թրքերէն բնագիր

Անգարա Վիլայէթին Թէլկրաֆ, Պողազլըյան շուպէ ռէիսի Մուսթաֆա Էֆէնտի թարաֆընտան Պէշինճի Գօլօրտույա չէքիլմիշ օլան 18 նումարալու 14 Թէմնուզ 331 թարիլի շիֆրէ մահլույունտա պէյան օլունան պինպէշեիզտէն ֆազլա մագթուլին Էսամիսինի հաւլի գօլօրտուտան պիլախազ իլք փօստա իլէ իրսալը Էհէմմիլթըլէ ռէճա օլունուր:

22 Շուպաթ 335.

Թէհնիր Տիվանը Հարպը Էօրֆի Րէիսի' 10

Հայերէն թարգմանութիւն

Հեռագիր Անգարայի կուսակալութեան, Կը խնդրուի որ Պողազլեանի զինուորական կապի պետ Մուսթաֆա Էֆէնտի կողմէ հինգերորդ զօրաբանակին ղրկուած 18 թուահամար 14 Յուլիս 1915 թուակիր ծածկագրի հազար հինգ հարիւրէն աւելի սպաննուածներու անունները կրող տետրակը զօրաբանակէն առնելով մեզի ղրկէք առաջին թղթատարով:

22 Փետրուար 1919:

Տարագրութեան՝ Պատերազմական Ատենանի Նախագահ՝

10. Դ.Ե. թիւ V 266:

Անդարայի Կուսակալ Ազմի Պէյ Պոլսոյ Արտակարգ Պատե-
րագմական Ատեանի Նախագահին զրկած է ծածկագիր հեռագիր-
ներու պաշտօնապէս վաւերացուած պատճէնները

Հայատառ թրքերէն բնագիր

Հայերէն թարգմանութիւն.

Ատէտ 1682/5

Մախրէնի՝ Անգարա.

Նումարաւ 1041.

Փօսթա իլէ կէլմիշտիր.

Տէրսէտտէ Տիվանը Հարպը

Էօրֆի Բիյատթինէ.

Ճէվապ 2 Շուպաթ 35 վէ 65 նու-
մարա թէլկրաֆա.

Իրսալը իշար պոյնորուլան շիֆ-
րէ թէլկրաֆնամէ սուրէթլէրի մու-
սատտագալարը պու կիւն փօսթա
իլէ թէվոիէն թագտիմ գըլընմըշ-
տըր:

9 Շուպաթ 35.

Անգարա Վալիսի՝

Ազմի: ¹¹

Թի 1682/5

Մեկնակէտ՝ Անգարա.

Թուահամար 1041.

Թղթատարով հասած է.

Մայրաքաղաքի Պատերազմա-
կան Ահեղ Ատեանի Նախագա-
հութեան

Պատասխան՝ 2 Փետրուար 1919
թուակիր եւ 65 թուահամար Հե-
ռագրին:

Կը հաստատեմ թէ ձեր խնդրած
ծածկագիր հեռագիրներու վաւե-
րացուած պատճէնները այսօր
թղթատարով ձեզի դրկուեցան:

9 Փետրուար 1919.

Անգարայի Կուսակալ՝

Ազմի:

Կեսարիոյ կառավարիչը կը պատասխանէ Պոլսոյ Պատերազ-
մական Ատեանի Նախագահին եւ անոր կը զրկէ տասնեւվեց հե-
ռագիրներու պաշտօնապէս վաւերացուած պատճէնները:

8 Փետրուար 1919ին:

Հայատառ թրքերէն բնագիր

Հայերէն թարգմանութիւն

Մախրէնի Գայսերի.

Տէրալիյէտէ Տիվանը հարպը

Էօրֆի Բիյատթինէ Թէլկրաֆ.

Ճ. 2 Շուպաթ 335 թարիլի թէլ-
կրաֆնամէլէ.

Էհեմմիյէթէ շայան պիր շէլ եօզ
իսէտէ, Շէհապ Պէլլէ Գօլօրսու
Գումանտանլըղը վէ Պողազլըյան
գայմագամլըղը պէլնլէրինտէ ճե-
րէյան մուխապէրաթա աիտ օլուպ
ֆըրգատան ախգ էտիլէն օն ալթը
թէլկրաֆ սուրէթինին թագտիմ գը-
լընտըղը:

8 Շուպաթ 335.

Միթէսարըֆ՝

Քէմալ: ¹²

Մեկնակէտ՝ Կեսարիա.

Ուղղուած Մայրաքաղաքի Պա-
տերազմական Ատեանի Նախա-
գահութեան՝

2 Փետրուար 1919թուակիր հեռա-
գրին պատասխան՝

Կարեւորութեան արժանի բան
մը չըլլալով հանդերձ, Շէհապ Պէ-
լի, զօրաբանակի Հրամանատարի
եւ Պողազլէանի Գայմագամին մի-
ջեւ փոխանակուած թղթակցու-
թիւնները (Կեսարիոյ Գ) Զօրա-
բաժնին (դիւանէն Գ) Առնէլով
16 կտոր հեռագիրներու պատճէն-
ները կը ներկայացնենք ձեզի:

8 Փետրուար 1919.

Միթէսարըֆ՝

Քէմալ:

11. Դ.Ե. Թիւ Մ 475:

12. Դ.Ե. Թիւ Մ 472:

Կեսարիոյ Մութասարըֆ ձէմալ Քէմալէտտին Պոլսոյ Պատե-
րագմական Ատեանին կը զրկէ պահանջուած վաւերագրերու պատ-
ճէնները:

Հայատառ թրքերէն բնագիր.

Գայսէրի Միթասարըֆըղընտան
Մէվգուտ Թահրիրաթ.
Նումարաւ 1545/403.
Թարիխի 19 Շուպաթ 335.
Տերսէատէթ Թէհնիր Տիվանը
Հարպը Էօրֆի Րիչատէթի Ճէլի-
լէսինէ.
Իթիֆէթլու Էֆէնտիմ Հագրէթ-
լէրի,
Միթէգատտիմ 18-2-335 թա-
րիխի վէ 485/401 նումարալը թէլ-
կրաֆլա արգ օլունան Պօղազը-
յան վէ Գում Գույու մէգալիմինէ
ախտ իւշ գըթա Էվրաթ սուրէթի
մուսատագգասընըն լէֆֆէն թագ-
տիմ գըլընտըղը մարուգտուր. օլ
պապտէ Էմրու իրատէ հագրէթի
մին լէհիլ Էմրինտիր:
18 Ճէմագիլէվվէլ 337
վէ 19 Շուպաթ 335.
Գայսէրի Միթասարըֆը՝
Միհիր Ճէմալ Պին Քէմալէտտին.
Գալէմէ. 4 Մարդ 335. ¹³

Հայերէն թարգմանութիւն

Կեսարիոյ Կառավարութենէն
Լուծուած Հաղորդագրութիւն.
Թիւ 1545/403.
Թուական՝ 19 Փետրուար 1919.
Մաշրաքաղաքի Տարագրութեան
Պատերազմական Ատեանի Բարձ-
րապատի Նախագահութեան.
Վսեմափայլ Տէր,
Պատի ունիմ ձեզի հաղորդագը-
րելու թէ ձեր 18 Փետրուար 1919
թուակիր եւ 585/401 թուահամար
նախորդ հեռագրով պահանջուած՝
Պողազլէանի եւ Գում Գույու գի-
ղի խժոժութեանց վերաբերեալ ե-
րեք կտոր վաւերագրերը յարակից
թուղթերով զրկուեցան. այս մասին
ամէն հրաման ձեզի կը պատկանի:
19 Փետրուար 1919.
Կեսարիոյ Միթասարըֆ՝
Կնիք՝ Ճէմալ Քէմալէտտին:
Քարտուղարութեան Դիւանին:
4 Մարտ 1919:

Դատական եւ Կրօնից Նախարարութեան Անճնակազմի Տնօրէ-
նութիւնը Պոլսոյ Պատերազմական Ատեանին կը զրկէ Անգարա-
յի Փոխ Կուսակալ Աթըֆ Պէյի Մածկազիր հեռագրին պատճէնը

Հայատառ թրքերէն բնագիր

Անգարա Վիլայէթի վէքալէթին-
տէն Նագարէթի ճէլիլէյէ քէշիտէ
գըլընան 13 Թէմնուզ 331 թարիխ-
ի թէլկրաֆնամէ սուրէթի տիր:
Եօզղաթ իթիննաֆ ազասընտան
Համբարձում վէ պիտայէթ մուհա-
քէմէսի ազասընտան Պօղոս վէ
Միհրան Էֆէնտիլէրին տախի
թէպտիլլէրի լազըմէի հալ վէ մաս-
լահաթթան օլմագլա միգթազա-
սընտան իֆա պուչուրուլմասը
միւթախտիմտիր:

Ասըլլարընա միթապըզտըր. ¹⁴
8 Շուպաթ 335:
Ատլիյէ վէ Մէգահիպ Նէգարէթի
Ումուրը գաթիյէ Միտիրիյէթի
Իքիննի Շուպէ: ¹⁵

Հայերէն թարգմանութիւն

Անգարայի Կուսակալութեան
փոխանորդութենէն Բարձրապա-
տի Նախարարութեան զրկուած
13 Յուլիս 1915 թուակիր հեռագը-
րին պատճէնն է.
Եօզղատի վերաքննիչ ատեանի
անդամներէն Համբարձում եւ նա-
խադատ ատեանի անդամներէն
Պօղոս եւ Միհրան Էֆէնտիլներուն
ալ պաշտօնէ ազատ արձակումը
անհրաժեշտութիւն ըլլալով կը
պահանջուի կացութեան եւ կարե-
ւորութեան պատճառով:
Բնագիրներու յար եւ նման. ¹⁶
8 Փետրուար 1919.
Արդարութեան եւ Կրօնից
Նախարարութիւն
Անճնակազմի Տնօրէնութիւն
Երկրորդ Բաժին:

¹⁴ «Բնագիրներու յար եւ նման» կ'ըսուի որովհետեւ բազմաթիւ պաշտօնա-
գրեր եւ հեռագիրներ իրարու ետեւ ընդօրինակուելէ ետք ամէնը միասին պաշ-
տօնապէս վաւերացուած են:

¹⁵ Դ.Ե. Թիւ Մ 479:

¹⁶ Դ.Ե. Թիւ Մ 255:

Հինգերորդ Զօրաբանակի Զինուորագրութեան Յանձնախումբի Պետ Աւագ Հարիւրապետ Իսմայիլ Րիֆաաթ Պէյ Պոլսոյ Պատերազմական Ատեանի Նախագահին կը զրկէ Կեսարիոյ Տասնեւհինգերորդ Զօրաբաժնի Հրամանատարի Փոխանորդ Միրալայ Շէհապէտտին Պէյի 169 թուահամար 14 Յուլիս 1915 թուակիր ծածկագիր հեռագրի պաշտօնապէս վաւերացուած պատճէնը:

Հայատառ թրքերէն բնագիր

Պէշինճի Գօլօրտույը Հիմայուն Ախաը Ասքեր Հէյէթի 3/606.

Գայսերի Ֆըրգա Գումանտանը Վէքիլի Շէհապ Պէյ թարաֆընտան Պէշինճի Գօլօրտու գումանտանը Վէքիլի Խալիլ Րէճաի Պէյէ քէշիտէ էտիլէն 169 նումարալը 14 Թէմնուզ 331 թարիխի շիֆրէ թէլկրաֆընըն սուրէթի:

Պօղազլըյան գազար տախիլինտէ հարէքէաթի իսեանիլէյէ տաիր հիշ պիր տէլաիլ օլմատըըը, վէ պու գազայա մէրպութ էրմէնիլէրին մէտաքին գուրա քամիլէն տէնիլէճէք տէրէճէտէ գայմագամը գազա վէ նահիլէ միտիրանը թարաֆլարընտան թաթհիր էտիլտիլի վէ գուրատա գալան էրմէնի աիլէլէրինին չօճուզարը տէլիլ սագին պուլունտուքլարը գարիլէլէրինէ չըքմագ, հաթթա իսանէլէրինին գափուլարընըն էօնլէրինէ պիլէ չըգամամաքթա օլտուզարը վէ ափալը միտսիֆէտէն պիրիտէ գազա տախիլինտէ ժանտարմա իքմալ էֆրատը, Չէրքէս սու-

Հայերէն թարգմանութիւն

Հինգերորդ Զօրաբանակի Զինուորագրութեան Յանձնախումբի.

3/606.

Կեսարիոյ զօրաբաժնի հրամանատարի փոխանորդ Շէհապ Պէյի կողմէ հինգերորդ զօրաբանակի հրամանատարի փոխանորդ Խալիլ Րէճայի Պէյի ուղղած 169 թուահամար 14 Յուլիս 1915 թուակիր ծածկագիր հեռագրի պատճէնը:

Պահակախումբի հրամանատարը կ'իմացնէ ինձի թէ Պողազլէանի գաւառակին մէջ ոչ մէկ ըմբոստական շարժումի նշան կայ, թէ այս գաւառակի հայաբնակ գիւղերը կարելի է ըսել որ բոլորովին մաքրուած են գայմագամի եւ գիւղախումբերու շահապներուն հոգածութեամբ: Ոչ թէ միայն այս գաւառակի մէջ մնացած հայ ընտանիքներու գաւակները իրենց բնակած գիւղերուն մէջ չեն շրջիր, այլ նաեւ չեն համարձակիր իրենց ոտքերը դուրս դնել դռներու սեմերուն վրայ: Այս գաւառակին մէջ յառաջ եկած ցաւալի երեւոյթներէն

վարի աթըլարը վէ իսլամ ահալի թարաֆլարընտան էրմէնի գարիլէլէրինտէ տէհշէթլի պիր էաղմակիրիլիք հիւքմ ֆէրման օլտուըը վէ պունտան Խագինէի ճէլիլէնին փէք զիյատէ մութագարրուր օլանաղը միֆրէզէ գօմանտանըըընըն իշարընտան անլաշըլտըըը վէ մէվագիթէ տէվամ էտէն պու էաղմանըըընըն նէ տէրէճէ սու թէսիր վէ սիրայէթ էտէճէլի վէ նէ կիպի ափալըն հուտուընա սէպէպիլէթ վէրէճէլի վարէսթէի արգ վէ իզահ պուլունտուղու ճիհէթլէ շէտիտէն մէնիի էսպապընըն իսթիքմալը:

Ֆըրգա Գումանտան վէքիլի՝ Շէհապէտտին:

Իշպու սուրէթ սալընա մութապըզտըր.

27 Գանունըսանի 335.

Պիրինճի Շուպէ Մէմուրու Գըտէմլի Եիզպաշը՝ Իսմայիլ Րիֆաաթ:

Պոլսոյ Թուրք Պատերազմական Ատեանին կը զրկուի Պողազլէանի զինայրերու գումարտակին հրամանատար Խուլուսի Պէյի պաշտօնապէս վաւերացուած հեռագիրը որ կը հաստատէ թէ տարագրութիւն պաշտօնապէս կը նշանակէ բնաջնջում:

է սաստիկ բուռն կողոպուտը որ կը տիրէ հայ գիւղերու մէջ եւ զոր կը կատարեն այնտեղ զինայրերու լրացուցիչ մարդերը, Չէրքէզ ձիւտրները եւ բազմութիւն մը իսլամ ամբոյսէն, եւ ասոր հետեանը Վետական Գանձը մեծամեծ վընասներու կ'ենթարկուի. այս բանը կը հասկցուի պահակախումբի հրամանատարութեան զեկուցէն. հարկ է բացարձակապէս արգիլել իրերու այս կացութիւնը, որովհետեւ բոլորովին աւելորդ է շէշտել այն յոռեգոյն տպաւորութիւնը զոր յառաջ կը բերէ այս կողոպուտը, որ կրնայ շատ ընդարձակ ծաւալ ստանալ եւ անհամեմատ աստիճաններու հասնիլ:

Զօրաբաժնի Հրամանատարի Փոխանորդ՝

Շէհապէտտին:

Այս պատճէնը յար եւ նման է բնագրին:

27 Յունուար 1919.

Առաջին Գունդի Դասապետ՝ Աւագ Հարիւրապետ՝ Իսմայիլ Րիֆաաթ:

Հայաստան թրքերէն բնագիր.

Գայսերինին Եագը Զինի
Գարագոյ Գումանտանլըղընա
Մահրէմ

Պողազլըյանտան.

Մանթագանըզ ճիվարընտա
վաթան հագգընտա խընայէթէ
պուլունան պիր թագըմ ճասու
Էրմէնիլէրէ սէվգիյաթ Եանի մահիվ
մանաւընա Էտիլմիշտիր. ¹⁷ Էն-
սատէն Եարըն Էոյլէնէ գատար օ
ճիվարըզտան գալտըրըլանաղը
օրտն գումանտանլըղընըն Էմրի
իգթիգասընտան օլուպ Պողազլը-
յան Գայմագամ Պէյին Էմրիլէ ա-
հալի վասըթասըլլա Էնաստէն գա-
փատըլմասը Էհէմմիլէթէ իխթար
օլունոր:

17/18 — 12 — 330. ¹⁸

Պողազլըյան.

Պողազլըյան Ժանտարմա՝
Թագըմ Գումանտանը. Խուլուսի:

Ասը փէք աճէմի Եագըսը այնէն
Եագըլմըշտըր:

Ասընա Մութապըգտըր.

Միսիր 19-2-331 ¹⁹

Գայսերի Ժանտարմա Գուման-
տանը՝ Խայրի:

Հայերէն թարգմանութիւն.

Կեսարիոյ Եագը Զինի
Գիշերապահ Կայանի Հրամա-
նատարութեան Մտերմական
հեռագիր Պողազլեանէն.

Ձեր իրաւասութեան սահմանին
մէջ հայրենիքի դէմ մատնութիւն
ընող կարգ մը լրտես Հայեր տե-
ղահանուած են, այսինքն՝ կոտո-
րածի իմաստով. իսկ զօրաբանա-
կի հրամանատարը նոյն մօտաւոր
շրջանէն դիակները մինչեւ յաջորդ
կէսօր վերցնելու հրաման տուած
է. Պողազլեանի Գայմագամ Պէյին
հրամանով՝ ժողովուրդին միջոցով
դիակները ծածկելու կարեւորու-
թիւնը կը յանձնարարուի:

17/18 — 12 — 1914

Պողազլեան.

Պողազլեանի Զինայրերու Գունդի
Հրամանատար՝ Խուլուսի:
Բնագիրը շատ թերավարժի գրու-
թիւն ըլլալով, նոյնութեամբ գրուե-
ցաւ:

Բնագրին յար եւ նման:

ԿՆԻՔ 19-2-1915

Կեսարիոյ Զինայրերու գունդին
Հրամանատար՝ Խայրի:

17. Ընդգծումը մեզմէ. Գ.

18. Թուականները ճիշդ չեն թուիր. Պողազլեանի կոտորածները սկսան 1915
Յունիսին եւ վերջացան Յուլիսի վերջին շաբաթը: Վերելի հեռագիրը պէտք է
ըլլայ 17/18 Յուլիս 1915, իսկ երկրորդ թուականը պէտք է ըլլայ 19 Փետրուար
1919, երբ Պոլսոյ Թուրք Պատերազմական Ատեանի պահանջով՝ վաւերագրերը
գրկուեցան Ատեանին:

19. Գ.Ե. ԹԻ. Մ 506:

Պոլսոյ Թուրք Պատերազմական Ատեանի Նախագահը Կեսա-
րիոյ զինուորական իշխանութենէն կը պահանջէ մասնաւոր տեղե-
կութիւն Գում Գույու Հայ գիւղի հրկիզումի մասին եւ կը հարցնէ
թէ ոճրագործները պատժուեցան թէ ոչ:

Հայաստան թրքերէն բնագիր.

Քայսերի Ֆըրգա
Գումանտանլըղը Վէրալէթինէ.

Գում Գույու վուգուասընտան
տօլայը հա՞նկը տաիրէտէն վէ Եա
հա՞նկը մէմուրլարըն թահգիգաթը-
նա միւսթէնիտ նէ՞ կիպի րափօր
վէ Եա ֆէզլէքէ իլէ քի՞մլէր Քայ-
սերի Տիվանը Հարպընա կեօնտե-
րիլմիշ օլտուգլարընըն վէ պունլա-
րա նէ՞ ճէգա վերիլտիդիինն հե-
ման պա թէլկրաֆ իշարը վէ հագ-
լարընտաքի թահգիգաթը իպթի-
տաիլէ Էվրագը սուրէթլէրիինն իլք
փօսթա իլէ թէսէարը Էհէմմիլէթլէ
թավսիլէ օլունոր.

1 Մարտ 335.

Թէհնիր Տիվանը Հարպը Էօրֆիսի
Բէիսի: ²¹

Հայերէն թարգմանութիւն.

Կեսարիոյ Զօրաբաժնի
Հրամանատարի
Փոխանորդութեան.

Ստիպողաբար կը պահանջենք
որ մեզի իմացնէք թէ Գում Գու-
յուի դէպքի մասին ո՞ր վարչութիւ-
նը եւ կամ ո՞ր իշխանութեան քըն-
նութեան հետեանքով ինչպիսի
տեղեկագրի եւ կամ զեկոյցի վրայ
հիմնուելով, որո՞նք էին որ Կեսա-
րիոյ Պատերազմական Ատեանի
դրկուեցան, եւ ասոնցմէ որո՞նք
ինչպիսի պատիժներու դատա-
պարտուեցան. անմիջապէս հե-
ռագրով մեզի տեղեկացուցէք, եւ
այս մասին կատարուած քննու-
թեան նախնական վաւերագրերու
օրինակները առաջին թղթատա-
րով մեզի դրկեցէք:

1 Մարտ 1919.

Տեղահանութեան
Պատերազմական Ատեանի
Նախագահ:

21. Գ.Ե. ԹԻ. Մ 235:

Պոլսոյ Թուրք Պատերազմական Ատեանի Նախագահը Եոզղատի կառավարութենէն կը պահանջէ Գում Գույու Հայ գիւղի հրկիզումի եւ օրօրանի հայ մանուկներու բզքտումի մասին վաւերագրական տեղեկութիւններ հարցաքննութեամբ հաստատելէ ետք:

Հայատառ թրքերէն բնագիր.

Հայերէն թարգմանութիւն.

Եօզղաթ Միլիտարըֆլըղընա.

4 Շուպաթ 335 տէ եազըլտը:

Ժանտարմա Գումանտանը էպագը Թէվֆիգ Պէյին եիզէլի խանէտէ ալթընէտիեիզ նիֆուսը հապի Գում Գույու նամ էրմէնի քէոյի էթրաֆընտա մահրուգաթ էրղտըրարագ աթէշ վէրիպ նուֆուսը մէվնուտէյի իհրագ էթտիյի վէ էթտիրտիյի, վէ պէշիքլէրտէ սաղ գալմըշ չօնուզարը փարչալատըղը վէ փարչալաթտըղը ճիւմլէի իթիպարաթընտան օլմագլա, օլպապտէ սուալը միւմքինէ իլէ եափըլարագ թահգիգաթ նէթիճէսինին պա թէլկրաֆ իշարը վէ էվրագը թահգիգիյէսինին իլք փօսթա իլէ թէսէարը էհէմմիյէթլէ թավսիյէ օլունուր:

Տիվանը հարպը Էօրֆի Բէիսի: ²²

Եոզղատի կառավարութեան 4 Փետրուար 1919ին գրուեցաւ.

Զինայրերու նախկին հրամատար Թէվֆիգ Պէյ հարիւր յիսուն ընտանիքէ բաղկացած վեց-եօթ հարիւր բնակչութիւն ունեցող Գում Գույու անուն Հայ գիւղին շուրջ վառելանիթ դիզելով եւ դիզել տալով, հոն ներկայ գտնուող անձերը աչրած է եւ աչրել տուած է, եւ օրօրոցներու մէջ ողջ մնացած մանուկները կտոր կտոր ըրած է եւ կտոր կտոր ընել տուած է, ինչ որ հանրածանօթ եղելութիւն մըն է: Այս պատճառին համար պնդագին կը խնդրենք որ հաճիք կատարուած քննութեան թուղթերը հեռագրով մեզի դրկել առաջին թղթատարով:

Պատերազմական Ատեանի Նախագահ:

Պոլսոյ Արտակարգ Պատերազմական Ատեանի Նախագահը Եոզղատի հեռագրատան եւ նամակատան տնօրէնութենէն կը պահանջէ ոստիկանապետ Թէվֆիգ Պէյի եւ էվգաֆի տնօրէն Ֆէյեազ Պէյի միջեւ փոխանակուած հեռագիրներու պաշտօնապէս վաւերացուած պատճէնները:

Հայատառ թրքերէն բնագիր.

Հայերէն թարգմանութիւն.

Թէլկրաֆ Փօսթա Նէգարէթինէ Թէգքէրէ.

Եօզղաթ ճինայրերը ֆէճիէսինտէն տօլայը մէվգուֆէն մուհաքէմէլէրի վէ տէրտէսի իճրա պուլունան միլիտարըֆ վէրիլի Քէմալ վէ ժանտարմա թապուր գումանտանը Թէվֆիգ վէ էվրաֆ Մէմուրը Ֆէյեազ Էֆէնտիլէր թարաֆլարընտան սալը հալ Գանունուսանի վէ Շուպաթ աչլարընտա Եոզղաթա շէքիլմիշ թէլկրաֆլար վար իսէ, պունլարըն պիրէր սուրէթի մուսատտագալարընըն տիվանը հարպը Էօրֆի տաիրէսինէ իրսալընա միւսատտէի ճէլիլէի նէգարէթ բէնահիլէրի շայան պույուրմասը պապընտա:

22 Շուպաթ 335 Թէհճի Տիվանը Հարպը Էօրֆի Բէիսի. ²³

Զեկոյց՝

Հեռագրատան եւ նամակատան Նախարարութեան

Եոզղատի կտորածի հետեւանքով ձերբակալուած, ի ներկայութեան դատուելու վրայ են (Եոզղատի) Փոխ Միլիտարըֆ Քէմալ Պէյ, զինայրերու գունդին հրամանատար Թէվֆիգ Էֆէնտի եւ էվրաֆի տնօրէն Ֆէյեազ Էֆէնտի. ասոնց կողմէ Յունուար-Փետրուար ամիսներուն ընթացքին Եոզղատ դրկուած հեռագիրներ եթէ կան, հաճէիք անոնց վաւերացուած պատճէնները Պատերազմական Ատեանի դիւանին դրկել նախարարութեան բարձրագոյն հրամանին համաձայն:

22 Փետրուար 1919. Տեղահանութեան Պատերազմական Ատեանի Նախագահ.

Դատական Նախարարութեան Անձնական Գործերու Տնօրէն Սալահէտտին Հայտար Պէյ, Պոլսոյ Պատերազմական Արտակարգ Ատեանի Նախագահին կը զրկէ պաշտօնագրերու եւ հեռագիրներու վաւերացուած Պատճէնները:

Հայաստան թրքերէն բնագիր.

Հայերէն թարգմանութիւն.

Ատլիյէ Մէզահիպ Նեզարէթի Ումուրը Զարթիյէ Միտիիիյէթի Ատէտ 932.

Տէրսէտտէթ Տիվանը Հարպը Էօրֆի Բիյասէթի Ալիյիսիւնէ.

3 Շուպաթ թարիխի 94 նումարալը միզէքքէրէի վալալէրիւնէ ճէվապ տըր.

Եօզդաթ սանճաղը իսթինաֆ մահքէմէսի սազալարընտան Համբարձում Էֆէնտիհին Եօզդաթ Էրմէնիլէրիյլէ պիւրիքտէ տէրտէթի նազլ պուլունտուղունա տաիր միւմաիլէրիին տօսիէսիստէ մահալը միթէսարըֆըղըղընըն թահրիրաթ վէ եա թէլկրաֆնամէսի պուլունմուշ վէ անճագ մահալի միտտէի ումումիլիյիստէն վէ Անգարա Վալիի վիլայէթիստէն մէվրուտ թահրիրաթ վէ թէլկրաֆնամէ սուրէթլէրի մուսատտազալարը լէֆֆէն թագտիմ գըլընմըշ օլտուղը պէլյանըլլա միզէքքէրէ թագտիմ գըլընտը, Էֆէնտիմ:

Մէօհիպ 8 Շուպաթ 335.

Ատլիյէ վէ Մէզահիպ Նեզարէթի Ումուրը Զարթիյէ Միտիիիյէթի Սալահէտտին Հայտար:

Դատական եւ Կրօնական Նախարարութեան Անձնական Գործերու Տնօրէնութիւն՝ Թի 932.

Մայրաքաղաքի Պատերազմական Ատեանի Բարձրապատի Նախագահութեան.

Պատասխան՝ 8 Փետրուար թուակիր եւ թի 94 երեւելի զեկուցագրին:

Եօզդատի Հայերու շարքին ձերբակալուած եւ տարագրուած՝ Եօզդատի վերաքննիչ ատեանի անդամներէն Համբարձում Էֆէնտի թղթածրարը կը պարունակէ տեղւոյն միթէսարըֆին գրութիւնը կամ հեռագիրը, սակայն եւ այնպէս, ընդհանուր դատախազութեան եւ Անգարայի կուսակալութեան կողմէ զրկուած պաշտօնագրերու պատճէնները ներփակ ձեզի զրկելու պատիւն ունիմ:

8 Փետրուար 1919.

ԿՆԻՔ

Դատական եւ Կրօնական Նախարարութիւն, անձնական գործերու Տնօրէնութիւն.

Սալահէտտին Հայտար:

24 Դ.Ն. թիւ Մ 478:

دولت حرم عالی مدرس عالی جناب و اولاد

خاندان نظاری

۵۰۸۴
۹۷

ساعتی اقامت محترم
توجه مندرجه دارا ۱۹۱۹ سنه عاير ابتدا سنده ۱۹۱۹ سنه نیلای فایم سنه قدر نفعه رتبه و دیایته با زیاده سبوق
تفاتی نیزم بولس لایم کلمه اصله نیت سآور مقصود معاشیه با تقویه زانی تعبیرا تبیح مقصود نری غوه درین
کوندر یوب یوسته و نفعه نفعه رتبه کورد با ایامه قومه نیلای قدر نفعه و نفعه و یوسفه و زاده ایامه
تفاهه صورت نیت کوندر لایم عاوی قونیم اولد تیزه کلمه قورایم مقصود یوب معاصوب و درایم زانی اندر
دیگر محله کده حدک اولد وقت م عاودرجه زانی ایامه کلمه کلمه بولس نیلای بیایه و نوز او سبج لایم نفعه خفتر بندر
داهدیا فری
عاشق

Թուրքիոյ ներքին գործերու նախարար Ճէմալ Պէյ 2 Ապրիլ 1919ին, Պոլսոյ Թուրք Պատերազմական Ատեանի Ընդհանուր Դատախազին կը զրկէ մասնաւոր պահարանի մը մէջ ծրարուած 42 ծածկագիր հեռագիրներ, որոնք նախարարութեան զրկուած էին Անգարայի կուսակալութեան հեռագրատունէն, եւ ուրիշ հեռագիրներ, որոնք հասած էին Գոնիայի կուսակալութիւնէն, եւ կը խոստանայ հետզհետէ զրկել ուրիշ պաշտօնական վաւերագրեր որոնք ներքին գործերու նախարարութեան պիտի հասնին Թուրքիոյ ներքին նահանգներէն եւ գաւառներէն: Այս պաշտօնական վաւերագրերը կը վերաբերին Հայերու տեղահանութեան եւ կոտորածին:

Թուրքիոյ ներքին Գործերու նախարար Ճէմալ Պէյ 2 Ապրիլ 1919ին՝ Պոլսոյ Թուրք Պատերազմական Ատեանի Ընդհանուր Դատախազին կը զրկէ մասնաւոր պահարանի մը մէջ ծրարուած քառասուն երկու ծածկագիր հեռագիրներ, որոնք նախարարութեան զրկուած էին Անգարայի Կուսակալութեան հեռագրատունէն, եւ ուրիշ վաւերագրեր, որոնք հասած էին Գոնիայի Կուսակալութենէն, եւ կը խոստանայ հետզհետէ զրկել ուրիշ պաշտօնական վաւերագրեր որոնք ներքին գործերու նախարարութեան պիտի հասնին Թուրքիոյ ներքին նահանգներէն եւ գաւառներէն: Այս պաշտօնական վաւերագրերը կը վերաբերին հայերու տեղահանութեան եւ կոտորածին:

Ներքին Գործերու նախարար Ճէմալ Պէյ Թուրք Պատերազմական Ատեանին կը զրկէ Հայաստանութեան վերաբերեալ Թուրք Պաշտօնական հեռագիրներ:

Հայաստան թրքերէն բնագիր.

Հայերէն թարգմանութիւն.

Պապը Ալի
Տախիլիյէ Նեզարէթի
Գալէմի Մախսուս
Նումարա 5083.
27.

Տիվանը Հարպը Էօրֆի Միստեի Ումումիլիյի Մանիպի Վալասընա. Սէստէթուր Էֆէնտիմ Հազրէթլէրի

Թէհնիք մէսէլէսինտէ տաիր 331 սէնէսի Մայըս իպթիտասընտան 333 սէնէսի Նիսանը դայէսինէ գատար Նեզարէթտէն Վիլայէթա եազըլան շիֆրէլէրին թէլկրաֆիանէլէրտէ պուլուսմասը լազըմ կէլէն ասըլլարընըն մէմուր մախսուս մարիֆէթիյլէ պիլթէֆրիգ իրասըլը թամիմէն թէպիղ գըլընմըշար:

Բարձրագոյն Դուռ
Ներքին Գործերու նախարարութիւն
Մասնաւոր Սպասարկութեան Բաժին
Թի 2053

Պատերազմական Ատեանի Ընդհանուր Դատախազութեան, Վսեմափայլ Տէր,
Ձեզի կ'իմացնենք թէ տեղահանութեան խնդրին առընչութեամբ 1915 Մայիսէն մինչեւ 1917 Ապրիլ, նախարարութենէն կուսակալութիւններուն քաշուած ծածկագիր հեռագիրներու բնագիրները վաւերացնելէ ետք մասնաւոր պաշտօնէայի մը միջոցով զրկուած են նախարարութեան:

Անգարա վիլայէթինտէն փօթա վէ թէլկրաֆ Նեզարէթինտէն թէլտի Էտիլէն կէօնտէրիլիպ գըրգիքի (42) ատէտ թէլկրաֆ մագրուֆէն վէ պու խուսուսա տաիր էլտէ Էտիլէն շիֆրէ սուրէթլէրինին կէօնտէրիլտիլինին հալի Գօնիա վիլայէթինտէն կէլէն թահիրաթ մէլֆուֆլարը իլէ մա'աէն սալպը վալալարընա իրասլ գըլընտը: Տիկեր մահալլէրտէն կէլէնէք էվրագընտա փէլտէրիէլ իրասլ Էտիլէնէլի թապի՝ պուլուստուրը պէլյան օլուստը:

Օլպապտէ իրատէ, Էֆէնտիմ, Հազրէթլէրին տիր:

30 Ճէմազիլ Ախէր 337

2 Նիսան 335:

Տախիլիյէ Նասըրը՝ Ճէմալ: 25

Ներկայ հատորը հայաստանութեան վաւերագրական ամբողջ պատմութիւնը չէ: Ան միայն մէկ մասն է որ պիտի լրացուի յաջորդական հատորներով: Ներկայ հատորը տեսակ մը հաւաքածոյ է Թուրք պաշտօնական վաւերագրերու: Պատմագէտներ հոս պիտի գտնեն կարեւոր նիւթեր իսկական պատմութիւնը գրելու:

Բոլոր եզրակացութիւնները պէտք է հիմնաւորուած ըլլան պաշտօնական վաւերագրային ապացոյցներու վրայ մասնաւորապէս այսպիսի նիւթի մը մասին որ դեռ հասած չէ վերջնական լուծումի միջազգային արդարութեան անտարբերութեան պատճառով, խնդիր մը որու մասին մեծ պետութիւնները դեռ մինչեւ այսօր չփորձեցին եւ չկրցան փնտռել ու գտնել արդար լուծում մը:

Անգարայի կուսակալութեան նամակատան եւ հեռագրատան վարչութենէն զրկուած պահարանի մը մէջ քառասուն երկու (42) կտոր հեռագիրներ եւ այս մասին ձեռքի տակ գտնուող ծածկագիրներու պատճենները պաշտօնապէս վաւերացուած, որոնք հասած են Գոնիայի կուսակալութենէն, ներփակներուն հետ միասին զրկուած են ձեռ վսեմութեան:

Կը տեղեկացնենք որ բնական է թէ ուրիշ տեղերէ գալիք վաւերագրերն ալ հետզհետէ պիտի զրկուին ձեզի:

Այս մասին ձեզի կ'իյնայ հրամայել:

2 Ապրիլ 1919:

Ներքին Գործերու նախարար՝ Ճէմալ:

Ընկերաբաններ ու հոգեբաններ իրենց խօսքն ու տեսութիւնը չեն կրնար ըսել կամ բանաձեւել մինչեւ որ վաւերագրեր չգան ստուգօրէն հաստատել պատմական իրողութիւնը, պարագաներն ու պայմանները, տեղական եւ աշխարհագրական տուեալները, ինչպէս նաեւ գործօն անհատներն ու խմբակցութիւնները:

Քաղաքագէտներ եւ դիւանագէտներ առ հասարակ պատմաբան չեն, ոչ ալ պատմութիւն կրնան շինել: Անոնք սովոր են խեղաթիւրելու պատմութիւնը իրենց շահերուն եւ տեսակէտներուն յարմարցնելով զայն:

Այս հատորի պաշտօնական վաւերագրերը միայն պիտի խօսին:

ԳԼՈՒԽ Ա.

ԵՌՁՂԱՏ ԳԱՒԱՌ

Եռզրատ գաւառ 1914ին կը ներկայացնէր հետեւեալ պատկերը հայկական տեսակետով.

Համաձայն	Գիւղ	Եկեղեցի	Դպրոց	Ընտանիք	Հայ Բնակիչ
1. Միքայէլ Բ. Կաթողիկոսի	56	—	—	—	—
2. Եռզրատի հայրենակցական Միութեան	48	35	36	10.865	76.055
3. Բժ. Մկրտիչ Քէչեանի	44	—	—	8.570	59.990
4. Գրիգոր Ներսէսեանի	49	—	—	11.400	79.800
5. Հայկազ Գ. Ղազարեանի	53	41	53	9.809	74.584
6. Թուրք Կառավարութեան	—	—	—	—	31.247
7. Տեղեկագրի մը	—	—	—	—	61.570
8. Եռզրատի կառավարիչին	—	—	—	—	33.133

Հոս կը դնենք Եռզրատ գաւառի քաղաքներու եւ գիւղերու անունները դասաւորուած այրենական կարգով.

Ագտաղմատէն, Ալաճա, Արղատաշ, Արմաղան, Գարա Եազը, Գարա Եաղուպ, Գարա Հալլը, Գարա Չայիր, Գարա Պըյըզ, Գարա Ֆազրալը, Գուժ Գուլու, Դանիէլեան պաղ, Եալը Եալը կամ Եակալը, Եռզրատ, Էլէքճիլէր, Էյլէնճէ, Էքրէք, Թանըշման, Թաշլը Կէչիտ կամ Տէնտիլ, Թէրզիլի, Ինճիրլի, Իւրնէճ, Իքի Չարա, Իքի Գարիյէ, Իքի Գարտաշ, Խաննէն, Կէօվէճլի կամ Կէօվէլլի, Կիւրտէն կամ Կէօրտէն, Ղըզըլճը Ղովա, Մաղար Օղլու, կամ Մաղար Օղլու Չիֆթիլի, Մանսուր Օղլու, Մէլէզ, Մէնթէշէ, Մըրըլը Չաթ, Մըրըզլար, Յակոբ Քեհեա, Շէյխ Ուզունլու, Չազմազ, Մեծ Չաթ, Փոքր Չաթ, Չաթագ, Չայիր, Չէպնի կամ Եազը Չէփնի, Չիֆթիլի կամ Սարը Համզա, Չոգրատան, Չորուժ, Պէլ էօրէն, Պէպէք, Պըյըզ, Պիտան, Պողազլեան, Պուրուն Գըշլա, Սաաթլըզ,

Սարը Համզա, Սէրայ, Սըղըր Ղույրուղու, Սունկուրլու, Տէլի Համզա, Րում Տիկին, Րում էլիկին, Փէօհրէնկ, Քէլլէր, Քէտիլէր, Քէօհնէ, Քիւրքճի, Քէօյտիւն, Ֆազրալը:

Այս ցանկը համառոտութիւնն է Եոզղատի հայաբնակ գիւղերու:

Օսմանեան կայսրութիւնը 1914ին ունէր քսան երկու նահանգներ Վիլայէթ, ինն անկախ գաւառ Մուսթաֆի սահմագ եւ մէկ առանձնաշնորհեալ նահանգ:

Անգարայի նահանգը ունէր 71,000 քառակուսի հազարամէդր տարածութիւն կամ 47,500 քառակուսի մղոն: Նահանգի բնակչութիւնը գրեթէ մէկ միլիոն էր:

Նահանգապետն էր Մազհար Պէյ, իսկ զինուորական հրամանատարը Խալիլ Րէճաի Պէյ: Հինգերորդ զօրաբանակը կը գտնուէր Անգարա, որ ունէր պատերազմական ատեան:

Անգարայի նահանգը բաղկացած էր հինգ գաւառներէ. Անգարա, Կեսարիա, Գըրզէհէր, Չորում եւ Եոզղատ:

Անգարայի գաւառը ունէր 9 գաւառակներ, Այաշ, Պէյպազար, Սիվրիհիսար, Նալլուխան, Հայնամէ, Եապանտար, Միխլաճիք, Պալահիսար եւ Գալաճիք:

Կեսարիոյ գաւառը ունէր միայն մէկ գաւառակ, Տէվէլու. Կեսարիա կեդրոնական քաղաք էր եւ միւթէսարըֆն էր Չէքայի Պէյ: Կեսարիոյ տասնեւհինգերորդ զօրաբաժնի հրամանատար էր Շէհապէտտին Պէյ: Ունէր նաեւ պատերազմական ատեան:

Գըրզէհէրի գաւառը կազմուած էր երեք գաւառակներէ, Քէսկին, Մէճիտիէ, եւ Աւանոս: Գլխաւոր քաղաքն էր Գըրզէհէր, ունէր միւթէսարըֆ եւ հոն կը գտնուէր տասներեքերորդ զօրաբաժինը:

Չորում ալ բաղկացած էր երեք գաւառակներէ, Օսմանճըզ, Սունկուրլու եւ Իւսկիւպ. Գլխաւոր քաղաքն էր Չորում, ուր կը նստէր Միւթէսարըֆ Րազէպ Պէյ:

Չորումի մէջ կար նաեւ տեսակ մը սպայակոյտ մասնաւոր մարզանքի համար. հոն կը բերուէին բանտերէն ազատ արձակուած դատապարտեալ ոճրագործները. հոն կը մարզուէին եւ կ'արձանագրուէին Թէշքիլաթը Մահսուսալի հրոսակները եւ անկէ կը ղըրկուէին կանխապէս որոշուած ջարդավայրեր ուր կը տարուէին հայ կարաւանները կոտորուելու համար:

Եոզղատ միայն երկու գաւառակներէ կը բաղկանար, Պողազ-

լեան եւ Ագտաղմատէն: Եոզղատի միւթէսարըֆն էր Մուհիէտտին Փաշա, որուն յաջորդեց 5 Մայիս 1915ին Ճէմալ Պէյ. այս վերջինը միւթէսարըֆ էր Եւզուկիոյ պաշտօնի գլուխ մնաց մինչեւ 5 Օգոստոս 1915: Աթըֆ Պէյ զայն պաշտօնանկ ըրաւ հեռագրական հրամանով մը: Իր տեղ եկաւ Պողազլեանի գայմազամ Քէմալ Պէյ 6 Օգոստոս 1915ին ստանալով պաշտօնի բարձրացում: Այս քսան մէկ տարեկան կառավարիչը արդէն կոտորել տուած էր Պողազլեանի Հայերը:

Եոզղատի զօրակայքի հրամանատար էր հազարապետ Սալիմ Պէյ, որ միեւնոյն ատեն զինուորապետութեան պաշտօնատան նախագահն էր: Ան ալ պաշտօնանկ եղաւ 9 Օգոստոս 1915ին որովհետեւ կը մերժէր կազմակերպել Հայերու կոտորածը, ոչ թէ տեղահանութիւնը:

Եոզղատի ոստիկանապետ էր Թէվֆիք Պէյ:

Եոզղատ գաւառը կանոնաւոր պաշտօնական մարդահամար չունէր. կային 350 գիւղեր, որոնցմէ վաթսունէն աւելին հայ էին, ունէր նաեւ քսան վեց գիւղեր ուր կը բնակէին հայ եւ իսլամ միասին:

Գաւառը ունէր մօտ 9, 809 հայ ընտանիք, մօտ 55,000 Հայեր, 40 եկեղեցի, 65 հայ դպրոց:

Եոզղատի հայերը.....	13,259 հոգի,
Պողազլեանի Հայերը.....	14,000 հոգի,
Ագտաղմատէնի հայերը.....	3,208 հոգի,
Ուրիշներ.....	680 հոգի:
Գումար.....	31,147 հոգի:

Եոզղատի կառավարիչը 1919ին հետազօտելէ ետք եզրակացուց թէ 1908ին գաւառը ունէր 33,133 հայ բնակիչ: ¹

1. Ընդարձակ Բարտէս Օսմանեան պետութեան, Մրազրեց՝ Ա. Պիպէոճեան, Գժագրեց՝ Յ. Փափազեան: Քարտէսին կցուած է գրքոյկ մը՝ Վիճակագրական եւ վարչական բաժանումներով: Օսմանեան Պետութիւն, գրեց Ա. Պիպէոճեան. հրատարակութիւն Հայրենիք կազմատան, Կ. Պոլիս 1913. տպագրութիւն Արշակ Կարոեան, էջ 8:

Գլուխ Բ.

Զինուորական եւ Քաղաքային Նուիրապետութիւն
Անգարայի Նահանգին եւ Եոզղատի Գաւառին մէջ.

Եոզղատ գաւառը իր՝ մօտ ⁴⁰ 65 հայաբնակ գիւղերով կը գտնուէր
Անգարայի նահանգին հարաւ արեւելեան կողմը:

Եոզղատի ՄիւթէսարըՖը կախում ունէր ուղղակի Անգարայի
կուսակալութենէն, որ իր կարգին ուղղակի պատասխանատու էր
Պոլսոյ ներքին գործերու նախարարութեան: Եոզղատի կառավա-
րիչէն կախում ունէին Ագտաղմատէնի եւ Պողազլեանի երկու գայ-
մագամները:

Եոզղատ գաւառը զինուորապէս անմիջապէս կախում ունէր
Կեսարիոյ տասնեւհինգերորդ զօրաբաժնի հրամանատարէն, որ իր
կարգին ուղղակի ենթարկուած էր Անգարայի հինգերորդ զօրաբա-
նակի հրամանատարի իրաւասութեան: Անգարայի հինգերորդ զօ-
րաբանակի հրամանատարը պատասխանատու էր Պոլսոյ Պատե-
րագմական նախարարութեան եւ Օսմանեան Ընդհանուր Սպայա-
կոյտին:

Եոզղատ գաւառի Հայերու տեղահանութեան եւ կոտորածի
հրահանգներն ու հրամանները, ինչպէս նաեւ բարձրագոյն իշխա-
նութեան զրկուած տեղեկագիրները կը հաղորդուէին վերոյիշեալ
նուիրապետական կարգով. հրամաններն ու հրահանգները բարձ-
րագասէն դէպի ստորագաս, իսկ տեղեկագիրները կ'երթային
ստորագասէ դէպի բարձրագաս իշխանութիւն. այս էր զինուորա-
կան եւ քաղաքային կարգը:

Հայաստանութեան սկզբնական շրջանին Հայերու տեղահա-
նութեան կազմակերպութեան եւ գործադրութեան իրաւասութիւնը
վստահուած էր զինուորական իշխանութեան, որուն պարտաւոր
էր գործակցիլ քաղաքային իշխանութիւնը:

Հետագային՝ 6 Օգոստոս 1915էն ի վեր Պոլսէն հրամանատար-
ներուն մասնաւոր հրաման զրկուեցաւ որ զինուորական իշխանու-

թիւնը այլեւս չմիջամտէ քաղաքային իշխանութեան հայասպան
գործունէութեան, այլ միայն գործակցի:

Թուրք պաշտօնական վաւերագրերու մէջ պիտի տեսնուին
նուիրապետական կարգերը, զինուորական եւ քաղաքային իշխա-
նութեան գլուխ կեցող անձերը իրենց տիտղոսներով:

Այս զինուորական եւ քաղաքային իշխանութիւններէն դուրս
կար արտակարգ կազմակերպութիւն մը, Թէշքիլաթը Մախսուսա ա-
նունով, հիմնուած՝ Երիտասարդ Թուրքերու Կուսակցութեան
Կեդրոնական Կոմիտէի եւ ներքին գործերու նախարարութեան
եւ Արգարութեան նախարարութեան կողմէ, անպաշտօն կերպով:
Այս մասնաւոր կազմակերպութիւնը գլուխ հանեց Հայաստանու-
թեան ընդհանուր գործը:

ԳԼՈՒԽ Գ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹՈՒՐՔԵՐՈՒ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷՆ

Երիտասարդ Թուրքերու Միութիւնն եւ Յառաջդիմութիւնն կուսակցութեան կեդրոնական կոմիտէն ինքզինք գերիվեր կը նկատէր ամէն իշխանութենէ: Այս կոմիտէն ոչ ոքի պատասխանատու էր, ոչ Աստուծոյ, ոչ ալ ժողովուրդին: Կոմիտէի իւրաքանչիւր անդամ երզում ըրած էր, իրաւունք տուած եւ իրաւունք ստացած էր սպաննելու իր ընկերը եւ սպաննուելու, երբ յանդգնէր դաւել կուսակցութեան նպատակին:

Կեդրոնական կոմիտէն իր որոշումները կը հաղորդէր կառավարութեան: Նախարարներու խորհուրդը, ծերակոյտը, խորհրդարանը մէկ բառով, ամբողջ վարչութիւնը, լոկ թութակներ էին կամ ձայնագիր գործիքներ կրկնելու համար պարիսպի ետեւ թաքնուած խորհրդաւոր կեդրոնական կոմիտէի որոշումները:

Les chefs du parti et le cabinet, quand le parti est au pouvoir, ne sont que, un "phonograph du caucus", le ministère fédéral a été complètement dépouillé de son indépendance et de sa responsabilité.

"La discussion au parlement n'est qu'une formalité; tout est décidé d'avance dans le caucus; le bill qu'il a approuvé peut être considéré comme déjà approuvé par le parlement." ¹

«Կուսակցութեան ղեկավարները եւ դահլիճը, երբ կուսակցութիւնը իշխանութեան գլուխ է, այլեւս միայն ձայնագիր մըն է քաղաքական կազմակերպութեան. կեդրոնական վարչութիւնը բոլորովին մերկացած կը մնայ իր անկախութենէն:

1. Թագուիմը Վազայի Տիվանը Հարպը Էօրֆի Մուհաքէմաթը Զապըթ Ճէրիտէսի, Թուրք Պատերազմական Ատեանի պաշտօնաթերթ, թիւ 3596, հրատարակուած 12 Յուլիս 1919ին. երկրորդ սիւնակ, էջ 198: Մէջբերումը պաշտօնական բնագործին մէջ գաղղիերէն լեզուով է: Կու տանք թէ՛ բնագիրը եւ թէ՛ թարգմանութիւնը:

«Երեսփոխանական ժողովի մէջ եղած արտայայտութիւնը միայն ձեւակերպութիւնն է. ամէն ինչ կանխապէս որոշուած է քաղաքական կազմակերպութեան կողմէ. ասոր ընդունած օրինագիծը արդէն վաւերացուած կը նկատուի երեսփոխանական ժողովի կողմէ:»

Թուրք խորհրդարանի հաւաքոյթի ընթացքին Շէյխ Իւլ Իսլամ Մուսա Քեազիմի գաղափարը հարցուցին թէ ինչ կը մտածէ կրօնական ատեաններու իրաւասութեան մասին որ պիտի փոխանցուէր արդարութեան նախարարութեան: Մուսա Քեազիմ պատասխանեց. «Իմ կարծիքս մի՛ հարցնէք եւ ինձմէ քուէ մի՛ ուզէք. կուսակցութիւնը այդպէս կ'ուզէ եւ այդպէս ալ պիտի ըլլայ:» Մուսա Քեազիմ այս խոստովանութիւնն ըրաւ Պատերազմական Ատեանի առջեւ: ²

Պոլսոյ համալսարանի իրաւագիտութեան ճիւղի ուսուցիչ Թարիք Զ. Թունայա շատ լաւ պատկերացուցած է Երիտասարդ Թուրքերու կուսակցութեան կեդրոնական կոմիտէի ծածուկ դերը, որ Սուլթան Ապտիւլ Համիտի միապետութիւնը տապալելով անոր տեղ վերահաստատած է ութ խարեբաներու բռնակալութիւնը թաքնուած պարիսպի ետեւ եւ որ իր ձեռքին մէջ տուած է հսկայական Օսմանեան կայսութեան ղէկը վարելու համար կառավարական եւ վարչական զանազան ճիւղերը, ծերակոյտն ու երեսփոխանական ժողովը:

Հատուած մը Թարիք Զ. Թունայայի գրած գիրքէն.

Հայատառ թրքերէն բնագիր. ³

Հայերէն թարգմանութիւն.

Իթթիհաթ վե Թէրազգի, Ապտիւլ-Համիտի աթմըշ ֆաքաթ ետրիմէ Մէրքեզի Ոսմամի իպթիպատաւը քուրմուշթուր, շէօյլի քի, մէմլէքէթի ցէ փատիշահ, ցէ հիւքիւմէթ, ցէտէ Մէնլիս իտարէ Էթմէքթետիլլէր, ասլընտա, հէր շէյէ փէրտէ արքաւրնտան հիւքմէտէն հէր թիւրլի քուտրէթի քէնտիսիմտէ թօփլըյան ին-

Միութիւն եւ Յառաջդիմութիւն կուսակցութիւնը տապալեց Ապտիւլ համիտ Սուլթանը սակայն անոր տեղ վերահաստատեց իր Ընդհանուր Կեդրոնի ինքնակալութիւնը, այնպէս որ, ո՛չ թագաւորը, ո՛չ կառավարութիւնը, ո՛չ ալ երեսփոխանական ժողովը կը կառավարէն երկիրը: Պետական Խոր-

2. Նոյն:

3. Այս բնագիրը գրքին մէջ լատինատառ է:

ճիսարճը պիր քլիք, պիր Մէրքեզի Ումուսի վարտըր վէ գօճա Իմբէրաթօրլուք պու սէքիզ քիշիմին էլիմտէ գալմըշթըր:

Ֆրրգա (ճէմիյէթ'ին մէճլիսիմտէքի շէքլի) վէ մէպ'ուլար իփլէրի էրար փէրտէսի արտընտաքի ճիգպիմ էլիմտէ պուլունան պիր թագըմ պասիթ օթօմաթլար հալիմէ կէշմիշլէրտիր:

Պիսիմ մէսէլէ կիզլի վէ թէշքիլաթլա չալըշան ճէմիյէթիլէ ֆըրգա արաւընտաքի միմասէպէթիմ պու անօրմալ վէ միվազէնէսիզ տուրումնտատըր:

Ֆիքրի սուսթօրմատըրը անտա սիլահա սարըլան պու կիզլի օլիկարշի երթըլմալտըր...⁴

Երիտասարդ թուրքերու Կուսակցութեան գաղափարախօս ղեկավար Բժ. Նազըմ Պէյ կը զանազանէ մարդն ու իր կնիքը: ⁵ Մարդը Կուսակցութեան Կեդրոնական Կոմիտէն է եւ կնիքը՝ Սուլթան Մէհմէտ Ե. Բէշատ:

Զմիւռնիոյ մէջ Բժ. Նազըմ Պէյ 15 Օգոստոս 1909ին լրագրողներու առջեւ ըրաւ հետեւեալ յայտարարութիւնը. սահմանադրութիւն, ընտրութիւն եւ երեսփոխանական ժողով պարզապէս եւ բացարձակապէս դատարկ բառեր են: ⁶

Բժ. Նազըմ բացատրութիւն տուաւ եւ ըսաւ. «Ասիկա ծածկըւած ինքնակալութիւն մըն է, սահմանադրական վարչակարգի նման բան մը:» ⁷

5. La Mort de Stamboul, Victor Bérard, Paris 1913, էջ 296:
6. Նոյն, էջ 296:
7. Նոյն, 338-339:
4. Թիւրքիյէտէ Սիյասի Փարթիլէր 1859-1952, Տօքթօր Թարիք Զ. Թունայա, Իսթանպուլ Ինսիթիւթիսի Ումուսի Ամմէ Հուզուզու Տոչէնդի, Իսթանպուլ 1952, էջ 182:

հուրդը կամ վարչութիւնը այլեւ կարեւորութիւն չունին, իրականացն է որ բոլոր որոշումները կ'առնուին վարագոյրին ետեւէն: Ուր անձերու ժողովը (Քլիք) իր ձեռք առած է ամէն ինչ, կայսրութեան ղէկը: Վարագոյրին ետեւ գտնուող խմբակին ձեռքն է երեսփոխանները շարժելու չուանը: Այս սակաւապետութիւնը զէնքի միջոցով կ'ընէ ինչ որ չի կրնար ընել խօսքով: Ամէն ինչ գաղտնաձայնակ դրութեամբ կը վարեն, այս է գործելակերպը անբնականոն եւ անօգնական Կոմիտէին եւ Կուսակցութեան...

Երիտասարդ թուրքերու Կեդրոնական Կոմիտէն նշանակած էր իր ներկայացուցիչները կամ պատասխանատու քարտուղարները նահանգներու եւ գաւառներու մէջ. վալի, միւլթէսարըֆ, գայմազամ ստիպուած էին, եթէ կ'ուզէին պաշտօնի վրայ մնալ, համակերպիլ անոնց հրահանգներուն, գոնէ հայաստանութեան գործին մէջ:

Գերման Դեսպան կոմս Ֆոն Մէթթէրնիխ 30 Յունիս 1916ին Պոլսէն Պերլին կը գրէր պաշտօնապէս Գերման վարչապետ Ֆոն Պեթման Հոլվէկի. «Սակայն ոչ ոք կրնայ ճզմել Երիտասարդ թուրքերու Կոմիտէի բազմազլխեան վիշապը:

«Կոմիտէի ազգայնամոլութիւնը եւ մոլեռանդութիւնը կը պահանջեն բնաջնջել վերապրող Հայերը եւ կառավարութիւնը պէտք է տեղի տայ: Կոմիտէ չի նշանակեր միայն մայրաքաղաքի մէջ կուսակցութեան կառավարական կազմակերպութիւնը, այլ Կոմիտէն ունի ծաւալուն կազմը բոլոր նահանգներու եւ գաւառներու մէջ:

8. Նոյն, 297:
9. Նոյն, էջ 310:

Բժ. Նազըմ շատ աւելի ապացոյցներ տուաւ. ան ըսաւ. «Մենք (Երիտասարդ Թուրքերու Գ) Սուլթանը ղրինք վնաս հասցնելու անկարելիութեան մէջ: Մենք պէտք ունինք գահի վրայ իր ներկայութեան... որովհետեւ կը փափաքինք բացարձակապէս մէկդի նետել եւրոպական միջամտութիւնը: Խալիֆան դեռ ունի անսահման բարոյական հեղինակութիւն մը. մենք կ'ուզենք որ ան մեր որոշումներուն ներքեւ ղնէ իր ստորագրութիւնը: Սուլթանը պարզապէս ուրուական մըն է:» ⁸

Սալոնիկի համագումար ժողովներու ընթացքին 31 Հոկտեմբեր, 13 Նոյեմբեր 1911ին, կուսակցութիւնը որոշեց դիմել քաղաքական մարդասպանութեան, փոխանակ գործելու ատեաններու միջոցով, եւ որդեգրեց կոտորածի քաղաքականութիւնը դաւաճան նկատուած թշնամիներու դէմ:

Եւրոպական մամուլը շեշտեց թէ առընչութիւն կար կուսակցութեան եւ կառավարութեան միջեւ, եւ ժողովուրդը սկսաւ հաւատալ թէ այդպիսի կապակցութիւն մը իսկապէս գոյութիւն ունէր: ⁹

Երիտասարդ թուրքերու Կեդրոնական Կոմիտէն նշանակած էր իր ներկայացուցիչները կամ պատասխանատու քարտուղարները նահանգներու եւ գաւառներու մէջ. վալի, միւլթէսարըֆ, գայմազամ ստիպուած էին, եթէ կ'ուզէին պաշտօնի վրայ մնալ, համակերպիլ անոնց հրահանգներուն, գոնէ հայաստանութեան գործին մէջ:

Գերման Դեսպան կոմս Ֆոն Մէթթէրնիխ 30 Յունիս 1916ին Պոլսէն Պերլին կը գրէր պաշտօնապէս Գերման վարչապետ Ֆոն Պեթման Հոլվէկի. «Սակայն ոչ ոք կրնայ ճզմել Երիտասարդ թուրքերու Կոմիտէի բազմազլխեան վիշապը:

«Կոմիտէի ազգայնամոլութիւնը եւ մոլեռանդութիւնը կը պահանջեն բնաջնջել վերապրող Հայերը եւ կառավարութիւնը պէտք է տեղի տայ: Կոմիտէ չի նշանակեր միայն մայրաքաղաքի մէջ կուսակցութեան կառավարական կազմակերպութիւնը, այլ Կոմիտէն ունի ծաւալուն կազմը բոլոր նահանգներու եւ գաւառներու մէջ:

8. Նոյն, 297:
9. Նոյն, էջ 310:

Կոմիտէն նշանակած է անդամ մը իբր հոգատար կամ վերահսկիչ իւրաքանչիւր Վալիի, Միւթէսարըֆի եւ Գայմազամի:»¹⁰

Ամբողջ Թուրք Կայսութիւնը ենթակայ էր այդ «բազմագլուխ վիշապին:»

Թուրքիայէն վերադարձին, 4 Դեկտեմբեր 1916ին, Ֆոն Շէօպ-նէր Րիխթէր Միւնիխէն Պերլին Գերմանիոյ վարչապետ Ֆոն Պեթման Հոլվէկի կը գրէր երկար տեղեկագրով մը. «Երիտասարդ Թուրքերու Կոմիտէի մեծամասնութիւնը այն կարծիքէն է որ Թուրք պետութիւնը չի կրնար գոյատեւել եթէ ան հիմնուած չըլլայ պարզապէս համիւլամական եւ համաթրքական խարիսխի վրայ: Թուրքիոյ ոչ-իսլամ եւ ոչ-թուրք բնակիչները պէտք է իսլամանան եւ թրքանան եւ կամ բնաջնջուին հոն ուր իսլամացում եւ թրքացում անկարելի են»:»¹¹

Ֆոն Շէօպնէր Րիխթէր ժընեւ Դրօշակ պարբերականի խմբագրութեան յայտնած էր թէ «ինչ որ տեղի կ'ունենայ Հայաստանի մէջ Երիտասարդ Թուրքերու կողմէ շատոնց ի վեր ծրագրուած էր, անոնք յարմար պահուն կը սպասէին եւ ներկայ ահուկի պատերազմը անոնց ընծայեց յարմարագոյն առիթը: Հայերու ըմբոստացումը միայն պատրուակ է:

Ես փաստեր ունիմ գորոնք պիտի հրատարակեմ ատենին ամբողջովին:»¹²

Երիտասարդ Թուրքերու Կեդրոնական Կոմիտէն էր որ որոշեց բնաջնջել Հայերը, եւ կազմակերպեց Թէշքիլաթը Միտիտէ կամ նոր կազմակերպութիւնը որ պաշտօն ստացաւ բնաջնջել Հայերը:

Հայասպանութեան բուն գործը վարող իսկական լիազօրները Միութիւն եւ Յառաջդիմութիւն Կուսակցութեան ներկայացուցիչ պատասխանատու քարտուղարներն ու նուիրակներն էին, ինչպէս նաեւ նահանգներու եւ գաւառներու մէջ Միութեանական Ակումբներու նախագահները, որոնք կառավարութեան պաշտօնեաներ էին միեւնոյն ատեն:

Ասոնք էին որոնք նահանգներու եւ գաւառներու կառավարիչներուն կը հաղորդէին գրաւոր եւ բերանացի գաղտնի հրամաններ:

10. Գերմանիա եւ Հայաստան Լեփսիոս, Փոքտամ, 1919. էջ 277, թիւ 282:

11. Նոյն, էջ 305-309. թիւ 309:

12. Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Դիւան, Պոստոն Մէս. վաւերագիր թիւ 65, էջ 1, ընդգծումը բնագրին մէջ:

րը եւ հրահանգները հայասպանութեան:

Միութիւն եւ Յառաջդիմութիւն Կուսակցութեան «Պատասխանատու Քարտուղարները», կ'ըսէ Թուրք Պատերազմական Ատեանի վճիռը, «կատարեցին տեղահանութիւններ, կոտորածներ, աքսորներ, ակերեցին կալուածներ, եւ գործեցին զարշիլի ոճիրներ»:»¹³

Անոնք իրաւունք ստացած էին ծածկագրի գործածութեան եւ ուղղակի կը հաղորդակցէին Պոլիս Կեդրոնական Կոմիտէի անդամներուն, Ընդհանուր Քարտուղարին, Ներքին Գործերու Նախարարութեան, եւ յատկապէս Թէշքիլաթը Մախսուսայի վարչութեան եւ կեդրոնի պետերուն հետ:

Միութեանական պետերու դատաւարութեան ընթացքին, 8 Մայիս 1919ի նիստին, Թուրք Պատերազմական Ատեանի Նախագահ Ֆէրիթ Մուսթաֆա Նազըմ փաշա կը հարցնէ Անդարայի Կուսակալութեան փոխանորդ Աթըֆ Պէյի.

Հայաստան թրքերէն բնագիր.

Հայերէն թարգմանութիւն.

Րէիս. Փէքիյի, Մէրքէզի Ումումի թարաֆընտան մուրախիսաւը մէսուլլէր վէ քեաթիպի մէսուլլէր, Անգարա, Գասթամունի, Եօզլաթ Էրզինճան, Թրապզօն, Սիվազ, վէ սաիր ետրլէրէ կիթմիշլէր, օրալարտա վալիլէրէ, մութասարըֆլարա պազը հաֆի էմիրլէր թէպլիղ էթմիշլէր: Մէրքէզի Ումումիին պու էմիրլէրի թէրթիպ օլումտուղու գաման սիզ տէ պէրապէրմիյտիին՝գ:

Նախագահ, Շատ լաւ, Ընդհանուր Կեդրոնի կողմէ պատասխանատու պատուիրակներ եւ պատասխանատու քարտուղարներ դրկուած են Անգարա, Գասթամունի, Եոզլաթ, Երզնկա, Տրապիզօն, Սեբաստիա եւ ուրիշ շատ մը տեղեր, որ անոնք վալիներուն, միլիտարըֆներուն ինչ ինչ գաղտնի հրամաններ հաղորդած են. երբ Ընդհանուր Կեդրոնը այս հրամանները կը պատրաստէր, դուք հո՞ն էիք:»¹⁴

Ե/

13. Թագուիմը Վազայի, թիւ 3549, էջ 57, չորրորդ Դատաւարութիւն՝ Երիտասարդ Թուրքերու:

Թուրք Պատերազմական Ատեանը վերջնականապէս հաստատած է, հիմնուելով նոյն ինքն թէշքիլաթը Մախսուսայի ծածկագիր հեռագիրներուն վրայ, թէ մեծ եղած է Պատասխանատու քարտուղարներու եւ պատուիրակներու դերը հայասպանութեան կազմակերպութեան եւ իրագործումին մէջ: ¹⁴

Պատասխանատու քարտուղարները եւ պատուիրակները կեդրոն դիմելով իրաւունք կը ստանային ոչ թէ միայն Վալի, Միւթեսարըֆ եւ Գայնագամ պաշտօնանկ ընելու, այլ երբեմն հարկ եղած պարագային սպաննելու եթէ անոնք մերժէին գործակցիլ հայասպանութեան գործին կամ հակառակէին պատասխանատու քարտուղարներու եւ պատուիրակներու իրենց բերած գաղտնի հրամաններուն եւ հրահանգներուն:

Անգարայի Միութիւն եւ Յառաջդիմութիւն կուսակցութեան պատասխանատու քարտուղար Նէճաթի Պէյ դեր ունեցաւ Անգարայի կուսակալ Մազհար Պէյի պաշտօնանկութեան գործին մէջ, իսկ ինք անձամբ Եոզղատ եկաւ 1915 Յուլիս 20ին, կոտորածի հրամաններ հաղորդեց Եոզղատի Միւթէսարըֆ ձէմալ Պէյի եւ Եոզղատի Զինուորագրութեան Յանձնախումբի Նախագահ Հազարապետ Սալիմ Պէյի, գրաւոր եւ բերանացի հրամաններ եւ հրահանգներ հայասպանութեան գործադրութեան նկատմամբ: Թէ՛ ձէմալ Պէյ եւ թէ՛ Սալիմ Պէյ մերժեցին գործադրել Հայերու կոտորածի հրամանները, սակայն ստանձնեցին տեղահանել Հայերը: Նէճաթի Պէյ պաշտօնանկ ընել տուաւ թէ՛ ձէմալ եւ թէ՛ Սալիմ Պէյերը:

Եոզղատի մէջ Նէճաթի Պէյի գործունէութեան մասին 1919ին տեղեկութիւն կու տայ Եոզղատի ոստիկանապետ Ահմէտ Պէյ ոստիկանական մատեաններու արձանագրութեանց համաձայն, ինչպէս նաեւ Հայերու տեղահանութեան, ջարդերու կազմակերպիչ Յանձնախումբին եւ Գործադիր Մարմնի մասին: Իսկ Սելեւկիոյ նախկին Միւթէսարըֆ Եոզղատցի էտիպ Պէյ, 10 Փետրուար 1919ին պատասխանելով Եոզղատի Միւթէսարըֆին կը պարզէ Նէճաթի Պէյի բերած հայասպանութեան գաղտնի հրամանը.

«Որքան կը յիշեմ», կը գրէ էտիպ Պէյ, «մենք իմացանք Հայերու արտորի եւ տեղահանութեան հրամանին լուրը եւ այս հրամա-

14. Թագուիմը Վագայի Տիվանը Հարպը Էօրֆի Մոհաքէմաթը Զապըթ Շէրիտէսի, Թուրք Կառավարութեան պաշտօնաթերթին մէջ հրատարակուած վճիռը, թիւ 3772, 13 Յունուար 1920, հրատարակութիւն 7 Փետրուար 1920:

նին գործադրութեան համար Անգարայի Միութիւն եւ Յառաջդիմութիւն կուսակցութեան Պատասխանատու Գարտուղար Նէճաթի Պէյ Եոզղատ եկած էր:

«Եոզղատի նախկին Միւթէսարըֆ ձէմալ Պէյ օր մը մեզի եկած էր, եւ ինձի յայտնեց թէ Նէճաթի Պէյ իրեն ըսած էր թէ Եոզղատի Հայերը բնաջնջելու որոշումը առնուած էր:

«Ձէմալ Պէյ իրեն պատասխանած էր. «Կառավարութիւնը հրահանգած է Հայերը արտորել կանխապէս որոշուած վայրեր», եւ ինք (ձէմալ Պէյ Նէճաթի Պէյի Գ) յիշեցուցած էր թէ ինք (ձէմալ Գ) չէր ուզած կառավարութեան հրամանին հակառակ գործել եւ թէ ինք բացարձակապէս հակառակ է (Հայերու Գ) բնաջնջումին:

«Ասոր վրայ Նէճաթի պէյ իրեն ըսած էր. «Թէեւ (կառավարութեան Գ) տուած հրամանը երեւութապէս Հայերը արտորել է, սակայն Միութիւն եւ Յառաջդիմութիւն կոմիտէի վարչութեան, Ներքին Գործերու Նախարարութեան նպատակը Հայերը բնաջնջել է՝ հայրենիքին՝ ծառայութիւն մատուցանելու դիտարկութեամբ:

«Մտերմաբար/ անգամ մըն ալ ձէմալ Պէյ ինձի ըսաւ/ որ ինք վճռապէս հակառակած էր Նէճաթի Պէյի առաջարկին: Կը յիշեմ որ ձէմալ Պէյ ինձի յայտարարած էր թէ բնական չէ անդենականի հաւատացողներուն համար համարձակիլ այսպիսի արարքներ գործել»:¹⁵

15. Յուսաքեր, էջ 21. Բացառիկ, 1965:

ԳԼՈՒԽ Դ.

ԶԻՆԱՀԱՒԱՔ

Եռզղատէն, Պողազլեանէն, Ագտաղ Մատենէն եւ այս քաղաքներու մօտակայ 70ի մօտ հայաբնակ գիւղերէն 1914 Յուլիս ամսուան ընթացքին արդէն հեռացուցած էին զինուորական տարիք ունեցող երիտասարդ հայերը:

Ապրիլ 1915ին այս քաղաքներու եւ գիւղերու փողոցներուն մէջ կառավարութեան հրամանով մուկներու կանչեցին եւ ծանր սպառնալիքով պարտադրեցին որ ամէն ոք կառավարութեան յանձնէ իր ունեցած զէնքերը:

Պոլսոյ Պատրիարք Զաւէն Եղիայեան բոլոր նահանգներու եւ գաւառներու առաջնորդներուն մասնաւոր հեռագիրներ ղրկեց եւ յորդորեց որ հայերը թուրք կառավարութեան հլու հպատակ մնան եւ ոչ մէկ զէպքի առիթ տան: Նոյնպէս Հ. Յ. Դաշնակցութիւնը բոլոր շրջաններուն ղրկեց նման հրահանգներ որ անպատեհ զէպքերու առիթ չտան:

Եռզղատի առաջնորդ Ներսէս Եպիսկոպոս Դանիէլեան եկեղեցիներու մէջ կարգաւ տուաւ Պոլսոյ Պատրիարքի հրահանգները եւ Եռզղատի Ազգային Ժողովի որոշումներուն համեմատ ժողովուրդը յորդորեց որ յանձնեն իրենց զէնքերը: «Յանձնեցէք, գրած էր Առաջնորդը, ձեր ունեցած զէնքերը՝ օրէնքը յարգած ըլլալու համար:»¹

Եռզղատի, Պողազլեանի, Ագտաղ Մատենի քաղաքացի հայերը եւ գիւղերու շինականները մեծ մասով յանձնեցին իրենց զէնքերը:

Պողազլեանի Գայմազամ Քէմալ Պէյ 30 Ապրիլ 1915ին Չաթի գիւղապետ Յակոբ Աղա Տէմիրճեանի գրեց նամակ մը մահուան սպառնալիքով՝ հաւաքելու հայերու բոլոր զէնքերը երկու օրուան

1. Եռզղատ, ձեռագիր, Նուպարեան Մատենադարան, Բարիդ, էջ 2:
Հայկազէն Տարեգիրք, Պոլիս 1922, էջ 122, 138, 139 եւ 141:
Յուշամատենան Մեծ Եղեռնի, Պէյրուիթ 1965, էջ 320-323:
Ազ Տաղի Գոյամարտը, Նազար Գարիկեան եւ Կիւլպէնկ Գալուստեան, Մարտէյլ 1932, էջ 42:

մէջ եւ զանոնք յանձնելու թուրք կառավարութեան: ²

Չաթի վարժապետ Պետրոսի տան մէջ Մայիսի սկիզբը ժողովի նստան նոյն գիւղականի երեւելի հայերը, որոշեցին Եռզղատի Առաջնորդին կարծիքն ունենալ: Յակոբ Տէմիրճեան եւ Մանուկ Թորոսեան գրեցին Ներսէս Եպիսկոպոս Դանիէլեանի, որ իրենց նամակով մը հրամայեց յանձնել զէնքերը: ³

Գիւղի փորձառու տարէց Հայեր յորդորեցին յանձնել զէնքերը, սակայն երիտասարդները մերժեցին բացարձակապէս: Առաքել Հաճի Ասատուրեան իմացուց թէ զէնքերը յանձնել կը նշանակէ թուրքերուն առիթ տալ բոլոր հայերը բնաջնջելու: Որոշեցին լեռ բարձրանալ եւ կռուիլ: ⁴

Ոստիկանապետ (Թապուր Աղասը Գ) Գասըմ Պէյ 100 ոստիկաններով մտաւ Չաթ, պահանջեց հայերու զէնքերը գիւղի երեւելի հայերէն, որոնք իրեն պատասխանեցին. «Մենք զէնք չունինք»:

Գասըմ Պէյ բանտարկեց Չաթի այրերը եւ շարշարանքի ենթարկեց:

Չաթ գիւղացի Յոյն մը Սավաօղլու Աւրամ Գասըմ Պէյի յանձնեց ցանկը այն հայերուն որոնք զէնքեր ունէին կամ կուսակցութեան կը պատկանէին: ⁵

Գասըմ Պէյ երեւելի 80 հայեր շղթայակապ Պողազլեան տարաւ Քէմալ Պէյի, որ Չաթ ղրկեց ոստիկանի համազգեստով ծպտուած ոճրագործներ, ասոնք խուժանին հետ մտան գիւղ, խուզարկեցին տունները եւ հաւաքեցին զէնքերը:

Ոստիկանի համազգեստով ոճրագործները կը մտնէին հայերու տունները, կիներն ու աղջիկները կը մերկացնէին եւ կարմրած երկաթով կ'այրէին անոնց մարմնի ամէնէն փափուկ մասերը՝ զանոնք ստիպելու համար որ յայտնեն այրերու պահուած թագստոցները եւ զէնքերու տեղերը: ⁶

Լրացուցիչ ուրիշ հրամանագիր մը 22 Ապրիլ 1915ին կ'ըսէ թէ Պատերազմական Նախարարութիւնը արտօնած է զէնքի տակ կանչել 19-20 տարեկան երիտասարդներէն զատ ամէն անոնք ո-

2. Նոյն, էջ 40:
3. Նոյն, էջ 42:
4. Նոյն, էջ 43:
5. Նոյն, էջ 44:
6. Ձեռագիր, էջ 133:

րոնք կրնան զէնք կրել: Այս տրամադրութիւնը գործադրուեցաւ լայն առումով բոլոր այն տեղերը ուր հայերու թիւը կարեւոր էր: ⁷

«Նոյնպէս թիւ 29, 5 Մարտ 1915ի գաղտնի հրամանագրին յօդաւոր կ'ըսէ թէ ամէն տեղ արթուն հսկելու է, հարկ է զգուշաւոր ըլլալ եւ թոյլ չտալ որ խժոժութիւններ գործուին մանաւանդ այն տեղերը ուր գործնականապէս յարձակումի նշաններ չկան եւ այնպէս սով անոնց (Հայերու Գ.) համոզում գոյացնել տալ որ ոչ մէկ չարիք պիտի հասնի անոնց որոնք հաւատարիմ են, նոյնպէս հարկ է ժողովուրդը չընդվզեցնել զայն մղելով գրգռութեան: ⁸

«Ոստիկաններու եւ զինայրերու վկայութեան համաձայն շատ անգամներ գրուեցաւ, զօրաբաժնի հրամանատարի հարցումներուն պատասխանելով թէ Եոզղատի Հայերը Դաշնակցութեան եւ Հնչակեան կուսակցութիւններու հետ կապ չունին, սակայն նոյն անձերը որոնք պատիւ կը զգային Միութիւն եւ Յառաջդիմութիւն կուսակցութեան պատկանելու, Նէճաթի Պէյի միջնորդութեամբ մատնեցին, բանակի եւ զօրաբաժնի հրամանատարներուն թէ հայ երեւակայական կոմիտէ մը գոյութիւն ունի, բան մը որուն վրայ իշխանութիւնները համոզում գոյացուցին:

«Ասոնք հրաման տուին քննութիւն կատարելու, զէնքեր փրկուեցին, բայց գտան միայն այն զէնքերը որոնք խուզարկուները իրենց ձեռքերով տեղաւորեցին, եւ վերջապէս հրաման ստացան Հայերը տեղահանելու... ⁹

«Հայ գիւղերու մէջ շրջապտոյտի ընթացքին, զինայրերու գունդին հրամանատար Թէվֆիք էֆէնտի սպաննել տուաւ բազմաթիւ հայեր առանց պատճառի, այն պատրուակով թէ անոնք կոմիտէներու կը պատկանէին:

«Ասով միայն չգոհացաւ, այլ 18 Յունիս 1915ին Միւթէսարըֆ ձէմալ Պէյի տուաւ տեղեկագիր մը որով կ'ըսէր թէ աշխատաւորներու իններորդ գունդի հայ զինուորները զրկելու է նոյն գունդի երրորդ եւ չորրորդ վաշտերուն, որոնք կը գտնուէին Գըր Շէհիր. թէ առանց այս առաքումին, կ'ըսէր ան, (Թէվֆիգ Գ.) անոնք (Հայ

զինուորները Գ) պիտի մասնակցին ըմբոստութեան մը եւ պիտի խանգարեն գաւառի անդորրութիւնը...»: ¹⁰

Եոզղատի Միւթէսարըֆ ձէմալ Պէյ 5 Մարտ 1919ին Պոլիս Թուրք Պատերազմական Ատեանի առջեւ այսպէս վկայեց.

«Յունիս 10ին, Թէվֆիք Պէյ ինծի իմացուց յուշագրով մը թէ Իսլամները աւազակներու յարձակումներէն կը վախնային: Ինծի տուաւ տեղեկագիր մը որ կը պարզէր իր գործունէութիւնը եւ կը թուէր ըմբոստութիւններու շարք մը:

«Ինձմէ կը խնդրէր որ գիւղերու Հայերը, որոնք թնթանօթներով զինուած էին, կ'ըսէր, այլուր տարադրուին եւ անոնց տեղ բերուին Թուրքեր: Հազիւ իմացայ այս թնթանօթներու պատմութիւնը, քննութիւն մը կատարեցի, բայց քննութիւնս բանի մը չյանգեցաւ. ըմբոստութեան հետքն իսկ չգտայ. միայն՝ բանակէն քանի մը փախստականներ այնտեղ լեռները ապաստանած էին:

«Ասկէ ետք Յունիս 18ին հասաւ տարադրութեան հրամանը...» Անգարայէն: ¹¹

Հայերու ունեցած թնդանօթներու մասին Միւթէսարըֆ ձէմալ Պէյ կը պատասխանէ Պատերազմական Ատեանի Նախագահ Հայրէթ Փաշայի հարցումին.

«Դուք ալ, Փաշա՛, զինուոր էք, եւ գիտէք թէ ինչպիսի դժուարութեամբ կարելի է տեղափոխել թնդանօթ մը: Ի՞նչպէս լեռներու վրայ թափառող բուռ մը փախստականներ կրնան իրենց հետ թընդանօթ պտտցնել»: ¹²

Եոզղատի հայասպանութիւնը դատապարտող Թուրք Պատերազմական Ատեանի 8 Ապրիլ 1919 թուակիր դատավճիռը մասնաւորապէս կը հերքէ եւ կը մերժէ Եոզղատի հայերու ապստամբութեան պաշտօնական եւ անպաշտօն լուրերը... Վերջին անգամ պաշտպան փաստաբաններու եւ ամբաստանեալներու պաշտպանողականները լսուեցան եւ խօսեցան հայ ըմբոստական շարժումներու վրայ, ըսին թէ երբ թշնամին մեր հողամասերը գրաւած էր, քանի մը թեթեւամիտ կուսակցականներու դրդումով եւ քաջալե-

7. Եոզղատի Կայքի Հրամանատար եւ Զինուորագրութեան գրասենեակի նախագահ հազարապետ Սալիմ Պէյի գրաւոր վկայութիւնը: Դ. Ե. թիւ Մ 574-Մ 577: Յաւելուած թիւ 1:

8. Նոյն:

9. Նոյն:

10. Սալիմ Պէյի տեղեկագիր. Դ. Ե. թիւ Մ 574 -Մ 577:

11. Լա Բընէտան, թիւ 81, Եջ. 6 Մարտ 1919:

Այս գրութեան ընթացքին՝ ժանտարմ կամ ժանտարմա բառին տեղ կը գործածենք զինայր բառը:

12. Նոյն:

րանքով (Հայեր Գ) թշնամիի կողմը անցան եւ մասնակցեցան խոռովարար շարժումներու, դիմեցին ապստամբութեան եւ Օսմանեան սահմաններէն անդին իրենց ազգակիցներուն շարժումներուն հետեւեցան:

«Բոլոր այն յիշուած պարագաները, այդ տեսակ ոճիրներ գործելու (Հայեր տեղահանելու եւ ջարդելու Գ) արդարացումի փաստ չեն, որովհետեւ եթէ հայ ժողովուրդին մէկ մասն ալ մասնակից եղած ըլլայ (Ռուս բանակի կամաւոր Հայերու գործունէութեան Գ) մնացած մասը փաստօրէն ցոյց տուած է իր հաւատարմութիւնը եւ բոլոր (Թուրք Գ) պաշտօնեաները... առանց ցեղի եւ կրօնի խտրութեան, պաշտպանելու էին, գթառատ հօր մը պէս, իրենց յանձնուած ժողովուրդին կեանքն ու իրաւունքը, ինչ որ բացարձակ հրաման մըն էր մեզի համար...»¹³

«Յիշեալ Քէմալ Պէյ իր պաշտպանողականով փորձած է Վանի, Կարինի եւ Պիթլիսի Իսլամներուն դէմ անգթութիւններ գործուած ըլլալուն պատասխանատուութիւնը բեռցնել Եոզղատի Հայերուն վրայ, որոնք որեւէ ակնյայտի ապստամբութեան շարժում կատարած չեն, այսպիսի փորձ մը ոչ օրէնքի ոչ ալ խղճի համաձայն է:»¹⁴

... «Իրենց (Քէմալ, Թէվֆիք, Ֆէյեազ Գ) ձեռագիր վաւերաթուղթերը կը հաստատատեն որ զինայրերը (ժանտարմ Գ) ընկերացած են (հայ կարաւաններուն Գ) ջարդի նպատակով, եւ այս մասին կասկած կամ անորոշութիւն բնաւ չկայ:»

... «(Թուրք Գ) պաշտպան փաստաբաններուն առաջ բերած պաշտպանողականները բացարձակապէս որեւէ արժէք չունին:»¹⁵

13. Թուրք պաշտօնաթերթ Թագուիմը Վազայի Տիվանը Հարպը Էօրֆի Մուհաբեմաթը Ջապըթ Մէրիտեհի, թիւ 3617, Պոլիս հրատարակուած 7 Օգոստոս 1919ին:
14. Նոյն:
15. Նոյն:

ԳԼՈՒԽ Ե.

Եոզղատի Հայերու Կոտորածի Յապաղումը

Անգարայի նահանգի եւ Անգարայէն կախում ունեցող Եոզղատ եւ Կեսարիա գաւառներուն Հայերու տեղահանութեան եւ կոտորածի յապաղելուն պատճառներէն մին էր նահանգի Կուսակալ Մազհար Պէյի ընդդիմութիւնը Հայերու թէ՛ տեղահանութեան եւ թէ՛ կոտորածին. նոյնպէս Եոզղատի Միւթէսարըֆ ձէմալ Պէյի եւ Եոզղատի Զինուորագրութեան Յանձնախումբի Նախագահ Հազարապետ Սալիմ Պէյի ընդդիմութիւնը Հայերու կոտորածին միայն, ոչ թէ տեղահանութեան: Ձէմալ եւ Սալիմ Պէյերը համաձայնած էին միայն տեղահանել Եոզղատի Հայերը, բայց արդիւել անոնց կոտորածը որքան կարելի էր:

Նկատելի է որ թէ՛ ձէմալ Պէյ, եւ թէ՛ Սալիմ Պէյ կատարելապէս տեղեակ էին թէ տեղահանութիւն գործնականապէս համահաւասար էր կոտորածի, ինչ որ իրենց ցոյց տուած էր նախընթաց երեք ամիսներու փորձառութիւնը, երբ իրենք առաջին անգամ գործի սկսան 26 Յուլիս 1915ին, տեղահանելով Եոզղատի Հայերու առաջին կարաւանը բաղկացած չորս հարիւր եօթանասուն երկու այրերէ: Ձէմալ եւ Սալիմ Պէյերը զանոնք տեղահանելէ առաջ՝ հաւաքել տուին, ըստ բարձրագոյն հրամանի, անոնց ունեցածները. ինչ որ Թուրք Պատերազմական Ատեանը կը մեկնէ թէ այդ կարաւանը զրկեցին ճամբան մեռնելու կամ սպաննուելու իմաստով քանի որ կարաւանի Հայերը կը զրկուէին իրենց ապրուստի միջոցներէն:

Անգարայի պատասխանատու քարտուղար Նէճաթի Պէյ Եոզղատի Հայերու կոտորածի գրաւոր եւ բերանացի հրամանները բերաւ եւ Միւթէսարըֆ ձէմալ Պէյի առաջարկեց ջարդել տալ Եոզղատի Հայերը, այս վերջինը շատ լաւ հասկցաւ որ տեղահանութեան վարագոյրին ետեւ ծածկուած էր Հայերու բնաջնջումը, այսուհանդերձ 26 Յուլիս 1915ին ինք Եոզղատի չորս հարիւր եօթանասուն երկու երեւելի Հայերու կարաւանը տարագրեց, եւ ասոնք ջարդուեցան 6 Օգոստոս 1915ին Սեբաստիայէն չորս ժամ հեռու Գարտաշարի ձորին մէջ եւ մարմինները նետուեցան գետին մէջ:

Միւս կողմէ ձէմալ եւ Սալիմ Պէյերը շատ լաւ գիտէին թէ իրենց ունեցած քաղաքային եւ զինուորական իրաւասութիւնը մի-

այն ի զօրու էր Եոզղատ գաւառի սահմաններէն ներս, եւ անգամ մը Եոզղատի Հայերու կարաւանները սահմաններէն դուրս ելլէին, անոնց պաշտպանութիւնը կամ կոտորածը կախում ունէր ուրիշ նահանգի եւ ուրիշ գաւառի քաղաքային եւ զինուորական իշխանութենէն, եւ Թէշքիլաթը Մախսուսալի ղեկավարներէն:

Եոզղատի Հայերու առաջին կարաւանի կոտորածը տեղի ունեցաւ Սերաստիոյ նահանգին իշխանութեան հրամանով, հակառակ որ ձէմալ Պէյ եւ Սալիմ Պէյ ջանացած էին որ անոնք հասնին իրենց տարագրութեան վայրերը:

Մազհար Պէյ փորձեց թէ՛ տեղահանութիւնը եւ թէ՛ կոտորածը արգելել մինչեւ այն օրը երբ ինք պաշտօնանկ եղաւ եւ իր տեղ եկաւ Աթրֆ Պէյ, 1915 Յունիսի առաջին տասնեակին, մինչդեռ ձէմալ Պէյի պաշտօնակութեան հեռագիրը Անգարայէն հասաւ Օգոստոս 5ին, իսկ Սալիմ պէյ պաշտօնանկ եղաւ Օգոստոս 9ին:

Ինչպէս Մազհար Պէյ հրաժարեցաւ, նոյնպէս ձէմալ եւ Սալիմ Պէյեր նախ հրաժարելու էին:

Բատի Պէյ վկայած է Պոլսոյ վերաքննիչ Յանձնախումբի առջեւ. «Պիր կիւն Վալի Մազհար Պէյ Աթրֆ Պէյէ խիթապէն. «տէտիքլէրիցի պէն եափամամ. պէն սանտալիատան գալքթըմ. սիգ կէլիր օթուրուսուուուգ. սիգ եափարսընըգ» տէմիշ: Որ թարգմանի. «օր մը Մազհար Պէյ շեշտակի Աթրֆ Պէյի կ'ըսէ. — չեմ կրնար բնել ինչ որ ինծի ըսիր. ես աթոռէս կ'եյլեմ. գուն եկուր տեղս եւ անձամբ կատարէ ինչ որ ինծի հաղորդեցիր», կ'ըսէ Մազհար պէյ:

Իսկ Աթրֆ Պէյ պոլսէն 6 Յունիս 1915ին գալով Անգարա, Կուսակալ Մազհար Պէյի հաղորդած էր Կուսակցութեան Կեդրոնական Կոմիտէի եւ Ներքին գործերու նախարար Թալաթ Պէյի հրամանները Անգարայի նահանգին Հայերը ոչ թէ միայն տեղահանելու այլ նաեւ զանոնք կոտորելու:

Քանի մը մանրամասնութիւն. երեսուն մէկ տարեկան Աթրֆ Պէյ, Կուսակցութեան Կեդրոնական Կոմիտէի անդամ ըլլալու արժանիքն ունեցած էր որովհետեւ 1908ին իբր քաջ Ֆէտայի սպաննած էր Ալպանացի Զօրավար Շէմսի Փաշան: Աթրֆ Անգարա եկաւ սուտ պատրուակներով, հիւր եղաւ Կոմիտէի անդամ Աթթարգատէ Սասուլլահի տունը: Կուսակալ Մազհար պէյի առաջարկեց կոտորել Անգարայի նահանգին Հայերը: Մազհար Պէյ պարզապէս մերժեց անոր առաջարկը եւ հրամանը: Աթրֆ Պէյ պատրաստեց տեղեկագիր մը որով Մազհար Պէյը ամբաստանեց իբր թէ ան զբաղած ըլլար

վաճառականութեամբ եւ առեւտուրով: Մազհար Պէյ պաշտօնանկ եղաւ, ինչպէս նաեւ Անգարայի զինայրերու հրամանատարը, որ համաձայն կը գործէր Մազհար Պէյի հետ: Եւ այս վերջինին տեղ բերուեցաւ քսան մէկ տարեկան երիտասարդ թիւ միութենական մը, Պէհաէտին Պէյ:

Բատի Պէյ 1918 Դեկտեմբերին վկայեց պաշտօնապէս.

Հայաստան թրքերէն բնագիր.

Հայերէն թարգմանութիւն.

«... Վալի Էսպագ Մազհար Պէյին Իսթանպուլու սեպեպի ինֆիսալընը սօրտուղումուտա, «Էրմէնիլէրին թեհնիի հագգընուտա Իսթանպուլուտան Տախիլիյէ Նագրընուտան պտըղըմ էմիրլէրի անլալամազըղա վուրտում. պիլիյօրսուուուգ քի տիկեր պագը վիլայէթլէր թեհնիի իշլէրիցի իքմալ էթթիլէրի հալտէ, պէն պաշլամամըշտըմ: Աթրֆ Պէյ կէլտի. Տախիլիյէ Նագրընըն Էրմէնիլէրին հիցի թեհնիիցի գաթը վէ իմհա էտիլմէլէրի հագգընուտաքի շիֆայի էմիրիցի թէպիլղ էթթի: Պէնտէ Խալըր, Աթրֆ Պէյ, պէն վալի իմ, էշգիյա տէլիլիմ. պէն եափամամ. պու սանտալիատան գալգալըմ. սէն կէլիր եափարսըն, տէտիմ»:

Երբ Պոլսոյ մէջ Անգարայի նախկին կուսակալ Մազհար Պէյի հարցոցի իր հրաժարականին պատճառը, ան պատասխանեց. «Հայերու տեղահանութեան առնչութեամբ Ներքին Գործերու Նախարարին հրամանները շիտակաւ ձեռացուցի: Դուք գիտէք որ ուրիշ քանի մը նահանգներու մէջ Հայերու տարագրութեան գործողութիւնները աւարտած էին, մինչ ես դեռ սկսած չէի տարագրել Հայերը իմ նահանգիս մէջ:

Վրայ հասաւ Աթրֆ պէյ եւ ինծի հաղորդեց Հայերու տեղահանութեան, կոտորածի եւ բնաջնջումի վերաբերեալ՝ Ներքին Գործերու Նախարարին բերանացի հրամանը. եւ ես իրեն (Աթրֆ Պէյի Գ) ըսի. «Ո՛չ, Աթրֆ Պէյ, ես կատապարիչ եմ, ոչ թէ չարագործ մարդասպան. կը թողում իմ աթոռս. դուն տեղս եկուր, եւ գործադրէ կոտորածի հրամանը:»¹

Բատի Պէյ, իր վկայութեան մէջ ինքն իր մասին կը խօսի երրորդ դէմքով: Դատելով Բատի Պէյի յաճախած շրջանակէն կը տեսնուի թէ կառավարական եւ կուսակցական բարձրագոյն շրջանակներու հետ յարաբերութիւն ունեցող անձնաւորութիւն մըն է. կու-

1. Դ.Ե. Մ 251:

սակայններու, երեսփոխաններու, ոստիկանապետներու, կուսակ-
ցական ակումբներու բարձրագոյն անդամներու հետ մտերմաբար
կը հաղորդակցի: Այս բարձրագոյն պաշտօնեաները իրեն կը վըս-
տահին իրենց գաղտնիքները որպէս իսկական թուրքի մը որ, թէեւ
համամիտ չէ անոնց գործած չարագործութեան, սակայն անոնց
հետ կը ճամբորդէ, հիւր կ'ըլլայ երեւելի մարդոց տուները. իրեն
մտերիմ են Աթըֆ պէյ, Կեղրոնական Կոմիտէի անդամ եւ Անգա-
րայի Փոխ Կուսակալ, ինչպէս նաեւ Պէհաէտտին Պէյ որ Անգարա-
յի ոստիկանապետ է:

Անգարայի Վարչական Խորհուրդի անդամ Հոճա Միւֆիտ Պէ-
յի հետ կը ներկայանայ Աթըֆ Պէյի եւ կը խնդրէ որ ան շնորհք ընէ
Անգարայի դրամատան տնօրէն Շնորհօքեանի ի նպաստ: Աթըֆ Պէյ
բացայայտ կերպով կը յայտարարէ թէ ինք իր մեծերէն հրահանգ
ստացած է չթողուլ որ որեւէ Հայ ապրի կամ տեղահանութենէն
որեւէ Հայ գերծ մնայ:

Սերաստիոյ նախկին երեսփոխան Նուրէտտին Պէյ Անգարայի
Լքեալ Գոյքերու Յանձնախումբին Նախագահ կ'ըլլայ: Բատի պէյ ա-
նոր կ'ընկերանայ քննութիւն կատարելու համար Եոզղատի եւ Չո-
րումի շրջակաները: Եոզղատէն ժամ մը հեռու Շէյխլէր գիւղի կող-
մերը լեռան կողին կը տեսնեն կոտորուած հայերու դիակներ եւ ա-
նէծք կը կարգան ջարդարարներուն դէմ:

Բատի պէյ կը ջանայ Անգարայի դրամատան տնօրէն Շնորհօք-
եանի կեանքը ազատել, կարաւանի տեղահանութեան նախընթաց
օրը կ'այցելէ Անգարայի ոստիկանապետ Պէհաէտտին Պէյի, որ,
նոյն պահուն շրջապատուած էր անբարոյ անձերով եւ անոնց հետ
կը պատրաստէր յաջորդ օր մեկնելիք Հայերու կարաւանին կոտո-
րածը բաժնելով ամէն մէկուն կատարելիք դերը: Նուրէտտին Պէյ
եւ Բատի Պէյ գիշերը կ'անցնեն Եոզղատ Խարիքգատէ Հիւսնի Պէյի
տունը: Երբ այրերու յատկացուած բաժինէն կ'անցնին կանանոցի
կողմը, Խարիքգատէ Հիւսնի Պէյի կնոջ մօտ կը տեսնեն ջարդէն
ազատած հայ կին մը, որ վիրաւորուած էր: ²

Անգարայի մէջ Աթըֆ Պէյի կը յաջորդէ Նաճի Պէյ իբր փոխ
կուսակալ: Անգարա կը զրկուի հարցաքննիչ մասնաւոր մարմին

2. Պոլսոյ մէջ Անգարայի նախկին կուսակալ Մազհար Պէյ մտերմաբար
Բատի Պէյի կը պարզէ իր պաշտօնանկութեան պատճառները որոնք կրնան պե-
տական գաղտնիքի յայտարարութիւն նկատուիլ:

մը որուն նախագահն էր Խուլուսի պէյ, իսկ պետական Խորհուրդի
անդամ Իսմայիլ Հազգը պէյ ալ անդամ էր նոյն հարցաքննիչ մար-
մնին:

Անգարայի ոստիկանապետ Պէհաէտտին Պէյ ստիպուեցաւ
հրաժարիլ. վերաքննիչ մարմինը զայն Պոլիս կանչած էր. յանձ-
նըւեցաւ Պատերազմական Ատեանին, որ անշուշտ կոտորածի մա-
սին որեւէ քննութիւն չկատարեց, այլ միայն կատարուած կողո-
պուտը քննարկութեան ենթարկեց. Պէհաէտտին Պէյ շատ նեղը մը-
նաց, Ատեանը անոր հարցուցած էր թէ ինչո՞ւ գրաւած էր հայերու
արժէքաւոր իրեղէնները. Պէհաէտտին Պէյ պատասխանած էր որ
հայերը քաղաքէն կէս ժամ հեռու պիտի կոտորուին եւ թաղուին:
Իր գործակիցը Նէճաթի պէյ զայն նեղ կացութենէն ազատելու հա-
մար միջամտեց: Թալէաթ Պէյ պահանջեց Ատեանի թղթածրարը, որ
երբեք չղրկուեցաւ: Պէհաէտտին Պէյ ստիպուեցաւ փախչիլ:

Բատի Պէյի տուած տեղեկութիւնները ճշգրիտ, մանրամասն
եւ շատ յստակ են: Նոյն իսկ ան գիտէ անունները անոնց որոնք
Անգարայէն աքսորուելիք եւ ջարդուելիք հայերուն թիւերը կապե-
ցին հաստ չուաններով:

Բատի Պէյի վկայութիւնը պաշտօնապէս յիշուած է թուրք Պա-
տերազմական Ատեանի Ընդհանուր Դատաստագի ամբաստանագրին
մէջ իբր առաջնակարգ արժէք ունեցող վկայութիւն. ամբաստանա-
գիրը կը կրէ 12 Ապրիլ 1919 թուականը եւ որ կարգացուեցաւ 27
Ապրիլ 1919 նիստի ընթացքին ի ներկայութեան Մեծ Եղարգոս Սա-
յիտ Հալիմ Փաշայի, Մերակոյտի Նախագահ Խալիլ Պէյի, Արտա-
քին Գործոց Նախարար Ահմէտ Նէսիմի Պէյի, Արդարութեան Նա-
խարար Բիրիգատէ Իպրահիմ Պէյի, Քիւչիւք Թալաաթ Պէյի, Բիզա
Պէյի, Զիա Կէօքալփի, Կուսակցութեան Կեղրոնական Կոմիտէի
Ընդհանուր Քարտուղար Միտհաղ Շիւքրի Պէյի, Պարենաւորման
Նախարար Քէմալ Պէյի, Հանրային Կրթութեան Նախարար Շիւքրի
Պէյի եւ Պոլսոյ Զօրակայքի Հրամանատար ձեւատ Պէյի եւ Անգա-
րայի Կուսակալ Աթըֆ Պէյի: ³

3. Հրատարակուած 5 Մայիս 1919ին, Թագուիմը Վագայի, թիւ 3540, էջ 8:

Հայաստան թրքերէն բնագիր.

Հայերէն թարգմանութիւն.

Եօզղաթ միթասարըֆլըղընտան միթէքաիթ օլուպ Քատըքէօյիսնտէ Գուշ Տիլի ճիվարընտա Հասըրըրպաշը սօքաղընտա 34 նումարալը հանէտէ մուքիմ, 1279 թէվէլլիթիլի Ճէմալ Պէյին մաէլքասէմ մազպաթասը:

12 Գանունըվվէլ 334.

Էրմէնի թէհնիթիսնէ իւշէիգօթուգպիր սէնէսի Թէմմուգունտա ճիհէթի ասքէրիյէնէ միւպաշէրէթ օլունմուշթու, պու թէհնիթաթը Քայսէրիտէ Տըրգա Գումանտանը Շէհապ Պէյ իտարէ էտիյօրտու. միմաիլէյի Շէհապ Պէյ Միւլագիմ Քէագիմ նամընտա պիրիսինի Եօզղաթ, Պողազլըյան վէ Մատէն ճիհէթլէրիսնէ կէօնտէրմիշթի:

Էվվէլա ճիհէթի միւլքիսէնէ Էրմէնիլէրիսնէ նագլ վէ թէհնիթիսնէ տաիր պիր կիւնա էմիր կէլմիշ օլտուղունտան, ճիհէթի ասքէրիյէ տէրտէսթ էթթիլէրի էշխասը ճիհէթի միւլքիսէնէ թէվտի էտէմիյօրտու:

Պունլարտա միրֆէհէն օլունուօրտու: Եալընը քուրատաթի Էրմէնիլէրի պիգգաթ քէնտիլէրի սէվգէթթիլէրիսնէն պունլար հագգընտա մալիմաթըմ էօքթուր, չիւնքի ժանտարմալարը միտա-

Ասիկա երդումով հաստատուած վկայութիւնն է Եոզղատի նախկին կառավարիչ Ճէմալ պէյի: Անիկա ծնած էր 1279ին (55 տարեկան Գ) կը բնակի Գատըքէօյ Գուշու Տիլի թաղամասը, թիւ 34 Հասըրընի Պաշը փողոց:

12 Դեկտեմբեր 1918.

Հայերու տեղահանութեան հրամանը հաղորդուած էր զինուորական իշխանութեան. տարագրութեան գործը Կեսարիոյ Զօրաբաժնի հրամանատար Շէհապ Պէյի հակակշռին տակ էր: Շէհապ Պէյ Քէագիմ անունով տեղապահ մը ղրկեց Եոզղատի, Պողազլէանի եւ Մատէնի շրջանները:

Նախ հրաման մը հասաւ զինուորական իշխանութեան տարագրելու Հայերը: Զերբակալուած հայ անհատները չվստահեցան քաղաքային իշխանութեան: Ասոնք տարագրուեցան հանգստաւտ պաշմաններով:

Հայերու տեղահանութեան մասին եւ տեղեկութիւն չունիմ քանի որ անոնք տարագրուեցան զիւղէրէն որովհետեւ չթողուցին որ ուտիկան զինուորները այդ գործին խառնուին: Այն ատէն Անգարայի Միութիւն եւ Յառաջդիմութիւն կու-

խելէ էթթիրմիյօրլարտը: Պու սըրատա Անգարա Իթթիհաթ վէ Թէրագգի ճէմիլէթի քէաթիպի մէտուլու Նէնաթի պէյ Եոզղաթա կէլտի, մաքամը միթէսարըֆիյէ կէլէրէք պանա ավունունուն իշինտէ վալի Աթըֆ Պէյին իմգասըլլա էագըլմըշ մէքթուպունու իրաէ էթթի. մէգքիւր մէքթուպուն մէալի Նէնաթի Պէյլէ պիլիսաթիշարէ Էրմէնիլէրի թէհնիթ էտիսնիգ էօլունտա իտի: Միմաիլէյի Նէնաթի Պէյտէն մէգքիւր մէքթուպու թալէպ էթթիմ իսէտէ, վէրմէտի. պէն տէ քէնտիսինէ, «սիգին պիր սըֆաթը ռէսմիլէնիգ օլմատըղը իշին, պու պապտա պիր կիւնա իսթիշարը վէ մուամէլտէ պուլունամամ», տէտիմ, վէ պիր տէ թէհնիթ իշին ճիհէթի միւլքիլէտէն հէնիս էմիր կէլմիշ իսէտէ, մէգքիւր էմիրտէ էշխասը մուգիրէնին նագիլ վէ թէպիտի մէվգուպահէ էտիլմիշ իքէն ճիհէթի ասքէրիյէնէ պիլա թէվֆիք չօլուք չօնուք վէ գատընլար տա թէհնիթ էտիլմէքթէ օլտուղու ճիհէթլէ պու խուսուսը վիլայէթէ էագտըմ, պունուն իշին ճիհէթի ասքէրիյէտէն մէմուրիսնի միւլքիլէնէ միտախալէ էտիլմէմէսի լիգումը պիլտիրիլտիղիսնէն Նէնաթի Պէյտէն մատէմի ճիհէթի ասքէրիյէ թէհնիթի էափըլօր վէ միւլքիլէյի միտախալէ էթթիրմիյօր, պինաէնալէյի պու իշէ պէնիմ տէ միտախալէմէ լիգում էօքտուր տիյէ ճէվասպ վէրտիմ, պունուն իւզէրիսնէ Եօզղաթ-

ասկցութեան պատասխանատու քարտուղար Նէնաթի պէյ Եոզղատ էկա: Ան կառավարատուն իմ պաշտօնատեղիս էկա եւ ինձի ցոյց տուա Կուսակալ Աթըֆ Պէյի կողմէ ստորագրուած նամակ մը զայն բռնելով իր ափերուն մէջ: Էապէս նամակը կը հրամայէր ինձի Նէնաթի Պէյի հետ խորհրդակցիլ եւ ապա կարգադրութիւններ ընել տեղահանութեան համար: Ես Նէնաթի Պէյէն խնդրեցի որ նամակը չանձնէ ինձի, բայց ան չտուա ինձի: Իմ կարգիս եւ իրեն ըսի. «Դուն պաշտօնական հանգամանք չունիս, հետեաքար չեմ կրնար քեզի հետ կարգադրութիւն ընել կամ համաձայնիլ քեզի հետ:

Թէն քաղաքային իշխանութիւնները արդէն հրամաններ ղըրկած էին Հայերու տեղահանութեան եւ արքոթի աղընշութեամբ. այս հրամանը կասկածելի անհատներու մասին էր մինչ զինուորական իշխանութիւններու հրամանը կ'ընդգրկէր տարագրութիւնը մանուկներու, կիներու եւ այրերու՝ առանց որտէ խորութեան: Այս մասնատր խնդրի մասին նահանգի կուսակալին գրեցի: Հետեաքար զինուորական իշխանութիւնները իմացուցին թէ քաղաքային պաշտօնատեղիս միջամտութիւնը անհրաժեշտ չէր ինչպէս Նէնաթի Պէյի միջամտութիւնը քանի որ զինուորական իշխանութիւնները կը գործադրէին տեղահանութեան

թա պիր շէշ ետփըմայաճաղընը անլայան Նեճաթի Պէշ Չորումա կիթթի, օրատա պիր գաշ կիւն կէշ-տիթթէն սօնրա Վալի Վէքիլի Ա-թըֆ պէնի իշթէն էլ շէքիրտի, էս-պապընը սուալ էթթիղիմտէ, 6 Ա-դուսթօս 331 թարիխ վէ 429 նու-մարալը շիֆրէ թէլկրաֆլա, «Հագ-գընըգտաքի մուամէլէ կէօրիվէն լիզում իզէրիմէ իտարէթէն իշթէն էլ շէքիլմէտէն իպարէթթիր», թար-գընտա ճէվապ վէրտի. իշթէ պու սուրէթլէ Եօզդաթ միթասարըֆլը-ղընտան ինֆիսալըմ վուզու պուլ-մուշթուր:

Սուալ.-Երիկն քի՞մ միթասարըֆ թային օլունտու:

Ճէվապ.-Էվվէլա Պօղազլըյան գայմագամը Քէմալ պէշ Վալի Ա-թըֆ Պէշ թարաֆընտան Եօզդաթ Միթէսարըֆ վէքալէթիմէ թային օլունտու: Քէմալ Պէշին Եօզդաթ Միթէսարըֆ վէքալէթիմտէ նէ գատար քալտըղընը իսթըրլամը-յօրում, անճաք իտարէթէն ազլօլ-տուղունու միթէագիպ պու ազիլ քէլֆիլթի պէլքէ Ծուրայը Տէվլէթ-ճէ թէթթիթէ ֆիթիր վէ մութալա-սիլլէ պիր սյա գատար Եօզդաթ-թա գալտըմ: Պու պիր սյ միտտէթ

հրամանները եւ շէին թողուր որ քաղաքային պաշտօնեաներ այդ գործին խառնուին: Ես ալ իբր քա-ղաքաքային իշխանատր հարկ չեմ տեսներ այս գործին մէջ մտնել:» Այս եղաւ իմ պատասխանս Նեճաթի Պէշին: Ասոր վրայ Նեճաթի Պէշ համոզուեցաւ որ ինք Եօզդատի մէջ ընէլիք ոչինչ ունէր: Ան մեկ-նեցաւ Չորում: Քանի մը օր ետք ժամանակատր կուսակալ Աթըֆ Պէշ զիս պաշտօնանկ ըրաւ: Երբ իրեն պատճառը հարցուցի, 6 Օ-գոստոս 1915ին ստացայ 429 թը-ւահամար ծածկագիր հեռագիր մը (որ կ'ըսէր.) «Վարչական կեր-պով կը պահանջուի որ դուն պաշ-տօնէ քաշուիս:» Այսպիսի պայ-մաններու մէջ Եօզդատի միթա-սարըֆի պաշտօնէս ազատ ար-ձակուեցայ:

Հարցում.-Քու տեղդ ո՞վ միթէ-սարըֆ նշանակուեցաւ:

Պատասխան.- Ժամանակատր կերպով Գայմագամ Քէմալ պէշ Եօզդատի փոխ կառավարիչ կար-գուեցաւ Աթըֆ Պէշի կողմէ: Չեմ յիշեր որքան ատեն Քէմալ Պէշ Եօզդատի ժամանակատր կառա-վարիչ մնաց: Կը յիշեմ որ ան ալ յետագային վարչականօրէն հե-ռացուեցաւ իր պաշտօնէն: Թերեւս այս խնդիրը ծեծուեցաւ Պետական Խորհուրդի մէջ: Ես Եօզդատ մը-նացի գրեթէ ամիս մը: Այս մէկ ա-մըսուան ընթացքին Քէմալ Եօզ-

գարֆընտա Քէմալ Պէշ օրատա ի-տի, զաննըմա կէօրէ Էրմէնի թեհ-ճիրիկին արքաւը ալընաճայա գա-տար տա օրատա գալմըշ, սօնրա Եօզդաթ միթասարըֆլըղընա Սի-վաս մէքթուպնի Աթա Պէշ թային Էտիլմիշթի:

Սուալ.-Մատնմբի ինֆիսալիմի-գի միթասարըֆ պիր սյա գատար Եօզդաթթա գալտընըզ վէ Քէմալ Պէշին տէ միթէսարըֆ վէքալէթի-մի իֆա էթթիղի էսնատա օրատա գըսմէն պուլունտունուզ, Քէմալ Պէշ Էրմէնի թեհճիրիկին նէ՞ սու-րէթլէ իտարէ էթմիշտիր, իզահաթ վէրիմիսիմի՞զ:

Ճէվապ. Էվվէլա ճիհէթի ասքէ-րիլէ թէպ'իտ վէ թեհճիր Էտիլմէք Էրմէնիլէրի Հիքիմէթի մահալիլիլէ վասըթասըլլէ թահգիզ էթթիրմի-յօրտու, վաքթաքի Քէմալ Պէշ մի-թէսարըֆ վէքալէթիմէ կէլտի, պու կիպի անվալը թահգիզիլէլէ լի-զում կէօրմէքսիզին գատըն, չօլուք չօճուք, էրքէք պիլա իսթիսնա գաֆֆէսիմի թեհճիրէ թապի թուր-թու. սէվգիյաթ իշլէրիմէ ժան-տարմալար իսթիխտամ օլունու-յօրտու: Պուտա Ժանտարմա Գու-մանտանը Եուզպաշը Թէվֆիզ Է-ֆէնտի օ հավալիտէթի Չէրքէզ-լէրտէն միթէքքէպ պիր տէ շէթէ թէշքիլ էթմիշտի: Հէր նէ գատար կէօզիմլէ կէօրմէտիմ իսէտէ, գա-սապատան վէ լիվատան չըքարը-լան Էրմէնի գաֆիլէլէրի ժանտար-մա վէ շէթէլէր վէ էհալի թարա-

դատ էր եւ հոն մնաց մինչէն Հայե-րու տարագրութիւնը վէրջ գտաւ: Ապա Սերաստիոյ քարտուղար Ա-թա Պէշ Եօզդատի Միթէսարըֆ անուանուեցաւ:

Հարցում.-Քանի որ դուն ամսը-ւան մը չափ Եօզդատ մնացիր Քէ-մալ Պէշի իբր փոխ կառավարիչ պաշտօնավարութեան ընթացքին, կրնա՞ս բացատրել թէ ինչպէս Քէ-մալ Պէշ գործադրեց Հայերու տե-ղահանութեան հրամանը իր վար-չութեան վերահսկողութեան տակ:

Պատասխան.-Նախ զինուորա-կան իշխանութեանց հսկողութեան տակ էր վարչութիւնը: Տեղահան-ուելիք, աքսորուելիք Հայերը ձեր-քակալուեցան: Այն ատեն Քէմալ Պէշ իբր ժամանակատր Միթա-սարըֆ Եօզդատ եկաւ: Ինքզինք պարտատր չզգաց քննութիւն կա-րելու, կիներ, մանուկներ եւ այրեր առանց խտրութեան աքսորուեցան եւ տարագրուեցան: Ոստիկաններ գործածուեցան տեղահանութեան գործին մէջ: Այս նպատակին հա-մար հրամանատար Գնդապետ Թէվֆիք Պէշ հրոսակներ (չէթէ) կազմակերպեց տեղացի Չէրքէզ-ներէն:

Թէէ եւս աչքերով չտեսայ կո-տորածը, սակայն իմացայ թէ Եօզ-դատ քաղաքէն եւ շրջակայ գիղե-րէն տեղահանուած հայ կարաւան-ները կոտորուեցան եւ բնաջնջուե-ցան ոստիկաններու, հրոսակներու եւ ժողովուրդին կողմէ: Այլեւս

ֆրնտան գաթլ վէ իմհա էտիլտի-
դինի թելաթիւրէն իշիտիյօրտում:

Հարթա թահամմիլ էտէմէյէրէք
իսմի հարթըմտա գալմայան պիր
փօլիս մէմուրիյէ Միւթէսարըֆ
վէքիլի Քէմալ Պէյէ. «Ահալինին
էլինի քանլա պօյատըյօրտուն, Հի-
քիւմէթին սիյասէթի տախիլիյէսի-
նէ մուգիրտիր,» տիյէ հապէր կէօն
տէրտիմ իսէտէ, ապլա սամիի իթի-
պարա ալմայարաք, գըթալ տէվամ
էտիփ տուրույօրտու:

Պու գաթլ իշլէրինտէ հափիսհա-
նէտէքի ճանիլէր տէ իսթիստամ
օլմուշլար: Պունուտա Եօզղաթթա-
քի աշնը գատընտան տույտում: Պու
աշնընըն պիրատէրի տէ պիր գա-
թըլ մատտէսինտէն տօլայը հա-
փիսհանէտէ իմիշ: Պունուտա չը-
գարարաք Էրմէնիլէրին գաթլըն-
տա քուլլանմըշթըր:

Պու աշնը գատընըն իսիմ վէ գու-
վիյէթինի ունութթում: Եալնըզ պէ-
լէտիյէ ֆէնէրնիլէրինտէն պիրի-
նին գարըսը իտի: Պէլէտիյէ Բէիսի
Մէհմէտ Էֆէնտի պու աշնը գատը-
նը փէք ալա պիլիր:

Հուլասա Եօզղաթթա Քէմալ
Պէյին միւթէսարըֆ վէքալէթին-
տէքի թէհնիր էտիլէն Էրմէնիլէրին
գըսմը ազամը գաթլ իֆնա վէ
էմվալ վէ էշէալարը կասի վէ դա-
րէթ էտիլտիդի միւթէվաթըր օլուփ,

չկարէնալով հանդուրժել այս կա-
ցութիւնը նոյնիսկ եւ ոստիկան
սպայ մը դրկէցի, որուն անունը
այժմ չեմ յիշեր, ժամանակաւոր
միւթէսարըֆ Քէմալ Պէյի ըսելու.
«Դուն ժողովուրդին ձեռքերը ա-
րինով կը ներկես. ասիկա վնասա-
կար է կառավարութեան ներքին
քաղաքականութեան,» սպան այս-
պէս ըսաւ անոր: Քէմալ կարեւո-
րութիւն չտուաւ եւ կոտորածը շա-
րունակուեցաւ:

Բանտերու մէջ կալանաւոր ոճ-
րագործները գործածուեցան հայե-
րու կոտորածը իրագործելու հա-
մար: Այս բանը լսեցի Եոզղատի
իմ խոհարարուհիէս: Այս խոհա-
րարուհիին եղբայրն ալ բանտն էր
մարդասպանութեան յանցանք
գործած ըլլալուն համար: Իմ խո-
հարարուհիս ինծի ըսաւ թէ իր եղ-
բայրն ալ բանտէն ազատ արձակ-
ուած էր եւ դրկուած՝ Հայերը կոտո-
րելու: Մոռցայ անոր անունը եւ
ինքնութիւնը. ան կինն էր քաղա-
քապետական լապտերները վառո-
ղին: Քաղաքապետ Մէհմէտ Է-
ֆէնտի շատ լաւ կը ճանչնայ այս
կինը:

Կարն կերպով, Եոզղատի փոխ
Կառավարիչ Քէմալ Պէյի կողմէ
տեղահանուած Հայերը մեծ մասով
կոտորուեցան եւ բնաջնջուեցան,
եւ անոնց ինչքերը եւ արժէքաւոր
իրերը կողոպտուեցան եւ թալանի
տրուեցան: Բոլոր ժողովուրդը գի-
տէ որ Քէմալ պէյ, ոստիկանու-

պու գըթալըն միտտէթէփ վէ մի-
րէվփինի Քէմալ Պէյ, Ժանտարմա
Գումանտանը Թէվֆիգ վէ Իթթի-
հատ վէ Թէրազգի Մուրախասար
Նէնաթի Պէյ տիր:

Պու պապթա Եօզղաթ Մէպու-
տու Եաքիր վէ Քէասըմ Էֆէնտիլէ-
րէ Էսքի Մէպուս Էտիպ Պէյ վէ
Միւֆթի վէ սաիր Էշրաֆ վէ մի-
թէպէրանը խրիսթիյանիյէնին մա-
լիմաթը վարտըր:

12 Գանունուվվէլ 334.

Եօզղաթ Միւթէսարըֆըղընտան
Միւթէքաիթ:
Ճէմալ: 4

թեան հրամանատար Թէվֆիք Պէյ,
եւ Միուրիւն եւ Յառաջդիմութիւն
կուսակցութեան պատասխանա-
տու քարտուղար Նէնաթի Պէյ հա-
մաձայն գործելով կազմակերպե-
ցին Հայերու բնաջնջումը:

Եոզղատի երեսփոխան Եաքիր
Պէյ եւ Գասիմ Էֆէնտի, նախկին
երեսփոխան, Էտիպ Պէյ եւ Միւֆ-
թին, թորք սաազանին եւ քրիստո-
նեաները լաւ տեղեակ են այս կո-
տորածներուն:

12 Դեկտեմբեր 1918.

Եոզղատի նախկին կառավարիչ
Ճէմալ:

*Ճէմալ Պէյ ամբողջական ճշմարտութիւնը տուած չէ 12 Դեկ-
տեմբեր 1918 իր վկայութեամբ: Ան չէ խօսած այն առաջարկին վրայ
գոր Նէնաթի Պէյ ըրաւ իրեն Հայերը ոչ թէ միայն տեղահանելու
այլ նաեւ զանոնք բնաջնջելու: Նէնաթի Պէյ իրեն ըսած էր թէ այս
էր հրամանը Միուրիւն եւ Յառաջդիմութիւն կուսակցութեան եւ
Ներքին գործերու նախարարութեան: Ճէմալ Պէյ այս մասին մը-*

տերմական յայտարարութիւն ըրած էր բնիկ Եոզղատցի էտիպ Պէ-
յի, որ եղած էր նախկին կառավարիչ Սելեկիոյ: Եոզղատի նոր
կառավարիչը Պատերազմական Ատեանի պահանջով պաշտօնական
տեղեկութիւն ուղեց էտիպ Պէյէն, որ 10 Փետրուար 1919ին պա-
տասխանեց եւ պարզեց մտերմական խօսակցութիւնը որ տեղի ունե-
ցած էր իր եւ ձէմալ Պէյի միջեւ: Ահա էտիպ Պէյի վկայութիւնը.

Հայաստան թրքերէն բնագիր.

Զէյլէն ճեմալ.

Սաստիքում էֆէնտիմ Հազրէթլերի,

Հաթըրը աճիգանէմտէ քալտը-
պընա կէտրէ Էրմէնիլերին նազ
վէ թէհմիլի էմի վերիմիշ վէ պու-
նուն իշին տէ Անգարա Քեաթիպի
Մէտուլը Նեճաթի Պէյին Եօզղա-
թա կէլմիշ պուլունտուղը սըրատա
միթէսարըֆը Էսպաք Ճեմալ Պէյ
պիր կին ֆաքիրհանէյէ կէլերէք,
սէվգօլունանաք Էրմէնիլերին իմ-
հասը քէյֆիյէթինի Նեճաթի Պէյին
քէնտիսի թէքլիֆ էթթիլինի վէ
պունա քարշը վերտիլի ճեվաթիթա
պու պասպտա հիքիմէթէ վագը օ-
լան թէպիլիլաթը ըէսմիյէտէ Էրմէ-
նիլերին իմհասը Էտիլէն մահալլե-
րէ սէվգ վէ իգամլարը պիլտիրտի-
ղինտէն էմիր հիլէֆընա հարէ-
քեաթ իմհա քէյֆիյէթինէ ապա մու-
վաֆաքաթ էտէմիյէճեղինի սէյ-
լէմէսի իզերինէ մաքսատը զանի-

Հայերէն թարգմանութիւն.

Լրացուցիչ պատասխան.

Բարձրապատիւ եւ Գերազանց Տէր,
Որքան որ ես կրնամ յիշել, մենք կըր-
ցանք տեղեկանալ որ Հայերը աքսորե-
լու եւ տեղահանելու հրամաններ հա-
սան: Այս հրամանները գործադրելու
համար, Անգարայի Միութիւն եւ Յա-
նաջողիմութիւն կուսակցութեան պա-
տասխանատու քարտուղար Նեճաթի
Պէյ Եոզղատ եկա: Եոզղատի նախկին
միթէսարըֆ Ճեմալ Պէյ մեր տունը
այցելեց օր մը եւ յայտնեց թէ Նեճաթի
Պէյ իրեն հաղորդած էր Հայերը բնա-
ջնջելու հրամանը: Ճեմալ Պէյ պա-
տասխանաճ է. «Կառավարութիւնը
հրամայած է աքսորել Հայերը կան-
խապէս որոշուած վայրեր եւ յիշեցու-
ցած է Նեճաթի Պէյի թէ ինք (Ճեմալ
Պէյ Գ) չուզեր գործել կառավարու-
թեան հրամաններուն հակառակ, եւ
թէ ինք բացարձակապէս հակառակ է
Հայերու բնաջնջումին:» Ասոր վրայ

րէ նաքիլ վէ թէհմիլ օլուսի ֆաքաթ
Մերքեզի Ումումիմին վէ Տախիլի-
յէ Նազըրըն վազիֆէի վաթանիյէ
Եօլունտաթի էմիր վէ էմէլլերի իմ-
հա օլտուղունտան պունա ստէմի
մուվաֆաքաթ հագգընտա էյիլիք
կէթիրմէյէճեղի զըմընտա թէքլի-
ֆի վաթինէ Նեճաթի Պէյին թէք-
րար էյլէմէսինէ թարշը էտէմէյէ-
ճեղի ճեվապընընը վերտիլինի
մահրէմանէ օլարաք սէօյլէմիշ վէ
հաթթա սէօզիմէ իլավէթէն տիմ-
եասընը վէ ախրէթինի տիշիմէն-
լէր իշին պէօյլէ պիր հալէ ճիւրթ
Էթմէթթէ օլամայանաղը թապի-
իտիր տէմիշ օլտուղը վարիտի հա-
թըրը աճիգիտիր, օլպասպտա իրա-
տէ էֆէնտիմ Հազրէթլերինիմտիր:

10 Շուպաթ 335.

Սիլիֆքէ Միթէսարըֆը Էսպաքը
Էտիպ: 5

Նեճաթի պէլ պատասխանաճ է. «Թէեւ
կառավարութեան տուած հրամանը ե-
րևութապէս աքսորել է Հայերը, սա-
կայն կուսակցութեան Կեդրոնական
Կոմիտէի եւ Ներքին Գործերու Նա-
խարարութեան իսկական նպատակն է
բնաջնջել Հայերը եւ այս ձեռով ծա-
ռայութիւն մատուցանել հաչրենի-
քին:»

Ճեմալ Պէյ ինձի մտերմարար ըստ
թէ ինք վճռապէս հակառակած է Նե-
ճաթի Պէյի առաջարկին: Ես կը յի-
շեմ թէ Ճեմալ Պէյ առարկած է թէ բը-
նական չէ մարդու համար որ երկինքի
կը հաստապ մասնակցիլ աչսպիսի ոճ-
րագործութեան մը: Այս է իմ յիշածս,
հետեւաբար, ձեզի կը մնայ հրամա-
յել:

10 Փետրուար 1919.

Սելեկիոյ Նախկին Միթէսարըֆ
Էտիպ:

ԳԼՈՒԽ Զ.

Երկրորդ Միլիտարի Ֆիլիպսի ձեռնարկը և Զորակայքի Հրամանատար Սալիմ Պէյ պատասխանատու՝ Երկրորդ Հայերու կոտորածին:

Թուրք Պատերազմական Ատեանը իբր ընդհանուր սկզբունք հաստատած է թէ այն բոլոր կառավարական պաշտօնեաները եւ զինուորական սպաները որոնք տեղահանութեան եւ կոտորածի հրաման ստանալէ ետք չեն հրաժարած իրենց պաշտօնէն, պատասխանատու են Հայերու տեղահանութեան եւ կոտորածին:

Երկրորդ Միլիտարի Ֆիլիպսի ձեռնարկը և Զորակայքի Հրամանատար Սալիմ Պէյ, երկուքն ալ պաշտօնանկ եղան որովհետեւ մերժեցին Հայերը կոտորել տալ, սակայն չհրաժարեցան Հայերը տեղահան ընելէ: Թէ՛ ձեռնարկ թէ՛ Սալիմ շատ լաւ գիտէին թէ իրենք իրաւունք չունէին վարչական կերպով բանտարկելու եւ տարագրելու Երկրորդ Հայերը: Իրենք իսկ կը խոստովանին թէ 1915 Յուլիս 26, 28 եւ 31ին Երկրորդ տեղահանեցին 472, 257 եւ 99 հայ այրեր, ընդամենը 828 հոգիներ, որոնք կոտորուեցան գաւառէն դուրս ելլելէ ետք, Օգոստոսին:

Նմանապէս Հարցաքննիչ Յանձնախումբը եւ Պատերազմական Ատեանը հաստատած են թէ տեղահանութիւն եւ կոտորած գործնականօրէն նոյնիմաստ բառեր են: Նոյնպէս ձեռնարկը և Սալիմ Պէյերը գիտէին որ կոտորածի գաղտնի հրամանները եւ հրահանգները իւրաքանչիւր վալի, միլիտարի Ֆիլիպսի եւ գայմագամ, ինչպէս նաեւ զինուորական հրամանատար, ստացած էին միայն իրենց իշխանութեան եւ իրաւասութեան շրջանի մէջ գործելու համար, եւ ոչ թէ իրենց իրաւասութեան շրջանակի սահմաններէն դուրս, վալին իր նահանգին մէջ, Միլիտարի Ֆիլիպսի իր գաւառին մէջ, եւ Գայմագամը իր գաւառակին մէջ. երբ Հայերու կարաւանները դուրս կ'ելլէին գիրենք տարագրող իշխանութեան սահմանէն, եւ կը մտնէին նոր նահանգի մը, նոր գաւառի մը, կամ նոր գաւառակի մը սահմանին մէջ, այն ատեն նոր նահանգի վալին, նոր գաւառի միլիտարի-

Ֆիլիպսի, եւ նոր գաւառակի գայմագամը, իրենց ստացած հրամաններուն եւ հրահանգներուն համեմատ կը կոտորէին եւ կը կողոպտէին տեղահանուած կարաւաններու Հայերը, որոնք կ'անցնէին իրենց իրաւասութեան սահմաններէն ներս:

Ձեռնարկը և Սալիմ, որոնք կը պարծենան Երկրորդ Հայերը տեղահան ըրած ըլլալ ողջ եւ առողջ վիճակի մէջ, եւ արգիլած ըլլալ անոնց ջարդը իրենց իրաւասութեան սահմանին մէջ, կողոպտելու գաղտնի հրամանները տրուած էին նաեւ միւս նահանգներու, գաւառակներու կառավարական պաշտօնեաներուն, որոնք պիտի կոտորէին եւ կողոպտէին իրենց իրաւասութեան սահմաններէն ներս:

Օսմանեան Սահմանադրութեան օրէնքի տրամադրութեան համաձայն Երկրորդ Միլիտարի Ֆիլիպսի ձեռնարկը և Զորակայքի Հրամանատար Սալիմ պէյ պէտք է հրաժարած ըլլային Հայերու տեղահանութեան ձեռնարկելէ առաջ: Եւ քանի որ հնազանդած են գործադրել տեղահանութեան համար իրենց տրուած հրամաններն ու հրահանգները, իրենք ալ պատասխանատու են թէ տեղահանութեան եւ թէ կոտորածին:

Ձեռնարկը և Սալիմ Պէյերը իրենց ստացած հրամանին համաձայն իրենց տարագրած երեք կարաւաններուն 828 հոգիներէն հաւաքել տուին անոնց ունեցած դրամները եւ թանկագին իրերը. այսպէսով զանոնք զրկեցին ապրելու միջոցներէն եւ զանոնք զրկեցին մահուան. հետեւաբար Հայերը տեղահանելէ առաջ շատ լաւ գիտէին թէ իրենց տարագրած Հայերը մեռնելու կ'երթային, ասով հանդերձ զանոնք տարագրեցին:

Երկրորդ Հայերու տեղահանութեան եւ կոտորածի դատավարութեան ընթացքին, 5 Փետրուար 1919ին, Քէմալ Պէյի եւ Թէվֆիք Պէյի պաշտպան փաստաբանները հաստատեցին թէ «Հայերու աքսորի հրամանը տրուած է Նախարարներու Խորհուրդի որոշումով, որ Կայսերական իրաւունքով (հրովարտակ Գ) վաւերացուած է: Իսկ պաշտօնէութիւնը Կեդրոնի այդ հրամանն է որ գործադրած է:»¹

Քէմալ պէյ յոխորտանքով յայտարարած է հայ զինուորի մը հայրիկին, որ օրէնքով զերծ պիտի մնար աքսորէ. «Մենք Հայերը

1. Ժամանակ, 6 Փետրուար 1919:

բնաջնջելու բացարձակ հրաման ունինք. մենք մարդու մտիկ չենք ընենք: Մուսամէրի, ², Բէշիտի ³, եւ ինձի ⁴ բացարձակ հրաման տրուած է ես որեւէ ուրիշ հրաման չեմ ընդունիր. ես Հայոց յաղթողն եմ:» ⁵

Պատերազմական Ատեանի Նախագահը կարդալ տուաւ Քէմալ Պէյի ստորագրած հրամաններէն մին, որով ան լիազօրութիւն կու տար երկու անձերու՝ ճամբու ընթացքին գրաւելու տարագրուած Հայերու բոլոր ունեցածները:

«Նախագահ. — Դուն ալ գիտէիր որ անոնք (Հայերը Գ) ողջ պիտի չհասնին իրենց աքսորավայրը, եւ անոր համար ամէն ինչ առնել կու տայիր անոնց վրայէն:»

Քէմալ Պէյ նախագահի հարցումին կը պատասխանէ. — «Կեդրոնի կառավարութիւնն է մեզի հրաման տուողը այս տեղահանութեան մասին:» ⁶

Եոզղատի հայասպանութեան պատասխանատուներու դատավարութեան ընթացքին, ամբաստանեալներու թուրք փաստաբանները պաշտպանելու համար Քէմալ եւ Թէվֆիք Պէյերը, Պատերազմական Ատեանի առջեւ յայտարարեցին թէ Հայերու աքսորի հրամանը տրուած է Նախարարներու Խորհուրդի որոշումով, որ հաստատուած էր Սուլթանական հրովարտակով եւ թէ դատելէ առաջ իրենց պաշտպանեալները, որոնք պարզ պաշտօնեաներ են, հարկ էր դատել նախ թուրք կառավարութեան պետերը եւ նախարարները:

Ընդհանուր Դատախազ Սամի Պէյ կը պատասխանէ պաշտպան փաստաբաններուն եւ կ'ըսէ. «Ճիշդ է որ բոլոր պաշտօնեաները ենթակայ են բարձրագոյն հրամաններուն, սակայն ամէն պաշտօնեայ պէտք է քննէ եւ տեսնէ թէ տրուած հրամանները արդարութեան եւ օրէնքի համաձայն են թէ ոչ, եւ հետեւաբար գործադրելի են թէ ոչ: Այս հիմերու վրայ քանի մը պաշտօնեաներ չգործադրեցին իրենց տրուած հրամանները եւ հակառակեցան անոնց:» ⁷

2. Մուսամէր Սերաստիոյ կուսակալ էր:

3. Բէշիտ պէյ Տիգրանակերտի կուսակալ էր:

4. Քէմալ Պէյ Պողազլեանի գայմագամ եւ Եոզղատի փոխ միւթէսարըք էր:

5. Փամանակ, 12 Փետրուար 1919. վկայութիւն թուրք Պատերազմական Ատեանի առջեւ:

6. Փամանակ, 20 Մարտ 1919:

7. Փամանակ, 6 Փետրուար 1919, Ծակատամարտ, 6 Փետրուար 1919:

Թուրք Պատերազմական Ատեանի Նախագահը կը հարցնէ Մուսամէրի (հաշուակալ) Վէհպի Պէյի. «Ձեզի առ ի գործադրութիւն յանձնուած՝ Լքեալ Գոյքերու կոնոնագրին տրամադրութեանց հակառակ ինչո՞ւ հաւաքել տուիք տեղահան եղած Հայերու վրայէն ամէն իրեղէն եւ դրամ...»

«Վէհպի Պէյ. — Կառավարութեան հրամանով էր որ հաւաքել տուի:

«Նախագահ. — Սահմանադրութիւնը կ'արգիլէ գերադասներու ապօրէն հրամանները գործադրել: Պէտք էիր հրաժարիլ:» ⁸

Միեւնոյն հարցումը ուղղուած է նաեւ նախկին Միւթէսարըք Ճէմալ պէյի, որ միեւնոյն պատասխանը տուած է թուրք Պատերազմական Ատեանի Նախագահին: Ուրեմն հարկ էր որ Եոզղատի Միւթէսարըք Ճէմալ Պէյ հրաժարէր երկու պատճառներու համար. նախ Հայերու տեղահանութիւնը կազմակերպելու չէր, ապա անոնց վրայէն հաւաքել տալու չէր անոնց ունեցած դրամները եւ թանկագին իրերը: Եւ Պատերազմական Ատեանի Նախագահը կը հաստատէ թէ տեղահանուած Հայերու դրամները եւ թանկագին իրերը հաւաքել կը նշանակէ թէ անոնք մեռնելու կը տարուին, որովհետեւ եթէ դրամները առնուին անոնցմէ, անոնք ճամբու ընթացքին ի՞նչով պիտի ապրին:

Ճէմալ Պէյ պատասխանատու է նաեւ Պողազլեանի Գայմագամին կատարած եւ կատարել տուած ջարդերուն, որովհետեւ Քէմալ Պէյ ուղղակի իր իշխանութեան տակ էր: Ինք չարգիլեց երբ ան Հայերը ջարդել կու տար:

Պատերազմական Ատեանի Ընդհանուր Դատախազը կը հարցնէ Ճէմալ Պէյի թէ ինք տեղեակ է Պողազլեանի ջարդերուն, որովհետեւ Ճէմալ Պէյ ցաւ յայտնած էր Եոզղատի Երեսփոխան Շաքիր Պէյի՝ Պողազլեանի մէջ կատարուած կոտորածներուն համար:

Ճէմալ Պէյ կը պատասխանէ. «Այո՛ ցաւ յայտնեցի այս մասին, ըսելով որ մենք թուրքերս Գ մեր թեւերը կը կտրենք: Մեր հպատակները բնաջնջել անձնասպան ըլլալ է:» ⁹

Ճէմալ Պէյի հրամանով կը գործէր նաեւ Եոզղատի ոստիկաններու հրամանատար Թէվֆիք Պէյ: Եոզղատի առաջին կարաւանը

8. Ծակատամարտ, 23 Մարտ 1919: Եոզղատի 15րդ դատավարութիւն:

9. Կիրիտլի Հիւմի Պէյ:

ճամբայ ելաւ 26 Յուլիս 1915ին մինչ Թէվֆիք ամիսներ առաջ գիւղերու Հայերը կոտորելու սկսած էր. եթէ ձէմալ իսկապէս հակառակ էր Հայերու կոտորածին, ինչո՞ւ չարգիլեց Թէվֆիք Պէյի որ այդպիսի ոճիրներ գործէ եւ կամ ինչո՞ւ զայն պաշտօնանկ չըրաւ:

Նոյնպէս 15 Մայիս 1915ին Եոզղատի բանտէն ոճրագործները ազատ արձակուեցան մինչ ձէմալ կառավարիչ էր եւ իր կազմած յանձնախումբն էր որ զանոնք ազատ արձակեց: Սալիմ Պէյ ալ նոյն յանձնախումբի անդամ էր:

Նոյնպէս Եոզղատի զօրակայքի հրամանատար Սալիմ պէյ պատասխանատու է Պողազլեանի կոտորածներուն: Ինչպէս իրենք կը վկայեն, ինք եւ ձէմալ Պէյ, միասին կը գործէին, ինչո՞ւ Պողազլեանի Գայմագամ Քէմալ Պէյը եւ Ոստիկանապետը եւ զինուորական հրամանատարը Պատերազմական Ատեանի առջեւ չհանեցին դատելու համար: Անգարայի Կուսակալ Մազհար Պէյ քաջութիւն ունեցաւ Պոլսէն Անգարա ղրկուած Աթըֆ Պէյի ըսելու, թէ ինք իր կուսակալի աթոռէն կ'ելլէ, թող Աթըֆ Պէյ նստի այդ աթոռին վրայ եւ գործադրէ Հայերու կոտորածի համար իր բերած հրամանները եւ հրահանգները: ձէմալ Պէյ եւ Սալիմ Պէյ Մազհար Պէյի քաջութիւնը չունեցան:

Եոզղատի Զօրակայքի Հրամանատար Ալպանացի Հազարապետ Սալիմ Պէյ կը մերժէ ստորագրել Հայասպանութեան հրամանը:

Հայերու տեղահանութեան յաջորդող կոտորածի հրամանը հարկ էր որ ստորագրուէր կառավարիչէն, զինուորական հրամանատարէն եւ կրօնապետ Միւֆթիէն: Ով որ կը մերժէր ստորագրել, պաշտօնանկ կ'ըլլար:

Եոզղատի զինուորագրութեան Գրասենեակի Նախագահ եւ զինուորական կայքի հրամանատար Հազարապետ Ալպանացի Սալիմ Պէյ մերժեց հայասպանութեան հրամանը ստորագրել: Եոզղատի Փոխ Միւֆէսարըֆ Քէմալ Պէյ առաջարկեց Սալիմ Պէյի ստորագրել Հայերու կոտորածի հրամանը կամ պարզապէս հրաժարիլ: Սալիմ Պէյ բացարձակապէս մերժեց ստորագրել այդպիսի հրաման մը: Իսկ Քէմալ Պէյ սպառնաց զայն կախաղան հանել տալ:

Երկաթուղիի բարձր պաշտօնեայ եւ Սալիմ Պէյի բարեկամ Փանտելիտիս Խրիստաքի Պատերազմական Ատեանի առջեւ կը վրկայէ:

«... Անգարայի Միւֆթիւն եւ Յառաջդիմութիւն Կուսակցութեան ներկայացուցիչ Նէճաթի Պէյ Եոզղատ եկած էր կառավարիչ ձէմալ Պէյի առաջարկելու Հայերու բնաջնջումը, սակայն այս վերջինը (ձէմալ Պէյ Գ) մերժեց կատարել անոր բաղձանքը: Այս պատճառով ալ ձէմալ Պէյ պաշտօնանկ եղաւ եւ անոր տեղ դրուեցաւ մսագործ Քէմալ Պէյ որ հոս (Ատեանի մէջ Գ) ձեր առջեւն է...»

«Այն ատեն բժ. Քէչեանի կիներ ինծի աղաչեց որ ի նպաստ իրեն բարեխօսեմ: Խնդրեցի որ հեռագրատան տնօրէնը¹⁰ ինծի օգնէ: Նախ մերժեց. ապա հաւանեցաւ ազատել կիներ եթէ ան ընդունի իսլամանալ եւ ամուսնանալ իր եղբոր հետ:

«Դիմեցի Սալիմ Պէյի, որ նախագահ էր զինուորագրութեան գրասենեակին: Նեղուած էր: Գայմագամ Քէմալ Պէյ Գ զինք կանչած էր, եւ իրեն առաջարկած էր որ ստորագրէ մահապատճառը Հայերու, որոնք պիտի ղրկուէին Քէլէր: Սալիմ Պէյ մերժած էր. այս մերժումին վրայ Քէմալ սպառնացած էր զինք կախաղան հանել: Քանի մը օր ետք նշանաւոր Նէճաթի Պէյ Զորումէն եկաւ եւ պաշտօնանկ ընել տուաւ Սալիմ Պէյը...»¹¹

Սալիմ Պէյի պաշտօնանկութիւնը սկսաւ ի զօրու ըլլալ 9 Օգոստոս 1915ին:

Եոզղատի Զօրակայքի Հրամանատար եւ զինուորագրութեան Նախագահ Սալիմ Պէյի Պաշտօնանկութիւնը

Ասկէ առաջ ցոյց տրուեցաւ թէ Եոզղատի Միւֆէսարըֆ ձէմալ Պէյ, եւ Եոզղատի Զօրակայքի Հրամանատար Հազարապետ Սալիմ Պէյ մերժեցին Հայերը կոտորել ոչ թէ տեղափոխել:

ձէմալ եւ Սալիմ համաձայն էին Հայերը տարագրելու բայց ոչ կոտորելու:

Պոլսոյ Թուրք պատերազմական Ատեանի Նախագահը Եոզղատի Զօրակայքի Հրամանատար եւ Զինուորագրութեան Նախագահ Հազարապետ Սալիմ պէյի պաշտօնանկութեան պատճառները կը պահանջէ պատկան քաղաքային եւ զինուորական իշխանութիւններէն, եւ կը հրամայէ որ Ատեանին ղրկուին այդ հարցին վերաբերեալ վաւերագրերը:

10. Ժամանակ, 20 Փետրուար 1919:

11. Լա Րընէսան, Թիւ 69, 20 Փետրուար 1919:

Սահմանադրութեան տօնակատարութեան առթիւ 23 Յուլիս 1915ին Եոզղատի մէջ փառաւոր ճաշկերոյթ մը տրուեցաւ. այս ճաշկերոյթին ներկայ էր նաեւ Անգարայի Միութիւնն եւ Յառաջդիմութիւնն կուսակցութեան պատասխանատու քարտուղար Նէճաթի Պէյ: Ներկայ էին նաեւ Եոզղատի ամբողջ կառավարական կազմը, զինուորականներ եւ քաղաքային պաշտօնեաներ, ինչպէս նաեւ Միութեանական երեւելիներ եւ ազդեցիկ թուրքեր:

Նէճաթի պէյ ճաշկերոյթի ընթացքին առիթէն օգտուելով յիշեցուց Սալիմ Պէյի պարտականութիւնը հպատակելու այն հրամաններուն եւ հրահանգներուն, զորոնք ինք բերած էր ներքին գործերու նախարարութենէն եւ Անգարայի կուսակալութենէն, բնաջնջելու Եոզղատ գաւառի Հայերը:

Սալիմ Պէյ մերժեց:

Երբ Քէմալ Պէյ 6 Օգոստոս 1915ին Եոզղատ հասաւ իբր փոխ Միւթէսարըֆ, Սալիմ Պէյի առաջարկեց ի պաշտօնէ ստորագրել Եոզղատի գաւառի Հայերը բնաջնջումի հրամանը: Սալիմ Պէյ մերժեց: Քէմալ Պէյ սպառնաց: Քիչ ատեն ետք Սալիմ Պէյ պաշտօնանկ եղաւ:

**Եոզղատի Զօրակայքի Հրամանատար
Սալիմ Պէյի Պաշտօնանկութիւնը:**

Հայատառ թրքերէն բնագիր.

Հայերէն թարգմանութիւն.

Անգարա Վիլայէթինէ.

Պողազլըյան Մէվքի գումանտանը Սալիմ Պէյին 331 սենտիմին հաճակը աչընտա վէ քի՞մլէրին վէ եա հաճակը տաիրէնին շիքայէթի վէ եախօտ հաճակը էմիր վէ թէպիղաթը իզէրինէ ինֆիսալ էթմիշ օլտուղունուն Պէշիննի Գօլօրտու Գումանտանըղընտան աճիլէն պիլթահգիգ պա թէլկրաֆ իշարը վէ էվրագը մութալլագասը սուրէթլէրինին իլք փօսթա իլէ

Անգարայի Կուսակալութեան

Կարեւորութեամբ կը պահանջենք որ Պողազլեանի Զօրակայքի Հրամանատար Սալիմ Պէյի դէմ 1915ին, ո՞ր ամիսը եւ որո՞նց կողմէ եւ կամ ո՞ր վարչութեան կողմէ գանգատներ եղան, եւ կամ ո՞ր հրամանի եւ հաղորդագրութեան հետեւանքով ան պաշտօնանկ եղաւ Հինգերորդ Զօրաբանակի հրամանատարութեան փութով եւ քննութենէ ետք իմացուցէք մեզի

թէսեար պույուրույմասը էհէմմիլէթլէ թէնա օլունուր:

1 Մարտ 335.

Թէհնիր Տիվանը Հարպը Էօրֆի Բէիսի:

եւ վաերագրերուն պաշտօնական պատճենները թղթատարով դրկեցէք մեզի:

1 Մարտ 1919.

Տարագրութեան Պատերազմական Ատեանի Նախագահ: ¹³

Դարձեալ Սալիմ Պէյի Պաշտօնանկութիւնը:

Հայատառ թրքերէն բնագիր.

Հայերէն թարգմանութիւն.

Անգարա Վիլայէթինէ.

Եօզղաթ Ախաը Ասքէր Բէիսի Պինպաշը Սալիմ Պէյին թագաութա սէվգիստէն էվվէլ Անգարա Իթթիհաս Վէ Թէրագգի Մուրախասաը Նէնաթի Էֆէնտի թարաֆընտան վէ եախօտ Գուլուպ Հէյէթինտէն վէ եա Հէյէթի Մէրքէգիյէ ճանիպիստէն Գօլօրտույա սէրտի շիքայէթ էտիլմիշ օլուպ օլմատըղընը տախի թահգիգ վէ իշար պուլունմասը թէնա օլունուր:

8 Մարտ 335.

Թէհնիր Տիվանը Հարպը Էօրֆի Բէիսի:

Անգարայի Կուսակալութեան.

Կը խնդրենք որ քննութիւն կատարէք եւ մեզի իմացնէք թէ Եոզղատի Զինուորագրութեան Նախագահ Հագարապետ Սալիմ Պէյ թոշակատութեան կոչուելէ առաջ՝ Անգարայի Միութիւնն եւ Յառաջդիմութիւնն կուսակցութեան պատուիրակ Նէնաթի Էֆէնտիի եւ կամ Ակումբի վարչութեան եւ կամ ի դիմաց Կեդրոնական Վարչութեան կողմէ Զօրաբանակին՝ գանգատ եղա՞ծ է թէ ոչ:

8 Մարտ 1919.

Տեղահանութեան Պատերազմական Ատեանի Նախագահ: ¹⁴

Վերեւի վաերագրերէն յստակօրէն կը հետեւի թէ Հագարապետ Սալիմ Պէյ չէր ուզած գործակցիլ Երիտասարդ թուրքերու եւ Կեդրոնական կառավարութեան որոշումներուն բնաջնջելու հայ ժողովուրդը եւ բարձրագոյն իշխանութեան հրամանով ան պարզապէս պաշտօնանկ եղաւ:

13. Դ.Ե. Թիւ Մ 235:

14. Դ.Ե. Թիւ Մ 235:

ԳԼՈՒԽ Է.

Եոզղատ Գաւառի Կացութիւնը
Կոտորածի Պատրուակ եւ Արդարացում

Եոզղատի ՄիւթէսարըՖ ձէմալ Պէյ եւ Զօրակայքի Հրամանատար Սալիմ Պէյը տապալելու համար ոմանք կը կազմեն տեսակ մը կուսակցութիւն, որովհետեւ անոնք կը հակառակէին Եոզղատի Երիտասարդ Թուրքերու ծրագրած տեղահանութեան եւ կոտորածին: Ակումբի նախագահը եւ ազդեցիկ անդամները կազմեցին մասնաւոր յանձնախումբեր. եւ քաղաքի փողոցներուն մէջ հրապարակային ցոյցեր կատարեցին օրուան տիրող կառավարութեան անդամներուն դէմ, յատկապէս ձէմալ եւ Սալիմ Պէյերը տապալելու համար:

Անգարայէն Եոզղատ եկաւ Միւսթիւն եւ Յառաջդիմութիւն կուսակցութեան պատասխանատու քարտուղար Նէճաթի Պէյ ձէմալ Պէյի հաղորդելու համար Հայերու բնաջնջումի գաղտնի հրամանները ղրկուած Կուսակցութեան ընդհանուր Կեդրոնէն, ներքին գործերու նախարարութեան եւ Անգարայի փոխ Կուսակալ Աթըֆ Պէյի կողմէ: ձէմալ Պէյ պարզապէս մերժեց կատարել գաղտնի հրամանները: Սակայն ան պաշտօնանկ եղաւ 5 Օգոստոս 1915ին:

Վէհպի Պէյ եւ Ֆէյեազ Պէյ գլխաւոր ղեկավարներն էին այս խռովարար խումբերուն. անոնք պիտի երեւին Պատերազմական Ատեանի առջեւ:

Կեսարիոյ Զօրաբաժնի Հրամանատար Շէհապէտտին Պէյ 14 Յուլիս 1915 թուակիր եւ 168 թուահամար ծածկագիր հեռագրով Անգարայի Հինգերորդ Զօրաբանակի Հրամանատարին կը պարզէ կացութիւնը եւ անոր կը հաղորդէ մանրամասնութիւններ:

Հայատառ թրքերէն բնագիր

Նումարա 168.
Շիֆրէ մահլուլուտըր.
Անգարա Գօլօրտու Գումանտան
Վէքալէթիւնէ.

Եօզղաթթա պազը էշխասըն միխալլէֆ փարթիլէր թէշքիլիլէ Հիւքիւմէթի հագրէլէ ալէյի տարլըզ էթթիլէրէ վէ էհալիի միւսլիմէլի թէշվիք վէ ագապայէ սեվգ իլէ մէնաֆիի դայըը մէշրուէլէրիւնի թէմիւն իչիւն փէք պէօլիք պիր դայլէ իհտասընա չալըշմալարը վէ պու էշխասըն մախսուս օլան ալաքալարըլա Սարը Համզալը Զիֆթիլիքի, Պուրուն Գըշլա, Զաքմաք, Զաթը Քէպիր, Պէպէք, Գարա Եագուպ էրմէնի գարիլէրիւնտէ էհալիի միւսլիմիւնիւն անհալ վէ դարէթ իլէ միխիլիի ասայիշ պազը ահվալը ճիրաթ էլլէտիլէրի իսթիխար գըլընմասը իւզէրիւնէ, մահալլը վագըայա պիր հիլէթ իզամ գըլընտըղը վէ պիր մէմուրիւնտէն Մուհասէպէնի Վէհպի, Էվգաֆ Մէմուրը Ֆէլէազ էֆէնտիլէրիւն իսիմլէրի սալիֆ իլ արգ միխթէլիֆ փարթիլէր թէշքիլ էտէն էշխաս մէշանընտա պաշլընա միհարրէր պուլունտուղու հէնուզ հէլէթի մէզքիւրէտ պիր րափօր վուրուտ էթմէմիշ իսէտէ, անթիւնէլի թահգիգաթըն մի-

Հայերէն թարգմանութիւն

Թուահամար 168.
Ծածկագրի լուծում.
Անգարայի Զօրաբանակի Փոխ
Հրամանատարութեան.

Պատի ունիւմ իմացնելու ձեզի որ Պողազլեանի գօրակայքի հրամանատարը իմացած է թէ քանի մը անհատներ Եոզղատի մէջ կազմած են ընդդիմադիր խմբակցութիւններ պաշքար մղելու համար ներկայ կառավարութեան դէմ, եւ թէ անոնք կը ջանան ժողովուրդը գրգռելով ստեղծել մեծ աղէտաբեր շարժում մը իրենց անպարկէշտ դիտաւորութիւններու իրագործումը ապահովելու համար: Այդ անհատները իրենց ախորժակը յագեցընելու համար ինքզինքնին տուած են անկարգութիւններ եւ գրգռութիւններ առաջ բերելու ինչպէս Սարը Համզայի, Զիֆթիլիքի, Պուրուն Գըշլայի, Զագմազի, Զաթ էլ Քէպիրի, Պէպէքի եւ Գարա Եագուպի հայ գիւղերուն մէջ ընտանիքներու միջեւ կարգապահութիւնը խանգարելու եւ խռովարար արարքներ կատարելու համար: Հրամանատարը տեղույն վրայ ղըրկած է յանձնախումբ մը քննութիւն կատարելու համար: Աւագ հաշուակալ Վէհպի էֆէնտիի պէս պաշտօնեաներ եւ Վագֆի պաշտօնեայ Ֆէլէազ էֆէնտի վերեւ յիշուած ընդդիմադիր խմբակցութիւններու կազմակերպիչներու ցանկին գլու-

Ֆասալէն իշաար գըլընանաղը Պո-
ղազըլյան մէվքի գումանտանը-
ղընըն իշաարընա աթֆէն մարուզ-
տուր:

14 Թէմուզ 331.

Ճըրգա Օնպէշ Գումանտան
Վէքիլի՝
Շէհապէթթին: ¹.

խը կը գտնուին: Յանձնախումբը
դեռ իր տեղեկագիրը ներկայա-
ցուցած չէ: Քննութեան մանրա-
մասն արդիւնքները հետագային
ձեզի պիտի հաղորդենք, երբ Պո-
ղազլեանի զօրակալքի հրամանա-
տարը մեզի դրկէ գայն:

14 Յուլիս 1915:

Տասն եւ հիգերորդ Զօրաբաժնի
Հրամանատարի Փոխանորդ՝
Շէհապէտտին:

Հայերը բնաջնջելու համար կուսակցութիւնը, կառավարու-
թիւնը եւ պաշտօնեաները ամէն տեսակ պատրուակներ կը փնտռէ-
ին, եւ եթէ պատրուակներ չգտնէին, կը ջանային ամէն կերպով
ստեղծել զանոնք: Այս էր ընդհանուր կարգախօսը եւ ընդհանուր
գործելակերպը: Կը կարծէին թէ պատրուակները, իրական ըլլային
կամ ցնորական, կընային արդարացնել տեղահանութեան եւ կո-
տորածի պետական քաղաքականութիւնը:

Թալաաթ, էնվեր, ինչպէս նաեւ կուսակալներ եւ զօրավարներ
անդադար կը հրամայէին եւ կը յանձնարարէին որ 1914 Յուլիս ամ-
սուան ընդհանուր զօրաշարժէն ի վեր օրէ օր հաւաքուին եւ պահ-
ւին Հայերու շարժումներուն վերաբերեալ ամէն տեսակի ապա-
ցոյցներ որոնցմով կարելի ըլլայ արդարացնել հայ ժողովուրդի
հանդէպ կիրարկուած տեղահանութեան եւ բնաջնջումի պետական
քաղաքականութիւնը:

Կեսարիոյ Զօրաբաժնի Հրամանատար Շէհապէտտին Հինգե-
րորդ Զօրաբանակի Հրամանատարի փոխանորդին կը տեղեկագրէ
թէ Պողազլեանի զօրակալքի պետէն հասած ծածկագիր հեռագրի մը
համաձայն երեք հարիւր Հայեր իրենց զէնքերով յարձակում գոր-
ծած են Մատէնի վրայ, եւ ուրիշ զինեալ Հայեր ալ յարձակած են
զիւղերու իսլամ ժողովուրդին վրայ:

1. Դ. Ե. Թիւ Հ 602:

Հայատառ թրքերէն բնագիր

Նումարս 2854.

Անգարա Պէշէննի Գօլթոտու
Գումանտանըղը Վէքալթինէ.
Ղայէթ միւսթէնէլ տիր.

Պողազըլյան ճիվար գազալար
ահալիսինտէն 300 քատարընըն
միւսէլլահ օլարաք, Մատէն գա-
զաւընըն Պոհպերան ճիվար իսլամ
գարիլէլթինէ թեճավուլէ իյքալ
թահրիպաթ էլլէտիքլէրի շիմտի
Մատէն գայմագամըղընտան կէ-
լէն թէլկրաֆնամէտէ պիլտիրիլ-
տիյի կիպի պիր գըսըմ էրմէնի
հալքըն Պողազըլյան իսլամ գարի-
լէլթինէ թեճավիւզ էտէրէք գաթլ
վէ նէհպ վէ դարաթէ ճիրաթ էթ-
թիքլէրի վէ պիր չօք սուպիյան
նիսվանըն մէրքէզէ տօղրու ճիվար
իլթիհաք էթմէքտէ օլտուքլարը
իսպար էտիլտիյի, Պողազըլյան
շուպէ թիյաստթինտէն շիմտի ալը-
նան թէլկրաֆնամէտէ պիլտիրմիշ
վէ տէմինքի շիֆրէլէ արզ օլունան
միֆրէզիմին Պողազըլյան իսթի-
քամէթինի թաքիպէն հարէքէաթի
էմրինին վերիլմիշ օլտուղու վէ պու
պապտէ ալընանաք մալիմաթըն
այրընա պիլտիրիլէնէլի արզ օլու-
նուր:

9/10 Թէմուզ 331.

Օնպէշիննի Ճըրգա Գումանտան
Վէքիլի՝
Շէհապէթթին: ²

2. Դ. Ե. Թիւ Հ 594:

Հայերէն թարգմանութիւն

Թուահամար 2854.

Հինգերորդ Զօրաբանակի
Հրամանատարի Փոխանորդին.
Խիստ ստիպողական.

Մատէնի գայմագամը ինձի կը
հաղորդէ որ մօտ երէք հարիւր
գինուած հայ գիւղացիներ Պողազ-
լեանի գաւառակի շրջաններէն
յարձակած են Պողազլեան գաւա-
ռակի սահմանակից Մատէնի գա-
ւառակի Պոհպերան իսլամ գիւղե-
րուն վրայ եւ հոն գործած են աւե-
րիշ արարքներ: Միւս կողմէ, Պո-
ղազլեանի զօրակալքի պետէն
ստացուած հեռագրի մը համա-
ձայն, այս վերջին սպան կ'իմանայ
թէ հայ բնակչութենէն ուրիշ մաս
մը յարձակած է Պողազլեանի իս-
լամ գիւղերուն վրայ, կատարելով
սպաննութիւններ եւ կողոպուտ, եւ
բազմաթիւ մանուկներ եւ կիներ
միանալու վրայ են գաւառակի
կեդրոնի գլխաւոր գիւղերուն: Քիչ
առաջուան հեռագրին մէջ յիշուած
պահակախումբին հրաման տուի
որ ուղղուի դէպի Պողազլեան: Այս
մասին ստանալիք տեղեկութիւն-
ներս առանձին պիտի հաղորդեմ
ձեզի:

9/10 Յուլիս 1915.

Տասնեհինգերորդ Զօրաբաժնի
Հրամանատարի Փոխանորդ՝
Շէհապէտտին:

Անգարայի Հինգերորդ Զօրաբանակի Հրամանատար Խալիլ Բէ-
ճաի Պէյ նուիրապետական կարգով նոյն հեռագիրը կը ղրկէ Պո-
լիս Ընդհանուր Հրամանատարի Փոխանորդ Էնվէր Փաշայի, մինչ
պատասխանելով Կեսարիոյ Զօրաբաժնի Հրամանատար Շէհապէտ-
տին Պէյի կը ղրկէ խստագոյն հրամաններ եւ հրահանգներ ճնշե-
լու արագօրէն ամէն տեսակի ըմբոստութիւն, ղրկելով ոստիկանա-
կան ամբողջ գունդը եւ տրամադրելի զէնքերու համեմատութեամբ
մարդեր հաւաքելով:

Հայաստան թրքերէն բնագիր

Հայերէն թարգմանութիւն

Ղայէթ Միսթէճէլ տիր.
Քայսերի Տըրգասը Գումանտան
Վէքալէթինէ Շիֆրէ.
Ճէվապ.

Խիստ ստիպողական.
Կեսարիոյ Զօրաբաժնի
Հրամանատարի Փոխանորդին,
Պատասխան

9/10 Թէմնուզ 331 շիֆրէյէ.

9/10 Յուլիս 1915 թուակիր
ծածկագրին:

Պողազլըյան վէ Ագտաղմատէն
գազալարը քուրաւրնտա պաշ
կէօսթերէն հարեքեաթը իսիանիյէ
վէ թեճալիզիյէնին շիտտէթ վէ
սուրաթ իլէ էհալիի սատրգէ ռէն-
ճիտէ Էտիլմէքսիզին իթֆասընը
սէֆէրպէրլիք հասէպի իլէ ճիհէթի
ասքերիյէյէ թէալիիք Էտեր մէսա-
իլտէն պուլունմաքլա Եօզղաթ
ժանտարմա թապուրունուն հէմէն
վէ քեամիլէն, վէ իճապընտա 2օ-
րում վէ Քայսերիտէն տէ գուվլէի
գաֆիյէ սէվգ վէ թահրիթի իլէ վէ
մէվաթի տէ մէվճուտ քապիլ իսթի-
ֆատէ սիլահլար ճիսպէթիտէ Էֆ-
րատ ճէլպ վէ թէալիմի սուրէթի ի-
լէ հարեքեաթը թեճալիզիյէնին
իճրաաթը սերիէ վէ միւլէսէրէ իլէ
օլտուղու ետրտէ պասթըրըմասը,
վէ պիլ հասսա 19 Շուպաթ 331
թարիլի վէ 4763 նումարալը գէլ-

Ընդհանուր գօրակոչի հրա-
հանգներուն համաձայն զինուորա-
կան իշխանութեան իրաւասու-
թեան կը պատկանի կորովի եւ ա-
րագօրէն գսպել, բայց առանց վը-
նասելու հաւատարիմ ժողովուր-
դին, ամէն ըմբոստութիւն եւ յար-
ձակողական, որոնք պայթած են
Պողազլէանի եւ Ագտաղմատէնի
գաւառակներուն մէջ:

Կը խնդրեմ որ ըմբոստութիւնը
խեղդէք տեղոյն վրայ, ազդու եւ
արագ միջոցներու շնորհիւ, անմի-
ջապէս հոն ղրկելով ոստիկանու-
թեան ամբողջ գունդը, եւ ի հար-
կին, Չորումի եւ Կեսարիոյ գունդե-
րէն առնուած ոյժեր եւ դրօշի տակ
կանչելով այնքան մարդ որքան
գործածելի զէնքեր կան պահեստի
մթերանոցներուն մէջ: Նկատի ա-

նամէ իլէ թէալիի Էտիլէն Էմրի ու-
մումիյէնին իշխանի մատուտի-
նին նազարը տիքքաթէ ալընմասը
վէ Աէթիճէի իճրաաթ վէ թաթալի-
գաթթան վէ շիմտիյէ գատար
հաճկը գարիյէլէրինին Աէհպ ու
ղարաթ վէ քիմլէրին գաթլ օլուն-
տուղունա տաիր մալիմաթ վէրիլ-
մէսի ինթիզար օլունուր:

նէք տրամադրութիւնները երրորդ
յօդուածի ընդհանուր հրամանին,
գոր ձեզի ղրկեցի իբր յաւելուած
19 Փետրուար 1915 թուակիր եւ
4763 թուահամար հաղորդագրու-
թեամբ: Ինճի իմացուցէք ձեռք
առնուած միջոցները եւ ձեռք բեր-
ուած արդիւնքները, ինչպէս նաեւ
տեղեկութիւններ այն անձերուն
եւ զիւղերուն մասին, որոնք սպան-
նուեցան կամ թալանուեցան մինչ-
եւ այսօր:

10 Թէմնուզ 331.
Գօլթօրտու Գումանտանլըրը՝
Խալիլ Բէճաի: 3

10 Յուլիս 1915.
Զօրաբանակի
Հրամանատարութիւն՝
Խալիլ Բէճաի:

Եռօրդատի Ոստիկանապետ Թէվֆիք Պէյ կատարելիչ ձէմալ
Պէյի տեղեկագրած էր թէ գաւառի զիւղերուն մէջ Հայեր ըմբոս-
տութեան դիմած էին, եւ թէ հարկ անհրաժեշտ էր այդ զիւղերէն
հեռացնել Հայերը եւ անոնց տեղ բնակեցնել իսլամներ: այսպէսով
ան կը յուսար բնաջնջել Հայերու արմատը այդ գաւառին մէջ:

Ձէմալ Պէյ անձամբ կրնար քննութիւն կատարել եւ հաստատել
իրողութիւնը: Ան պատասխանելով Անգարայի Փոխ Կուսակալ Ա-
թրֆ Պէյի հրամանին տարագրելու Եռօրդատի Հայերը, կը հաստա-
տէ թէ Ագտաղմատէնի գայմազամէն հասած հեռագիր մը կը վկայէ
թէ անհիմն են շրջան ընող աղմուկները եւ թէ Թէվֆիք Պէյի տեղե-
կագրի հաղորդած զէպքերը չափազանցուած են:

Պաշտօնով հոն ղրկուած Հազարապետ Ահմէտ Պէյի հեռագիրն
ալ կը վկայէ թէ գաւառակին մէջ կարգապահութիւնը կատարեալ է:
Գայմազամներն են որ իրենց հեռագիրներով կը ստեղծեն անհիմն
զէպքեր եւ թէ տեղւոյն վրայ ոստիկաններն ու ամբողջը կը կողոպ-
տեն Հայերու ինչքերն ու կը թալանեն անոնց տունները:

3. Դ. Ե. Թիւ 4 595:

Անգարա Վիլայէթի մէքթուպը-
լըղը. առէտ Եօզդաթ միթասըրըֆ-
լըղընտան 11/12 Թէմնուզ 331
թարիխի վէ 138 նումարալը շիֆ-
րէ թէկրաֆնամէտի մահլուլը.

Պողազլըյան գայմագամ վէքա-
լէթինտէն տին կիճէ ալընան թէկ-
կրաֆնամէտէ Մուրսատիղ վէ
Գանլընանըն Չիֆթլիղի վէ Գայա
Փունարը գարիյէլէրինէ ֆիրարի
էրմէնիլէրին պիլ հիւնիւմ իյգայը
թահրիպաթ էթթիքլէրի վէ Պէք-
թաշը գարիյէտի էհալիսինին պէ-
րաի թա'ագիպ կիթթիքլէրէ իխ-
պար էտիլմէտի իզլէրինէ, ժան-
տարմա կէօնտէրիլմիշ իսէտէ,
մէվնուտ գուվլէթ սէմթի մուխալի-
ֆէտէ պուլունան գայմագամը գա-
գա նէգտինտէ պուլունտուղուն-
տան մէրքէզնէ իճրաի իճապը ի-
շասար վէ պու կիճէ ալընան թէկը-
րաֆնամէտէ տախի պու պապտա-
քի շայիէթըն պիյազ վէ էսաս օլ-
տուղը իզպար գըլընմըշտըր, գու-
րատան ավտէթ էտէն Ագտաղմա-
տէնի գայմագամընտան շիմտի ա-
լընան թէկրաֆնամէտէ ժանտար-
մա թագըմ գումանտանը թարա-
ֆընտան իշասար էտիլէն մուամէ-
լէլէրին փէք գիյատէ իզամ էտիլ-
միշ պուլունտուղու վէ վագայը մէգ-
քիւրէն գայմագամ վէքիլի իլէ
ժանտարմա թագըմ գումանտանը
թարաֆլարընտան միշթէրիքլէն
ալընըպ պիր սուրէթի 9 Թէմնուզ

Անգարայի կուսակալութեան
քարտուղարութեան ուղղում,
Եոզդատի կառավարութեան 11/12
Յուլիս 1915 թուակիր եւ 138
թուահամար ծածկագիր հեռագրի
լուծումն է:

Երէկ իրիկուն ստացուած հե-
ռագրով Պողազլէանի գայմագամի
փոխանորդը ինձի կ'իմացնէր որ
փախստական Հայեր յարձակած
են Մուրսատիղ, Գանլընա Չիֆթ-
լիկ եւ Գարա Փունար գիւղերու
վրայ, թէ հոն գործած են աւերներ
եւ թէ Պէկթաշի գիւղի բնակիչները
հետապնդած են զանոնք: Ան Կ'ա-
ւելցնէր որ ոստիկանութիւնը ղըր-
կուած է տեղւոյն վրայ: Տրամադ-
րելի ոյժեր ընկերացած են գայմա-
գամին որ կը գտնուի ուրիշ կէտի մը
վրայ. ինք անձամբ ըրած է հարկ
եղածը գլխատր կիդրոնին մէջ:
Այս գիշեր ստացուած հեռագրով մը
ինձի կ'իմացնէ թէ այս բոլոր աղ-
մուկները անհիմն են: Ագտաղմա-
տէնի գայմագամը որ նոյն շրջանի
գիւղերէն վերադարձած է, այժմ
ինձի կը հեռագրէ որ ոստիկանու-
թեան հատուածի հրամանատա-
րին տեղեկագրած դէպքերը շատ
չափազանցուած են եւ Տէրէ Գափ-
լանընի պատահարը որու մասին
կը խօսուի նոյն գաւառի գայմագա-
մի փոխանորդին եւ ոստիկանու-
թեան հատուածի հրամանատարի
9 Յուլիս 1915 թուակիր հաւաքա-

331 թարիխի 131 նումարալու թէկ-
կրաֆնամէի աճիզանէմ գիրինէ
տէրն օլունան 9 Թէմնուզ 331 թէկ-
կրաֆնամէտէ մէվգուի պահս օլան
Տէտէ Գափլանըն գարիյէտի վա-
գըասընըն գարիյէի մէգքիւրէ ճի-
վարընտա տօլաշտըղը կէօրիլէն
պիր իքի աքէր ֆիրարիսինէ
պաշգա պիր նամ վէրիլմէքտէն ի-
պարէթ պուլունտուղու պիլտիրիլ-
միշտիր. Ագտաղմատէն գագասը
շուպէ ըիյասէթինէ թային օլունուպ
էվվէլքի կիճէ պուրատան հարէքէ-
աթ էտէն պինպաշը Ահմէտ Պէլ
թարաֆընտան պու ազշամ ալը-
նան թէկրաֆնամէ սուրէթի գիրէ
տէրն էտիլտի. լէտիլիսթիգահ
ժանտարմա թապուր գումանտանը
թարաֆընտան Թէրզիլի վէ ճիվա-
րը գուրատա թօփլատըլարաք,
Սիվաս վիլայէթինին թալապը ի-
զլէրինէ Սիվասա կէօնտէրտիյի
թագըմը իլէ արզ ու թագտիմ գըլը-
նան էվրագ թահգիգիյէտիստէ պէ-
յան օլունան 169 քիշի սէվգէտիլ-
տիքթէն սօնրա, գիգըյմէթ էշեա-
լարընըն ալընըպ պէրապէր կէօ-
թիւրիլտիյի քէօյ պօշ պրագըլտը-
ղընտան պագի մէվնուտ էմվալըն
ահալի թարաֆընտան էաղմա է-
տիլտիյի սէօյլէմէքթէ պուլունտու-
ղու վէ պունուն թահգիգի իշին պիր
մէմուրըն իզամը լագըմ էտէն պին-
պաշը միւմաիլէյի թարաֆընտան
մաքինա պաշընտա իֆատէ գըլըն-
մըշտըր: Թահգիգաթըն քէնտիսի-
նէ հավալէ էտիլէնէլի պիլտիրիլմիշ

կան հեռագրին մէջ, որմէ օրինակ
մը հողորդեցի ձեր գերագանցու-
թեան, նոյն թուականի իմ հեռագը-
րիս շարունակութեան մէջ, կը վե-
րածուի սխալ որակումի մէկ կամ
երկու փախստականներու, որոնք
նշմարուած են նոյն գաւառակին
շուրջ դեգերելու ընթացքին: Ստո-
րեւ ձեր գերագանցութեան կը փո-
խանցեմ պատճէնը հեռագրի մը
գոր ստացայ այս իրիկուն Ահմէտ
Պէլէն որ Ագտաղմատէնի գաւա-
ռակի հատուածին պէտ նշանա-
կուած է, եւ որ մեկնեցաւ առջի գի-
շեր իր պաշտօնատեղին հասնելու
համար: Ահմէտ Պէլ քիշ առաջ հե-
ռաձայնով ինձի հողորդեց որ աղ-
մուկներու համաձայն 169 հոգի,
որոնց քննութեան թղթածրարները
ձեր գերագանցութեան կը փոխան-
ցեմ, ձերբակալուած ըլլալով Թէր-
զիլի գիւղերուն եւ շրջանակնե-
րուն մէջ ոստիկանութեան ջոկատի
հրամանատարին կողմէ հարցա-
քննուելու համար, Սեքաստիա պի-
տի դրկուէին նոյն նահանգի կու-
սակալին խնդրանքով: Երբ մեկնե-
ցան, իրենց պատկանող ամէն ար-
ժէքատր առարկաները միասին
տարուեցան, եւ որովհետեւ գիւղե-
րը պարպուած էին, լքեալ գոյքեր
կողոպտուեցան մնացած ժողո-
վուրդի կողմէն: Ան (Ահմէտ Պէլ
Գ) կը կարծէ թէ անհրաժեշտ է
հոն դրկել պաշտօնեայ մը ամէն
ինչ յստակ կերպով քննելու պաշ-
տօնով: Իրեն պաշտօն տուի որ

իսէտէ, մէշողուիչէթիցն միսսիտ
օլմատըղընը իֆատէ էտիչօր: Մա-
րուզաթօր մէպտութատան մալում
(վիլայէթ փէնահիլէրի) պուլուրու-
լանաղը իզէրէ, գայմագամլար-
տան ախիրէն վագը օլան իշարաթ
էվվէլնէ վէրիլէն մալիմաթը գըս-
մէն թէքզիպ էլլէմէթթէ պուլուն-
մուշ, գագալարտան վէգայիի մի-
թէհատիսէ հագգընտա էվվէլ վէ-
ախիր վէրիլէն մալիմաթըն թէմա-
միի իթիմատէ շայան կէօրիլմէթ-
թէ, վէ պինպաշը Ահմէտ Պէլիս ի-
շարը տախի լագըմ ութթահգիգ է-
հէմմիլէթի հարգ կէօրիլմէթթէ
տիր. տին կիճէ թաֆսիլէն արգ
էթթիլիմ մագէրէթ սէպէպիլլէ մէր-
քէգտէն ինֆիքաթէ ճէսարէթ է-
տէմէտիլիմ կիպի լիվանա մէմու-
րիսի միլքիլէտէն պու իշի թահգիգ
էտէպիլէնէթ օլանլարտան լիվա-
նըն մէմուրիսի ինգիպաթիլէտիս-
տէն մա'ատուտ օլունտուղունտան
օնլարըն ինֆիքաթլէրի մուվաֆըթ
տէլիլտիր: Մատէն վէ Պօղազը-
լան ճիհէթլէրիսէ իզամ գըլընան
ժանտարմա թապուր գումանտա-
նընա հավալէի թահգիգաթ էտիլ-
միշ օլսա իտի, պինպաշը Ահմէտ
Պէլիս իֆատէ վէ իշարընա մէվ-
գուր պահս օլան հարէքէաթի մի-
մախիլէրիսն մայիլէթիստէ պուլու-
նան ժանտարմալար թարաֆըն-
տան վուգուա կէլմիշ օլանաղը ճի-
հէթլէ թահգիգաթ պիթթապի իթ-
մատէ շայան օլամագ: Պիւնէնա-
լէլի մէվգի գումանտանը վէ եա-

ինք անձամբ կատարէ այս քննու-
թիւնը, բայց ան պատասխանեց թէ
իր գբաղումները իրեն չեն թոյլատ-
րեր: Ինչպէս ձեր գերագանցութիւ-
նը պիտի անդրադառնայ կարդա-
լով ինչ որ ըսուեցաւ վերեւ, գայ-
մագամներու վերջին հաղորդագ-
րութիւնները կը հերքեն մասամբ
իրենց նախապէս տուած տեղեկու-
թիւնները: Տեղի ունեցած դէպքե-
րու մասին գաւառակներու կողմէ
տրուած տեղեկութիւնները արժա-
նի չեն բացարձակ հաւատքի եւ
միւս կողմէ հազարապետ Ահմէտ
Պէլի յայտարարութիւնները այն-
պիսի կարեւորութիւն ունին որ
պէտք է ճշդել զանոնք: Այն պատ-
ճառներուն համար գորոնք պատի
ունեցայ երէկ իրիկուն ձեր գերա-
գանցութեան ենթարկելու, քաջու-
թիւն չունիմ գլխատր կէդրոնէն
բացակայելու եւ գիւղախումբերու
պաշտօնեաներուն ալ չեմ կրնար
վստահիլ այդ գործը, որովհետեւ
անոնք ապահովութեան պաշտօն-
եաներ ըլլալով չեն կրնար առանց
անպատեհութեան բացակայի ի-
րենց տեղերէն: Եթէ քննութիւնը
յանձնուի ոստիկանութեան ջոկա-
տի հրամանատարին, որ ղրկուած
է Պողազլեան եւ Ագտաղմատէն,
այս քննութիւնը Ահմէտ Պէլի ը-
սածներուն համաձայն, մեղադրելի
դէպքերը իր հրամանին տակ աշ-
խատող ոստիկաններու գործն է:
Կը խնդրեմ ուրեմն որ ձեր գերա-
գանցութիւնը բարեհաճի նշանա-

խօտ Ագտաղմատէնի շուպէ ռէիսի
պէլլէրին մէսաիլ մէգքիւրէլի թահ-
գիգ իշին աճիլէն մէվագի մէգքի-
րէլէ իզամընա միսաատէ պուլու-
րուլմաը մարուգտուր:

11/12 Թէմուգ 331.
Միթէսարըֆ'
Ճէմալ: 4

կել եւ ղրկել տեղույն վրայ քննու-
թիւն կատարելու համար տեղի ու-
նեցած դէպքերուն մասին, ըլլայ
տեղույն հրամանատարը, ըլլայ
Ագտաղմատէնի հատուածի պէտք:
11/12 Յուլիս 1915.
Կատավարիչ՝
Ճէմալ:

*Վերեւի պաշտօնական տեղեկագիրը որ հիմնաւորուած է ուրիշ
պաշտօնական տեղեկութիւններու եւ քննութեան վրայ, պարզա-
պէս ցոյց կու տայ թէ տեղական իշխանութիւնները, պաշտօնեանե-
րը եւ ժողովուրդը, ոստիկանները կը ստեղծէին չափազանցուած
պատրուակներ կոտորելու համար տեղացի Հայերը եւ կողոպտելու
անոնց շարժուն գոյքերը եւ անշարժ կալուածները: Ագտաղմատէ-
նի գաւառակին մէջ նոր պաշտօնի ղրկուած Ահմէտ Պէլի ծածկագիր
հեռագիրը ցոյց կու տայ իրերու իսկական կացութիւնը: Հազարա-
պետ Ահմէտ Պէլ կը վկայէ թէ գաւառակի մէջ կատարեալ կարգա-
պահութիւն կը տիրէ: Ոստիկաններուն չար օրինակին հետեւելով
ամբողջն ու ժողովուրդը զիմած են Հայերու ինչքերը թալանելու:
Ան կը խնդրէ որ ատեաններու ղիմում ըլլայ եւ իրողութիւնը երե-
ւան գայ.*

Հայատառ թրքերէն բնագիր

Հայերէն թարգմանութիւն

Ահմէտ Պէլիս թէլէկրաֆը.
Սուրէթ.

Ահմէտ Պէլի հետագիրը.
Պատճէն.

Գագանըն ասայիշիստէ մուհիմ
պիր հալ եօթթուր. Աէթիճէ իթիպա-
րը իլէ սուի թէֆէհիմտէն իպար-
րէթթիր. պու տա Թէրգիլի վու-
գուաթընտան Աէշ'էթ էթմիշտիր.
վուգուաթ մէգքիւրէ մագամը մի-
թէսարըֆիլէրիսնէ մալումտուր,
պու խուսուստա միպէլլէլ էմիր

Գաւառին մէջ հանրային կար-
գապահութիւնը կատարեալ է:
Խնդիրը վերջնականապէս դիրի-
մացութիւն է: Թէրգիլիի պատա-
հարին արդիւնքն է: Այս դէպքը ձե-
գի ծանօթ է: Ինձի ծանօթ չէ այն
հրամանը որ այս մասին տրուած
է: Թէրգիլիի դէպքէն ի վեր, ոչ թէ

4. Դ. Ե. Թիւ 2 597 — 2 598:

պէնճէ մեհուկտոր. սերահաթը
գափիյէ իթասը միսթերհամտիր:
Թերգիլի վուգուաթընտան ժան-
տարմալար միսթէֆիտ օլտուգլա-
րը կիպի էհալի տախի եաղմա էթ-
միշլէր: Պունլարտան տօլայը հա-
վըֆ վէ խաշիյէթթէն տաղլարա չը-
գան էհալիտէն պագըլարընըն չէ-
թէլէր կէլիյօր տիյէ, եալլարը
պօղարագ էհալիյի հէլէճանա տի-
շիրմիշլէրտիր: Գագա տախիլին-
տէ հիշ պիր ֆէրտէն պուռնու գա-
նամամըշտըր: Մէսէլէնին թահգիգ
պույուրուլմասը խալիսիտէ մա-
գամաթա էտիլմէք իզրէ իշարըն
պէլլէրիմ:

11/12 Թէմուզ 331.
Պինպաշը Ահմէտ: ⁵

*Կեսարիոյ 15րդ Զօրաբաժնի Հրամանատար Շէհապէտտին
Պէյ Անգարայի Զօրաբանակին կը հաղորդագրէ թէ ինք տեղւոյն
վրայ զրկած էր պահակախումբ մը հոն կարգ ու կանոն վերահաս-
տատելու համար, սակայն նոյն պահակախումբի հրամանատարը
կը վկայէ թէ որեւէ հայկական ըմբոստացումի նշան անգամ գոյու-
թիւն չունի հոն, թէ գիւղերու Հայերը արդէն մաքրագործուած են,
իսկ մնացողները չեն համարձակիր նոյն իսկ իրենց տուներու սե-
մերէն դուրս ելլել: Ան դարձեալ կը հաստատէ թէ հայ գիւղերը
զրկուած ոստիկանները եւ գինայրեր, ինչպէս նաեւ ամբօխը սկը-
սած են կողոպտել Հայերու ինչքերը.*

Յ. Դ. Մ. Թիւ 2 599:

միայն զինայրեր օգտուեցան, այլ
նաեւ բնակչութիւնը կողոպուտի
դիմեց: Այս իրողութիւններու առ-
ջեւ անոնք որոնք խուճապէ տար-
ւած, լեռները փախան, պոռացին
որ հրոսակներ կը մօտենան: Այս
բանն է որ յուզում պատճառած է
ժողովուրդին: Գաւառի սահման-
ներէն ներս ոչ մէկ կաթիլ արիւն
թափած է որեւէ անհատի քթէն:
Անկեղծօրէն կը խնդրեմ որ հրա-
հանգներ տաք տարբեր ատեն-
ներու որպէսզի քննութիւն կա-
տարուի եւ պատահարի իրակա-
նութիւնը հաստատուի:

11/12 Յուլիս 1915.
Հագարապետ Ահմէտ:

Հայատառ թրքերէն բնագիր

Ծիֆրէ մահլուլը.
Նումարա 169.

Անգարա Գօլթրտու Գուման-
տանլըղընա.

Պողազլըյան գագաը տախի-
լինտէ հարէքեաթը իսիանիյէլէ
տաիր հիշ պիր տէլաիլ օլմատըղը
վէ պու գագայա մէրպութ էրմէնի-
լէրին մէքիւն պուլունտուլարը,
գուրա քեամիլէն տէնիլէճէք տէրէ-
ճէտէ գայմագամը գագա վէ նահի-
յէ միտիրանը, թարաֆընտան
թաթհիր էտիլտիյի վէ գուրատա
գալան էրմէնի աիլլէրիինն չօ-
ճուգլարը, տէյիլ սագին պուլուն-
տուգլարը գարիյէլէրինն չըգմագ,
հաթթա խանէլլէրիինն գափուլա-
րընըն էօնլէրինն պիլէ չըգարա-
մագթա օլտուգլարը վէ ահվալը
միւսսիֆէտէն պիրիտէ գագա
տախիլինտէ ժանտարմա իքմալ
էֆրատը, չէրքէգ սուվարի պիր
եաղմակիրլիք հէօքիւմ ֆէրման
թարաֆլարընտան էրմէնի գարիյէ-
լէրինտէ տէհշէթլի պիր եաղմա-
կիրլիք օլաճաղը միֆրէգէ գու-
մանտանլըղընըն իշարընտան ան-
լաշըլտըղը վէ մէվագիտէ տէվամ
էտէն պու եաղմաճըլըղընն նէ տէ-
րէճէ սու թէսիր վէ սիրաքէթ էտէ-
ճէլի վէ նէ կիպի ահվալընն հուտու-
սունա սէպէպիյէթ վէրէճէլի վար
իսէտէ, արգ վէ իզահ պուլունտու-
ղումիհէթլէ շէտիտէն մէնիի էսպա-
պընըն իսթիքմալը:

Հայերէն թարգմանութիւն

Ծածկագրի լուծում.
Թուահամար 169.

Անգարայի գօրաբանակի
հրամանատարութեան.

Պահակախումբի հրամանատա-
րը ինձի կ'իմացնէ թէ Պողազլեա-
նի գաւառակին մէջ ոչ մէկ ըմբոս-
տական շարժումի նշան կայ, թէ
այս գաւառակի հայաբնակ գիւղե-
րը կարելի է ըսել թէ բոլորովին
մաքրագործուած են թաթհիր գայ-
մագամի եւ գիւղախումբերու շա-
հապներուն վերահսկողութեամբ:
Ոչ թէ միայն այս գաւառակի մէջ
մնացած հայ ընտանիքներու գա-
ւակները իրենց բնակած գիւղերուն
մէջ չեն շրջիր, այլ նաեւ չեն հա-
մարձակիր իրենց ոտքերը դուրս
դնել իրենց դռներու սեմերէն: Այս
գաւառակի մէջ յառաջ եկած ցա-
ւալի երեսոյթներէն մին սաստիկ
թալանն է գոր կը գործեն հայ գիւ-
ղերու մէջ ոստիկանութեան լրա-
ցուցիչ ⁶ մարդերը, չէրքէգ ձիա-
ւորները. կերպապէս արգիլելու
է որ այս իրերու կացութիւնը
չշարունակուի, որովհետեւ ա-
ւելորդ է շեշտել այն յոռի տպա-
ւորութիւնը գոր յառաջ կը բերէ
այս կողոպուտը, եւ այն ծաւա-
լը որ կրնայ առնել եւ այն հե-
տեանքները որոնք տեղի պիտի
ունենան:

14 ԹԷմմուգ 331.

Ճըրգա Օնպէշ
Գումանտան Վէքիլի՝
Շէհապէթթին: 7

14 Յուլիս 1915.

Տասնեփնգերորդ Զօրաբաժնի
Հրամանատարի Փոխանորդ՝
Շէհապէտտին:
Բնագրին յար եւ նման է.

27 Յունուար 1919.

Իշպու աւլընա մութապըքթըր.
27 Գանունըսանի 335.
Իսմաիլ Բիֆաաթ Եիզպաշը:
Միհիւր, Պէշիմնի Գօլօրտու:

Կնիք, Հինգերորդ Զօրաբանակ,
Առաջին գունդի դասապետ
Աւագ Հարիւրապետ
Իսմայիլ Բիֆաաթ:

Միութիւն եւ Յառաջդիմութիւն կուսակցութեան Կեդրոնա-
կան Կոմիտէի կողմէ Օսմանեան Կառավարութեան պարտադրուած
եւ Օսմանեան իշխանութիւններու կողմէ որդեգրուած բնաջնջումի
պետական քաղաքականութիւնը արդարացնելու համար Օսմանեան
զօրաբանակներու եւ բանակներու Ընդհանուր փոխ Հրամանատար
եւ Պատերազմական Նախարար էնվէր Փաշա զօրաբանակներու եւ
բանակներու հրամանատարներուն զրկեց 14 Յուլիս 1915ին, 6432
թուահամար շրջաբերական հրամաններ եւ զանոնք ստիպեց որ

6. Ժամանակ, 6 Մարտ 1919, էջ 4, սիւնակ 3, 11րդ դատավարութիւն: Միւ-
թէսարըֆ ձէմալ պէյ կը վկայէ Պատերազմական Ատեանի առջեւ թէ Եողզատի
զինայրերու հրամանատար Թէվֆիք Պէյ «Կարգ մը շէթէներ պատրաստեց է Հա-
յերը կոտորելու համար:»

Հայ Յեղափոխական Կուսակցութիւններ, թրքերէն բնագրէն թարգմանուած,
հրատարակութիւն Տաճարի, Պոլիս 1916: Աշխարհի վրայ ոչ մէկ կառավարու-
թիւն, քաղաքային կամ գիւնուորական, յեղափոխական կամ վարչական, ոչ
պատերազմի եւ ոչ ալ խաղաղութեան ատեն, իրաւունք ունի իր հպատակները
մահուան դատապարտելու եւ զանոնք տեղահանելով կոտորել տալու: Վերեւ
յիշուած հատորի եւ ուրիշ հատորներու մէջ Հայերու դէմ եղած բոլոր թուրք
ամբաստանութիւնները եւ զրպարտութիւնները, ինչպէս նաեւ բոլոր թուրք
հրապարակագիրներու եւ պատմագէտներու հատորներուն մէջ Հայերու պաշ-
տօնապէս եւ անպաշտօն կերպով վերագրուած պատասխանատու արարքները,
եղեոնափորձերը, եւ դեռ աւելին, եթէ կայ, նոյնիսկ եթէ ամբողջովին իրական
եւ ճշմարիտ ըլլային, դարձեալ թուրք կառավարութեան իրաւունք չէին կրնար
տալ բոնի տեղահանելու եւ ճամբու ընթացքին բնաջնջելու կիներն ու մանուկ-
ները:

7. Գ.Ն. թիւ է 304:

նոյն շրջաբերական հրամանները ցրուեն իրենց ստորակարգ հրա-
մանատարներուն: Էնվէր Փաշա կը հրամայէր անհրաժեշտ կեր-
պով հաւաքել եւ պահել Հայերու ըմբոստական շարժումներու տե-
ղի ունեցած օրէ օր պատահարները, ասոնց առընչութեամբ վաւե-
րագրերը եւ պաշտօնական վկայութիւնները, գործող անձերու
լուսանկարները, գործուած ոճիրները եւ դէպքերը, ինչպէս նաեւ
պատրաստուած մատեաններէն պատճէն մը զրկելու ամէն ամիս
պատկան իշխանութեան անհրաժեշտօրէն:

Հայատառ թրքերէն բնագիր

Հայերէն թարգմանութիւն

Նումարա 6432.

Շիֆրէ մահլուլուտըր.

Գօլօրտու Գումանտանըզպարընա.

Թուահամար 6432.

Մածկագրի լուծում.

Զօրաբանակներու հրամանա-
տարներուն.

Բացարձակապէս՝

Էրմէնի հարեքեաթը իխթիլալի-
լէսինէ թաթպիգ Էտիլէն թէտապիր
վէ իճրա՛աթըմըզը ալէմ նագարը-
նա մուհագգագ կտօթերտէք տէ-
լաիր վէ վէսաիգին կիւնի կիւնի-
նէ միւնթագամէն գայտ վէ զապթ
Էտիլմէսի, վէ պիթիւն պուլարըն
պիր թիսալէտ նէշրի փէք էլզէմ
կէօրիվմիշտիր: 8

անհրաժեշտ է հաւաքել եւ պահել
կանոնադրապէս օրէ օր բոլոր ա-
պացոյցները, բոլոր վաւերագրերը
որոնք բնոյթ ունին աշխարհի աշ-
քերուն առջեւ արդարացնելու մեր
այն վերաբերումը եւ մեր այն մի-
ջոցները զորոնք որդեգրած ենք
խորտակելու համար հայ յեղափո-
խական շարժումը, որպէսզի ա-
նոնք հրատարակուին գրքոյկներու
ձեւով: 9 Մինչեւ այսօր պատահած
դէպքերը, պարագաները, եթէ
կարելի է, ըմբոստներու անուն-
ները, անոնց լուսանկարները, ա-
նոնց մեզի պատճառած վնասնե-
րը, մեր վիրաւորեալներուն թիւը,
վնասներուն գումարները, եւ զոհե-
րու անունները եթէ կը պատկանին

8. Ընդգծումը բնագրին մէջ:

որ, վե այտա պիր պու տեֆթերլե-
րին պիր սուրէթի տօղրուճա գա-
րարկեահը ումումիյէ կեօնտերիլ-
մէլիտիր. պու խուսուստա էհէմմի-
յէթլէ թամիմ էտիլմէսի թիճա էտե-
րիմ:

14 Թէմուզ 331.
Հարպիյէ Նազըրը՝
Էնվեր: 10

*Էնվէր Փաշայէն հասած հրամաններու օրինակը իւրաքանչիւր
զօրաբանակի հրամանատարը զրկեց զօրաբաժիններու հրամանա-
տարներուն եւ ստորաբաժանումներուն, ինչպէս Անգարայի Հին-
գերորդ Չօրաբանակի Հրամանատար Խալիլ Բէճաի Պէյ 15 Յուլիս
1915ին շրջաբերականով մը Անգարա նահանգի մէջ իր իրաւասու-
թեան տակ գտնուող զանազան զօրաբաժիններու հրամանատար-
ներուն եւ պատկան իշխանութեան.*

Հայատառ թրքերէն բնագիր

Նումարա 2902.
Գօլթօրու Ախալ Ասքեր Հէյէթի
Բիյասէթինէ Թէզքերէ,
Ֆրրգա Օնիւշ Գումանտանլըրը
Վէքալէթինէ թէզքերէ,
Ֆրրգա Օնտօթ Գումանտան-
լըրը Վէքալէթինէ Թէզքերէ,

9. Թուրք կառավարութիւնը 1916ին հրատարակեց արաբատառ թրքերէն
հաստը մը՝ էրմէնի Գօմիթէլէրինի Հարէքեաթը իխթիլալիլէրի Մէշրուօիյէթթէն
Էնվէլ վէ Սօնրա, եւ նոյն հաստրի Գաղղիերէն թարգմանութիւնը:

10. Գ.Ն. Թիւ Հ 602:

քաղաքային բնակչութեան, պէտք
է անպայման ոճիրներու մատեան-
ներուն մէջ տեղ գտնեն եւ ամէն
ամիս նոյն մատեաններէն օրինակ
մը զրկուի ուղղակի ընդհանուր
սպաշակոյտին: Կը խնդրեմ որ շր-
ջաբերականով մը անպատճառ
տեղեկացնէք առ որ անկ է, ինչ որ
ըսուեցաւ վերեւ:

14 Յուլիս 1915.
Պատերազմական Նախարար՝
Էնվեր:

Հայերէն թարգմանութիւն

Թուահամար 2902.
Ջեկոյց՝
Չօրաբանակի Զինուորագրու-
թեան Նախագահութեան,
Տասներեքերորդ Չօրաբաժնի
Հրամանատարի Փոխանորդու
թեան,

Ֆրրգա Օնպէշ Գումանտանլըրը
Վէքալէթինէ թահիրաթ,
Մէրքէզ Գումանտանլըրընա
Թահիրաթ.

1. Էրմէնիլէրին հարէքեաթ վէ
թէշէպպիսաթը իխթիլալիլէսինէ
աիտ կիւնէ գատար վուգուա կէլմիշ
վէ պատեմատէ վուգուա կէլէճէք
վէքայիին կիւնի կիւնիէ թէքմիլ
թահսիլաթըլլա գայտընա մախ-
սուս օլմաք իզրէ պիր վէգայը
տեֆթերի թութուլաճաք վէ պու
տեֆթերին պիր սուրէթի այընն ճի-
հայէթինտէ պուրայա կեօնտերի-
լէճէքտիր:

2. Իշպու տեֆթերէ վէգայինըն
թարիխ վէ մահալի վէ միւմքին
օլտուղու գատար էրպասալը գըլլամ
վէ թեճավուզ վէ եա իխթիլալըն
էսամիսի վէ ֆօթօկրաֆլարը վէ
պիզէ վերտիքլէրի թէլէֆաէ վէ
մէճրուի վէ զիյան վէ խըսար մըզ-
տարըլլա գարար տիտէ օլան էհա-
լինին իսիմլէրի մուլաք տեֆթե-
րի մէզքիւրէ կէշիրիլմիշ պուլու-
նաճաքտըր:

3. Իշպու տեֆթերին սրհէթլէ
պիր սուրէթի թութուլարազ պիր
սուրէթինին հէր այ ճիհայէթինտէ
միւնթաէմէն կեօնտերիլմէսինէ է-
հէմմիյէթլէ թալէպ էտերիմ:

4. Պու կիւնէ գատար օլան վէ-
գայի հագգընտաքի տեֆթեր սու-

Տասներեքերորդ Չօրաբաժնի
Հրամանատարի Փոխանորդու-
թեան, Հաղորդագրութիւն՝

Տասներեքերորդ Չօրաբաժնի
Հրամանատարի Փոխանորդու-
թեան,

Կեղրոնի Հրամանատարութեան
Հաղորդագրութիւն՝

1. Հայերու շարժումներուն եւ ըմ-
բոստական յարձակումներուն ա-
ռընչութեամբ մինչեւ այսօր տեղի
ունեցած եւ ասկէ վերջ տեղի ունե-
նալիք դէպքերը օրը օրին անթերի
եւ մանրապատում արձանագրելու-
է մասնաւոր տեսրակի մէջ եւ այս
տեսրակէն օրինակ մը ամէն ա-
մըսուան վերջաւորութեան պէտք
է հոս զրկուի:

2. Նոյն տեսրակին մէջ ար-
ձանագրելու է թուականն ու վայ-
րը եւ եթէ կարելի է դէպքերը, դե-
կավարողներու յարձակումներուն
եւ կամ խոտվարարներուն անուն-
ները եւ լուսանկարները, եւ մեզի
անոնց պատճառած կորուստները,
անոնց վիրատրած անձերու ա-
նունները եւ մեզի հասցուցած վը-
նասներու կարեւորութիւնը թիւե-
րով եւ ժողովուրդէն վնասուած
անձերու անունները պէտք է անց-
նին նոյն տեսրակին մէջ:

3. Այս տեսրակէն օրինակ մը
պիտի պատրաստուի եւ պէտք է
զրկուի ամէն ամսուան վերջաւո-
րութեան կարգաւոր կերպով, այս
է կարեւոր պահանջը:

4. Կը խնդրուի որ մինչեւ այսօր

րէթինն Թէմնուգ Գիհայէթինտէ
իրսալը մաթուպտուր:

15 Թէմնուգ 331.

(Պէշիննի Գօլօրտու Գումանտան
Վէքիլի՝
Միրալայ Խալիլ Րէճահի:)¹¹

Տեղական իշխանութիւններու կողմէ զրկուած տեղեկութիւնները շինծու ըլլան թէ իրական, անոնք ժողովուրդին, ոստիկանութեան եւ հրոսակներուն համար ստեղծեցին անհրաժեշտ կարծուած պատրուակները հանրային կարծիքին մէջ բնաջնջելու համար Հայերը եւ կողոպտելու անոնց շարժուն եւ անշարժ ինչքերն ու կալուածները:

Անգարայի Զօրաբանակի հրամանատար Խալիլ Րէճահի Պէյ Կեսարիոյ Զօրաբաժնի հրամանատար Շէհապէտտին Պէյի կը շեշտէ 16 Յուլիս 1915ին Հայերու ապստամբութեան մասին գայմագամներէն հասած տեղեկութիւններու չափազանցութիւնը եւ կը յանձնարարէ որ այդպիսի պատրուակներով անոնց դէմ գործունէութեան չձեռնարկուի մինչեւ որ զինուորական իշխանութիւններէն ալ հասնին ստոյգ եւ հաստատուն տեղեկութիւններ Հայերու դէմ մասնաւոր միջոցառումներու ձեռնարկելէ առաջ: Անոր կը պատւիրէ որ խիստ հրամաններ զրկէ յատկապէս արգիլելու համար Հայերու ինչքերուն կողոպտուը: Կը պահանջէ միեւնոյն ատեն շուտով ոչնչացնել իրապէս գոյութիւն ունեցող հայ հրոսակները, եւ տեղեկագրէ անոնց թուական կարեւորութիւնը, անոնց զէնքերու քանակը եւ անոնց գործած վնասները:

Հայաստան թրքերէն բնագիր

Հայերէն թարգմանութիւն

Նոմարա 2902.

Թուահամար 2902.

Մահրէմ վէ միսթաճէլտիր.

Մտերմական եւ ստիպողական.

Շիֆրէ Քայսերի Ֆրդա Գումանտանլըր Վէքալէթինէ.

Ծածկագիր հեռագիր

Կեսարիոյ Զօրաբաժնի

11. Գ.Ն. Թիւ. 4 603:

14 Թէմնուգ 331 թարիլի թէլէկրաֆնամէլէրինիգտէն Էվվէլի իշարաթըն միսպալաղալը օլտուդու անլաշըլտը. պատեմա գայմագամլըքլարըն իշարաթընա իթիպահ էտիլմէք, վէ գումանտանլարտան մալիմաթը սահիհէ ալտըգտան սօնրա, իճապը հալէ թէվասսիլ էլլէմէք միսթաճէլտիր. Էվվէլնտէ պիլտիրտիլիմ վէչիլէ պու իշլէրտէ միւնհասըրըն ճիհէթի աքէրիլէլէ մէտուլ օլաճաղընտան գումանտանլարա եէնիտէն Էվամիրի շէտիտէ իթա էտիհիգ, վէ եաղմակիրլիլի գաթիլէն մէննէթթիրինիգ իշարաթը Էվվէլիլէտէ կէրշի միսպալաղա օլտուդու անլաշըլմըշ իսէտէ, հէր հալտէ պիրքաշ չէթէննի մէվճուտիլէթի գապիլի ինքէար տէլիլտիր. պու չէթէլէրին սէրիլէն վէ շէտիտէն թէնքիլլէրի իլէ պէրապէր մըգտարլարընըն վէ եէրլէրինտէն ալընան վէ եա ալընաճաք օլան էլիհաատէտիհին իշարը, վէ եափտըղլարը խըսարաթըն տէրէճէտիհին իգահը մաթուպտուր. գումանտանլար աքէր վէ ժանտարմատան իպարէթ օլան գուվվէի մուսալլահլարընա թէմամէն սահիպ օլմալըտըր, վէ քէնտի էմիր վէ գարարլարը խարիհինտէ հիշ պիր իշ եափտըրըլմամալըտըր: Եօզդաթ սանճաղը տախիլիտէ վէ Չորում սանճաղընըն մալում օլան գազալարընտա գալան մուգիր վէ շիփիլի էրմէնիլէրին

Հրամանատարի Փոխանորդութեան.

Ընթացիկ 14 Յուլիս 1915ի ձեր հեռագիրներէն յայտնի է որ ձեր նախընթաց հաղորդագրութիւնները չափազանցուած էին: Հարկ է այսուհետև չհիմնուիլ գայմագամներու տեղեկութիւններուն վրայ եւ մասնաւոր միջոցներ ձեռք չառնել եթէ ոչ հրամանատարներու կողմէ զրկուած ստոյգ տեղեկութիւններ ստանալէ ետք: Ինչպէս արդէն ձեզի իմացուցի, զինուորական իշխանութիւններն են որոնք առանձին պատասխանատու են այս եղածներուն: Թէև ձեր նախընթաց հաղորդագրութիւնները չափազանցութիւններ կը պարունակէին, սակայն կարելի չէ որանալ քանի մը հայ հրոսակներու գոյութիւնը: Կը խնդրեմ որ կորովի եւ շուտափոյջ կերպով բնաջնջէք այդ հրոսակները եւ ինձի իմացնէք անոնց թուական կարեւորութիւնը, անոնց գէնքերուն քանակը գորոնք գրաւեցիք կամ պիտի գրաւէք, ինչպէս նաև անոնց գործած վնասներուն կարեւորութիւնը: Հրամանատարները ոստիկաններէ եւ զինուորներէ բաղկացած զինեալ ոյժերուն բացարձակ պետերն են, այնպէս որ ոչ մէկ բան կարելի է ընել անոնց հրամաններուն եւ որոշումներուն դէմ:

Եռզդատ գաւառի եւ Չորում գաւառին ենթակայ գաւառակներուն մէջ մնացած կասկածելի եւ վը-

Քայսերի տե Եսփրլտըղը կիպի ուսուլէն վէ միւնթագամէն Քայսերի թարիգիլէ մէնֆալարընա սէվգլէրիմէ, վէ զինհար ուղունսուզլըք վուգուա մէլտան վէրիլմէսիմէ սոն տէրէճէ իթինա վէ հիմմէթ լազըմտըր: ¹² Պու թէլկրաֆըն ճէվապընա վէ իշարաթընիըզըն փէլտէրփէլ իշարընա միւնթագըրըմ:

16 Թէմնուզ 331.

Պէշիմնի Գօլօրտու Գումանտան
Վէքիլի՝
Խալիլ Բէճաի: ¹³

տանգաւոր կարծուած Հայերը, ինչպէս որ եղաւ Կեսարիոյ մէջ մնացած Հայերը դրկուեցան իրենց աքլորավայրը, նոյնպէս խոհեմութեամբ եւ կարգապահութեամբ, Կեսարիոյ ուղիով, իրենց աքսորավայրը դրկել եւ զգոյշ ըլլալ որ անպատեհութիւններ առաջ չգան, վերին աստիճան խոհեմութեամբ եւ փութկոտութեամբ գործել որ յանդուգն պատահարներ չստեղծուին: Կը սպասեմ իմ հեռագրիս պատասխանին եւ ձեր հաղորդագրութեան՝ դէպքերու զարգացումին հետ:

16 Յուլիս 1915.

Անգարայի Զօրաբանակի
Հրամանատարի Փոխանորդ՝
Խալիլ Բէճաի:

Քաղաքակրթուած աշխարհի առջեւ Հայերու բնաջնջումի պետական քաղաքականութիւնը պաշտպանելու եւ արդարացնելու համար ինչպէս էնվէր Փաշա զինուորական իշխանութեան կողմէ 14 Յուլիս 1915ին զօրաբանակներու հրամանատարներուն մասնայատուկ շրջաբերականով մը հրամաններ ղրկեց, նոյնպէս ալ ներքին գործերու նախարար Թալաաթ Պէյ քաղաքային իշխանութեան կողմէ 9 Օգոստոս 1915ին մասնաւոր շրջաբերականով մը ուղղուած նահանգներու կուսակալներուն յատուկ պաշտօն յանձնեց 1914 Յուլիս ամսուան զօրակոչէն իվեր Հայերու ըմբոստական շարժումներու մասին ստիպողաբար հաւաքել ամէն տեսակի ապացոյցներ, վաւերագրեր, վկայութիւններ, լուսանկարներ:

Նահանգներու կուսակալներն ալ իրենց կարգին նոյն հրա-

12. Ընդգծումը վաւերագրի բնագրին մէջ է:
13. Գ.Ե. Թիւ Հ 611:

մանները շրջաբերականով հաղորդեցին իրենց նահանգներու իրաւասութեան ենթարկուած գաւառներու եւ գաւառակներու քաղաքային պաշտօնեաններուն եւ նոյնիսկ նահանգի զինուորական իշխանութեան.

Հայատառ թրքերէն բնագիր

Նումարա 462.
Խուսուսի մահրէմ.
Պէշիմնի Գօլօրտու Հիմայուն
Գումանտանըղը Վէքալէթի
Ալիլիսիմէ.

Սէֆերպէլիլիյին պիտայէթիմտէ վիլայէթ տախիլիմտէ զուհուր Էտէն Էրմէնի վէգաիը վէ Էհալիլէ, վէ հիւքիմէթէ գարշը վուգու պուլան թէճավուգաթ վէ հարէքեաթը իսիանիլէ վէ պունլարըն Էսպապ վէ վէսաիգիմէ տաիր իլավէթէն մութալաա իլէ պիրէր րաիօր իրսալը վէ շիմտիլէ գատար պու ճիհէթլէր հազընտա պուլունան վէ Էլտէ Էտիլէն վէսաիգ վէ ֆօթօկրաֆլէրին սուրաթը միւմքին իսէ փօթա իլէ թէսիարը իլէ պէրապէր սէֆերպէրլիքթէն մուգատտէմ իլէ կէշիրիլմիշ Էրմէնի ամալը իլաթիլալիլէսիմէ տաիր վէսաիգ մէվճուտ իսէ, օնլարընտա թօփլանտըրըլարաք այրընա իրսալը տախիլիլէ ճէզարէթի ճէլիլէսիմտէն 9 Աղօսթօս 331 թարիլս վէ 504 նումարալու շիֆրէ թէլկրաֆնամէսիլլէ իլապար պուլուրուվագլա:

Հայերէն թարգմանութիւն

Թումանար 462.
Մասնատրապէս գաղտնի.
Հիմնգերոյ Զօրաբանակի Հրամանատարի քարձրապատի
Փոխանորդին.

Ներքին գործերու նախարարութիւնը 9 Օգոստոս 1915 թուակիր եւ 504 կարգաթիւ ծածկագիր հեռագրով ինձի պաշտօն կը յանձնէ իրեն ուղղելու իմ դիտողութիւններովս տեղեկագիր մը հայկական դէպքերու մասին որոնք տեղի ունեցած են հահանգին մէջ զօրակոչէն սկսեալ ինչպէս նաեւ այն եղեռնափորձերու մասին որոնք գործուած են (իսլամ) բնակչութեան եւ իշխանութիւններու դէմ, ըմբոստական շարժումներու եւ ասոնց դրդապատճառներուն եւ առիթներուն մասին: Նախարարը ինձի պաշտօն կու տայ նաեւ թղթատարով ստիպողաբար իրեն ղրկելու բոլոր վաւերագրերը կամ լուսանկարները որոնք գտնուած են եւ որոնք կը վերաբերին այն դէպքերուն, եւ, եթէ կան վաւերագրական ապացոյցներ Հայերու յեղափոխական ձգտումներուն վերաբերեալ, որոնք ձեռք անցուած են զօրակոչէն իվեր, հաւաքել նա-

Պու պապտե պեր վէշհի էմիր մուգթեզի մալիմաթըն հեման իթասը միլիազաթա վե մեմուրէյնի միգթազիյէի մերթեզիյէտե եազըլտըղընտան գօլօրտու հիմայուննատա պունու միթէալիք մալիմաթ վե իսթիլաաթըն ինպա վե վէսաիգի լազըմէնին իսրա պույուրուլմասը թէմէննի օլունուր, օլպապտե:

10 Աղօսթօս 331.
Անգարա Վալի Վէքիլի՝
Աթըֆ: ¹⁴

Բնաջնջուամի իշխանութիւնը զինուորական իրաւասութենէն քաղաքային իրաւասութեան փոխանցուելէ ետք, Անգարայի Հինգերորդ Զօրաբանակի Հրամանատար Խալիլ Րէճաի Պէյ գործակցելով նոյն նահանգի քաղաքային իշխանաւորին հետ, իր ստացած հրամանները հողորդեց շրջաբերական հեռագրով իր ստորակարգ զօրաբաժիններու հրամանատարներուն, 12 Օգոստոս 1915ին.

Հայատառ թրքերէն բնագիր

Հայերէն թարգմանութիւն

Նումարա 2/4088.
Անգարա Վիլայէթինէ.
10 Աղօսթօս 331 թարիլի թեզքերէի Ալիյէլէրինէ ձեվապ տըր.
Սեֆերպերլիք իսթիտասընտան շիմտիյէ գատար վիլայէթ տախիլինտե Էրմէնիլեր թարա-

Թուահամար 2/4088.
Անգարայի Կուսակալութեան.
Պատասխան՝ 10 Օգոստոս 1915 թուակիր պատուական գեկոյցին.
Պատի ունիմ իմացնելու որ գօրակոչէն մինչեւ այսօր, նահանգէն ներս Հայերը չեն գործած որեւէ

14. Դ.Ե. Թիւ Մ 466 եւ Հ 628 — Հ 629:

ֆընտան իգա Էտիլմիշ շայան Էհեմմիյէթ պիր վուգուա զուհուր Էթմէմիշ վե աննագ միսթագիլ Էրմէնիսթան թէշքիլի դայէսինէ մաթուֆ օլան ամալը իսթիլալիյէ փերվերտե օլունտուղունը միսպիթ շուրատա Էլտե Էտիլէն Էալիհա վե սահրէ իլէ պազը ռեսիմ վե քիթապը միզիրէ հագգընտաքի քույութ վե մալիմաթը ռեսմիյէտէն թէլիսիսէն թերթիպ օլունան լիսթա լէֆֆէն թագտիմ գըլընմըշ վե պու պապտե ճիհէթի ասքերիյէճէ մեվճուտ մալիմաթ վե վէսաիգ սուրէթլէրինին իթասը լուգումիտե մեմուրին ասքերիյէյէ թէալիղ գըլընմըշ տըր:

12 Աղօսթօս 331.
Պէշիննի Գօլօրտու Գումանտան Վէքիլի՝
Խալիլ Րէճաի: ¹⁵

Խալիլ Րէճաի Պէյ հետեւեալ շրջաբերական ծածկագիր հեռագիրը զրկեց նահանգի մէջ գործող զօրաբաժիններու հրամանատարներուն.

Հայատառ թրքերէն բնագիր

Հայերէն թարգմանութիւն

Նումարա 3335.
Մահրէմտիք.
Ճըրգա Օնիշ Գումանտանլըղը Վէքալէթինէ Թեզքերէ.

Թուահամար 3335.
Մտերմական.
Տասներեքերորդ Զօրաբաժնի Հրամանատարի փոխանորդու-

15. Դ.Ե. Թիւ Հ 630 - Հ 631:

Ֆրրգա Օնտորթ Գումանտան-
լըղը Վեքալեթինէ շիֆրէ.
Ֆրրգա Օնպէշ Գումանտանլըղը
Վեքալեթինէ շիֆրէ.

15 Թէմնուգ 331 թարիխ վէ 2904
նումարալու թէգքերէյէ լահիգա
տըր.

Սեֆերպերլիք իփթիտասընտան
շիմտիյէ գատար մանթագանըզ
տախիլինտէ գուհուր էտէն էրմէ-
նի վէգայի վէ պունլարըն էհալի-
յէ վէ գուվվէի ընգըպաթիյէյէ գար-
շը վուգու թէնավվուգաթ վէ հեր
տիրլի հարէքեաթը իսիանիյէ վէ
թէշէպաիսաթը իսթիլալիյէյէ մի-
թէալիք նէ կիպի ահվալ գուհուր
էթթի իսէ, լուգումընա պինատէն
խուլասէտէնին վէսաիգ սուրէթլէ-
րիյէ մատէն մէմուրինի միւլթիյէտէն
թէվտի լազըմտըր:

11 Աղոսթու 331.
Անգարա Գուլօրտու Գումանտան
Վեքիլի՝
Խալիլ Բէնահի: ¹⁶

թեան զեկոյց.
Տասնէշորսերորդ Զօրաբաժնի
Հրամանատարի փոխանորդու-
թեան՝ ծածկագիր.
Տասնէհինգերորդ Զօրաբաժնի
Հրամանատարի Փոխանորդու-
թեան՝ ծածկագիր.
Յատկում 15 Յուլիս 1915
թուակիր եւ 2904 թուահամար
զեկոյցին:

Զօրակոչի սկիզբէն մինչեւ հիմա
ձեր իրաւասութեան շրջանին մէջ
տեղի ունեցած հայկական դէպ-
քերը եւ իսլամ ժողովուրդին եւ
ապահովութեան ոյժերուն դէմ տե-
ղի ունեցած յարձակումներ եւ ա-
մէն տեսակի ըմբոստական շար-
ժումներ, ինչպէս նաեւ եղեռնա-
փորձեր, յեղափոխութեան առըն-
չակից պատահած դէպքեր, հարկ
է քաղաքային պաշտօնեաներու
միջոցով հաւաքել եւ պահել ան-
հրաժէշտ համառօտագրութիւններ
իրենց վաւերագրերու օրինակ-
ներով:

11 Օգոստոս 1915.
Անգարայի Զօրաբանակի Հրամա-
նատարի Փոխանորդ՝
Խալիլ Բէնահի:

Անգարայի Զօրաբանակի Հրամանատար Խալիլ Բէնահի Պէյէն
Հրաման ստացող տասներեքերորդ Զօրաբաժնի Հրամանատար
Սիւլէյման Պէյ բացարձակապէս բացասական պատասխան կու տայ.

Հայատառ թրքերէն բնագիր

Ատէտ 1589.
Պէշիննի Գուլօրտու Գումանտան-
լըղը Վեքալեթինէ.
15 Թէմնուգ 331 թարիխ վէ 2904
նումարալու թէգքերէի Ալիյէսինէ
նէվապտըր.

Սեֆերպերլիք պիտայեթինտէն
շիմտիյէ գատար մանթագաի ա-
նիզէ տաիրէսինտէ մէվնուտ էր-
մէնիլերտէն հիշ պիրինին կերէք
էհալիյէ վէ կերէքտէ գուվվէի ընգը-
պաթիյէյէ գարշը թէնավվուգաթ
վէ հարէքեաթը իսիանիյէ վէ թէ-
շէպաիսաթը իսթիլալիյէլերի վու-
գու պուլունմուշ օլտուղու մարուգ-
տուր:

11 Աղոսթու 331.
Ֆրրգա Օնիշ Գումանտան Վեքիլի՝
Պինպաշը Սիւլէյման: ¹⁷

Հայերէն թարգմանութիւն

Կարգաթի 1589.
Հինգերորդ Զօրաբանակի Հրա-
մանատարի Փոխանորդութեան.
Պատասխան՝ 15 Յուլիս 1915
թուակիր եւ 2904 թուահամար
հաղորդագրութեան.

Պատի ունիմ իմացնելու ձեզի
թէ զօրակոչի սկիզբէն մինչեւ այ-
սօր բնականապէս իմ իրաւասու-
թեան տակ ապրող Հայերէն ոչ
մէկը, թէ ժողովուրդին եւ թէ իշ-
խանութեան դէմ յարձակում եւ
ըմբոստական շարժում կամ յեղա-
փոխութեան փորձ ըրած չէ:

11 Օգոստոս 1915.
Տասներեքերորդ Զօրաբաժնի
Հրամանատարի Փոխանորդ՝
Հազարապետ Սիւլէյման:

16. Գ.Ե. թիւ Հ 630:

17. Գ.Ե. թիւ Հ 630:

ԳԼՈՒԽ Ը.

Կրօնափոխութիւն

Կուսակցական, կառավարական եւ քաղաքական շրջանակներու մէջ Հայերու կրօնափոխութիւնը նախատեսուած էր տեղափոխութեան եւ կոտորածի գործողութիւնները դիւրացնելու նըպատակով, թէեւ յետին միտքը միշտ կը տիրէր յետագային կրօնափոխ հայերն ալ դիւրութեամբ բնաջնջելու:

Եռզղատի գաւառի եւ գիւղերու Հայերու տարագրութենէն առաջ, մուսուլմաններ կանչեցին փողոցներու մէջ թէ այն հայերը որոնք կ'ընդունին իսլամական կրօնքը, զերծ պիտի մնան տեղահանութենէ եւ աքսորէ: ¹

Տեղահանութեան եւ աքսորի թուրք պաշտօնեաները պաշտօնական հրահանգներ ստացած էին իսլամ գիւղերու մէջ ցրուելու տեղահանուած Հայերը որոնք կ'ընդունէին իսլամ կրօնքը:

Իսլամ գիւղերու մէջ բաժնուած, իսլամացած Հայերու թիւը միեւնոյն գիւղերու մէջ իսլամ բնակչութեան միայն հարիւրին հինգ համեմատութեամբ ըլլալու էր, այսինքն հարիւր իսլամ բնակիչ ունեցող իսլամ գիւղի մը մէջ միայն հինգ իսլամացած հայեր կ'արտօնուէին ապրելու:

Իսլամ բնակչութեան եւ իսլամացած Հայերու թուական համեմատութեան հրամանները եւ հրահանգները եկած էին ներքին գործերու նախարարութեան եւ արդարութեան նախարարութեան կողմէ: ²

1. Ժամանակ, Կիրակի, 9 Փետրուար 1919. Եռզղատի դատավարութիւն, առաջին նիստ, Շաբաթ 5 Փետրուար 1919:

2. Նոյն:

Մուսուլմանները Եռզղատի փողոցներուն մէջ յայտարարեցին թուրք կառավարութեան հրամանը թէ հինգէն վաթսուն տարեկան Հայեր կրնային ընդունիլ իսլամ կրօնքը եւ մնալ Եռզղատ, իսկ չիսլամացողները պիտի աքսորուին Տէր Զորի անապատը:

Եռզղատի գրեթէ բոլոր Հայերը նախ մերժեցին իսլամանալ եւ նախընտրեցին աքսոր երթալ մինչեւ Տէր Զոր քան փոխել իրենց քրիստոնէական կրօնքը: Անոնք տարագրուեցան Քէլլէր, Թանիշման, Թաշբինար եւ ջարդուեցան կանխապէս որոշուած ջարդավայրերու մէջ:

Գում Գուլու հայ գիւղի հարիւր յիսուն տուները հրկիզուեցան բնակիչներով միասին: Հրդեհը տեւեց երեք օր: Անոնք որոնք այս հրկիզումէն ազատեցան, բռնադատուեցան իսլամ կրօնք ընդունիլ եւ բաժնուեցան իսլամ գիւղերու մէջ հարիւրին հինգ համեմատութեամբ: ³

Պողազլեանի Գայմազամ Քէմալ Պէյ փողոցներու մէջ մուսուլմանի կանչել տուաւ թէ Հայերը որոնք իսլամացած են պիտի չաքսորուին: Բայց անգամ մը որ իսլամացած հայերը իրենց պահուած տեղերէն դուրս ելան, Քէմալ զանոնք զրկեց դէպի Կեսարիա եւ զանոնք կոտորել տուաւ: Ջարդուածներու խումբէն Արթին Քեհեա յաջողեցաւ փախչիլ: ⁴

Պողազլեանի Միւֆթին Ապտուլլահաստէ Մէհմէտ Էֆէնտի աւելն ջանք թափեց Հայերը իսլամացնելու եւ այդ միջոցով զանոնք ազատելու իսկական կոտորածէն: Միւֆթին տեղեկագիրը կարդացուեցաւ Պոլսոյ Պատերազմական Ատեանին առջեւ: Պողազլեանի Գայմազամ Քէմալ Միւֆթին իսլամացուցած Հայերը կոտորեց «քաղաքական օրէնքով» իր ասացուածքին համեմատ, մինչ Միւֆթին իսլամացուցած էր «կրօնական օրէնքով»: ⁵

3. Ժամանակ, Շր. 16 Փետրուար 1919, վեցերորդ նիստ, 15 Փետր. 1919:

4. Ծակատամարտ, Գշ, 19 Փետրուար 1919, եօթներորդ նիստ, Բշ. 18 Փետրուար 1919:

5. Ծակատամարտ, Նոյն. Տես նաեւ Լա Րընէսան, Թիւ 70, Ուրբաթ, 21 Փետրուար 1919:

Թուրք Պատերազմական Ատեանի Նախագահը ծածկագիր հեռագրով Եոզղատի Կառավարութեան կը հարցնէ թէ ինչպէս Քէմալ Պէյ ջարդել տուած է «Քաղաքական Օրէնքով» Գարապըրըզ գիւղի երկու հարիւր յիսուն Հայ ընտանիքները զորոնք Փաշա գիւղի Եագուպ Հոճան իսլամացուցած էր «Իսլամական Օրէնքով» պարզապէս զանոնք կոտորածէ ազատելու նպատակով:

Հայատառ թրքերէն բնագիր

Հայերէն թարգմանութիւն

Նումարա 96.

Եոզղաթ Միւթեսարըֆլըղընա, Փաշա Քէոյլի Եագուպ Խօճա Գարա Պըրըզ գարիչէսիսին իքի-եիւզէլի խանէ Էրմէնիլէրիսին մուհաֆազաի հայաթարը իչին, քէնտիլէրիսի միւսլիման Էթմիշ օլտուղու վէ Միւթեսարըֆ Վէքիլի Քէմալ Պէյին պունլարը քեստիրմէք արգու վէ թէշէպպիսիսնէ գարըր պունուան իթլաֆը Շերիէն ճաիզ օլմագ տէմէսինէ ճէվապէն, Քէմալ Պէյին «Սէն պունլարը Շերիաթլա Միւսլիման Էթսին, պէնտ սիյասէթլէ քէտերիմ, քէստիրիսիմ» տէտիչինի վէ ֆիլհագիգա էրքէլէրին գաֆասընը քէստիրտիչի միւսլիլի Քէօհնէ գաիրէսինտ քէգալիք իհթիտաէ օլան գիքիւր վէ էնաս Էրմէնիլէրիսնտ Թանհիշի Չիֆթիլիկի տէրէսինտ քէստիրտիչինի, վէ Ինճիրլի գարիչէսիսին նէթմիշ խանէ Փրօթէսթանլարը քէգալիք գաթլ վէ իթլաֆ էթթիրտիչինի, միմաիլէյն Խօճա Եագուպ Էֆէնտիսին վէ Եօզղաթթա մուգիմ ինճիրլի գարիչէլի պէրպէր Միսարըն վէ էշլասը սաիրէնին

Թուահամար 96.

Եոզղատի Կառավարութեան, Հարցաքննութեան թղթածրարէն եւ ուրիշ շատերու, Փաշա գիւղացի Եագուպ Հոճա Էֆէնտիի, ինչպէս նաեւ Եոզղատ բնակող Ինճիրլի գիւղացի սաիրիշ Միսաքի տուած տեղեկութիւններէն կը հաստատուի թէ վերեւ յիշուած Փաշա գիւղի Եագուպ Հոճան Գարա-Պըրըզ գիւղի երկու հարիւր յիսուն հայ ընտանիքներու կեանքերը ազատելու նպատակով զանոնք իսլամացուցած էր եւ երբ Եոզղատի Փոխ Միւթեսարըֆ Քէմալ Պէյ փափաք յայտնած էր զանոնք ալ բնաջնջելու, Հոճան առարկած էր թէ իսլամական օրէնքով թոյլատրելի չէ զանոնք կոտորել, (Քէմալ Պէյ Գ) պատասխանած էր. «Դուք զանոնք իսլամացուցիք (թլփատեցիք կամ գլուխը կտրեցիք Գ) Շերիաթի Օրէնքով, ես ալ անոնց գլուխները կը կտրեմ եւ կտրել կու տամ քաղաքական օրէնքով»: Արդարեւ, բոլոր այրերը ջարդել տուած է, ինչպէս նաեւ արգասաքեր Քէօհնէ աւանի Էնաս

պիլտիքլէրի Էվրագը թահգիգի յէտէն անլաշըլմագլա, օնլարըն վէ սաիր իճաս պտէնլէրին մալիմաթլարը դայէթ վիճտանլը վէ նամուլու վէ ճիտտէն պի թարաթ գէվաթ մարիֆէթիլլէ գապթ էտիլէրէք թութուլանագ Էվրագը թահգիգիլէնին աճիլէն փօսթա իլէ իրսալը, վէ թահգիգաթ խուլասէսիսին պաթէլկրաֆ իշարը:

գիւղի ուրացող Հայերը Թանհիշի Չիֆթիլիկի ճորին մէջ եւ (դիակները նետելով Գ) գետակին մէջ: Նմանապէս ջարդել տուած է Ինճիրլի գիւղին Բողոքական եօթանասուն ընտանիքներու անդամները:

Հարկ է պատրաստել խնամքով ատենագրութիւն մը եւ հաւաքել տեսնողներու եւ լսողներու վրկայութիւնները: Անոնց տեղեկութիւնները պէտք է արձանագրուին անաշտ, խղճամիտ, լուրջ եւ ուղղամիտ անձերու կողմէ: Ստիպողական քննութեան արդիւնքը ինչպէս նաեւ ձեռք անցուելիք շարակից փաստաթուղթերը դրկելու է թղթատարի միջոցով եւ շուտով հեռագրել վկայութիւններու ամփոփումը:

8 Փետրուար 1919.

8 Շուպաթ 335.

Թէհնիր Տիվանը Հարալը Էօրֆի Բէիսի. 6

Տարագրութեան Պատերազմական Ատեանի Նախագահ:

Եոզղատէն Դանիէլ Բոլատեանի եւ Պետրոս Գասպարեանի ընտանիքները թրքացած էին եւ կըրցան մնալ քաղաք: «Էքեալ գոյքերու» յանձնախումբի անդամները կը շրջէին կնքուած տունէ տուն. կը բանային զանոնք եւ կը մտնէին խուզարկութեան համար: Գարրիէլ Գեղոնեանի տունն ալ մտան եւ հոն գտան զայն եւ իր երկու զաւակները պահուրտած: Կապեցին զանոնք ու տարին կառավարատուն, ու Գարրիէլ եւ զաւակները կըօնափոխ եղան, սակայն

6, Դիւան, Երուսաղէմ, Ս. Յակոբ, Թիւ Մ 291: Տես նաեւ, Դիւան, Երուսաղէմ, Ս. Յակոբ, Թիւ Մ 484, Արտաշէս Թաշճեանի պաշտօնական վկայութիւնը 23 Դեկտեմբեր 1918, անտիպ:

դարձեալ որոշուեցաւ սպաննել զանոնք որովհետեւ հարուստ էին եւ հարկ էր տիրանալ անոնց տան եւ հարստութեան: Կապեցին զանոնք ու տարին Սուլթանիէ վարժարանի մարգագետինը: Մահէն առաջ Գաբրիէլ խնդրեց որ կանչեն իր դրացին Թէվֆիք: Երբ Թէվֆիք հասաւ, Գաբրիէլ անոր անունին գրեց երեք հազար հնչուն ոսկի եւ իր հարստութիւնը: Թէվֆիք միջամտեց որ չչարչարեն զանոնք եւ Գաբրիէլի բաղձանքին համեմատ գնդակով սպաննեն. ինչ որ եղաւ տեղւոյն վրայ: ⁷

Երգողատի վաշտապետը քսան ձիաւորներով եւ յիսուն հրոսակներով գնաց Թէրզիլի գիւղը 1915 Յունիս 15ին: Հոն մուկնետիկ կանչել տուաւ եւ քսանէն մինչեւ իննսուն տարեկան հայերը եկեղեցի հրաւիրեց: Ինք Հաճի Տէտէ Պալեանի տունը իջաւ եւ անկէ հրամայեց որ եկեղեցիէն հայերը դուրս հանեն եւ չորսական իրարու կապեն: Երեկոյ ժամը Տին այսպէս կապուած քանի մը հարիւր Հայեր Թէրզիլիէն երկու ժամ հեռու ջաղացք մը տարին, ջարդեցին զանոնք ու թաղեցին նախապէս փորուած հսկայ փոսի մը մէջ, մինչ վաշտապետը կը յայտարարէր. «Այս է Սուլթանի հրամանը:» Սպաննուածներու արիւնոտ զգեստները հաւաքեցին եւ տարին Թէրզիլի, ցուցադրեցին զանոնք հայ կիներու եւ աղջիկներու առջեւ եւ ըսին անոնց. «Ահա տեսէք, ձեր ամուսիններն ու եղբայրները սպաննեցինք: Եկէ՛ք իսլամութիւն ընդունեցէք, ձեզի մարդ տանք եւ փոխուիք, այլապէս՝ դուք ալ անոնց նման պիտի սպանուիք: Ոմանք վախէն իսլամացան, ուրիշներ կին եղան թուրքերու կամովին կամ ակամայ: ⁸

Երգողատի գիւղերէն տասնեւմէկ տարեկանէն վար աղջիկներ եւ մանչեր բերին քաղաք, անոնցմէ մաս մը զրկեցին Կեսարիոյ Թալաս գիւղաւանը թրքական որբանոց դրին եւ իսլամացուցին: Շատեր անօթութենէ եւ հիւանդութենէն մեռան: ⁹

Քէօհնէ գիւղաւանի հազար տունէն մօտ 550ը հայ էին: Այս գիւղաքաղաքի փողոցներուն մէջ մուկնետիկ կանչեց. «Այն հայ կիներ որ կ'իսլամանայ եւ թուրքի հետ ամուսնանալ կ'ուզէ, թող մէկ կողմ գատուի, իսկ ով որ չ'ուզեր իսլամանալ նոյնպէս թո՛ղ գատ-

ուի եւ քաղաքէն դուրս ելլէ:»

Այս յայտարարութեան վրայ բոլոր հայ կիները եւ աղջիկները քաղաքէն դուրս ելան եւ ամէնը միասին գոչեցին. «Մենք հայ ենք, Քրիստոսի սիրոյն մեռնելու պատրաստ ենք, սպաննեցէք մեզ ինչպէս որ կ'ուզէք:» 1915 Օգոստոս մէկին Քէօհնէի քանի մը հարիւր կիներն ու աղջիկները, փոքրիկ մանուկներ գրկած, անցան Բէօհրէնկ գիւղի առջեւէն գոչելով. «Եկէ՛ք, քոյրիկներ, եկէ՛ք միասին մեռնինք:» Ամէնն ալ նախընտրեցին մեռնիլ քան ուրանալ Քրիստոսի սուրբ հաւատքը: ¹⁰

Հինգշաբթի օր 9 Յունիս 1915ին, ոստիկանապետ Խուլուսի Պէյ իր հրոսախումբով պաշարեց Պուրուն Գըշլա հայ գիւղը, որուն բնակիչներու թիւը կը հասնէր 850ի:

Խուլուսի Պէյ Պուրուն Գըշլայի գիւղապետ մկրտիչ Քեհեայի ըսաւ. «Եթէ իսլամութիւն ընդունիք եւ ճշմարիտ կրօնքին պատկանիք, ձեզմէ ոեւէ մէկուն գլխուն մէկ մազին անգամ պիտի չդպչին. եթէ չընդունիք պիտի պատժուիք:»

Մուկնետիկ մը միեւնոյնը յայտարարեց գիւղի փողոցներուն մէջ: Ոչ մէկ հայ գիւղացի հաւատաց եղած յայտարարութեան:

Խուլուսի Պէյ իր հրոսախումբի աւազակներուն եւ մարդասպաններուն հաւաքել տուաւ Հայերը եւ զանոնք բանտարկեց հայ եկեղեցին: Հարիւր քսան հայ այրեր եկեղեցիէն չորսական խումբով դուրս հանեցին եւ կապեցին իրարու հետ եւ զանոնք առաջնորդեցին դէպի Պողազլեան: Ճամբու ընթացքին Խուլուսի Պէյի հրոսակները կացիներով սպաննեցին իրարու կապուած հայերը: Միեւնոյն գործողութիւնը կրկնուեցաւ յաջորդ օրերուն ալ Պուրուն Գըշլայի եկեղեցիին մէջ եւ Պողազլեանի ճամբուն վրայ որ այլեւս ջարդուելիք այրեր չմնացին գիւղին մէջ:

Պուրուն Գըշլայի մնացած հայերը, որոնք մերժեցին իսլամանալ, տարին գիւղէն դուրս մօտակայ ձոր մը եւ կացիներով կոտորեցին, կիներ, աղջիկներ եւ մանուկներ: ¹¹

Երկաթուղիի կայարանի պաշտօնեայ Քրիստաքի բարեխօսեց թուրք իշխանութեան մօտ խնդրելով որ Բժ. Քէչեանի կիներ չաքսորուի: Կիրիտլի Հիլմի հաւանեցաւ որ Տիկին Քէչեան չտարագ-

7. Ձեռագիր, Նուպարեան Մատենադարան, Բարիզ: էջ 24.

8. Նուպարեան Մատենադարան, Բարիզ, ձեռագիր, Երգողատ, էջ 25.

9. Նոյն, էջ 19.

10. Նոյն էջ 141.

11. Լա Բրնէսան, թիւ 69, փետրուար 20, 1919:

րուի միայն մէկ պայմանով որ ան իսլամանայ եւ ամուսնանայ թուրք պաշտօնեայի մը հետ: ¹²

Եոզղատի Առաջնորդ Ներսէս Եպիսկոպոս Դանիէլեան աքսոր-ւեցաւ՝ դէպի Սեբաստիա առաջին կարաւանին հետ: Առաջնորդը ազաչեց կարաւանը վարող թուրք խմբապետին որ իրեն թոյլատրէ վայրկեան մը կանգ առնել աղօթելու համար: Եպիսկոպոսը հազիւ վերջացուց իր աղօթքը երբ թուրք պատգամաւոր մը եկաւ, կարա-ւանի վարիչին հաղորդեց հրամանը չկոտորել այս կարաւանը այլ զանոնք տանիլ Սեբաստիա:

Սեբաստիոյ Գարտաշար ձորին մէջ սակայն կանխապէս հա-ղորդուած հրամանի մը համաձայն չորս հարիւր եօթանասուն եր-կու երեւելի հայերը ջարդուեցան հոն կանխապէս իրենց սպասող հրոսակներուն կողմէ: ¹³

Ուրիշ կարաւան մը հասաւ Եարիշ Թարլա, Թալասի մօտ, Քէ-մալ Պէյ վրայ հասաւ եւ հրամայեց բաժնել տասներկու տարեկանէ վար մանչերը: Կանչեց Տէր Յակոբ Քահանան եւ անոր ըսաւ. «Տէր Հայր, ժամանակը հասած է. ամէնքդ պիտի մեռնիք. նախ աղօթէ:» Տէր Յակոբ ցոյց տուաւ իր փոքր մանչը եւ ըսաւ. «Նախ տղաս սպաննէ»: Քէմալի հրամանով տասնապետ մը անմիջապէս մէկ հարուածով գետին տապալեց Տէր Հօր մանչը. իսկ Քէմալ փողը հնչեցուց նշան տալով որ սկսին կոտորածը եւ ամէնէն առաջ ըս-պաննեն Տէր Յակոբ Քահանան: ¹⁴

Քէլէրի մէջ Էօթէնի Վարվառեան ընդհանուր կոտորածի ատեն վիրաւորուեցաւ. ապա բռնադատուեցաւ ընդունելու իսլամական կրօնքը, եւ վերապրեցաւ շատ մը թուրքերու տուններուն մէջ: ¹⁵

Էօթէնի Վարվառեան 12 Փետրուար 1919ին թուրք պատերազ-մական Ատեանի առջեւ վկայեց. «Զիս բռնադատեցին իսլամ ըլլա-լու եւ պարտադրեցին որ կրկնեմ իրենց աղօթքը. «Իլա իլէ ինն Ալ-լահ»: Ֆէյեազ Պէյն էր որ կը հրամայէր հրոսակներուն ջարդելու Հայերը:» ¹⁶

12. Նոյն.

13. Լա Րընէսան, Թիւ 59, Ուրբաթ, 7 Փետրուար 1919:

Յուսաբեր, Բացառիկ, 1965, էջ 22.

14. Լա Րընէսան, Թիւ 63, Դչ. 12 Փետրուար 1919.

15. Նոյն, Թիւ 64, Եչ. 13 Փետրուար 1919:

16. Նոյն:

Թուրք Կառավարութիւնը պատրաստեց եւ հրատարակեց նաեւ պաշտօնապէս իսլամանալու օրէնքը. ներքին գործերու նախարար Թալաաթ Պէյ 26 Հոկտեմբեր 1915ի շրջաբերական հեռագրով հա-ղորդեց հետեւեալ կանոնը.

Ներքին Գործերու նախարարութիւն
Յեղախումբերու եւ Գաղթականներու
Զետեղման Յանձնաժողով,
Թիւ 61/666

Հայերու իսլամացման եւ հաւատափոխներու անշարժ կալ-ւածներու մասին հետեւելիք հրահանգներ: Այս հրահանգները կազմուած են Ընդհանուր Ապահովութեան Տնօրէնութեան մատու-ցած տեղեկագրին վրայ:

Յօդուած 1

Կ'ընդունուի հաւատափոխութիւնը իրենց բնակավայրերուն մէջ մնացած ոչ տարագրուած Հայերուն:

Յօդուած 2

Նմանապէս կ'ընդունուի հաւատափոխութիւնը անոնց, որոնք տարագրութեան ատեն մասնաւոր հրամանով վար դրուած են ի-րենց ճամբուն վրայ եւ կամ իրենց տունները եւ կամ որեւէ տեղ մը դրկուած են:

Յօդուած 3

Այն Հայերը որոնց հաւատափոխութիւնը ընդունուած է վերի պայմաններուն համաձայն, պիտի ստանան իրենց ինչքերը եւ կամ, եթէ ծախուած են, անոնց փոխարժէքը:

Յօդուած 4

Յարմար դատուած է որ, տարագրութեան միջոցին, իրենց մը-նացած վայրերուն մէջ իսլամներու հետ ամուսնացած կիներուն եւ աղջիկներուն տուններ տրուին լքուած շէնքերէն:

Յօդուած 5

Երբ գաւառներու, գիւղերու եւ թաղերու բնակիչները անհա-տարար կամ զանգուածաբար իսլամացման խնդրանք ներկայաց-նեն, պէտք է հաւատափոխութեան ձեւակերպութիւնները կատա-րել, զանոնք գիւղերու մէջ բաժնելէ ետք, պայմանով որ անոնց այդ թիւը տեղերու իսլամ բնակչութեան թիւին հետ բաղդատուած չանցնի հինգ առ հարիւր համեմատութիւնը:

Յօդուած 6

Եթէ որոշ տեղ մը մնալու արտօնուած տղաներու պատկանող ինչքերու վաճառման արդիւնքը ամբողջապէս կամ մասամբ յատկացուած է անոնց պարտքերուն, այդ կորուստներու փոխարէն վերեւ յիշուած տղաներուն պիտի տրուի պետութեան անուան արձանագրուած լքեալ գոյքերէն բան մը:

26 Հոկտեմբեր 1915.

Ստորագրուած՝

Ներքին Գործերու Նախարար՝
Թալաաթ

Աւելի ետք նոյն ներքին գործերու նախարար 17 Դեկտեմբեր 1915ին ամէնէն շնական հրամանը ղրկեց պատասխանելով Հալէպի Կուսակալ Ապտիւլ Հալիգ Մուստաֆա Պէյի 2 Դեկտեմբեր 1915 Թուակիր հեռագրին: Թալաաթ կը հրամայէր որ գաղթական Հայերէն անոնք որոնք կը փախաքին իսլամ կրօնք ընդունիլ, պէտք է իրենց հաւատքը փոխեն իրենց աքսորավայրը հասնելէն ետք, որ կը նշանակէ թէ անոնք իսլամ պիտի ըլլան մահէն ետք:

Հալէպ եւ շրջակայ գիւղերը գաղթական Հայերով լեցուեցան: Սակայն եկաւ ժամանակ մը որ Պոլսէն հրաման հրամանի ետեւէն հասաւ զանոնք դէպի Տէր Զոր քշելու եւ ճամբու ընթացքին զանոնք բնաջնջելու եւ կամ պարզապէս անօթութեան ու ծարաւի մատնելով զանոնք մինչեւ որ մեռնին: Շատ մը գաղթական Հայեր դիմեցին անհատաբար եւ խմբովին իսլամ կրօնքն ընդունելու: Հալէպի կուսակալ Մուսթաֆա Ապտիւլ Խալիգ Պէյ 2 Դեկտեմբեր 1915ին ներքին գործերու նախարարէն հրաման խնդրեց իսլամացող գաղթական հայերու համար, սակայն Թալաաթ անոր պատասխանեց հետեւեալ հեռագրով.

صوب دلايت

۷۹۵

بعضه از غرضه نمازین اور از دله دولته رسمه حرم فاجدی
صوب دلايت و اوزان تنظيم و بوندن اورانند اورانیا
فوند سنه نو دی اندکری سو بتمده اولد بقده بوبی
انصه مده نه د د مندلیه امی لری | ۱۱ یور اولد
واقیه فامی

زانا بوبی اندکری سو بس خامو در اتکم امی لمده امی
حتی اورلیه فوند سنه ای افانده دلمی حورتمه برزحه
خاموی بوبند برید دی .
بکوه ؛ زانان غرضه سنه
بی بوزاره کوروسه ، خاندی . بوند خوبی او قد -
نسخه الی لیر دی .
اهیتاب اندی که فونده صبه -

Բրիտանական բանակը Հալէպ մտնելէ առաջ 26 Հոկտեմբեր 1918ին թուրք պաշտօնեաները, յատկապէս տեղահանութեան եւ կոտորածի պաշտօն վարողները լքեցին քաղաքը եւ փախան ներքին դաւառները: Նայիմ Սեֆա էֆէնտի որ Գաղթականներու Պաշտօնատան ընդհանուր քարտուղար էր Ապտիւլհաստ Նուրի Պէյին ձեռքին տակ, մնաց Հալէպ: Համաձայնեցաւ Հալէպի Պարոն Պանդոկի տէր եւ տնօրէն Օննիկ Մազլումեանի հետ իրեն բարեկամ Արամ Անտոնեանի միջնորդութեամբ:

Նայիմ էֆէնտի իր ձեռագրով ընդօրինակեց թուրք պաշտօնական վաւերագրերու բնագիրները փէքրիկ տետրակներու մէջ, 6 եւ 11 Նոյեմբեր 1918ին զանոնք յանձնեց Արամ Անտոնեանի, մասնաւոր վարձատրութեան մը փոխարէն վճարուած Օննիկ Մազլումեանի կողմէ: Իսկ Նոյեմբեր 14ին պայման դրուեցաւ որ բերէ եւ յանձնէ պաշտօնական վաւերագրերու բնագիրները:

Նայիմ էֆէնտիի տետրակներէն եւ բերած բնագիրներէն ոմանք մինչեւ այսօր կը գտնուին Բարիգ Նուպարեան Մատենադարան:

Հայաստան թրքերէն բնագիր

Հայերէն Թարգմանութիւն

Նումարա 762.

Հալէպ Վիլայէթին.

Ճեվապ 2 Քանունուվվէլ 331.

Սեվգիյաթը ումումիյէտէն գուրթուլմաք ֆիքրիյէ գապուլու իսլամիյէ էթմէք իսթիյէն էրմէնիլէրէ մէնաթըզը իսքանիյէլէրիստէ իսթիրա էթմէլէրի լիզումունուն թէպլիղի:

17 Քանունուվվէլ 331.

Տախիլիյէ Նազըրը՝

Թալաաթ:

Թի 762.

Հալէպի Կուսակալութեան.

Պատասխան 2 Գեկտեմբեր 1915 հետագրին: Գեպի անապատ ընդհանուր առարումներէ ազատելու մտքով իսլամութիւն ընդունող Հայերուն ըսէք որ անհրաժեշտ է որ իսլամանան իրենց արտոբաւայրը հասնելէն ետք:

17 Գեկտեմբեր 1915.

Ներքին Գործերու Նախարար՝

Թալաաթ: 17

Թալաաթի հեռագրէն լռելեայն կ'իմացուի որ դադթական Հայերու կրօնափոխութիւնը չընդունի, այլ զանոնք քշել տայ դէպի իրենց արտոբաւայրը ստոյգ ըլլալով որ անոնք ճամբու ընթացքին կամ պիտի կոտորուին եւ կամ անսուղ պիտի մեռնին իրենց արտոբաւայրը հասնելէ առաջ, որով մահէն ետք միայն պիտի իսլամանային եւ կամ իրենց կրօնափոխութիւնը պիտի ընդունուէր միայն մահէն ետք:

Նայիմ Պէյ ներքին գործերու նախարարին հեռագիրը տալէ ետք կ'աւելցնէ հետեւեալ բացատրութիւնը.

17. Նուպարեան Մատենադարան, Բարիզ, Նայիմ Պէյի ձեռագիր երկրորդ տետրակ, էջ 5, թիւ 762: Բաղդատի ՄեՄ ՈՃԻՐԸ, Ա. Անտոնեան, Տպարան Պահակ, Պոսթըն, 1921, էջ 212:

Ճակատամարտ, Նոր շրջան, թիւ 50/1864/, Թարգմանուած Թուրք Ստամպուլ օրաթերթէն:

Հայաստան թրքերէն բնագիր

Սեւգիյաթըն քեսպի շիտտէթը էթթիղի հէր թարաֆա հէր կիւն պիւնլէրնէ վէֆաթ խապէրի կէտիղի սըրատա, պէշէրի իսլամ օլուրուզ տա քուլթուրուզ տիյէ պազը զավալլուար միրանաաթ էթմիշլէրտի. պիր իքիսիւնիս տէ իսլամիյէթի գապուլ էտիլմիշտի. թէվալի էտիւնէ, նէզարէթթէն իսթիզամ էտիլտի, պու ճէվապ կէտի:

Կանխապէս թալաաթ մեծ կարեւորութիւն տուած չէր եղած դիմումներուն, բայց երբ բացայայտօրէն իրմէ հրաման խնդրուեցաւ ընդունելու իսլամացած Հայերը եւ զանոնք չտարագրելու, այն ատեն թալաաթ նախ պատասխանած էր հետեւեալ ծածկագիր հեռագրով.

Նումարա 723.

Հալէպ Վիլայէթինէ.

Մուգատտէմա թէհնիստէ Հալէպ մընթագաի իսքան էտիլէն էրմէնիլէրին պիլա իֆադէի գաման մէնաթըզը իսքանիյէլէրինէ սէվգիլէ իմպասը:

3 Քանունուէվլէ 331.

Տախիլիյէ Նազըրը՝
Թալաաթ.

18. Նուպարեան Մատենադարան, Նայիմ Պէյի երկրորդ ձեռագիր տետրակը, էջ 4.

19. Նուպարեան Մատենադարան, Նայիմ Պէյի երկրորդ ձեռագիր տետրակը, էջ 4.

Հայերէն թարգմանութիւն

Տարագրութեան ամէնէն բունը շրջանին ամէն կողմէ ամէն օր հազարաւոր մահերու լուրերը կը հասնէին. մարդկային էակներ «իսլամ կ'ըլլանք» կ'ազատինք ըսելով քանի մը խեղճեր դիմումներ քրած էին. քանի մը հոգիներու իսլամ ըլլալու խնդրանքն ալ ընդունուած էր. դիմումները շարունակեցին. նախարարութեան հրաման խնդրուեցաւ. վերելի պատասխանը եկաւ: 18

Թիւ 723.

Հալէպի Կուսակալութեան.

Առանց որեւէ յապաղումի նախ քշեցէք Հալէպի շուրջ հաւաքուած Հայերը իրենց աքտրավայրը եւ այս մասին տեղեկութիւն տուէք ինձի:

3 Դեկտեմբեր 1915.

Ներքին Գործերու Նախարար՝
Թալաաթ: 19

Նայիմ Պէյ կու տայ հետեւեալ օրինակը. Մարգուանէն Հայ ընտանիքի մը անդամները կ'իսլամանան եւ լուրը կը հեռագրեն Չորում ուր կը գտնուէր ընտանիքի պետը. ասիկա իր կարգին կ'իսլամանայ եւ Հալէպի կուսակալ Մուսթաֆա Ապաիւլ Խալիզ Պէյ եւ Հայ գաղթականներու գրասենեակին Փոխ Տնօրէն Ապաիւլ Ահատ Նուրի Պէյ համաձայն գործեցին եւ թէ՛ իսլամացած եւ թէ՛ ոչ-իսլամացած Հայերու հանդէպ հաւասարակէս կիրարկեցին ներքին գործերու նախարարութենէն իրենց զրկուած հրամաններն ու հրահանգները, գաղթական Հայերու իսլամութիւնը յետաձգելով անոնց մահէն յետոյ:

Երևուֆ Զիա իբր իսլամացած Հայ Հալէպի մէջ խնդրագիր մը կը ներկայացնէ եւ կը խնդրէ վերադառնալ իր հայրենիքը: Կը մերժուի: Այս մասին Յեղախումբերու եւ Գաղթականներու Ձեռնդրման Ընդհանուր Յանձնախումբի Փոխ Տնօրէնի քարտուղարը Նայիմ Պէյ կը գրէ.

Հայաստան թրքերէն բնագիր

Հէր նէ գատար իմթիտա էթմիշտէ տէ սէվգիյաթթան իսթիսնասը ճաիզ օլամայաճաղընտան Չօրտա այիլէսի տէ քէտտիսիւնէ իլթիհաք էթթիրիլմէք իզէրէ սէվգիյաթը ումումիյէ իթթիպա էթթիրիլմէսի, տիյէ էազըյօր. վալի տէ մուպիճիւնէ տիյօր: 20

Հայերէն թարգմանութիւն

Թէն ան իսլամացած ըլլայ, բայց գաղթականներու առաքումին մէջ չի կրնար բացառութիւն կազմել, պէտք է ընդհանուր առաքումներու նկատմամբ Զօր երթայ, իր ընտանիքն ալ հոն իրեն պիտի միացուի, գրեց Ապաիւլ Ահատ Նուրի. կուսակալն ալ վաերացուց անոր գրածը:

Ներքին գործերու Նախարար Ֆէթհի Պէյ 26 Հոկտեմբեր 1918 ին թուրք կառավարութեան կողմէ հետեւեալ յայտարարութիւնն ըրաւ Հայերու կրօնափոխութեան մասին. «Օսմանեան Սահմանադրութիւնը առանց ցեղի եւ կրօնքի խտրութեան՝ ամէնուն ալ խղճի ազատութիւն շնորհած ըլլալով, իրենց կամքին հակառակ իսլամացածներ եթէ կան՝ ազատ պիտի թողուին որպէսզի իրենց ուզած կրօնքն ընդունին: Այս մասին ոչ ոք պիտի միջամտէ:» 21

20. Նուպարեան Մատենադարան, Բարիզ, Նայիմ Պէյի երկրորդ ձեռագիր տետրակ, էջ 4, բազդատել՝ Ա. Անտոնեան, Մեծ Ոճիրը, էջ 211-212:

21. Ժամանակ, 27 Հոկտեմբեր 1918:

ԳԼՈՒԽ Թ.

Ճէմալ Պէյի Վկայութիւնը

Եոզղատի նախկին միւթէսարիՓ Ճէմալ Պէյ արդէն անգամ մը վկայած էր 12 Դեկտեմբեր 1918ին Մազհար Պէյի նախագահութեան տակ Հարցաքննիչ Յանձնախումբի առջեւ սակայն որոշ վերապահութիւններ ըրած էր:

Ճէմալ Պէյ նորէն պաշտօնական երդումէ ետք 5 Մարտ 1919ին վկայեց Թուրք Պատերազմական Ատեանի առջեւ եւ պատասխանեց իրեն եղած հարցումներուն, սակայն լռութեամբ անցաւ հական եւ կարեւոր հարցերու վրայէն:

Անշուշտ Ճէմալ Պէյի երկու վկայութիւնները որոշ չափով զիրար կը լրացնեն սակայն այդ վկայութիւններուն պէտք է մաս կազմեն նաեւ այն մտերմական յայտնութիւնները որոնք կու գան երեւան հանել ինչ որ ինք փորձած էր ծածկել երկու վկայութիւններու ընթացքին: Ճէմալ Պէյի գործակից հրամանատար Սալիմ Պէյի վկայութիւնը շատ աւելի առարկայական է քան կառավարիչ Ճէմալ Պէյի յայտարարութիւնները: Ճէմալ եւ Սալիմ Պէյեր գործած էին համաձայնաբար եւ զիրար տեղեակ պահած էին ներքին գաղտնի գրաւոր եւ բերանացի հրամաններուն եւ հրահանգներուն որոնք ուղղակի եւ անուղղակի առնչութիւն ունէին Հայերու տեղահանութեան եւ կոտորածին:

Հարկ է տալ նաեւ Ճէմալ Պէյի պաշտօնական վկայութիւնը Թուրք Պատերազմական Ատեանին առջեւ:

«Ժամը մէկ ու քառորդ անցած սկսաւ դատավարութիւնը: Առաջին վկան էր Եոզղատի նախորդ կառավարիչ Ճէմալ Պէյ, որ հիմա առեւտրական գործով կը զբաղի: Երդումէ յետոյ հետեւեալ վկայութիւնը տուաւ: ¹

«Ճէմալ. Երեք ամբաստանեալներն ² ալ կը ճանչնամ: Ես Թո-

1. Փամասնակ Օրաթերթի հայերէնը կը պահենք ինչպէս որ է:

2. Կառավարիչ Քէմալ Պէյ, Ոստիկանապետ Թէվֆիգ Պէյ, եւ Ֆէյեազ Պէյ:

գատի կառավարիչ էի (1915): Մայիս 5ին Եոզղատ փոխադրուեցայ: Մինչեւ 1915 Յուլիս 10ին երբ սկսաւ Սեբաստիոյ եւ Թոգատի տեղահանութիւնը, ժողովուրդը յուզման մատնուեցաւ: Պէտք եղած յորդորները ըրինք մզկիթներու եւ եկեղեցիներու մէջ:

«10 Յուլիսին Թէվֆիգ ինծի գրաւորապէս իմացուց որ Մատէն կ'երթայ աւազակ հետապնդելու: Իսլամ ժողովուրդը կը վախնար որ քրիստոնեաները քաղաք ³ պիտի յարձակին. ժանտարմաներ նշանակեցինք եւ գործը հանդարտեցաւ:

«Տեղեկագիրներ սկսան տալ տեղահանութեան մասին եւ կ'ըսէին որ պէտք է Հայերը հանել եւ տեղերնին բերել իսլամ բնակեցնել: Ինծի իմացուցին որ թնդանօթ եւայլն կայ. քննութիւն կատարեցի եւ հասկցայ որ զինուորական փախստականներէ եւ տեղահանութենէ փախչողներէ զատ որեւէ բան չկայ:

«18 Յուլիսին հրաման ⁴ եկաւ Հայոց տեղահանութեան, զինուորական իշխանութեան ալ հրաման եկաւ որ ժողովրդեան առաջնորդները, զօմիթէճիները եւն, հանեցէք:

«Կուսակալութեան դիմեցի եւ ըսի որ զինուորական իշխանութեան ալ հրահանգ տրուած էր որպէսզի մենք գործի չխառնուինք: Զինուորական իշխանութեան պետ Սալիմ Պէյի հետ տեսնուեցանք: Շատ խղճամիտ մէկն էր. ինծի խոստացաւ որ եթէ հարկ ըլլայ հանել Հայերը, օրինաւորութեան սահմանին մէջ եւ անվտանգ պիտի զրկէ, որովհետեւ այս է կառավարութեան պարտականութիւնը:

«Ասոր վրայ տեղահանութիւնը սկսաւ, առաջին մասը զրկեցինք, յանձման գրերը բերին: Երկրորդ մաս մը զրկելու համար Մուամմէր մեզի զանազան ճամբաներ կը բացատրէր, վերջապէս կառավարութիւնը Կեսարիոյ ճամբով զրկելին յանձնարարեց:

«Սալիմ Պէյի ընկերակցութեամբ զրկեցինք առաջինները ապահով կերպով, եւ հիմա նամակներ կու գան իրենցմէ: ⁵ Այս ան-

3. Եոզղատ քաղաքի վրայ յարձակելու հարց չկար: Վէհպի Պէյ եւ Ֆէյեազ Պէյ զիւղերու մէջ խումբեր կազմած էին եւ կը փորձէին կառավարիչ Ճէմալ Պէյը տապալել եւ տեղը բերել ուրիշ մէկը որ տրամադիր ըլլար հայերը կոտորելու:

4. Յուլիս 18ի հրամանը հրատարակուած է այս հատորին մէջ:

5. Ճէմալ եւ Սալիմ Պէյերը շատ լաւ գիտէին որ արքային համազօր էր կոտորածի կամ բնական մահուան: Եթէ ուղիղ եւ մարդասէր ըլլային հարկ էր հրաժարէին պաշտօնէ:

գամ հրահանգ եկաւ որ տեղահան եղողներուն վրայի դրամները առէք, անոնք ալ կ'առնուէին եւ կանոնաւորապէս կը յանձնուէին յատուկ մարմնոյ մը եւ կ'արձանագրուէին: ⁶

«Այդ միջոցին Չորումի տեղահանութիւնը սկսաւ, մենք ալ գրադած էինք: Օգոստոս 5ին հեռագիր եկաւ. ես պաշտօնանկ եղայ: Քէմալ տեղս եկաւ: Հարցուցի թէ ի՞նչ է պատճառը իմ քաշուելու. ըսին թէ վարչականապէս այդպէս պէտք տեսնուած է: Ինչպէս գիտէք ըստ օրինի որեւէ պաշտօնեայ պաշտօնանկ ըլլալու համար պէտք է իր ներկայութեամբ անդորրութիւնը խանգարուի, մինչդեռ Եոզղատի մէջ առաջուրնէ աւելի խաղաղ էր:

«Պաշտօնանկութենէս յետոյ մէկ ամիս կեցայ Եոզղատ. Երբեմըն դուրս կ'ելլայի տունէս. տեղահանութեան մանրամասնութենէն տեղեկութիւն չունիմ: ⁷

«Նախագահ. Պողազլեանի դէպքերու մասին հարցում չէի՞ք ըներ Քէմալի:

«Ծէմալ. Այո՛, կը հարցնէի Քէմալի, պատահած դէպքերու մասին լսածներս կը հերքէր, եւ ձեր հրահանգներով կը գործեմ կ'ըսէր: Սալիմ Պէյի ալ անգամ մը ըսեր է որ այս գործերը մեր մէջ կարգադրենք: ⁸ Շատ բաներ ըսուեցան, բայց մանրամասնութիւններ չեմ գիտեր:

«Նախագահ. Նէճաթի Պէյ հոն՞ եկեր է. այդ մասին ի՞նչ գիտէք:

«Ծէմալ. Ատիկա թօհաֆ դէպք մըն է, պատմեմ: Օր մը ինծի եկաւ նամակ ցցուց, բայց ձեռքս չտուաւ. կուսակալը գրած էր որ Նէճաթի հող կու գայ անոր հետ պէտք եղածը գործադրեցէք:

«Ըսաւ որ Ատրպատականի կողմը ես քաղաքական ներկայացուցիչ էի. հոն Հայերը իսլամները ջարդեցին. ես հազիւ ազատեցայ. հոս ալ նոյնը գործադրելու է: Ըսի որ այստեղ Ատրպատական չէ. հոն չէթէներ ելեր են. այստեղ չէթէ չկայ. ինչ պատճառով փոխարինենք, մանաւանդ որ, ըսի, Ատրպատականի մէջ ձեր

6. Եկած նամակներէն շատեր չինձու էին գրուած միայն դրամ հաւաքելու կենդանի ներկայացուած մեռելներուն համար:

7. Հոս կը վերջանայ ձէմալ Պէյի վկայութիւնը որ զգայացունց ոչինչ ունի, սպա կը սկսին հարցումներու պատասխանները:

8. Ուրիշ վկաներ աւելի բացայայտ կերպով ըսած են որ Քէմալ Պէյ փորձած է Սալիմ Պէյի միացած կոտորել Հայերը:

9. Հոն, Եոզղատ եկեր է:

քաղաքական պաշտօնեայ գտնուելուն հետեւանքով այդ դէպքը տեղի ունեցեր է, որովհետեւ դուք ժանտարմայի պաշտօնեայ մըն էիք. ի՞նչպէս Ատրպատական քաղաքական պաշտօնեայ կ'ըլլաք մանաւանդ որ ձեզի չեմ ճանչնար, որովհետեւ դուք պատասխանատու պաշտօնեայ չէք:

«Ելաւ գնաց Չորում. 14-15 օր յետոյ իմ պաշտօնանկութեանս հեռագիրը եկաւ:

«Ընդհանուր Դատախազ. Քանի որ ժողովուրդը հսկողութեամբ կը զրկուէր, իրենց քով գտնուած դրամը ինչո՞ւ կ'առնէին:

«Ծէմալ. Հաւանական է որ դրամ տալով փախուստին չղիւրացնելու համար էր: Այս կարգադրութիւնն ալ գէշ չեղաւ որովհետեւ շատերուն ընտանիքներուն օգնութիւն ըրինք եւ ետեւէն դրամ զրկեցինք:

«Ընդհանուր Դատախազ. Արդեօք Նէճաթի քով իր տեսած ստորագրութիւնը Աթրֆի բուն ստորագրութիւնն էր:

«Ծէմալ. Ես լաւ չեմ ճանչնար Աթրֆի ստորագրութիւնը, որովհետեւ իրեն հետ գործ չունեցայ:

«Ընդհանուր Դատախազ. Պողազլեանի վիճակին նկատմամբ ձէմալ Պէյ ինչո՞ւ քննութիւն չէ կատարած:

«Ծէմալ. Ես վայրկեան մը չէի կրնար բաժնուիլ Եոզղատէ. քննութիւն կատարեցի. Քէմալ շարունակ կը հերքէր ու կ'ըսէր թէ փախըստականներ, զինուորներ եւ էշքըյաներ անկարգութիւններ կը գործեն:

«Ընդհանուր Դատախազ. Թնդանօթ տեսե՞ր է այդ կողմերը:

«Ծէմալ. Զէթէն Թնդանօթ կրնա՞յ բերել. Թնդանօթը ի՞նչ գործ ունի հոն. գրպան դրուելիք բան մըն է ատիկա. հիմ չունի այդպէս բան մը: Ես պաշտօնանկ ըլլալէս յետոյ կը տեսնուէի մէպուա Շաքիր էֆէնտիի հետ. կ'ըսէի թէ շատ ոճիրներ կը լսուին. երկրին տուրք կու տան. մեզի չի ներուիր ասիկա. ես գոհ եմ կ'ըսէի պաշտօնանկ ըլլալուս: Աչքովս բան մը չտեսայ, միայն լսեցի:

«Մուսթաֆա Փաշա. Թնդանօթի մասին Թէվֆիգ բաներ մը ըսաւ. նոյն իսկ Թնդանօթը եւ նետողը բռնեցինք ըսաւ. այդ մասին բան մը չէ՞ք գիտեր:

«Ծէմալ. Ես բան մը չեմ գիտեր Թնդանօթի մասին, քովս երկու տեղեկագիր կայ. ձեզ կը ներկայացնեմ կարդալու համար:

«Մուսթաֆա Փաշա. դուք Թէվֆիգը չէք զրկեր տեղահան եղած Հայոց հետ. ի՞նչ պատճառաւ:

«Ճեմալ. Լսեցի որ կարգ մը չէթեմեր պատրաստեր է Հայերը կոտորելու համար. այդ մարդերը չեմ ճանչնար. միայն չէրքէզ մը տեսայ օր մը շուկային մէջ կասկածելի երեւոյթով, բայց միւսները ով էին չեմ գիտեր:

«Ճեմալ Պէյի ներկայացուցած տեղեկագրէն հասկցուեցաւ որ, Թէվֆիգ ժամանակին իրեն տուած տեղեկագրին մէջ ըսած է որ Հայերը այդ կողմերը ապստամբութիւն հանելու կը ձգտին, պէտք է կարգ մը գիւղեցւէն տեղահան ըլլան:

«Նախագահը հարցուց Թէվֆիգի թէ այդ տեղեկագիրը քո՞ւկդ է:

«Թէվֆիգ. Ես գրած եմ. Մատենի դայմագամը իմացուցած էր որ Չաթի լեռներէն Հայերը կ'իջնեն իսլամները կոտորելու, ինչ որ պէտք է, ընելու է:

«Մուսթաֆա Փաշա. Այս տեղեկագրին վրայ դուք ի՞նչ ըրիք:

«Ճեմալ. Ես ալ քննութիւն մը կատարեցի, հասկցայ որ տեղահան եղած Հայերէն մաս մը եւ փախստական գինուորներ հոն ապաստանած են. արդէն Սերաստիոյ կողմէն տեղահանութիւնը սկսած էր:

«Յարութիւն Էֆեմի. Էնկիւրիի մէջ կարգ մը բանտարկեալներ արձակուեր, գէնք, դաշոյն տրուեր եւ Չորումի կողմը ղրկուեր է. ի՞նչ գիտէք:

«Ճեմալ. Չորումի կողմը արդէն շատ քիչ հայ կայ, այնպէս որ կարելի չեմ տեսներ ատիկա: ¹⁰

«Ընդհանուր դատախազ. Դատապարտեալներէ մէկ մասը արձակուեր են. ասո՞նք են արդեօք ոճիր գործողները թէ մասնաւոր մարմիններ կազմուած են Հայոց բնաջնջման համար:

«Ճեմալ. Իմ՝ Թոգատի կառավարիչ եղած ատենս կարգ մը բանտարկեալներ հանեցինք եւ մարզելով կարին ղրկեցինք. անոնք պատերազմի գիծերուն վրայ գտնուեցան: Ես այս կարգադրութեան համակարծիք չէի, սակայն գործադրել պէտք եղաւ, վեր-

10. Ճեմալ Պէյ ճշմարտութիւնը չ'ըսեր. ինք 12 Դեկտեմբեր 1918ին պաշտօնական վկայութեան մէջ կը յայտարարէ թէ բանտէն ազատ արձակուած ոճրագործները գործածուած են Հայերը կոտորելու եւ անոնց ինչքերը կողոպտելու համար: Ինք կը խոստովանի թէ իր խոհարարուհին ալ եղբայր մը ունէր Սոզդատի բանտին մէջ. ան ալ ազատ արձակուած եւ ղրկուած էր Հայերը ջարդելու:

ջապէս անոնք պատերազմի գիծերուն մէջ գործածուեցան, ուրիշ տեղեր ալ այսպէս եղաւ: ¹¹

«Լեւոն Բէմզի եւ Սաատէտտին Էֆէնտիներու հարցման պատասխանելով Ճեմալ Պէյ ըսաւ. իմ օրովս ոչ ես ոչ ալ ընկերներս, մեր ձեռքը արեան մէջ չենք թաթխած: Եողղատի մէջ Հայերը որեւէ ապստամբական շարժում ցոյց չտուին:

«Նէճաթի Եողղատի մէջ քաղաքապետին տունը իջաւ. ամէնուս հետ կը տեսնուէր: Իմ օրովս ոչ գինուորական ընտանիք, ոչ հոռմէական եւ ոչ ալ բողոքական տեղահան եղան: ¹²

«Ես սպաննուածներուն զգեստներուն ծախուիլը չեմ գիտեր: Ներքին գործոց նախարարութենէն հրահանգ եկաւ որ յանձնաժողով մը կազմուի եւ տեղահան եղողներու դրամը վրան գտնուած առարկաները առնուին եւ յանձնաժողովին յանձնուին:

«Տեղահանութեան սկիզբէն գործը գինուորական իշխանութեան միջոցաւ տեղի կ'ունենար: Իմ պաշտօնականութենէս մէկ օր յետոյ քաղաքային իշխանութեան յանձնուեցաւ այս գործը:

«Եողղատի առաջնորդը ողջամբ հասաւ Սերաստիա եւ տեղեկութիւն եկաւ: Ես Սերաստիա գացողներուն վրայէն դրամ առնուիլը չեմ գիտեր: Ֆէյեազին ալ այդ մարմնոյն մէջ գտնուիլը չեմ յիշեր, որովհետեւ հազիւ երկու երեք ամիս տեւեց իմ պաշտօնս: (1915 Մայիս 5-էն 1915 Օգոստոս 5)

«Նէճաթի եկած ատենը Թէվֆիգի գետնէն բարեւներ կուտար: Կարծեմ Թէվֆիգի քովը գտնուած է:

«Թէվֆիգ. Ես Նէճաթիի քով գտնուած չեմ. անիկա Ճեմալ Պէյի քով գտնուած ատեն տեսած եմ. ուրիշ որեւէ գործ չեմ ունեցած հետը:

«Փաստաբան. Հայերու թնդանօթ կրելու մասին տրուած տեղեկութիւնը չլուսարանուեցաւ:

11. Թուրք պատերազմական ատենը բազմաթիւ վաւերագրերու համաձայն եզրակացուց որ բանտերէն ազատ արձակուած ոճրագործները ղրկուեցան Հայ կարաւանները կոտորելու համար:

12. Սկզբնական շրջանին՝ հրահանգ կար որ կաթողիկէ եւ բողոքական Հայեր տեղահան չըլլան, սակայն 1915 Օգոստոս ամսուան մէջ ներքին գործերու նախարարութենէն հրաման եկաւ տեղահան ընել բոլոր Հայերը առանց որեւէ խտրութեան:

«Ճեմալ, կ'աղաչեմ ասոնք աւելորդ հարցումներ են. եթէ ասանկ բաներ հարցուի, միւս խօսքերուն ալ կասկած կը թողու: Լեռները պտտող մարդոց քով թնդանօթ ի՞նչ գործ ունի. ուսմբը ո՞ւր կէ պիտի գտնեն: Կառավարութիւնները թնդանօթ կ'ունենան:»

«Կարդացուեցաւ Էնկիւրիի կուսակալութեան հեռագիրը ձէմալ Պէյի ուղղուած, որուն մէջ կ'ըսուի թէ բժիշկ, փաստաբան, մտաւորական եւ քօմիթէներու անդամներ եւ անոնց հետեւող կասկածելի անձեր ամբողջովին տեղահան ըրէք եւ Զօր զրկեցէք իրենց գոյքերը ապահովելով:»¹³

Եոզղատի կառավարիչ ձէմալ Պէյ շատ բաներ կը ծածկէ եւ ուրիշ կարեւոր խնդիրներու մասին բառ մը իսկ չ'ըսեր:

Անգարայի Միութիւն եւ Յառաջդիմութիւն կուսակցութեան պատասխանատու քարտուղար Նէճաթի Պէյ ձէմալ Պէյի բերած էր բերանացի եւ գրաւոր հրամաններ եւ իրեն առաջարկած էր Եոզղատ գաւառի Հայերը ոչ թէ միայն տեղահանել այլ նաեւ զանոնք կոտորել եւ ինք մերժած էր կոտորել բացարձակապէս:

ձէմալ Պէյ մեծապէս կը սխալի երբ կը հաստատէ թէ այրերու առաջին կարաւանը ողջ հասած է Սեբաստիա: Նէճաթի Պէյ Զորումէն Եոզղատի վրայով խօսած էր Սեբաստիոյ Միութիւն եւ Յառաջդիմութիւն կուսակցութեան պատասխանատու քարտուղար Ղանի Պէյի որ Եոզղատի առաջին կարաւանին յաւիտենական հանգիստը ապահովէ: Իրապէս ալ Գարտաշարի ձորին մէջ առաջին կարաւանի 472 այրերը կոտորուեցան եւ դիակները գետ նետուեցան:

ձէմալ Պէյ Եոզղատցի Ապտիւլ ձէպպարզատէ Էտիպ Պէյի, որ Սելեւկիոյ կառավարիչ եղած էր, մտերմաբար խոստովանած է թէ Նէճաթի Պէյ իրեն բացայայտօրէն առաջարկած է Միութիւն եւ Յառաջդիմութիւն կուսակցութեան եւ Ներքին Գործերու Նախարարութեան բացայայտ հրամանը կոտորելու գաւառի բոլոր Հայերը:

Ստորեւ կու տանք Ապտիւլ ձէպպարզատէ Էտիպ Պէյի գրաւոր վկայութիւնը որ կը պարզէ կառավարիչ ձէմալ Պէյի մտերմական խոստովանութեան մանրամասն պարագաները:

13. Ժամանակ, 6 Մարտ 1919, 11րդ դատավարութիւն Եոզղատի ջարդարարաններուն:

Բնիկ Եոզղատցի Ապտիւլ ձէպպարզատէ Էտիպ Պէյ Կիլիկիոյ նահանգին մէջ Մերսինի մօտ ծովեզերեայ Սելեւկիա քաղաքին մէջ միւթէսարըֆի պաշտօն վարած էր, եւ 1915ին Հայերու տեղահանութեան եւ կոտորածի ատեն Եոզղատ կը գտնուէր:

ձէմալ Պէյ իր պաշտօնանկութենէն ետք Էտիպ Պէյի տունը այցելեց իբր մտերմ բարեկամ եւ խօսակցութեան ընթացքին անոր յայտնեց Նէճաթի Պէյի Անգարայէն իրեն բերած կոտորածի հրամանին մասին բացայայտ տեղեկութիւններ:

Պոլսոյ Պատերազմական Ատեանի մասնաւոր պահանջով, Եոզղատի նոր կառավարիչը Ապտիւլ ձէպպարզատէ Էտիպ Պէյէն գրաւորապէս պահանջեց որ գրի առնէ իր վկայութիւնը:

Էտիպ Պէյ 10 Փետրուար 1919ին պատասխանեց եւ մանրամասնութիւններ հաղորդեց ձէմալ Պէյի հետ իր ունեցած մտերմական խօսակցութեան վրայ. ձէմալ Պէյ մտերմաբար իրեն խօսած էր այն վէճի մասին որ տեղի ունեցած էր ձէմալ Պէյի միջեւ Հայերու տեղահանութեան եւ կոտորածի վրայ:

Հայաստան թրքերէն բնագիր.

Հայերէն թարգմանութիւն.

ԶԵՂԷՆ ԱԵՎԱՍ.

Սաատէթլու Էֆէնտիմ Հազրէթլերի,

Հաթըրը աճիգանէմտէ քալտըղընա կէօրէ Էրմէնիլերին անգլ վէթհհիրի Էմրի վերիմիշ վէ պունուն իշին տէ Անգարա Քեաթիպի Մէտուլը Նէճաթի Պէյին Եօզղաթա կէմիշ պուլունտուղը սրրատա միթէսարըֆը Էպաք Ճեմալ Պէյ պիր կիւն ֆաթիրհանէյէ կէլերէք, սէվգօլունանաք Էրմէնիլերին իմհասը քէյֆիլէթինի Նէճաթի Պէյին քէնտիսի թէքիլիֆ Էթթիլիին վէ պունա քարշը վերտիլի ճեվաթթա պու պապտա հիթիմէթ վագը օլան թէպլիղաթը ըւմիլէտէ Էրմէ-

Լրացուցիչ պատասխան.

Բարձրապատի եւ Գերագանց Տէր, Որքան որ ես կրնամ յիշել, մենք կրցանք տեղեկանալ որ Հայերը արքորելու եւ տեղահանելու հրամաններ հասան: Այս հրամանները գործադրելու համար, Անգարայի Միութիւն եւ Յառաջդիմութիւն կուսակցութեան պատասխանատու քարտուղար Նէճաթի Պէյ Եոզղատ եկաւ: Եոզղատի նախկին միթէսարըֆ Ճեմալ Պէյ մեր տունը այցելեց օր մը եւ յայտնեց թէ Նէճաթի Պէյ իրեն հաղորդած էր Հայերը բնաջնջելու հրամանը: Ճեմալ Պէյ պատասխանած է. «Կառավարութիւնը հրամայած է արքորել Հայերը

Ահլերին իմհաւը էտիլէն մահալլէ-
րէ սէվգ վէ իզամլարը պիլտիրտի-
դինտէն էմիր հիլաֆընա հարէ-
քեսաթ իմհա քէյֆիլէթինէ ալա մու-
վաֆաքաթ էտիլմիլէճէդինի ստոյ-
լէմէսի իզերինէ մաքսատը զահի-
րէ նաքիլ վէ թէհնիր օլուսի ֆաքաթ
Մէրքէզի Ումումիհին վէ Տախիլի-
յէ Նազըրըն վազիֆէի վաթանիլէ
եօլունտաքի էմիր վէ էմէլլէրի իմ-
հա օլտուդունտան պունա առէմի
մուվաֆաքաթ հագգընտա էլիլիք
կէթիրմէլէճէդի զըմընտա թէքլի-
ֆի վաքիլէ Նէճաթի Պէյին թէք-
րար էլլէմէսիլէ գարշը էտէմէլէ-
ճէդի ճէվապընընը վէրտիդինի
մահրէմանէ օլարաք ստոյլէմիշ վէ
հաթթա ստօզիլէն իլավէթէն տիւն-
եսարընը վէ ախրէթինի տիշիւնէն-
լէր իշիմ պէտոյլէ պիր հալէ ճիւրթ
էթմէթթէ օլամայաճաղը թապի-
տիր տէմիշ օլտուղը վարտի հա-
թըրը աճիզտիր, օլպապտա իրա-
տէ էֆէնտիմ Հազրէթլէրիհինտիր:

10 Շուպաթ 335.

Սիլիֆթէ Միլթէսարըֆը Էսպաթը
Էտիպ: 14

Ճէմալ Պէյ թէ' 12 Դեկտեմբեր 1918ին Նախագահ Մազհար Պէ-
յի առջեւ երդումէ ետք իր տուած վկայութեան եւ թէ 5 Մարտ
1919ին Թուրք Պատերազմական տեանի առջեւ իր երդուեալ
վկայութեան մէջ զանց կ'ընէ Անգարայէն մասնաւորապէս Եոզղատ
զրկուած Նէճաթի Պէյի բերած հրամանը պարզապէս բնաջնջելու
Եոզղատ գաւառի հայերը: Այս մասին Ճէմալ Պէյ ուզած էր լուս
անցնիլ պաշտօնապէս:

14. Դ. Ե. Թիւ Մ 534:

կանխապէս որոշուած վայրեր եւ
յիշեցու ցած է Նէճաթի Պէյի թէ
ինք (Ճէմալ Պէյ Գ) չ'ուզեր գործել
կառավարութեան հրամաններուն
հակառակ, եւ թէ ինք բացարձա-
կապէս հակառակ է Հայերու բը-
նաջնջումին:» Ասոր վրայ Նէճաթի
պէյ պատասխանած է. «Թէեւ կա-
ռավարութեան տուած հրամանը
երեսութապէս աքտրել է Հայերը,
սակայն Կուսակցութեան Կեդրո-
նական Կոմիտէի եւ Ներքին Գոր-
ծերու Նախարարութեան իսկա-
կան նպատակն է բնաջնջել Հա-
յերը եւ այս ձեւով ծառայութիւն
մատուցանել հայրենիքին:»

Ճէմալ Պէյ ինձի մտերմաբար
ըսաւ թէ ինք վճռապէս հակառա-
կած է Նէճաթի Պէյի առաջարկին:
Ես կը յիշեմ թէ Ճէմալ Պէյ առար-
կած է թէ բնական չէ մարդու հա-
մար որ երկինքի կը հաւատայ մաս-
նակցիլ այսպիսի ոճրագործու-
թեան մը: Այս է իմ յիշածս, հետե-
ւաբար, ձեզի կը մնայ հրամայել:

10 Փետրուար 1919.

Սելեւկիոյ Նախկին Միլթէսարըֆ'
Էտիպ:

ԳԼՈՒԽ Ժ.

Եոզղատի Առաջնորդ Ներսէս Դանիէլեանի
Եպիսկոպոսական Մատանին

Թուրք Պատերազմական Ատեանի հաւաքած պաշտօնական
վաւերագրերու մէջ այնպիսի մանրամասնութիւններ կան որոնք
լոյս կը սփռեն Հայերու տարագրութեան, կոտորածի, եւ ինչքերու
կողոպտութի ստոյգ պատմութեան վրայ: Հետազօտողը, ուսում-
նասիրողը եւ պատմագէտը չեն կրնար զանց առնել այդպիսի վա-
ւերական մանրամասնութիւններ, որոնք անհրաժեշտ են բացատ-
րելու եղեռնի ահաւորութիւնը, թուրք կառավարութեան, Երի-
տասարդ Թուրքերու, պաշտօնեաներու եւ ժողովուրդի ընչաքաղ-
ցութիւնը:

Թուրք Պատերազմական Ատեանի նախագահը կը հրամայէ 4
Փետրուար 1919ին Եոզղատի նոր կառավարութեան որ տեղւոյն
վրայ քննութիւն կատարել տայ եւ երեւան հանէ թէ Եոզղատի Ա-
ռաջնորդ Ներսէս Դանիէլեան ի՞նչպէս եւ ո՞ւր մեռաւ եւ ո՞վ առաւ
անոր եպիսկոպոսական մատանին, որ լքեալ գոյքերու օրէնքի
տրամադրութեան համաձայն լուծարքի յանձնախումբերու մա-
տեաններուն մէջ արձանագրուած ըլլալու էր:

Եոզղատի Միլթէսարըֆ Ճէմալ Պէյ պաշտօնապէս երկու ան-
գամ վկայեց թէ Թուրք Հարցաքննիչ Յանձնախումբի եւ թէ Թուրք
Պատերազմական Ատեանի առջեւ որ ինք 18 Յուլիս 1915ին Ան-
գարայի Կուսակալի Փոխանորդ Աթըֆ Պէյէն ստացաւ հրաման-
ներ եւ հրահանգներ տեղահանելու Եոզղատ գաւառի Հայերը:
Սակայն իր վկայութեան մէջ ոչ իսկ ակնարկեց որ իր ճամբայ
հանած 472 Հայ այրերու կարաւանը կոտորուեցաւ Մուամմէր Պէ-
յի հրամանով Սեքաստիոյ նահանգին մէջ Եոզղատի գաւառի ի-
րաւասութեանէն դուրս: Իրեն հետ գործակցող Հազարապետ Սալիմ
Պէյ շատ աւելի անկեղծեղած է տալով ստոյգ տեղեկութիւն նոյն
կարաւանի կոտորածի մասին: Ճէմալ Պէյ եւ Սալիմ Պէյ շատ ան-

զամներ իրարու հետ խորհրդակցեցան որ Հայերը միայն տարագրեն առանց կոտորելու: Գոնէ այս էր իրենց դիտաւորութիւնը:

Սակայն երբ Անգարայի պատասխանատու քարտուղար Նէճաթի Պէյ Եոզղատ եկաւ 20 Յուլիս 1915ին, իր հետ բերաւ ոչ թէ միայն Հայերու տարագրութեան այլ նաեւ մասնաւորապէս կոտորածի հրամանը, ձէմալ եւ Սալիմ Պէյեր շատ լաւ ըմբռնեցին թէ տարագրել համահաւասար էր կոտորածի: Սահմանադրութեան տրամադրութեան համաձայն երկուքն ալ հրաժարելու էին եթէ իսկապէս կ'ուզէին Եոզղատի Հայերը կոտորել չտալ:

Նէճաթի Պէյի բերած գաղտնի հրամանները շատ յստակ էին. տարագրութեան պատրուակին եւ արտաքին երեւոյթին ետեւ Երիտասարդ Թուրքերու Կուսակցութեան եւ ներքին գործերու նախարարութեան գաղտնի հրահանգները զանոնք կը ստիպէին թէ տեղահանել եւ թէ ալ կոտորել տալ հայ ժողովուրդը: Այս մասին Եոզղատցի Ապտիւլ ձէպպարզատէ էտիպ Պէյ, Սելեւկիոյ նախկին միւթէսարըֆ, 10 Փետրուար 1919ին պատասխանեց կառավարիչի հարցումներուն եւ անոր պարզեց նախկին կառավարիչ ձէմալ Պէյի իրեն հետ ունեցած մտերմական խօսակցութիւնը որու ընթացքին ձէմալ Պէյ մերժած էր կոտորել Հայերը երբ Նէճաթի Պէյ բացայայտ կերպով ըսած էր. «Թէեւ կառավարութեան տուած հրամանը երեւութապէս Հայերը աքսորել է, սակայն Միութիւն եւ Յառաջդիմութիւն Կոմիտէի եւ ներքին գործերու նախարարութեան իսկական նպատակն է բնաջնջել Հայերը եւ այսպէսով ծառայութիւն մատուցանել մեր հայրենիքին:»¹

ձէմալ Պէյի հարցաքննութեան ընթացքին՝ Թուրք Պատերազմական Ատեանի նախագահը ձէմալ Պէյի դիտել տուաւ թէ տեղահանուելիք Հայերու դրամները հաւաքել կը նշանակէր պարզապէս թէ անոնք մահուան կը զրկուին քանի իրենց ապրուստ զնելու միջոցէն բոլորովին կը զրկուին: ձէմալ Պէյ պատասխանեց որ այդ էր նախարարութեան հրամանը:

Սակայն նախ տանք ձէմալ Պէյի ստացած ծածկագիրը հեռագիրը:

Անգարայի Փոխ Կուսակալ Աթըֆ Պէյի Ծածկագիր Հեռագիրը
Եոզղատի Միւթէսարըֆ ձէմալ Պէյի՝

Հայաստան թրքերէն բնագիր

Հայերէն թարգմանութիւն

Եոզղատ մութասարըֆ
Ձէմալ պէյէ

Եոզղատի Միւթէսարըֆ
Ձէմալ Պէյի,

Լիվա տախիլիստ պուլունան Էրմէնիլերտէն Գոմիթէյէ մէնսուպ օլանլար միւրթէմէլ պուլունանլարըն վէ պիլիսասա մուալլիմ, սօքթօր, Էճաւը, փափագ, թիւնար, ավուքաթ, Էվքէարը ֆասիտէ նաշիրլերիսին վիճուտի մէմլէթէին էմնիլէթի հազըրա վէ սէլամէթի աթիլէտի նօքթաի նազարընտան մուզըր վէ թէհիլթէլի պուլունանլարըն տէրտէսթէլի իլէ Զօր հավալիսիստէ պու քապիլլէրէ թահսիս օլունան մահալլէ սէվգէտիլմէք իզլէրէ մահֆուզէն Եօլա չըզարըլմասը վէ Էսնաի սէվգիլաթթա մալ վէ նամուլարընըն² թահթը մուհաֆագայա պուլունտուրմասընա տիքքաթ Էտիլմէտի վէ նէթիճէտիսին պիլտիրիլմէտի թավսիլէ օլունուր:

Ձեր գաւտին մէջ բնակող Հայերէն՝ կոմիտէներու պատկանողներու կամ այդպէս կարծուածներու ներկայութիւնը, մասնաւորապէս ուսուցիչներու, դեղագործներու, բժիշկներու, կրօնականներու, վաճառականներու, փաստաբաններու, բժրոստական գաղափարներ տարածողներու ներկայութիւնը ներկայի ապահովութեան եւ երկրին ապագայ փրկութեան վնասակար ու վտանգատուրըլլալով, կը խնդրեմ որ ձերբակալել տաք այդպիսի անհատները եւ զանոնք դրկէք հսկողութեան տակ Զորի կողմէրը, որ մասնաւորապէս յատկացուած է այդ տեսակի մարդերու: Պատշաճ է որ անոնց փոխադրութեան ընթացքին, անոնց ինչքերն ու պատիւը պահպանուին: Կը խնդրուի տեղեկացնել արդիւնքը:³

18 Թէմնուզ 331.

18 Յուլիս 1915.

Անգարա Վալի Վէթիլի՝
Աթըֆ:

Անգարայի Կուսակալի Տեղակալ՝
Աթըֆ:

1. Դ.Ն. թիւ Մ 534:

2. Ընդգծումը մեզմէ. Դ. Ն. թիւ Հ 612:
3. Նկատել որ Աթըֆ Պէյ չ'ըսեր պաշտպանել Հայերու Կեանքը, այլ անոնց ինչքն ու պատիւը, որովհետեւ ինքն էր որ Պոլսէն Անգարա եկաւ եւ իր հետ բերաւ Հայերու կոտորածի գաղտնի գրաւոր եւ բերանացի հրամանը եւ հրահանգները:

Այս պաշտօնական հրամանը ստանալէ ետք, ձէմալ պէյ հրա-
ժարելու տեղ, Եոզղատի բանտը լեցուց երեւելի Հայերով, եւ հրա-
մայեց որ բանտի մէջ կազմուի գրասենեակ մը յատկապէս տարագ-
րելի Հայերու դրամները եւ թանկարժէք իրերը հաւաքելու համար
ներքին գործերու նախարարութենէն զրկուած մասնաւոր հրամա-
նի մը համաձայն:

Ճիշդ է որ ձէմալ եւ Սալիմ Պէյեր ամէն ջանք ըրին որ առա-
ջին կարաւանը Եոզղատ գաւառի սահմաններուն մէջ չկոտորուի,
սակայն միւս կողմէ շատ լաւ գիտէին որ իրենք Եոզղատի գաւառէն
դուրս ոչ մէկ իրաւասութիւն ունէին եւ թէ ինչ որ իրենք արգելած
էին Եոզղատ գաւառի մէջ կատարել՝ կրնար կատարուիլ հազիւ
թէ առաջին կարաւանը դուրս ելլէր Եոզղատի սահմաններէն եւ
մտնէր Սերաստիոյ նահանգին սահմանները ուր քաղաքային եւ
գինուորական իշխանութիւնները տարբեր էին, եւ տրամադիր էին
կատարել կոտորածի հրամանները իրենց իրաւասութեան սահ-
մաններէն ներս:

Երկուշաբթի 26 Յուլիսին ձէմալ Պէյի հրամանով Եոզղատի
Հայերու առաջին կարաւանը ճամբայ հանուեցաւ, եւ Սալիմ Պէյ
նոյն օրն իսկ հեռագրեց Կեսարիա իր անմիջական մեծաւոր Հա-
զարապետ Շէհապէտտին Պէյի, որ իր կարգին լուրը հեռագրով
հաղորդեց իր անմիջական մեծաւոր Միրալայ Խալիլ Բէճաի Պէյի,
Անզարա Հինգերորդ Զօրաբանակի Հրամանատարին:

Կեսարիոյ Տասնեւհինգերորդ Զօրաբաժնի Հրամանատար Շէ-
հապէտտին Պէյ Եոզղատի Հայերու առաջին կարաւանի մեկնումը
կը հաղորդէ Անզարայի Հինգերորդ Զօրաբանակի Հրամանատար
Միրալայ Խալիլ Բէճաի Պէյի որ իր կարգին զայն հաղորդէ Պոլիս
Ընդհանուր Սպայակոյտի պետին ըստ նուիրապետական կարգի
կանխապէս եղած կարգադրութեան համեմատ.

Հայատառ թրքերէն բնագիր

Հայերէն թարգմանութիւն

Ատէտ 846.

Կարգաթի 846.

Պէշիմնի Գօլօրտու

Հինգերորդ Զօրաբանակի

Գումանտանլըղը Վէրպալէթիմէ.

Հրամանատարի փոխանորդին.

Տիւն գապլ էլ գէվալ պաշտա

Պատի ունիմ, ձեզի իմացնելու

մուրախասա վէ փափազլարը,

որ Եոզղատի զինուորազրութեան

էշրաֆ վէ էրապիր օլտուղու հալ-

հատուածի նախագահին հաղոր-

տէ տէօրթեիզէթմիշիթի քի-
շիլիք պիրիմնի գաֆիլէ միրէֆֆէ-
հէն մահալը միրէթթէպլէրիմէ
սէվգօլունտուղու Եօզղաթ-Ջիլէ
թարիգիլէ իքիմնի գաֆիլէսի տա-
խի եարըն եօլա չըգարըլաճաղը վէ
մըգտարը այրըճա արգ էտիլէճէ-
յի Եօզղաթ Ախալը Ասքէր Ծուպէ-
սի թիյասէթիմիմ իշարըճա արթէն
մարուգտուր:

27 Թէմուզ 331.

27 Յուլիս 1915.

Ճըրգա Օնպէշ Գումանտան

Տասնեւհինգերորդ Զօրաբաժնի

Վէրիլի՝

Հրամանատարի փոխանորդ՝

Շէհապէտտին:

Շէհապէտտին:

Հազարապետ Սալիմ Պէյ կը վկայէ թէ «Առաջին կարաւանի
առաքումի ընթացքին չորս հարիւր եօթանասուն երկու տեղահան-
ուանձ Հայերը սպանուեցան Սերաստիոյ Կուսակալ Մուամէթը
Պէյի հրամանով հակառակ այն հրամաններուն որոնք տրուեցան
իրեն (Թէվֆիգ Պէյի Գ) Միւթէսարըֆ (ձէմալ Պէյի Գ) եւ նուաստ
ժառայիս կողմէ: Ինքն (Թէվֆիգ Գ) իսկ որոշեց ընկերանալ կար-
աւանին եւ յանդգնեցաւ անոնց (472 Հայերուն Գ) փորել տալ հա-
սարակաց փոս մը Ինճէ Չայիրի մէջ տարագրուածները կոտորելու
եւ թաղելու համար:

«Երբ իմացանք այս բանը, անմիջապէս հոն զրկեցինք զինայ-
րերու տեղապահ ձեւատ էֆէնտի ճիշդ այն վայրը եւ իրեն պաշտօն
յանձնեցինք կարաւանը առաջնորդելու դէպի Սերաստիա եւ ետ
կանչելու Գնդապետ Թէվֆիգ էֆէնտին: Այսպէսով կրցանք ոճի-
րին առաջըն առնել եւ կարաւանը ողջ առողջ հասաւ Սերաստիա:»⁵

Եոզղատի Հայերու առաջին կարաւանը ճամբայ հանուեցաւ
26 Յուլիս 1915ին՝ Եոզղատ Զիլէ ուղիով: Այս կարաւանին մէջ
էին Եոզղատի Առաջնորդը Ներսէս Եպիսկոպոս Դանիէլեան, եօթն

4. Դ. Ե. Թիւ 4 618:

5. Յաւելուած 1:

քահանաներ, տասնեւհինգ ուսուցիչներ, մտաւորականներ, բը-
ժիշկներ, դեղագործներ, վաճառականներ եւ Եոզղատի երեւելի
Հայեր: Հազարապետ Սալիմ Պէյի վկայութեան համաձայն այս
կարաւանը կոտորելու փորձ եղաւ դեռ Եոզղատ գաւառի սահման-
ներէն դուրս չելած Պէյ Եուրտու գիւղին մօտ ախոռի մը մէջ,
բայց ջարդարար հրոսակները բոլորովին պատրաստ չէին կոտո-
րածը գլուխ հանելու որովհետեւ ՄիւթէսարըՖ ձէմալ Պէյ եւ հա-
զարապետ Սալիմ Պէյ կանխապէս իմացուցած չէին թէ կարաւանը
Պէյ Եուրտուէն պիտի անցնէր, եւ թէ ձէմալ Պէյ եւ Սալիմ Պէյ
մարդ ղրկեցին եւ գլխաւոր ջարդարար հրամանատար Թէվֆիգ
Պէյը ետ կանչել տուին, որ կարաւանին ընկերացած էր առանց
հրամանի:

Որքան ատեն որ կարաւանը գաւառի սահմաններուն մէջ էր,
կախում ունէր քաղաքային կառավարիչ ձէմալ Պէյէն եւ հրամա-
նատար Սալիմ Պէյի գինուորական իրաւասութենէն, ինչպէս նա-
եւ հինգերորդ զօրաբանակի ընդհանուր հրամանատարէն:

Նոյն կարաւանը Սերաստիոյ սահմանները հասնելէն ետք կը
մտնէր Կուսակալ Մուամմէր Պէյի քաղաքային իշխանութեան ներ-
քեւ եւ Երրորդ Զօրաբանակի գինուորական իրաւասութեան տակ:
Սերաստիոյ նահանգին մէջ թէ ձէմալ Պէյ եւ թէ Սալիմ Պէյ որեւէ
իշխանութիւն չունէին:

Նէճաթի Պէյ որ շատ լաւ հասկցած էր թէ ՄիւթէսարըՖ ձէմալ
Պէյի թէ հրամանատար Սալիմ Պէյի տրամադրութիւնները կոտո-
րել չտալու Եոզղատ գաւառի Հայերը, Զորումէն Եոզղատի վրայով
հեռագրաթելով հաղորդակցութեան մէջ մտաւ Սերաստիոյ Միու-
թիւն եւ Յառաջդիմութիւն Կուսակցութեան պատասխանատու
Քարտուղար Ղանի Պէյի հետ եւ անկէ խնդրեց որ կազմակերպէ
Եոզղատի առաջին կարաւանի Հայերուն յաւիտենական հանգիստը:

Օգոստոս 6ին Եոզղատի առաջին կարաւանի 472 Հայերը հա-
սան Սերաստիայէն չորս ժամ հեռու Քարտաշեարի ձորը, ուր կը
սպասէին Մուամմէր Պէյի կողմէ հոն ղրկուած ջարդարար հրոսակ-
ները իրենց պետերով:

Կարաւանի Հայերը չորսական իրարու հետ կապուած էին:
Ձայն առաջնորդող ոստիկանները յանձնեցին կապուած Հայերը
նոյնինքն հրոսակներուն, որոնք իրենց վստահուած պաշտօնը
կատարեցին կոտորելով կարաւանը եւ կողոպտելով անոնց ունե-
ցածները:

Թուրք Պատերազմական Ատեանի նախագահին գրաւոր հրա-
մանին համաձայն Եոզղատի կառավարիչը 9 Փետրուար 1919ին
Եոզղատի նամակատան հեռագրատան տնօրէն Կիրիտլի Հիլմի Պէ-
յի պաշտօնապէս եւ գրաւոր կերպով կը հարցնէ թէ ինչպէս Եոզ-
ղատի առաջին կարաւանը ճամբայ հանուելէ ետք, Անգարայի Պա-
տասխանատու Քարտուղար Նէճաթի Պէյ հեռագրաթելով խօսած էր
Սերաստիոյ Պատասխանատու Քարտուղար Ղանի Պէյի հետ որ
ապահովէ առաջին կարաւանի Հայերուն յաւիտենական հանգիստը:

Եոզղատի ՄիւթէսարըՖը Եոզղատի հեռագրատան տնօրէնէն
կը պահանջէ Նէճաթի Պէյի հաղորդած հրամանի մասին ստոյգ
մանրամասնութիւն:

Հայատառ թրքերէն բնագիր
Եօզղաթ Թէլկրաֆ Փօսթա
Միւտիւրիլէթիմէ.

Հայերէն թարգմանութիւն
Եոզղատի նամակատան
Հեռագրատան Տնօրէնութեան.

Թէհնիր Էւնասընտա Եօզղաթ-
թան իլք գաֆիլէնիմ հարէքաթիմ-
տէ Անգարա Իթթիհատ վէ Թէ-
րագգի Քեաթիպի Մէտուլը Նէճա-
թի Պէյ թարաֆընտան Սիվաս «իլք
գաֆիլէ Եօզղաթթան հարէքաթ
էթմիշտիր. պունլարըն իսթիրա-
հաթընըն թէմիմի եօլունտա սեր-
վիս վերիլտիլի իսթիլպար էտիլ-
միշտիր.» պու սերվիս միւմաիլէ-
հէ Աէ՛րէտէն վերիլմիշտիր. Սիվաս-
տա քի՛միմ Ասմընս վերիլմիշտիր.
մէալը Աէ՛տիր. գէլլէն իմպասը
թավսիլէ օլունտը Էֆէնտիմ:

9 Շուպաթ 335.

Եօզղաթ ՄութասարըՖը՝
Լէոն: 6

Տարագրութեան ընթացքին՝
Եոզղատի առաջին կարաւանին
ճամբայ ելլելուն՝ Անգարայի Միու-
թիւն եւ Յառաջդիմութիւն Կուսակ-
ցութեան պատասխանատու Քար-
տուղար Նէճաթի Պէյի կողմէ
Սերաստիա՝ «Առաջին կարաւանը
Եոզղատէն մեկնած է. ասոնց
հանգիստը ապահովելու համար
մասնատր սպասարկութեամբ
կարգադրութիւն եղած է: Սերաս-
տիա որո՞նք անունին ուղղուեցաւ
այդ (հեռագրական խօսակցութի-
ւնը Գ): Ի՛նչ է իմաստը. կը խընդ-
րենք որ մեզի մանրամասն տեղե-
կացնէք: 9 Փետրուար 1919.

Եոզղատի ՄիւթէսարըՖ՝
Լէոն:

Երկրորդ հեռագրատան տնօրէն Կիրիտլի Հիմլի Պէյ 10 Փետրուար 1919ին պատասխանեց Երկրորդ կառավարիչին եւ տուաւ հետեւեալ լրացուցիչ մանրամասն տեղեկութիւնները Նէճաթի Պէյի Սերաստիոյ հետ հեռագրաթելով խօսակցութեան մասին: Իսկ Երկրորդ Միւթէսարը՝ իր կարգին նոյն մանրամասնութիւնները հաղորդեց Պոլիս Թուրք Արտակարգ Պատերազմական Ատեանի Նախագահին:

Երկրորդ Նամակատան-Հեռագրատան Տնօրէն Կիրիտլի Հիմլի Պէյի Պատասխանը.

Հայաստան թրքերէն բնագիր

Հայերէն թարգմանութիւն

Ձեյլէն ճեպագ.

Լրացուցիչ Պատասխան.

Անգարա Իթթիհատ Քեաթիպի Մէտուլու Նէճաթի Պէյ Զորումտա պուլունտուղու սրատա պիր ազաւ արգարաշարքումտան Սիվասա եօլ իսթետի. հէրհալ հազըր պուլունան Սիվաս մէրքեգիլլէ պուլունտուրմուշ. օրա Իթթիհատ Քեաթիպի Մէտուլու Ղանի Պէյի մաքինա պաշընա ճեպ էտէրէք, վէ պէնտէնիգտէ րօլէ պաշընա օլտուղում հալտէ մէյանլարընտա մէրհապալաշտըգտան սօնրա, միւմաիլէյի Նէճաթի Պէյ Ղանի Պէյէ խիթապէն՝ «Եօզդաթթան սեվգէտիլէն գաֆիլէ էրմէնի մէնֆիլէրի վագթըլլա հիւսնի խըտմէթլէրի կէօրիլէն Եօզդաթթան իլէրի կէլէն թագըմընտան պուլունտուղարը ճիհէթլէ, իսթիրահաթլարընըն հէր հալտէ թէէմինի լագըմ կէլիր.» Իֆատէի շիֆայիլէտէ պուլունտուղունուն պիզգաթ իշիթ-

Անգարայի Միութիւն եւ յառաջդիմութիւն Կուսակցութեան Պատասխանատու Քարտուղար Նէճաթի Պէյ իրիկուն մը Զորումէն իմ պաշտօնակիցներու մէկէն խնդրեց որ զինք Սերաստիոյ հետ հաղորդակցութեան մէջ դնէ: Անմիջապէս Սերաստիոյ կէդրոնին հետ հաղորդակցութեան մէջ դրուեցաւ: Գործիքին առջեւ կանչեց Սերաստիոյ միութիւն եւ Յառաջդիմութիւն Կուսակցութեան Պատասխանատու Քարտուղար Ղանի Պէյը, եւ իմ ներկայութեանս, սովորական ողջոյնէն ետք, Նէճաթի Պէյ խօսեցաւ հետեւեալ կերպով. «Երկրորդ տարագրուած Հայերու առաջին կարաւանին մատուցած ծառայութիւնները, ինչպէս նաեւ անոնց բարեկեցիկ վիճակը նկատի առնելով, կը խնդրեմ որ անոնց հանգիստը ապահովէք:»

թիւ, արգ օլունուր, էֆէնտիմ:

Կը վկայեմ որ այս բերանացի յայտարարութիւնը լսեցի, տէր իմ:

10 Շուպաթ 1335.

10 Փետրուար 1919.

Եօզդաթ Թէլկրաֆ-Փօսթա

Երկրորդ Նամակատան

Միտիրի՝

Հեռագրատան Տնօրէն՝

Հիլմի: 7

Հիլմի:

Սերաստիոյ Կուսակալ Մուամմէր Պէյի եւ պատասխանատու քարտուղար Ղանի Պէյի հրամանով Երկրորդ չորս հարիւր եօթանասուն երկու երեւելի Հայերը իրենց յախտենական հանգիստը գտան սերաստիոյ քաղաքէն չորս ժամ հեռու Գարտաշարի ձորին մէջ 6 Օգոստոս 1915ին: Գարտաշար հաւաքուած Թուրք ու Քուրտ հրոսապետները եւ իրենց հրոսակները Երկրորդ առաջին կարաւանի այրերը չորսական իրարու կապուած վիճակի մէջ յանձն առին՝ իրենց ստացած հրամանին համեմատ կատարելու իրենց տըրուած պատասխանատու պարտականութիւնը: Հրոսակները կոտորեցին կարաւանի բոլոր Հայերը մէկիկ մէկիկ, եւ զանոնք նետեցին գետի հոսանքին մէջ:

Թուրք Պատերազմական Ատեանի Նախագահը 1 Մարտ 1919ին դարձեալ կը հրամայէ Երկրորդ կառավարիչին որ քննութիւն կատարէ եւ իմացնէ թէ Առաջնորդ Ներսէս Դանիէլեանի եպիսկոպոսական մատանին ո՞վ հանած է անոր մատէն, եւ քանի որ արժէքաւոր մատանի մըն էր, պէտք էր որ արձանագրուած ըլլար Լքեալ Գոյքերու մատեանին մէջ եւ ապա լուծարքի հրահանգներուն համաձայն աճուրդով ծախուած ըլլար եւ անոր արժէքինը անցած ըլլար լուծարքի հաշուետետրներուն մէջ:

Թուրք Պատերազմական Ատեանի Նախագահը կը հրամայէ Եոզղատի կառավարիչին մասնաւոր քննութիւն կատարել.

Հայաստան թրքերէն բնագիր

Հայերէն թարգմանութիւն

Եօզղաթ Մուրախասարըֆլըղընա.

Եոզղատի Կառավարութեան.

Եիզիքի Մուրախասանըն բարմաղընտան քի՛մ չըգարըփթա թասփիյէ Գօմիսիօնունա թէւլիմ էթմիշ օլտուղունուն վէ թարիսի թէւլիմիսին տէ թահգիգ վէ միգայէտէ իլք սաթըլտըղընա վէ պէտէլի թէւլիյէ Էտիլտիղիսէ տաիր թասփիյէ տէֆթըլէրիստէ մէվնոտ օլմագ լագըմ կէլէն գույուտաթըն լահիգը վէչհիլէ թէտգիգ պույուրույմասը վէ նէթիսէսիսին պիլտիրիլմէսի:

1 Մարտի 335.

Թէհնիր Տիվանը Հարպի Էօրֆի Բէիսի: 8

Հաճէիք քննութիւն կատարել եւ մեզի իմացնել թէ Առաջնորդի մատեն մատանին ո՞վ հանեց, եւ զայն յանձնեց Լուծարքի Յանձնախումբին. թէ յանձնումը ո՞ր թուականին եղաւ եւ անոր արժէքը գնահատուելէ ետք անուրդով առաջին անգամ ծախուեցաւ. անշուշտ Լուծարքի հաշուետուներուն մէջ պատշաճօրէն պէտք է արձանագրուած ըլլայ: Ձեր քննութեան արդիւնքը մեզի տեղեկացուցէք:

1 Մարտ 1919.

Տարագրութեան՝ Պատերազմական Ատեանի Նախագահ:

Թուրք Ատեանի Նախագահը դարձեալ կը հրամայէ 4 Փետրուար 1919ին Եոզղատի կառավարութեան որ տեղւոյն վրայ քննութիւն կատարէ եւ երեւան հանէ թէ Առաջնորդ Ներսէս Դանիէլեան ի՞նչպէս եւ ո՞ւր սպանուեցաւ եւ ո՞վ առաւ անոր եպիսկոպոսական մատանին, որ Լքեալ Գոյքերու օրէնքին տրամադրութեան համաձայն Լուծարքի Յանձնախումբերու մատեաններուն մէջ արձանագրուած ըլլալու էր:

8. Դ. Ե. Թիւ Մ 230:

Թուրք Պատերազմական Ատեանի Նախագահը Եոզղատի կառավարութեանէն կը պահանջէ քննութիւն կատարել եւ երեւան հանել Առաջնորդ Ներսէս Դանիէլեանի սպանութեան պարագան եւ անոր եպիսկոպոսական մատանին.

Հայաստան թրքերէն բնագիր

Հայերէն թարգմանութիւն

Եօզղաթ Միթէասարըֆլըղընա.

Եոզղատի Կառավարութեան.

4 Շուպաթ 335 թարիս վէ 74 նումարալը զիմմէթլի թէւլիմ Էտիլմիշտիր:

4 Փետրուար 1919ին եւ 74 թուահամար հեռագիրը յանձնուած է պարտ ու պատշաճ կերպով:

Էլէքնիլէր քէօյիստէ վէ ճիվարընտա, վէ Պօղազլըյան գազասընըն Քէլլէր գարիյէսի ճիվարընտաթի Թաշփինար գարիյէսիյէ ճիվարընտա գաթի վէ իթլաֆ վէ նուգուտ վէ միսէվհէրաթլարընէհպ վէ դարէթ Էտիլմիշ օլտուղու անլաշըլան Էրմէնիլէր մէյանընտա գասապանըն Էն մարուֆ վէ թիմարէթլէ մէշղուլ Էրմէնիլէրտէն քի՛մլէր պուլունմուշթուր:

Էլէքնիլէր գիղիս մէջ եւ շուրջը Պողազլեան գատի Քէլլէր գիղիս ձորին մէջ, եւ Եոզղատի գիղերէն Թաշփինարի մէջ եւ շուրջը, Հայերը կոտորուած եւ բնաջնջուած են, եւ անոնց գոյքերը եւ գոհարեղէնները յափշտակուած եւ կողոպտուած են: Այդ գիղերու Հայերէն ամէնէն ծանօթ եւ վաճառականութեամբ զբաղող ո՞ր Հայերը գտնուած են:

Մուրախասա Էֆէնտի ներտէ՛ տէ՛ գաթի վէ իթլաֆ Էտիլմիշտիր: Անըն բարմաղընտաթի եիզիք Էվգաֆ Մէմուրու Ֆէյեազ Պէյին ետիսնէ նասը՛լ վէ ներտէ՛ կէշմիշտիր: Մագթէլէրտէ Ֆէյեազ Պէյտէն Էվվէլ սիլահ աթմագ սուրէթիյէ իթլաֆ իշարէթի վէրմիշ օլան վարմը՛տըր. վար իսէ, գի՛մ տիր. պա թէլկրաֆ թահգիգ վէ աճիլէն պա թէլկրաֆ իշարը վէ Էվրագը թահգիգիյէնին թէսէարը: Տիվանը Հարպի Էօրֆի Բէիսի: 9

Առաջնորդը ո՞ր սպանուեցաւ եւ բնաջնջուեցաւ: Անոր մատի մատանին ի՞նչպէս եւ ո՞ր անցաւ Էվգաֆի տնօրէն Ֆէյեազ պէյի ձեռքը: Կոտորածներու ազդանշան տալու համար Ֆէյեազ Պէյէն առաջ ուրիշ զէնք պայթեցնող եղած է: Եթէ եղած է, ո՞վ է: Քննեցէք ստուգութիւնը անմիջապէս եւ հեռագրով իմացուցէք, թուղթերն ու վաւերագրերը շուտով մեզի դրկեցէք ձեր կատարած քննութեան արդիւնքով միասին:

Պատերազմական Ատեանի Նախագահ:

9. Դ. Ե. Թիւ Մ 307:

Երկրորդ կառավարիչը 3 Մարտ 1919ին հեռագրեց Պոլիս Թուրք Արտակարգ Պատերազմական Ատեանի Նախագահին եւ անոր հաղորդեց իր կատարած քննութեան արդիւնքը: Հայերուն ինչքերուն Լուծարքի Յանձնախումբը Առաջնորդ Ներսէս Դանիէլեանի մատի եպիսկոպոսական մատանին աճուրդով ծախած էր երկու հազար երեք հարիւր յիսուն դահեկանի: Աճուրդը տեղի ունեցած էր Ֆէյեազ պէյի պատասխանատուութեան տակ:

Հայաստան թրքերէն բնագիր

Հայերէն թարգմանութիւն

Մախրէնի Եօզդաթ.
Նումարա 134.
Տէրասատէթ Թէհնիր Տիվանը
Հարպի Էօրֆի Ռիյասէթինէ.
Մեվապ 1 Մարտ 335 թարիս վէ
233 նումարալը թէլկրաֆա.

Ելատեղ՝ Երզրատ.
Թուահամար 134.
Մայրաքաղաքի տարագրութեան
Պատերազմական Ատեանի Նախագահութեան.

Պատասխան՝ 1 Մարտ 1919
թուակիր եւ 233 թուահամար
հեռագրին՝.

Մուրախասանըն փարմաղըն-տաքի եիզիք Թասֆիյէ Գօմի-սիօննա ինրա գըլընան սիզա-յետետէ իքիպիհիւչեիզէլի գուրուշ մուգապիլիմտէ ֆէյեազ Պէլ Էօհտէսիմտէ գալտըղը ինրա գըլընան թահգիգաթ Գէթիհէսիմտէն անլաշըլտըղը:

Առաջնորդի մատի մատանին՝ Լուծարքի Յանձնախումբին կազմակերպած աճուրդի ատեն երկու հազար երեք հարիւր յիսուն դահեկանի ծախուած է Ֆէյեազ Պէյի պատասխանատուութեան տակ. ասիկա կատարուած քննութեան արդիւնքէն յայտնի է:

3 Մարտ 335.
Միթէսարըֆ՝ Լէուն: 10.

3 Մարտ 1919.
Միթէսարիֆ՝ Լէուն:

Ինչպէս յետագայ վաւերագրէն յայտնի պիտի ըլլայ Հայերուն ինչքերուն յատուկ կազմակերպուած Լուծարքի Յանձնախումբի պաշտօնեաները լուծարքի կը մասնակցէին վերէն տրուած հրահանգներուն հակառակ եւ աճուրդով իրենց անունին կը գնէին որեւէ առարկայ առանց մէկ դահեկան վճարելու:

Սակայն Լուծարքի Յանձնախումբը մատեաններուն մէջ արձանագրած էր թէ Առաջնորդ Դանիէլեանի մատանին արժած էր երկու հազար երեք հարիւր յիսուն դահեկան:

Ֆէյեազ Պէյ Թուրք Պատերազմական Ատեանի հարցումին պատասխանեց թէ ինք եպիսկոպոսական մատանին գնեց աճուրդէն:

Առաջնորդ Ներսէս Եպիսկոպոս Դանիէլեան ծնած էր Եարփուզ 16 Մայիս 1868ին: Իր կրօնական ուսումը աւարտած էր Սիսի մայրավանքին մէջ 1888ին: Ապա երեք տարի Պոլիս Սամաթիա մնալէ ետք վարդապետ օժուեցաւ 1890ին:

Երլտըզի ուսման պայթումին հետեւանքով 1905ին Ներսէս Վ. Դանիէլեան ալ բանտարկուեցաւ: Սակայն 1907ին Սահակ Կաթողիկոս Սապայեանի երաշխիքով ան վերադարձաւ Սիս փոխն ի փոխ վարեց Ատանայի, Հալէպի եւ Հաճընի առաջնորդական փոխանորդի պաշտօն:

Երկրորդ առաջնորդ ընտրուեցաւ 1914ին եւ կայսերական պէրաթ ստանալէ ետք հաստատուեցաւ Երզրատ: Զերբակալուեցաւ եւ բանտարկուեցաւ 20 Յուլիս 1915ին: Ապա 26 Յուլիս 1915ին իր կղերին եւ ժողովուրդին ընտրանիին հետ, ընդամէնը չորս հարիւր եօթանասուն երկու հոգի, Երզրատի առաջին կարաւանին հետ տարագրուեցան: Զիլէի մօտ Պէկ Եուրտու, փորձ եղաւ կոտորածի առանց յաջողութեան: Սակայն կարաւանը հասաւ 6 Օգոստոս 1915ին Սերաստիոյ քաղաքէն քանի մը ժամ հարաւ Գարտաշարի ձորը, ուր Ներսէս եպիսկոպոս Դանիէլեան եւ իր ընկերները կոտորուեցան եւ մարմինները նետուեցան գետի հոսանքին մէջ:

Ազնիւ անուն հայ վկայ մը Պատերազմական Ատեանի առջեւ վկայեց հետեւեալը, 8 Փետրուար 1919ին.

«Ուրբաթ օր մը այրերը հաւաքեցին. տեսանք որ ձեռքերնին կապեր են չորս չորս: Ֆէյեազ եւ Գօմիսէրի օգնականը ներկայ էին: Առաջնորդին (Ներսէս Եպիսկոպոս Դանիէլեան) ձեռքէն մատանին առաւ Ֆէյեազ: Ժողովուրդը սկսաւ լալ առաջնորդին հետ, հասկնալով որ ամէն բան լմնցած էր: Անոնք հետիտան զրկեցին. մեզ ալ մտրակով վանեցին...» 11

ԳԼՈՒԽ ԺԱ.

ՀԱՅ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐՈՒ ՊԱՇՏՕՆԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Յունուար 1914էն սկսեալ ներքին գործերու նախարարութեան եւ արդարութեան եւ կրօնից նախարարութեան հրամաններով եւ հրահանգներով նահանգներու եւ գաւառներու մէջ պետութեան եւ վարչական շրջանակներու մէջ պաշտօն վարող Հայերը պաշտօնանկ եղան, քիչ բացառութեամբ, եւ անոնց տեղ բերուեցան իսլամ եւ թուրք պաշտօնեաներ այնպէս որ մէկ տարուան 1914-1915 ընթացքին հայ պաշտօնեաներէն գրեթէ հարիւրին 90ը փոխարինուած էին:

Պոլսոյ Պատրիարքարանը 16 Ապրիլ 1914ին բողոք ներկայացուց կառավարութեան, սակայն պաշտօնանկութիւնները աւելի սաստկացան եւ բազմացան: Նոյեմբեր 1914ին արդէն վեց հայ նահանգներու պետական շրջանակներու մէջ պաշտօնավարող Հայերը հեռացուած էին իրենց պաշտօններէն: Պաշտօնանկ եղած Արթին Արարթեան, որ Զէյթունի նախկին գայմազամ եղած էր եւ Սեբաստիոյ կուսակալին օգնական, Պոլսոյ մէջ փորձեց նոր պաշտօն մը գտնել: Թալաաթ Պէյ մերժեց անոր ամէն պաշտօն եւ ըսաւ. «Հայերուն ալ պաշտօն չկայ, իսլամ եղիր, թերեւս պաշտօն մը ընդունիս:»¹

Սակայն Անգարայի կուսակալութեան հայերու տարագրութեան եւ կոտորածի ժամանակը յետաձգուած ըլլալով, նոյնպէս Եոզղատ գաւառի հայ պաշտօնեաներու պաշտօնանկութիւնն ալ յետաձգուեցաւ: Եոզղատի Հայերու տեղահանութեան եւ կոտորածի պատասխանատուները դատող Պատերազմական Ատեանը հաւարքեց Հայ պաշտօնեաներու պաշտօնանկութեան հետ առընչութիւն ունեցող թուրք պաշտօնական վաւերագրերը:

1. Հայկաշէն Տարեգիրք, Ա. Տարի, Կ. Պոլիս 1922, Տպ. Յ. Ասատուրեան որդիք, էջ 108 - 110:

Պոլսոյ Թուրք Պատերազմական Ատեանը Արդարութեան անձնական գործերու տնօրէնութենէն պահանջեց պաշտօնագրերու եւ հեռագիրներու վաւերացուած պատճէնները 8 Փետրուար 1919ին.

Հայաստան թրգերէն բնագիր

Հայերէն թարգմանութիւն

Տաիրէ Գումարասը 94.

Ատիլէ Նեզարէթի ճելիլէսի Ումուրը Զաթիլէ Միտիրիլէթիմէ.

Եօզղաթ իսթինաֆ մահքեմէսի աագաւընտան Համբարձում Էֆէնտիմին Եօզղաթ Էրմէնիլէրի իլէ պիրլիքտէ տէրտէսթի նագլ պուլունտուղունա տաիր Եօզղաթ միլիտարըֆլըղընտան սէպք Էտէն իշասար իզլէրիմէ, միւմաիլէյնին 15 Աղօսթօս 331 թարիխիմտէ ազլ Էտիլտիյի անլաշըլմագլա, օլ պապտէքի թահիրիթաթ վէ եա թէկրաֆ աւընըն պուլտուրուլուպ Տիվանը Հարպը Էօրֆի տաիրէսիմէ թէվտի պուլտուրուլմասը սիյագընտա միզլէքքէրէտիր:

8 Շուպաթ 335:

Թէհնիր Տիվանը Հարպը Էօրֆի Բէիսի: ².

Թուահամար 94.

Արդարութեան Բարձրապատի Նախարարութեան Անճնակագմի Տնօրէնութեան

Եոզղատի Կառավարութենէն դրկուած տեղեկագրէն յայտնի է որ Եոզղատի վերաքննիչ ատեանի անդամներէն Համբարձում Էֆէնտիմ ալ միւս Հայերուն հետ միասնաբար ձերբակալուած է: Նոյն անձը 15 Օգոստոս 1915ին պաշտօնանկ եղած էր: Այս մասին հաղորդակցութեան կամ հեռագրի վաւերացուած պատճէնները պէտք է դրկուին Պատերազմական Ատեանի դիւանին: Ասիկա կը յանձնարարենք կարեւորութեամբ ներկայ զեկուցով:

8 Փետրուար 1919

Տեղահանութեան

Պատերազմական Ատեանի

Նախագահ:

Արդարութեան Նախարարութեան կողմէ Հիւսամէտտին Հայտար Պէյ Պոլսոյ Թուրք Պատերազմական Ատեանի 8 Փետրուար 1919ի պահանջին կը պատասխանէ եւ դիւանին կը փոխանցէ

2. Դ.Ե. Թիւ Մ 288:

վերաքննիչ ատեանի պաշտօնեայ Համբարձումի թղթածրարը որ կը պարունակէ ընդհանուր դատախազի եւ Անգարայի կուսակալին զրկած վաւերագրերու պատճէնները:

Հայաստան թրքերէն բնագիր

Հայերէն թարգմանութիւն

Ատլիյէ վէ Մեզահիպ Նեզարէթի Ումուրը Զաթիյէ Միտիւրիյէթիւնէ. Ատէտ 932.

Դատական եւ կրօնական Նախարարութեան անձնական գործերու Տնօրէնութեան.

Թուահամար 932.

Տէրասատէթ Տիվանը Հարպը Էօրֆի Բիյասէթի Ալիյիսիւնէ. 8 Շուպաթ թարիխի, 94 նումարալը միզէքքերէյի վալալէրիւնէ ճէվապ տըր:

Պոլսոյ Պատերազմական Ատեանի Բարձրապատի Նախագահութեան

Պատասխան՝ 8 Փետրուար, 94 թուահամար ծանուցագրին:

Եօզդաթ սանճաղը իսթինաֆ մահքէմէտի ազալարընտան Համբարձում էֆէնտիւնին Եօզդաթ էրմէնիլէրիյէ պիրիքստէ տէրտէսթի նագլ պուլունտուղունա տաիր միւմաիլէյիսիւն տօսիւտիւնտէն, մահալը միսթէսարըֆլըղընըն թահիրրաթ վէ եա թէլէկրաֆնամէտի պուլունմուշ, վէ անճագ մահալլէ միտտէի ումումիլիյիսիւնտէն, վէ Անգարա վիլայէթիսիւնտէն մէվրուտ թահիրրաթ վէ թէլէկրաֆնամէ օլտուղը պէլանըլլա միզէքքերէ թագտիմ գըլընտը, էֆէնտիմ:

Եոզդատի Հայերու շարքին ձերբակալուած եւ տարագրուած՝ Եոզդատի վերաքննիչ ատեանի անդամներէն Համբարձում էֆէնտի թղթածրարը կը պարունակէ տեղւոյն կառավարութեան գրութիւնը կամ հեռագիրը, սակայն եւ այնպէս, ընդհանուր դատախազութեան եւ Անգարայի կուսակալութեան կողմէ զրկուած պաշտօնագրերու եւ հեռագիրներու վաւերացուած պատճէնները ներփակ ձեզի զրկելու պատիւ ունիմ, պարոն:

8 Շուպաթ 335.

8 Փետրուար 1919.

Միսիւր/ Ատլիէ վէ Մեզահիպ Նեզարէթի Ումուրը Զաթիյէ Միտիւրիյէթի. Իմգա/ Սալահէտտէին Հայտար: ³

Կնիք/ Դատական եւ կրօնական Նախարարութիւն, անձնական գործերու Տնօրէնութիւն.

Ստորագրուած/ Սալահէտտիւն Հայտար:

Արդարարութեան Նախարար Փիրիզատէ Իպրահիմ Պէյի հրահանգներուն համաձայն Անգարայի Փոխ Կուսակալ Աթըֆ Պէյ Եոզդատի Միւթէսարըֆ ձէմալ Պէյի կը հրամայէ պաշտօնանկ ընել Եոզդատ գաւառի մէջ պաշտօնավարող հայ պաշտօնեաները. իսկ ձէմալ Պէյ Աթըֆ Պէյի 19 Յուլիս 1915 թուակիր հեռագրին պատասխանելով կը հաստատէ թէ ինք անհրաժեշտ միջոցները ձեռք առած է թուրք վարչութեան մէջ պաշտօնավարող Հայերու հանդէպ: Կը խնդրէ որ Աթըֆ Պէյի նոյնիմաստ հրամանները կիրարկուին նաեւ քաղաքապետարանի մէջ պաշտօնավարող հայերուն ալ:

Հայաստան թրքերէն բնագիր

Հայերէն թարգմանութիւն

Ծիֆրէ մահլուլը.

Ծածկագրի լուծում. Անգարայի Կուսակալութեան. Պատասխան՝ 19 Յուլիս 1915 թուակիր ծածկագրին:

Անգարա Վիլայէթիւնէ.

19 Թէմնուզ 331 թարիխի շիֆրէյէ ճէվապ տըր:

Ձեր գերագանցութեան հրամաններուն համաձայն ձեռք առնելու անհրաժեշտ միջոցներ տնտեսական ճիղերու հայ պաշտօնեաներուն հանդէպ: Կը խընդրեմ ձեր գերագանցութեանէն որ բարեհաճի նոյնիմաստ հրամաններ տալ նաեւ անձնիւր նոտիրապետական մեծաւորներու միջոցով, նախադատ ատեանի, լիզէնցի, ծխախոտի տեսչութեան, երկրագործական դրամատան մէջ պաշտօնավարող Հայերու նկատմամբ, եւ ինձի իմացնէք թէ յարմար է նոյնիմաստ միջոցներ ձեռք առնել այն հայերուն հանդէպ որոնք անդամ են քաղաքապետական վարչական խորհուրդներուն կամ յանձնա-

Տիվանը մալիյէտէ միսթախտիմ պուլունան էրմէնիլէր հագգընտա պիր մուճիպի էմիր էտիլմէքտէ տիր. իսթինաֆ վէ պիտայէթ մահքէմէլէրիյէ Մէքթէպի Սուլթանիտէ վէ Բէթի, Զրաաթ Պանքասը իտարէլէրիստէ միսթախտիմ պուլունանլար իշիստէ մաֆէվքլէրիստէն էմիր վերտիրիլմէտի վէ իրատէ վէ Պէլէտիյէ մեճլիսլէրիստէ վէ թէքէալիֆի հարպիյէ կիպի պագը քօմիսիօնլարտա ազա օլարաք միսթախտիմ օլան էրմէնիլէրիստէ տախի չըքարըլմասը էմիր ու

3. Դ. Ե. Թիւ Մ. 288:

4. Դ. Ե. Թիւ Հ 613:

ինպա պույրուլմար:

20/21 ԹԷմնուգ 331.

Եօզդաթ Միւթէսարըֆը՝
ՃԷմալ: 4

խումբերու ինչպէս նաեւ գրաւումի
յանձնախումբին:

20/21 Յուլիս 1915.

Եոզդատի Միւթէսարըֆը՝
ՃԷմալ:

Անգարայի Փոխ Կուսակալ Աթըֆ Պէյ նոր հրամաններ կը ղրկէ
Եոզդատի Միւթէսարըֆ ճէմալ Պէյի եւ կը պահանջէ որ վարչական
եւ քաղաքապետական խորհուրդներու մէջ պաշտօնավարող Հայե-
րը, որոնք մինչեւ հիմա զերծ մնացած են աքսորէ, պէտք է շարու-
նակեն իրենց պաշտօնները, սակայն միւս հայ պաշտօնեաները
պէտք է աքսորուին:

Հայաստան թրքերէն բնագիր

Եօզդաթ Միւթէսարըֆը լրդնա
շիֆրէ.
20/21 ԹԷմնուգ 331 շիֆրէյէ
ճԷվապ.

Իսթինաֆ վէ պիտայէթ մահքէ-
մէլէրի ազալըքլարընտա պուլու-
նան էրմէնիլէրին իսիմլէրին պի
տիրինիգ. իտարէ վէ պէլէտիյէ
մէնիլիլէրինտէ էրմէնի ազա էկէր
թէպիտ էտիլմէլէճէթ իսէ վազի-
ֆէլէրինէ տէվամ էթթիրիլմէսի,
տիկէր քօմիսիօնլարտաքիլէրին
խըտմէթէնէն ճիհայէթ վէրտիրիլմէ-
սի:

21 ԹԷմնուգ 331.
Անգարա Վալի Վէրիլի՝
Աթըֆ: 5

Հայերէն թարգմանութիւն

Ծածկագիր՝
Եոզդատի կառավարութեան.
Պատասխան՝ 20/21 Յուլիս
1915ի ծածկագրին.

Ղրկեցէք ինձի նախադատ եւ
վերաքննիչ ատեաններու անդամ
Հայերու անունները: Այն Հայերը
որոնք մաս կը կազմեն վարչական
եւ քաղաքապետական խորհուրդ-
ներու, եւ որոնք սահմանուած չեն
աքսորուելու, պէտք է շարունակեն
իրենց պաշտօնները: Ուրիշ յանձ-
նախումբերու մէջ պաշտօնավա-
րող Հայերու պաշտօններուն վերջ
տուէր:

21 Յուլիս 1915:
Անգարայի Կուսակալի
Փոխանորդ՝
Աթըֆ:

Եոզդատի Միւթէսարըֆ ճէմալ պէյ Անգարայի փոխ Կուսակալ
Աթըֆ Պէյի հրամանին կը պատասխանէ թէ Համբարձում վերաքն-
նիչ Ատեանի դատաւոր է, նախադատ ատեանի պաշտօնեայ են Յա-
կոբ եւ Միհրան, իսկ Հաճի Յակոբ հարցաքննիչ դատարանի քար-
տուղար է:

Հայաստան թրքերէն բնագիր

Շիֆրէ
Անգարա Վիլայէթինէ.
21 ԹԷմնուգ 331 թարիխի
շիֆրէյէ ճԷվապ տըր.

Իսթինաֆ մահքէմէսինտէ Համ-
բարձում, պիտայէթ մահքէմէսին-
տէ Արմենակ վէ Միհրան էֆէն-
տիլէրին ազա վէ Հաճի Յակոբ
նամընտա տախի իսթինթաք տախ-
րէսինտէ քէաթիպ օլտուքլարը:

21 ԹԷմնուգ 331.
Եօզդաթ Միւթէսարըֆը՝
ՃԷմալ: 6

Հայերէն թարգմանութիւն

Ծածկագիր
Անգարայի Կուսակալութեան.
Պատասխան՝ 21 Յուլիս 1915
թուակիր ծածկագրին.

Պատի ունիմ ձեր գերազանցու-
թեան իմացնելու որ վերաքննիչ
ատեանի մէջ կայ Համբարձում է-
ֆէնտի անունով դատաւոր մը. նա-
խադատ ատեանի մէջ երկու հոգի՝
Յակոբ եւ Արմենակ էֆէնտիներ,
եւ քարտուղար մը Հաճի Յակոբ
հարցաքննութեան դատարանին
մէջ:

21 Յուլիս 1915.
Եոզդատի Միւթէսարըֆը՝
ՃԷմալ:

Եոզղատի ՄիւթէսարըՖ Ճէմալ Պէյի յանձնարարութեան համաձայն Անգարայի փոխ Կուսակալ Աթըֆ Պէյ Եոզղատի ընդհանուր դատախազին կը հրամայէ հեռացնել Եոզղատի նախադատատեանի մէջ քարտուղարի պաշտօն վարող Հաճի Յակոբը եւ անոր տեղ բերել ուրիշ քարտուղար մը:

Անգարայի Փոխ Կուսակալ Աթըֆ Պէյ Պոլիս արդարութեան նախարար Փիրիզատէ Իպրահիմ Պէյի կը տեղեկագրէ թէ ինք հրամայած է փոխարինել Եոզղատի վերաքննիչ ատեանի դատաւոր Համբարձում, նախադատ ատեանի անդամ Արմենակ եւ Միհրան, եւ կը խնդրէ անկէ որ պէտք եղած կարգադրութիւնն ըլլայ:

Հայատառ թրքերէն բնագիր

Հայերէն թարգմանութիւն

Ծիֆրէ Եօզղաթ Իսթինաֆ Միտտէի Ումումիլիյինէ.

Ծածկագիր Եոզղատի վերաքննիչ Ատեանի Ընդհանուր Դատախազին:

Եօզղաթ Պիտայէթ մահքէմէսի իսթինթաք տաիրէսինտէ միւթախտէմ օլան Հաճի Յակոբ անմընտաքի քեաթիպին տէվամը տախի մահգուր օլան մէմուրիյէթինէ խիթամ վերիլէրէք երիինէ միւնասիպինին թային վէ քէյֆիյէթին իշարը:

Կը խնդրեմ որ վերջ տաք Եոզղատի նախադատ ատեանի մէջ իբր քարտուղար պաշտօնավարող Հաճի Յակոբ անուն անձի պաշտօնին որուն ծառայութեան շարունակութիւնը անպատեհութիւններ կը ներկայացնէ եւ անոր տեղ նշանակեցէք յարմար անձ մը եւ ինձի տեղեկացուցէք արդիւնքը:

23 Թէմնուզ 331.

Անգարա Վալի Վէքիլի՝ Աթըֆ: 7

23 Յուլիս 1915.

Անգարայի Կուսակալի Փոխանորդ Աթըֆ:

Հայատառ թրքերէն բնագիր

Հայերէն թարգմանութիւն

Ծիֆրէ

Ծածկագիր՝

Ատիլիյէ Նէզարէթինէ.

Արդարարութեան Նախարարութեան

Եօզղաթ իսթինաֆ մահքէմէսի ազասընտան Համբարձում վէ պիտայէթ մահքէմէսի ազասընտան Արմենակ վէ Միհրան Էֆէնտիլէրին տախի թէպիտլէրի լազըմէի հալ ու մասլաթթան օլմագլէ միւթթէզասընըն իֆա պույուրուլմասը:

Եոզղատի վերաքննիչ ատեանի անդամ Համբարձում Էֆէնտի, եւ նոյն քաղաքի նախադատ ատեանի անդամ Արմենակ եւ Միհրան Էֆէնտիներու փոխարինումը հրամայուած ըլլալով ներկայ պարագաներու բերումով կը խնդրեմ ընել ինչ որ հարկ է:

23 Թէմնուզ 331.

23 Յուլիս 1915.

Անգարա Վալի Վէքիլի՝ Աթըֆ: 8

Անգարայի Կուսակալի Փոխանորդ Աթըֆ:

Անգարայի Փոխ Կուսակալ Աթըֆ Պէյ նոր հրամաններ կը ղրկէ Եոզղատի ՄիւթէսարըՖ Ճէմալ Պէյի եւ կը պահանջէ որ վարչական եւ քաղաքապետական խորհուրդներու մէջ պաշտօնավարող հայերը, որոնք զերծ կացուցուած են աքսորէ, կրնան շարունակել իրենց պաշտօնները, սակայն միւս բոլոր հայ պաշտօնեաներն ալ հաւասարապէս պէտք է աքսորուին:

Եօզդաթ Միթեսարըֆլըղընա շիֆրէ.

20 /21 Թէմնուզ 331 շիֆրէյէ ճէվապ.

Իսթինաֆ վէ պիտայէթ մահիթ-մէլէրի ազալըքլարընտա պուլու-նան Էրմէնիլէրին իսիմլէրինի պիլտիրինիգ. իտատէ վէ պէլէտի-յէ մէնլիսլէրինտէքի Էրմէնի ազա էկէր թէպիիտ էտիլմէյէճէք իտ վազիֆէլէրինէ տէվամ էթթիրիլմէ-սի, տիկէր քօմիսիօնլարտաքիլէ-րին խըսմէթինէ նիհայէթ վէրտի-րիլմէսի:

Ծածկագիր՝

Եօզդատի Կառավարիչին.

Պատասխան՝ 20/21 Յուլիս 1915 թուակիր ծածկագրին.

Ինձի դրկեցէք նախադատ եւ վերաքննիչ ատեաններու անդամ Հայերու անունները: Այն Հայերը որոնք մաս կը կազմեն վարչական եւ քաղաքապետական խորհուրդ-ներու, եւ որոնք սահմանուած չեն աքսորուելու, թող շարունակեն իրենց պաշտօնները: Ուրիշ յանձ-նախումբերու մէջ պաշտօնավա-րող Հայերու պաշտօններուն վերջ տուէք:

21 Յուլիս 1915:

Անգարայի Կուսակալի Փոխանորդ՝ Աթըֆ:

21 Թէմնուզ 331.

Անգարա Վալի Վէքիլի՝ Աթըֆ: 9

Օսմանեան կառավարութիւնը հսկողութեան տակ պահեց այն հայ պաշտօնեաները, որոնց ներկայութիւնը անհրաժեշտ նկատ-ւած էր, իսկ մեծամասնութիւնը հայ կարաւաններուն հետ տա-րագրեց եւ կամ առանձին խումբերով աքսորեց եւ ճամբու ընթաց-քին սպաննել տուաւ Թէշքիլարը Մախսուսի հրոսակներուն միջո-ցով, ինչպէս է պարագան Եօզդատի վերաքննիչ ատեանի դատաւոր Համբարձում էֆէնտի:

Թուրք պաշտօնական վաւերագրերով հաստատուած եղելու-թիւնները Եօզդատ գաւառի մէջ կրկնուեցան ուրիշ գաւառներու եւ նահանգներու մէջ ալ եւ գրեթէ բոլոր պետական հայ պաշտօն-եաները տարագրուեցան եւ կոտորուեցան:

9. Գ.Ն. Թիւ 4 614:

ԳԼՈՒԽ ԺԲ.

Թուրք Արդարութեան Նախարարի մեծ դերը Հայասպանութեան Գործին մէջ

«Մի՞թէ հրոսապետ Թալէաթը չէր որ քեզ Սալոնիկի կուսակալ ըրաւ, եւ անկէ քեզ կանչեց արդարութեան նախարար ըլլալու, հուսկ քեզի տուաւ ծերակուտական աթոռ մը:

«Մի՞թէ դուն չէիր որ ամէն առաւօտ անցնելով քու բարերար տիրոջը Թալէաթի քովէն՝ կը ստանայիր, իբր Արդարութեան Նա-խարար, բռնակալին հրամանները:

«Միութիւն եւ Յռաջդիմութիւն Կուսակցութեան հրոսա-պետներու ժողովատեղի կեդրոնին մէջ առնուած որոշումին հա-մաձայն չէ՞ր որ բանտերէն դուն ազատ արձակել տուիր ամէնէն սարսափելի ոճրագործները. միայն մէկ նպատակով, Հայերը ի-րենց օրինաւոր բնակարաններէն դուրս արտաքսելու, եւ հակառակ անոնց բացարձակ անմեղութեան, զանոնք բնաջնջել տուիր վայ-րագութեամբ:

«Մի՞թէ դուն չէիր որ կազմակերպեցիր ամէնավայրագ ոճրա-գործները, վայրենի հրոսակները, որոնք պոլսոյ Կեդրոնական բանտի կալանաւորներն էին, միեւնոյն ատեն հրամաններ դրկե-ցիր գաւառները՝ բանտերու դռները բանալու:

«Մի՞թէ ոճրագործներու այս հրոսախումբը չէր որ կազմուե-ցաւ եւ կազմակերպուեցաւ վերաքննիչ Ատեանի Ընդհանուր Դա-տախազի գրասենեակին մէջ՝ Արդարութեան Նախարարութեան դահլիճին կից:»

Էնվէրէն եւ Թալաաթէն անմիջապէս ետք, Թուրք նախարար-ներէն Փիրիզատէ Իպրահիմ պէյ, դատական եւ արդարութեան նա-խարարը մեծագոյն դերը խաղցաւ հայասպանութեան կազմակեր-պութեան եւ գործադրութեան մէջ:

Իբր ներքին գործերու նախարար Թալաաթ զայն նշանակած էր նախ Սելանիկի ընդհանուր Կառավարիչ: Ապա զայն Պոլիս կանչեց

եւ անոր յանձնեց արդարաբուժեան նախարարութիւնը: Հուսկ Փի-
րիզատէ Իպրահիմ Պէյ ծերակուտական եղաւ:

Ամէն առաւօտ, Իպրահիմ պէյ, սովորութիւն ըրած էր հանդի-
պելու Թալաաթ Պէյի տունը, որ կը գտնուէր Այա Սոփիայի Մզկի-
թին մօտերը: Ան կանոնաւորապէս կը ստանար ամէն օր կարեւոր
հրահանգներ, մասնաւորապէս Թէշքիլաթը Մահսուսաի Ջարդարար
հրոսակներու կազմակերպութեան մասին:

Իպրահիմ Պէյ երբեք չէր բացակայեր այն ժողովներէն որոնք
տեղի կ'ունենային Նուր-էլ-Օսմանիէ, Պոլսոյ Երիտասարդ Թուրքե-
րու կեդրոնական ակումբին մէջ, ուր կը ստորագրուէին բոլոր
գաղտնի որոշումները: Իպրահիմ Պէյ կը ստորագրէր իբր արդա-
բուժեան նախարար եւ անդամ էր Միութիւն եւ Յառաջդիմութիւն
Կուսակցութեան: Հոն էր որ հայասպանութեան որոշումները ի-
րենց վերջին աստիճան մանրամասնութեամբ համակարգուեցան ի
գործադրութիւն:

Ինքն էր որ ներքին գործերու նախարարին հետ հաւաքաբար
եւ անհատաբար ստորագրեց յատկապէս Թուրքիոյ բանտերէն ա-
զատ արձակելու դատապարտուած գողերը, աւազակները, մար-
դասպանները, ոճրագործները, որոնք զինուելէ եւ մարզուելէ ետք
ղրկուեցան կանխապէս ջարդավայր որոշուած տեղեր Հայերու կա-
րաւանները կոտորելու համար:

«Դո՞ւն չէիր միթէ որ նշանակեցիր ընդհանուր դատախազ մը
եւ բարձրաստիճան սպայ մը Պատերազմական Նախարար Էնվէրի
կողմէ չղրկուեցա՞ւ՝ արիւնարբու ոճրագործներու հրոսակներ
կազմելու համար:

«Մի՞թէ բժիշկ մը պաշտօն չստացաւ, քու փափաքիդ համա-
ձայն, քննելու եւ որոշելու ոճրագործներու Փիզիքական կարողու-
թիւնները բնաջնջումի բարբարոսական գործին համար: Մի՞թէ
այս հրոսախումբին կազմութիւնը շաբաթներ չտեւեց:

«Նոյն շրջանին՝ բանտի արիւնարբու ոճրագործները օրէ օր
չէ՞ին գար հաւաքուիր (Արդարութեան Պալատին Գ) գաւթին մէջ
ճիշդ այն տեղը որ կը գտնուի Ատեանի եւ Ընդհանուր Դատախազի
խորհրդակցութեանց եւ ամբաստանութեանց գրասենեակին միջեւ

«Մի՞թէ դուն չէիր որ, քու տիրոջ Թալէաթի հետ համաձայնե-
լէ ետք, հրամաններ տուիր անձնակազմի տնօրէնին անմիջապէս
պաշտօնազրկելու հայ պաշտօնեաները այն տեղերէն ուրկէ հայե-
րը պիտի տարագրուէին ապահովելու եւ փութացնելու համար ար-

տաքսուժը եւ բնաջնջումը, ինչպէս նաեւ ատեաններու հայ դատա-
ւորները, եւ նահանգներու գլխաւոր քաղաքներու, գաւառներու
եւ գիւղերու հայ բնակչութիւնը:

«Մի՞թէ դուն չէիր որ կը հրճուէիր հայ դատաւորներու եւ հայ
ժողովուրդի սպանդի տեսարանին առջեւ որ կը գործադրուէր տա-
պարի, ուրագի, մանգաղի եւ բրիչի հարուածներով:

«Այսօր՝ ո՞ւր եւ ո՞ր ատեաններու մէջ կը վարեն իրենց պաշ-
տօնները նահանգներու, գաւառներու եւ գիւղերու հայ դատաւոր-
ները եթէ անոնք իսկապէս չեն սպաննուած հրոսախումբերու կող-
մէ:

«Ուղղամիտ վկաներ, Աստուծոյ սիրոյն համար, ճշմարտու-
թիւնն ու ապացոյցները երեւան պիտի հանեն:»¹

Ինքն էր որ հրամաններ եւ հրահանգներ զրկեց բոլոր նա-
հանգներու եւ գաւառներու դատական պաշտօնեաներուն, մասնա-
ւորապէս դատաւորներուն եւ ընդհանուր դատախազներուն որ
չհետապնդեն ջարդարարները եւ կողոպտիչները, ի բաց առեալ
այն ջարդարարները եւ կողոպտիչները, որոնք հաւաքուած կողո-
պուտէն բաժին չէին հաներ Թուրք կառավարութեան եւ Միութիւն
եւ Յառաջդիմութիւն Կուսակցութեան՝ կանխապէս գոյացած հա-
մաձայնութեան մը համեմատ:

Փիրիզատէ Իպրահիմ Պէյ անձամբ կազմակերպեց շէթէ կոշ-
ւած հրոսախումբերը, բանտերէն ազատ արձակուած ոճրագործնե-
րէն: Ինքն էր որ այս հրոսախումբերը զրկեց կանխապէս ջարդա-
վայր որոշուած տեղերը հայ կարաւանները բնաջնջելու համար:

Այս հրոսախումբերու ոճրագործները եւ մարդասպանները
կ'արձանագրուէին Կայսերական Ընդհանուր Դատախազի հրամա-
նով Արդարութեան պալատին մէջ նոյն Ընդհանուր Դատախազի
գրասենեակին կից ուրիշ մասնաւոր գրասենեակի մը մէջ արդա-
բուժեան նախարարին հակակշռին տակ:

Ինք Իպրահիմ պէյ հրամայած էր մասնաւորապէս ընտրել
բանտէն ազատ արձակուած ոճրագործներէն եւ մարդասպաններէն
ամէնէն կատաղիները եւ ամէնէն արիւնարբուները: Այն պաշտօն-
եաները որոնք կատարեցին ամէնէն արիւնարբու եւ ամէնէն կա-
տաղի ոճրագործներու եւ մարդասպաններու ընտրութիւնը, էին

1. Լա Բըն. Թիւ 40, կիրակի, 19 Յունուար 1919. Թարգմանուած Սապահէն:

նոյն ինքն Վերաքննիչ Ատեանի Ընդհանուր Դատախազը եւ Պատե-
րազմական նախարարութենէն նշանակուած բարձրագոյն սպայ
մը: Այս վերջին բարձրագոյն սպան անձամբ կը հաստատէր մար-
դասպաններու եւ ոճրագործներու Ֆիզիքական յատկութիւններն
ու ձեռհասութիւնը իրենց կատարելիք ոճրային գործերուն:

Բոլոր այս ոճրագործները, բանտերէն ազատ արձակուած,
կ'անցնէին մասնագէտ բժիշկներու մանրազննին քննութենէ,
զանոնք պաշտօնապէս ընդունելէ եւ արձանագրելէ առաջ:

Իպրահիմ պէյ իր մասնագիտացած արդարութեան պաշտօնեա-
ներուն, ընդհանուր դատախազին, պատերազմական նախարարու-
թենէն նշանակուած բարձրագոյն սպային, Էնվէրի Հօրեղբայր
Խալիլ Փաշային, որ այն ատենները, Նոյեմբեր 1914ին, Պոլսոյ
զօրակայքի զինուորական հրամանատարն էր, Բժիշկ Պէհաէտին
Շաքիր Պէյի, Բժիշկ Նազրմ Պէյի, Աթըֆ Պէյի եւ ուրիշներու հետ,
ինչպէս Ազիզ Պէյի, որ Ընդհանուր Ապահովութեան Տնօրէն էր,
եւ հետագային Ճեվատ Պէյի որ Զինուորական Հրամանատար էր
Պոլսոյ Զօրակայքին, անդադար հաւաքոյթներ կը կազմակերպէր
արդարութեան նախարարութեան պալատին մէջ, եւ կ'աշխատէր
շարաքներով եւ ամիսներով, կատարելագործելու համար հայաս-
պանութեան ահաւոր գործիքը Թէշքիլար Մահսուսաի ջարդարար
եւ կողոպտիչ հրոսակները:

Ամէն օր արդարութեան նախարարը դատախազներու եւ պատ-
ժական իրաւագէտներու ժողովներու կը նախագահէր, որոնք կը
գումարուէին արդարութեան պալատը Ընդհանուր Դատախազի
գրասենեակին մէջ:

Թալաաթ մասնաւորապէս Իպրահիմ Պէյի ամէն օր կը հաղոր-
դէր հայ կարաւաններու ստացած ուղղութիւնները, թէ անոնցմէ
քանի հայեր արդէն կոտորուած էին եւ զեռ քանիներ կը մնային
բնաջնջուելիք:

Իպրահիմ պէյ անձամբ հրամաններ եւ հրահանգներ կ'արձա-
կէր Պոլիս եւ գաւառները, առ որ անկ է, որ դատական նախարա-
րութեան ինչպէս նաեւ դատարաններու մէջ հայ պաշտօնեաները
պաշտօնանկ ընեն, եւ զանոնք տասնական, քսանական եւ աւելի
գտուար խումբերով զրկել եւ կոտորել կու տար Թէշքիլար Մախ-
սուսայի այն հրոսակներուն զորոնք ինքն իսկ կազմակերպել
տուած էր:

Անդարայի գործօն կուսակալը Աթըֆ Պէյ արդարութեան նա-

խարարութենէն ստացած հրամանները կը հաղորդէ իր նահանգի
իշխանութիւններուն:

Թուրք վկայութիւն մը հետեւեալ կերպով
կը ներկայացնէ արդարութեան նախարարութիւնը

Հայաստան թրքերէն բնագիր

Հայերէն թարգմանութիւն

Պեոյլետե եսփըլմասը փէք թա-
պիի իտի, չիւնքի հափիսհանէնի
գանլըգաթիլ ճանիլերի Ատլիյե
Նազըրը սալըվերտի. պունար-
տան միթէշէքքիլ էշգիյա չէթէսի-
նի Ատլիյե Նազըրը Իպրահիմ Պէյ
թէշքիլ էթթիրտի...

Ատլիյե Նազըրը վէ աճա մէն-
սուպ Ատլիյե Միֆէթթիշլերի վէ
Իսթիմաֆ Միտտէի Ումումիլէ-
րի, Պիտայէթ Մուհաքէմլերի Բե-
իսի վէ Միտտէի Ումումիլերի
Մուսթանթըզլարը վէ հէյէթի գա-
լէմիլլերի ճիւնի վէ ճանիլեր հա-
միսի: ²

Շատ բնական է որ այսպէս ալ
ըլլար, որովհետեւ Արդարութեան
Նախարարը բանտերէն արհմար-
բու մարդասպան ոճրագործները
ազատ արձակեց: Այս մարդաս-
պաններով կազմուած հրոսակում-
բերը Արդարութեան Նախարար
Իպրահիմ Պէյ ինք կազմակեր-
պեց:...

Արդարութեան Նախարարը եւ
իր գործակիցները, Արդարութեան
Վերաքննիչները, եւ Վերաքննիչ
Ատեաններու Ընդհանուր Դատա-
խազներու փոխանորդները եւ
յանձնախումբի պաշտօնակիցները
չարագործ ոճրագործներու պաշտ-
պաններն էին:

նրն եւիզ իքիննի մատուտսինն
Ֆրգրաթը մուխթելիֆէսինէ թէմաս
էյլէմէքտէ օլտուղունտան քէնտի-
սինն թահթը մուհաքէմէյէ ալըն-
մասը վէ պունտան պաշգա գազա
նահպէ իլէ մէմուրինի թալիյթթէն
պազըլարընա սուի իսթիմալաթը
ալագալարընտան տօլայը էմրի
մէհքէմէտէ թէշրիքլէրի ինաս
էտէնէղի միմաիլէյի Նէտիմ պէյ
թարաֆընտան պիլթանգիմ թէվտի
օլունան ֆէզլէքէլէ էվրագը թահ-
գիգիլէնին թէտգիգիստէն անլա-
շըլմասըլլա գայմագամ հագգըն-
տա նէթիճէի գարարա թէվֆիգէն
թայինի մուամէլէ էտիլմէք իզրէ
պու պապտաթի էվրագըն մէմու-
րին մուհաքէմաթը գանունուն
տէօրտիսիննի մատուտի մուհիպին-
նէ իտարէի թէվտի էտիլմէք իշին
Անգարա վիլայէթինէ թէսէար գը-
լընտըղը գայտէն թէպէլլին էթմիշ
վէ պինայէնալէյի էվրագը մէգքի-
րէնին վիլայէթի միշարիալէյիսա-
տան արանըլմասը թապիի օլմագ-
լա էմիր վէ իրատէ հագրէթի մին-
լէհիլ էմրինտիր:

8 Շուպաթ 335.

Տախիլիյէ Նագըրը Վէքիլի՝
Համտի:

Պատելգայտ հըֆգը. 8 մինհու: 3

3. Դ. Ե. թիւ Մ 319:

մար: Քանի որ այս ընթացքը կապ
ունի պատժական օրէնքի 102րդ
յօդուածի տրամադրութեան հետ,
պէտք է որ ան դատարան կանչուի
ինչպէս նաեւ ընդհանուր դատա-
խազները եւ ստորակարգ պաշ-
տօնեաները, որոնք այս զեղծում-
ներու գործին հետ կապակցութիւն
ունին, նոյնպէս դատի ենթարկը-
ւին:

Արդ, կատարուած քննութեան
հիմերուն վրայ, արդիւնքի համա-
ռօտութիւնը ներկայացուած է վե-
րոյիշեալ Նէտիմ Պէյի կողմէ
տրուած որոշումին համաձայն
հաստատելու եւ մանրամասնելու
կատարուելիք այն ձեւակերպու-
թիւնները դատելու համար պաշ-
տօնեաները օրէնքի չորրորդ յօդ-
ուածի տրամադրութեան համա-
ձայն եւ վաւերաթուղթերը յանձնե-
լու Վարչական Խորհուրդին, մենք
անդրադարձանք մատեաններու
տուեալներէն թէ վերեւ յիշուած
վաւերագրերը ժամանակին փո-
խանցուած են Անգարայի կուսա-
կալութեան: Արդ, նոյն նահանգին
մէջ քննութիւններ կատարել տալու
հրամանը կը պատկանի ձեր գե-
րագանցութեան:

8 Փետրուար 1919:

Ի դիմաց

Ներքին Գործերու Նախարարու-
թեան Համտի:

Արձանագրելէ ետք դասաւորել:

8 նոյն ամիս:

ԳԼՈՒԽ ԺԳ.

ԵՐԿՈՒ ՏԵՍԱԿ

ԹԷՇՔԻԼԱԹԸ ՄԱԽՍՈՒՍԱ

Սերաստիոյ կուսակալ Մուամէր պէյի հրահանգով նոյն նա-
հանգի ընդհանուր դատախազը Բինեանի բանտէն ազատ արձակեց
հարիւր քսան չորս ոճրագործներ 1914 նոյեմբեր ամսուան մէջ: 1

Անգարայի կեդրոնական բանտէն երկու հարիւր քառասուն
ինն ոճրագործներ ազատ արձակուեցան 3 Մարտ 1915ին եւ զըր-
կուեցան Չորուս մասնաւոր յանձնախումբի մը կողմէ որ բաղկա-
ցած էր հետեւեալ պաշտօնեաներէն. Մահմուտ ձէլլալէտտին Պէյ,
Անգարայի առողջապահական տնօրէն. Աւագ Հարիւրապետ Ֆէհմի
Պէյ, զինուորական ճիւղի նախագահ. Հազարապետ Մէհմէտ Վա-
սէֆ Պէյ, Անգարայի զինայրերու հրամանատար եւ Ալի Հայտար
Պէյ, Կայսերական Վերաքննիչ Ատեանի Դատաւոր: 2

Եոզղատի Միւթէսարըֆ ձէմալ Պէյ, Եոզղատ գալէ առաջ իբր
Եւզոկիոյ կառավարիչ Մայիս ամսուան սկիզբը նոյն քաղաքի
բանտէն հանեց ոճրագործներ, ապա իբր Եոզղատի կառավարիչ
կազմեց յանձնախումբ մը որ կը բաղկանար հետեւեալ անձերէն.
Թէվֆիգ Պէյ, Եոզղատի Ատեանի ընդհանուր դատախազ, Հազա-
րապետ Սալիմ Պէյ, Եոզղատի զինուորագրութեան գրասենեակի
նախագահ, եւ Բէմգի Պէյ, Եոզղատի Ատեանի դատաւոր:

Ասոնք 15 Մայիս 1915ին Եոզղատի բանտէն արձակեցին վաթ-
սուն հինգ ոճրագործներ եւ զանոնք զինելով զրկեցին Չորուս: 3

1. Դ. Ե. թիւ Մ 497:

2. Դ. Ե. թիւ Հ 569-570:

3. Դ. Ե. թիւ Մ 532:

Հայաստան թրքերէն բնագիր

Հայերէն թարգմանութիւն

Մահգումինի մեֆգուֆինի ԲԷՆԱ-
ԻՅԷՆԷՆ ՎԷ ԹԵՎԻԻՏ ԷՄԻԼԷՆ ԷՅԻՍԱՍ:

Ասիկա ցանկն է բանտէն ազատ
արձակուած դատապարտուած
ոճրագործ անձերուն:

Ա. ՅԱՆԿ

1. ԻՅ Աղասը Օղլու Ապտիլ Գատիր, Գարա Մաղարա գիւղէն,
մարդասպանութեան ոճիրով բանտարկութեան դատապարտուած:
2. ՇԷՏԻՐԻ Օսմար Օղլու Մուսթաֆա, Չուխուր Մեզար գիւղացի,
մարդասպանութեան յանցանքով բանտի դատապարտուած:
3. Գալըպահ Քէօր ՄԷՏԷՄ Օղլու ՄԷՏԷՄ, Գուրու Հէօյիւք գիւղացի,
բանտի դատապարտուած՝ մարդասպանութեան յանցանքով:
4. Էմին Օղլու Իճապի Օսման, Թէքնէզիր գիւղացի,
մարդասպանութեան յանցանքով բանտի դատապարտուած:
5. Հաճի Օղլու Խաչրէտտին, Գուրու Հէօյիւք գիւղէն,
մարդասպանութեան ոճիրով բանտարկութեան դատապարտուած:
6. ՄԷՏԷՄ ՊԷՅՕՂԼՈՒ ԱՏԷՄ, Շէյխլէր գիւղացի,
մարդասպանութեան յանցանքով բանտի դատապարտուած:
7. Հոճա Իպիշ Օղլու Իպրահիմ, Գանլըճա գիւղացի,
մարդասպանութեան ոճիրով բանտարկութեան դատապարտուած:
8. Եուսուֆ Օղլու Օսմար Օսման, Տափուլպազ գիւղացի,
մարդասպանութեան ոճիրով բանտարկութեան դատապարտուած:

Գուժար՝ ութ հոգի:

Հայաստան թրքերէն բնագիր

Հայերէն թարգմանութիւն

Էֆ'ալը ճինահիլէ միթթեհիմէն
մեֆգուֆ պուլունտուքլարը հալտէ
Տախիլիլէ Նեզարէթի ճէլիլէսիին
իշ'արընա աթֆէն 15 Մաչու 331
թարիխինտ Թէշքիլաթը Ճէտիտէ-
լա գայտօլունմաք սուրէթիլէ ա-
քրէ սեփգետիլմէք իզրէ Եօզղաթ
ախզը աքրէր շուպէսինէ թէվիմ

Ասիկա ցանկն է ութ հոգիներու
որոնք բանտարկուած էին իրենց
գործած զանազան ոճիրներուն
պատճառով, եւ որոնք ներքին
գործերու բարձրապատիւ նախա-
րարութենէն զրկուած հրահանգ-
ներուն համաձայն բանտէն ազատ
արձակուեցան 15 Մաչիս 1915ին

օլունան սէքիզ Աէֆէր մեֆգուֆին
քէնտիլէրիին միշիր տէֆթերի
պիթթանզիմ թագտիմ գըլընտըր,
Էֆէնտիմ:

10 Շուպաթ 335:

Միսիր

Հափիսհանէ

Լիվաի Եօզղաթ:

իմզա

Ալի: 4

Եւ յանձնուեցան Եոզղատի զինու-
որական գրասենեակին արձանա-
գրուելու համար Թէշքիլաթը
Ճէտիտէ մէշ (նորոգուած): Իմաց-
նելով ձեզի թէ անոնց տեսրակը
կարգի դրուած է, մնամ Տէր իմ:

10 Փետրուար 1919:

Կնիք Եոզղատ գաւառի Բանտ:
Ստորագրութիւն Ալի:

Բ. ՅԱՆԿ

1. Գարա Խալիլ Օղլու ՄԷՏԷՄ, Եոզղատի Քէօթիմհոլ գիւղացի,
մարդասպանութեան յանցանքով 15 տարի բանտարկութեան դա-
տապարտուած:
2. Պըտըք Օղլու Խալիլ, Պողազլեանի Կէօթէճէ գիւղացի, 15 տար-
ուան բանտի դատապարտուած՝ մարդասպանութեան ոճիրով:
3. ՎԷԼԻ Քեհեա Օղլու Մուսթաֆա, Եոզղատի Բիւթպէճի գիւղէն, 15
տարի բանտի դատապարտուած՝ մարդասպանութեան ոճիրով:
4. Հիւսէին Օղլու ՄԷՏԷՄ Մախտումը, Պողազլեանի Ալի Թիմուրճի
գիւղէն, մարդասպանութեան ոճիրով 15 տարուան բանտարկու-
թեան դատապարտուած:
5. Կոչ Օղլան Օղլու Ահմէտ, Պողազլեանի Իքի Գըշլա գիւղէն, 15
տարի բանտի դատապարտուած՝ մարդասպանութեան ոճիրով:
6. ՍԷԼԻ Ահմէտ Օղլու Մուհամիթ Ղազի, Անգարայի Տէյմիշ գիւղէն,
15 տարի բանտի դատապարտուած՝ մարդասպանութեան ոճիրով:
7. Եուսուֆ Օղլու Եուսուֆ, Սարընըն Վէրան գիւղէն, 15 տարի բանտի
դատապարտուած՝ մարդասպանութեան յանցանքով:
8. Եագուպ Օղլու Ալի, Սորկունի Աքուլուք գիւղացի, 15 տարի բանտի
դատապարտուած՝ մարդասպանութեան յանցանքով:
9. Էօթէպէ Օղլու Հիւսէին, Սորկունի Քիւրէք գիւղացի, 15 տարի
բանտի դատապարտուած՝ մարդասպանութեան ոճիրով:

4. Դ. Ե. Թիւ Մ 534:

Ալի Պէյ Եոզղատի բանտի տնօրէնն է:

10. Վելի Քեհեա Օղլու Ապտալլահ, Գարիէ գիւղացի, 15 տարի բանտի դատապարտուած՝ մարդասպանութեան յանցանքով:
11. Սինտէն Սօֆու Օղլու Ահմէտ, Սորկունի Գարազըզ գիւղէն, 15 տարի բանտի դատապարտուած՝ մարդասպանութեան ոճիրով:
12. Սինտէն Իսլամ Օղլու Տուրսուշ, Անգարայի Գարաշար գիւղէն, 15 տարի բանտի դատապարտուած՝ մարդասպանութեան յանցանքով:
13. Հագգը Քեհեա Օղլու Մուսթաֆա, Եոզղատի Թոփճու գիւղացի, 15 տարի բանտի դատապարտուած՝ մարդասպանութեան ոճրապարտ:
14. Թիսուրնի Օղլու Մին Ալի, Մէճիթ էօզնիք Արգողլան գիւղէն, 15 տարի բանտի դատապարտուած՝ մարդասպանութեան ոճիրով:
15. Իպիշ Օղլու Մուսթաֆա, Եոզղատի Եոզուն Հիսար գիւղէն, 15 տարի բանտի դատապարտուած՝ մարդասպանութեան ոճիրով:
16. Սինտէն Օնպաշի Օղլու Մէհմէտ, Ագտաղ Մատէնի էօպէք գիւղէն, մարդասպանութեան համար 15 տարի բանտի դատապարտուած:
17. Իսլամ Օղլու Խալիտ, Ճաֆէրլի գիւղէն, մարդասպանութեան յանցանքով 15 տարի բանտարկութեան դատապարտուած:
18. Չաֆերուլլահ Օղլու Հիսէին Նիհատ, Ճաֆեր գիւղացի, 15 տարի բանտի դատապարտուած՝ մարդասպանութեան յանցանքով:
19. Տուրունազ Օղլու Սաատ Ալի, Ճաֆեր գիւղացի, մարդասպանութեան ոճիրով՝ 15 տարի բանտի դատապարտուած:
20. Հաճի Մախտումը Բիզա, Ուզունլու գիւղէն, մարդասպանութեան յանցանքով՝ 15 տարի բանտի դատապարտուած:
21. Քուրտ Փեհլիվան Օղլու Ապտալլահ, Գարչա Գարա գիւղէն, 15 տարի բանտի դատապարտուած՝ մարդասպանութեան ոճիրով:
22. Գարա Քելլէ Օղլու Հասան Հիսէին, Էլմա Հաճիլուպալը գիւղէն, մարդասպանութեան ոճիրով՝ 15 տարի բանտի դատապարտուած:
23. Էմիրգէ Օղլու Էլվան, Չորուսի Ինտիլ գիւղացի, մարդասպանութեան ոճիրով՝ եօթն ու կէս տարի բանտի դատապարտուած:
24. Իսմայիլ Ուսթա Օղլու Սապիթ, Գանլըճա գիւղացի, մարդասպանութեան ոճիրով, եօթն ու կէս տարի բանտի դատապարտուած:
25. Տէլիսմէնճի Ահմէտ Օղլու Ալի, Սարը Հաճըլար գիւղացի, գէնքով մարդ վիրաւորած ըլլալուն՝ երեք տարի բանտի դատապարտուած:
26. Ալի Օղլու Օսման, Սուվարի գիւղացի, գողութեան յանցանքով երեք տարի բանտարկութեան դատապարտուած:
27. Ալպիսթան Օղլու Գարա Ալի, Գոզան գիւղացի, գողութեան յանցանքով չորս տարի բանտարկութեան դատապարտուած:

28. Խալիլ օղլու Աքիֆ, Ազիզլի այգիներէն, հունճքի գողութեան յանցանքով երեք տարի բանտարկութեան դատապարտուած:
29. Էմրան Օղլու Ալի, Չըճըզլար գիւղէն, մարդասպանութեան յանցանքով 15 տարի բանտարկութեան դատապարտուած:
30. Մուսթաֆա Օղլու Խալիլ Իպրահիմ, Չըճըզլար գիւղացի, մարդասպանութեան յանցանքով 15 տարի բանտարկութեան դատապարտուած:
31. Ահմէտ Օղլու Ջիա, Եոզղատի Տիվանլը գիւղէն, մարդասպանութեան յանցանքով եօթն ու կէս տարի բանտարկութեան դատապարտուած:
32. Սուրայեա Օղլու Մէհմէտ, Պէօյիւք Գըշլա գիւղէն, մարդասպանութեան յանցանքով եօթն ու կէս տարի բանտի դատապարտուած:
33. Տէլի Քեհեա Օղլու Սաուրգ, Մազրաա գիւղացի, մարդասպանութեան յանցանքով երեք ու կէս տարի բանտարկութեան դատապարտուած:
34. Պէշէ Օսմանօղլու Օսման, Եոզղատի Պէքիր Թաղէն, մարդասպանութեան յանցանքով երեք տարի բանտարկութեան դատապարտուած:
35. Մէհմէտօղլու Քուրտ Խալիլ, Խորասան գիւղացի, մարդասպանութեան յանցանքով 15 տարի բանտարկութեան դատապարտուած:
36. Ֆէլզուլլահօղլու Մէհմէտ, Ճաֆէրի գիւղացի, մարդասպանութեան ոճիրով 15 տարի բանտարկութեան դատապարտուած:
37. Հիսէինօղլու Մեմալ, Օսմանճըզ գաւառակի Օսմանճըզ գիւղէն, մարդասպանութեան ոճիրով 15 տարի բանտի դատապարտուած:
38. Եզպանօղլու Գարա Եուսուֆ, Եզպան գիւղացի, մարդասպանութեան յանցանքով 15 տարի բանտի դատապարտուած:
39. Օսման Օղլու Մէհմէտ, Քուրտ Մէհմէտի որդի, Էնպագէք գիւղէն, մարդասպանութեան յանցանքով 15 տարի բանտի դատապարտուած:
40. Գոնտիթօղլու Էօմէր, Ալթուն Թաշ գիւղացի, մարդասպանութեան յանցանքով հինգ տարի բանտարկութեան դատապարտուած:
41. Սերպան Օղլու Հաճի Մէհմէտ, Պէօյիւք Գըշլա գիւղէն, մարդ սպանել փորձած ըլլալուն համար երեք տարի բանտի դատապարտուած:

42. Ալի Օղլու Սէյիտ, Գոզան գիւղացի, գողութեան յանցանքով հինգ տարի բանտարկութեան դատապարտուած:
43. Հիւսէին օղլու Իսմայիլ, Ճաֆէր գիւղացի, մարդասպանութեան յանցանքով 15 տարի բանտարկութեան դատապարտուած:
44. Էօքպէլ Օղլու Ալի, Գոզանձա գիւղացի, մարդասպանութեան յանցանքով 15 տարուան բանտարկութեան դատապարտուած:
45. Օսման Չափուշ Օղլու Ահմէտ, Ճուլհաճը Պալա գիւղէն, մարդասպանութեան ոճիրով ցկեանս բանտարկութեան դատապարտուած:
46. Ալի Օղլու Մէհմէտ, Ճայրթըճը գիւղացի, գողութեան յանցանքով հինգ տարուան բանտարկութեան դատապարտուած:
47. Վէլի Օղլու Մէհմէտ Ալի, Հաճըլար գիւղացի, գողութեան յանցանքով երկուք ու կէս տարուան բանտի դատապարտուած:
48. Սարը Օղլու Մեվլուտ, Գապազլը գիւղացի, գողութեան յանցանքով մէկ տարուան բանտարկութեան դատապարտուած:
49. Ալի Օղլու Մէհմէտ, Եոզղատի Էսկի Ամպար թաղէն, գողութեան յանցանքով ութ տարի բանտարկութեան դատապարտուած:
50. Եուսուֆ Օղլու Ալի Բիզա, Բէմպէճիք գիւղէն, մարդասպանութեան յանցանքով 15 տարուան բանտարկութեան դատապարտուած:
51. Քիւշիք Օղլու Իպիշ, Էմիրխան գիւղէն, գողութեան յանցանքով մէկ տարուան բանտարկութեան դատապարտուած:
52. Սերեան Մէհմէտ Օղլու Հասան, Աճի գիւղացի, գողութեան յանցանքով մէկ տարուան բանտարկութեան դատապարտուած:
53. Մահմուտ Օղլու Շիքրի, Չորուձի գաւառակէն, մարդասպանութեան յանցանքով վեց տարի բանտարկութեան դատապարտուած:
54. Օսման Օղլու Նեճիպ, Սէյիտ Եար գիւղացի, գողութեան յանցանքով մէկ տարուան բանտարկութեան դատապարտուած:
55. Եշիլ Օղլու Նեճիպ, Գուրու Հէօյիւք գիւղացի, բանտէն փախած ըլլալու յանցանքով դատապարտուած:
56. Տարաքճի Օղլու Իհսան, Ճան Փաշա գիւղէն, գողութեան յանցանքով ինն տարուան բանտարկութեան դատապարտուած:
57. Էօքպէլ Օղլու Ալի, Գոզանձա գիւղացի, մարդասպանութեան յանցանքով 15 տարուան բանտարկութեան դատապարտուած:

Գումար 57 հոգիներ:

Հայաստան թրքերէն բնագիր

Հայերէն թարգմանութիւն

Թէշքիլաթը Ճէտիտէյէ գայտետիլմէք սուրէթիյէ Տախիլիյէ Նէզարէթի Ճէլիլէսինին իշ'արընա աթֆէն մագամը միթէսարըֆընըն օլպապտէքի էմրի միճիպինճէ 2օրումա սէվգէտիլմէք իզրէ 15 Մալլըս 331 թարիխինտէ Եօզղաթ Ախզը Ասքէր շուպէսինէ թէլիմ օլունան էլիյէտի շախարն իսիմ վէ շէօհրէթլէրիմի միպէյէն տէֆթէրի թագտիմ գըլընըր, էֆէնտիմ:

5 Շուպաթ 335:

Ինզա / Ալի:

Միսիիր / Հափիսհանէ Լիվալի Եօզղաթ: 5

Թէշքիլաթը Ճէտիտէյէ մէշ արձանագրուելու համար այս յիսուն եօթ հոգիները Ներքին գործերու բարձրապատի Նախարարութեան հրահանգներուն համաձայն եւ Եոզղատի միթէսարըֆին հրամանով Չորում դրկուեցան: Տէր իմ, ձեզի կը փոխանցենք այս տետրակը որ կը պարունակէ անունները, մականունները եւ իրենց ծննդավայրերը, ասիկա նախ յանձնուած էր (Եոզղատի) զինուորագրութեան գրասենեակի վարչութեան: 5 Փետրուար 1919: Ստորագրութիւն / Ալի: Կնիք / Եոզղատ Գաւառի Բանտ:

Առաջին անգամ ըլլալով ամբողջութեամբ կը հրատարակուի Եոզղատի բանտէն պաշտօնապէս ազատ արձակուած Թուրք դատապարտեալներու այս անուանացանկը: Ներքին Գործերու Նախարարութեան եւ Արդարութեան Նախարարին տուած հրահանգներուն համաձայն կազմուած մասնաւոր յանձնախումբեր Թուրքիոյ բանտերէն ազատ արձակեցին ոճրագործները Հայերու բնաջնջումը իրագործելու համար: Վերեւ յիշուած՝ Եոզղատի բանտի մէջ վաթսուն հինգ մարդասպաններէն եւ աւազակներէն շատ աւելի ոճրագործներ կային, ամէնքն ալ ազատ չարձակուեցան: Նոյնպէս Թուրքիոյ միւս բոլոր քաղաքներու եւ գիւղաքաղաքներու բանտերէն ազատ արձակուեցան 1914 Յուլիսէն սկսեալ բազմահազար մարդասպաններ եւ աւազակներ, որոնցմէ շատեր զինայրերու համազգեստով ծպտուած ընկերացան տեղահանութեան հայ կարաւաններուն:

5. Դ.Ե. Թիւ Մ 532:

Եռզգատի բանտէն ազատ արձակուած վաթսուն հինգ ոճրագործներէն մեծ մասը մարդասպաններ են. 65էն 51ը մարդասպան է. 12ը գող եւ աւազակ, մին՝ անորոշ յանցանքով բանտարկուած, իսկ ուրիշ մըն ալ՝ բանտէն փախած ըլլալուն համար: Այս մարդասպաններէն մեծ մասը 15 տարուան բանտարկութեան դատապարտուած էին, մէկ հոգի ցկեանս, մնացածները եօթէն մինչեւ երեք տարի բանտարկութեան դատապարտուած էին:

Եռզգատի բանտի տնօրէն Ալի Պէյ իր երկու պաշտօնական եւ բացատրական յայտարարութիւններու մէջ կը գործածէ Թէշքիլաթը Ճէտիտա եւ ոչ թէ Թէշքիլաթը Մախսուսա բառերը, զանազանելու համար առաջինը երկրորդէն, ուրիշ բառով՝ արդէն գոյութիւն ունեցող Թէշքիլաթը Մախսուսան տարբեր էր 1914 Յուլիս ամսուան մէջ առնուած որոշումին համեմատ կազմուած Թէշքիլաթը Ճէտիտայէն:

Ճէտիտա արարներէն բառ է նոյն իմաստով գործածուած նաեւ թրքերէնի մէջ, կը նշանակէ նորոգուած կամ նոր գոյութեան բերուած: Արդէն գոյութիւն ունէր 1913 Յունուար ամիսէն ի վեր Թէշքիլաթը Մախսուսա մը որ հիմնուած էր պաշտօնապէս եւ որ կախում ունէր պատերազմական նախարարութենէն անկանոն գործունէութեամբ օգնելու Օսմանեան բանակին, մինչ 1914 Յուլիսին կազմուած Թէշքիլաթը Ճէտիտան նպատակ ունէր հայ ցեղի բնաջընջումը: Այս մասին պաշտօնական վաւերագրերէ պիտի տրուին մանրամասնութիւններ:

Թուրքիոյ բանտերէն դատապարտեալ ոճրագործները ազատ արձակելու հրամաններ տրուած էին Երիտասարդ Թուրքերու կուսակցութեան Ընդհանուր Կեդրոնական Կոմիտէէն, Պատերազմական Նախարարութենէն, Ներքին Գործերու Նախարարութենէն, եւ մասնաւորապէս Օսմանեան Արդարարութեան Նախարարութենէն, որուն հրահանգներուն համաձայն իւրաքանչիւր նահանգի, գաւառի, գաւառակի եւ քաղաքի մէջ կազմուեցան յատուկ յանձնախումբեր: Այս յանձնախումբերու մէջ առնուեցան առ հասարակ կառավարիչներ, զինուորական հրամանատարներ, ընդհանուր դատախազներ եւ դատաւորներ, ոստիկանապետներ եւ առողջապահութեան տնօրէններ:

Եռզգատի նախկին դատաւոր Մուսթաֆա Բէմզի Պէյ, որ նոյն քաղաքի մէջ կազմուած յանձնախումբի անդամ էր, յատկապէս կը շեշտէ թէ արդարութեան նախարարութեան հրամանով էր որ կազ-

մուեցաւ Եռզգատի բանտէն ոճրագործները ազատ արձակելու յանձնախումբը: Արդարութեան Նախարարութեան հրամանները կ'ընդգրկէին նաեւ բանտերէն ազատ արձակուած ոճրագործներու գործած ոճիրներն եւ կողոպուտները դատական հետապնդումէ զերծ պիտի մնային բացի այն պարագայէն երբ մարդասպանները ու կողոպտիչները բաժին չէին հաներ իրենց կողոպուտէն կառավարութեան եւ Երիտասարդ Թուրքերու կուսակցութեան՝ մէկ երրորդի համեմատութեամբ: ⁶

Հայաստան թրքերէն բնագիր

Եռզգաթ Միւթսարըֆըրընըն թեգքերէսինէ Եռզգաթ գատը-ը սապըզը Բէմզի Էֆէնտիսինն Գէվապը սուրէթի:

Եռզգաթ հապիսահանէսինտէ օլան մահգումիսինն Գիմահտէն 331 սէնէսինտէ թախլիյէ Էտիլէնլէր գիմլէր օլտուդումու պիլէմէմ, անճագ հաթըրտա միւթսարըֆը Էպազը Մուհիթթիսին Փաշանըն վէքալէթի գամանընտա Ատլիյէնին Էմրիսին միւթէնիթ օլսա կէրէքքի իսթիսաֆ Միտտէի Ումումի սապըզը Թէվֆիգ Պէյին թիյասէթի թահթընտա Ասքէրի Շուպէ Բէիսի Սալիմ Պէյ, միւթսարըֆ, միւթթի, գատը տայընըզ - հազըր օլտուգլարը հալտէ ասքէրէ սէվգէտիլէ-ճէքլէրիսին պիլ պէյան տօքթօրուն մուսմէնէսիյլէ թախլիյէ մուսմէլէսի իճրա Էտիլմիշ վէ ախարիսնտէ Զօրումա չէթէ միւթթիգէսինէ իզամ Էտիլտիքլէրի Գէթիճէի մէսմուս-

Հայերէն թարգմանութիւն

Պատճէն Եռզգատի նախկին դատաւոր Բէմզի Էֆէնտիսի պատասխանին ուղղուած՝ Եռզգատի Միւթսարըֆի գեկոյցին:

Պատի ունիմ նկատողութեան առնելու ձեր գեկոյցը: Ես չեմ կրնար յիշել իրենց անուններով թէ որոնք էին Գիշդ այն դատապարտեալ ոճրագործները որոնք 1915ի ընթացքին բանտէն ազատ արձակուեցան:

Երբ Մուհիթտիսին փաշա Եռզգատի փոխ միւթսարըֆ էր, արդարութեան նախարարութեան հրամանին համաձայն յանձնախումբ մը կազմուեցաւ վերաքըննիչ ատեանի նախկին ընդհանուր դատախազ Թէվֆիգ Պէյի նախազահութեան տակ. անդամներն էին Եռզգատի զինուորագրութեան պաշտօնատան տնօրէն Սալիմ Պէյ, Եռզգատի միւթթիսին Էս քու ծառադ (Եռզգատի դատաւորը Մուսթա-

6. Վէհիպ Փաշայի տեղեկագիր, Դ.Ե. Թիւ. Հ 171 - Հ 182:

թըմ վե օլտողու կիպի պունլարտան ժանտարմա եազըլըփ եազըլմատըղընը պիլեմեմ, գերա էտիլեն մուամելե Մեհլիսի Իտարեհին գարարընա իսթինատեն էտիլմեգ պիլեյիմ: Պունտան մատտե թախիլյե վե սաիր սուրեթլե թանսիլաթ եափըլըփ եափըլմատըղընը տախի պիլեմեմ. մեմուաթըմ օլարագ սեհեյի մերքումետե Եօզդաթ Իթթիհաթ վե Թերագգի Բեհսի օլվագըթ Պելետիյե Բեհսի Ահմետ վե ազալարը ժանտարմա Գումանտանը սապըզը Թեվֆիգ, վե էսպագ Մուհասեպեհի Վեհպի վե Պիտայեթ ճեգա Բեհսի սապըզը Հեմգե վե Պագըրճի Մահմութ վե էյթամ միտիրի սապըզը մերհում Լուրթի վե Մեքթեպի Սուլթանը մուալիմլերիստեն Նագմի Էֆեհտիլեր օլուփ, սաիր Էֆրատը վար իսետե գիմլերտեն իպարեթ օլտողունու պիլեմեմ, գիրաիլերիստե պուլունմագտըմ: Պունլարտանտա հեյեթի մերքեգիյե վե ֆեալը գիմլեր օլտողունտան մալիմաթըմ եօթթուր: Անգարա Իթթիհաթ վե Թերագգի քեաթիպի մետուլու Նեհաթի Պեյ թեհհիրտեն իւ կիսն Էվվել պուրայա կելիփ Պելետիե Բեհսիհին հանեպիստե միսաֆիր օլարաթ, իւ կիսն սօնրատա թեհհիրին պիրիհնի գաֆիլեպի իգպա պիր կիսն սօնրա Զորումա կիտիփ, պիր ազշամ սօնրա եհնե ալտեթլե Բեհսի միմաիլեյիհին հանեպիստե պիր ազշամ գալարագ, էրթեպի

Ֆա Բեմգի):

Բժշկական քննութիւն կատարուելէ ետք տեղի ունեցան ձեակերպութիւնները ոճրագործներու ազատ արձակումին իբր թէ ասոնք զինուոր պիտի արձանագրուէին: Հետագային իմացանք որ այս ոճրագործները դրկուեցան Զորումի հրոսակներուն թիւը աւելցնելու համար: Չեմ գիտեր թէ անոնք զինայր արձանագրուեցան թէ ոչ որովհետեւ ձեակերպութիւնները տեղի ունեցան Եոզդատի Վարչական Խորհուրդի կողմէ: Դեռ աւելի, ես տեղեակ չեմ բանտէն անոնց ազատ արձակումի մանրամասնութիւններուն. իմացայ որ յանձնախումբի անդամներն էին Եոզդատի Միութիւն եւ Յառաջդիմութիւն կուսակցութեան ատենապետ Ահմետ Պեյ. նախկին աւագ հաշուակալ Վեհպի Պեյ, զինայրերու գունդին հրամանատար Թեվֆիգ Պեյ. պատժական ատենանի նախագահ Համգա Էֆեհտի. որբանցի տնօրէն Տայիգ Էֆեհտի. նախկին ընդհանուր դատախազ Լուրթի Էֆեհտի. Սուլթանիէ վարժարանի ուսուցիչ Նագմի Էֆեհտի: Չեմ յիշեր թէ ուրիշներ ալ կային թէ ոչ, որովհետեւ ես անոնց մէջ չէի: Դարձեալ չեմ գիտեր թէ գործադիր մարմինը որոնցմէ կազմուած էր: Անգարայի Միութիւն եւ Յառաջդիմութիւն կուսակցութեան պատասխանատու քարտուղար Նեհաթի Պեյ տեղահանութենէն երեք օր

կիսնի Անգարայա կեթմիշտիր: Թեհհիրտեն սօնրատա Անգարայա թային էտիլեն վալի Նեհմեթթին Պեյլե պիր արապայա պիսերէք Սամսունտան պուրայա Ապտիլ Ճեպպարգատե Մեհմեթ պելին հանեպիստե միսաֆիր օլարաթ Անգարայա կիթթիղի վե պու պապթե պունտան ֆազլա մալիմաթըմ օլմատըղընը մարուտուր:

10 Շուպատ 335.

Էլտայի Եօզդաթ Գատըրը
Սապըզը,
Մուսթաֆա Բեմգի 7

առաջ հոս եկաւ եւ հիր մնաց քաղաքապետի տան մէջ: Աքսոբեալներու կարաանին մեկնումէն ետքան Զորում գնաց, ապա ետ եկաւ, մեկ գիշեր քաղաքապետի տունը մնաց եւ վերադարձաւ Անգարա:

Երբ արսոբեալները քաղաքէն դուրս հանուեցան, ինք երեցաւ կառքի մը մէջ նստած՝ Անգարայի կուսակալ նշանակուած Նեհմետտին Պեյի հետ որ Սամսունէն կու գար: Ան գիշեր մը անցուց Եոզդատի մէջ Ապտիլ Ճեպպարգատե Մեհմետ Պեյի տունը: Ապա Անգարա մեկնեցաւ:

10 Փետրուար 1919:

Եոզդատի Նախկին Դատարո՛ր՝
Մուսթաֆա Բեմգի:

Եոզդատի բանտէն 15 Մայիս 1915ին վաթսուն հինգ դատապարտեալ ոճրագործներ ազատ արձակելու համար արդարութեան նախարարութենէն մասնաւոր հրաման տրուած էր կազմել յատուկ յանձնախումբ. այս յանձնախումբի անդամ դատաւոր Մուսթաֆա Բեմգի՝ Թուրք Պատերազմական Ատենանի պահանջով տեղեկագիր մը ղրկած է Եոզդատի կառավարիչին որ իր կարգին զայն փոխանցած է Պոլսոյ Ատենանի նախագահութեան:

Այս վաւերագրին մէջ յատկապէս նկատելի է զլիսաւոր եւ կարեւոր այն կէտը որ արդարութեան նախարարութիւնը մասնաւոր հրաման ղրկած է կազմել յանձնախումբ մը բարձրաստիճան քաղաքային եւ զինուորական անձերէ Եոզդատի բանտէն ազատ արձակելու դատապարտեալ ոճրագործները, որոնք ոչ մէկ յատուկութիւն ունէին զինուոր գրուելու կամ զինայր արձանագրուելու, եւ որոնք ղրկուած են Զորում հոն հրոսակներու խումբեր աւելցընելու եւ զօրացնելու:

7. Գ.Ե. Թիւ Մ 535:

Կոտորածներու պատասխանատուները դատող՝ Պոլսոյ Թուրք Արտակարգ Պատերազմական Ատենի Նախագահը ամբաստանեալ Երիտասարդ Թուրք ղեկավարներու առջեւ կարգալ կու տայ 1914ին զրկուած ծածկագիր հեռագիրները ապացուցանելու համար թէ Երիտասարդ Թուրքերու Կուսակցութիւնը 1914 Յուլիսէն սկսեալ կազմակերպել սկսած էր նոր Մասնաւոր Կազմակերպութիւն մը Թէշքիլաթը Մահուսա կամ Ծէտիտա որուն պաշտօն տրուեցաւ տարագրուած հայ կարաւանները կոտորելու եւ անոնց ինչքերը կողոպտելու:

Հայատառ թրքերէն բնագիր

Հայերէն թարգմանութիւն

Բէիս.— Օգույունուգ:
(Զապրթ Քեաթիպի Շէֆիգ Պէյ
օգուր.)

Նախագահ.— Կարդացէք:
(Ատենագրող քարտուղար Շէֆիգ
Պէյ կը կարդայ.)

Մերքեզի Ռումի Հէյէթի
Միհթերէմէսինէ,

Կեդրոնական Ընդհանուր Կո-
միտէի Գործադիր Բարձրագոյն
Մարմին,

Միազգէզ գարտէշլեր,
15-9-330 թարիխի մահրէմ
էմիրնամէլերինին ճէվապըտըր:

Մեծապատիւ Եղբայրներ,
Ասիկա 15 Սեպտեմբեր 1914
թուակիր ձեր մտերմական հրա-
մաններուն պատասխանն է:

Մուքատտէմէ, հէյէթի ումումի-
յէլերիյէ Սիւլէման Ասքերի Պէյ
միթէատտիթ մէքթուպարա կտօն-
տերիլէճէք չէթէ լիզում օլուսի օլ-
մատըղընը եազըլմըշտըր:

Պահանջներու համեմատ վերջե-
րըս դէպի սահմանագլուխ հրո-
սակներու առաքումին առընչու-
թեամբ շատ մը նամակներ գրուած
են բոլոր գործօն ընդհանուր կոմի-
տեներուն ինչպէս նաեւ Սիւլէման
Ասքերի Պէյին:

Թապիի շիմտի լիզում կէօրիւ-
միշ օլանագ քի, սերիյան թահգիգ
իլէ ինպասը էմիր պույուրույօր:

Արդարեւ, ներկայիս պահանջ
կայ որովհետեւ քննութիւն կա-
տարուելէ ետք ստիպողական
հրաման տրուած է:

Իքի կիւն էվլէլճէ Տախիլիյէ Նէ-
զարթիկնտէն մաքամը վիլայէթէ
շիֆրէյլէ պիր հաֆթա զարֆընտա
իքիկիւգ քիշիկին թէտարիքի էմր-
օլունույօրտու: Միւֆիթ Պէյլէ
կէօրիւշտիքթէն սօնրա իհգա-
րաթա պաշլանըլմըշ վէ իքիկիւգէ

Երկու օր առաջ ներքին գործե-
րու նախարարութենէն ծածկագիր
հեռագիր մը հասաւ (Պուրսաչի Գ)

եաքըն էֆրատըն տէֆթերի տախի
թանգիմ էտիլմիշքէն կէօսթերիլէն
էվսաֆը լազիմէտէն հիզմէթի ա-
քերիյէ իլէ միւքէլլէֆ օլմամաք
գայտը պիթթապի մէզքիւր մէվ-
ճուտու ազալթթը, Հիւքիւմէթճէ
մահքումին վէ շէքալէթլէ մէլուֆ
օլանլարըն տախի սէվգիմէ միւսա-
ատէ էտիլտիղի հալտէ պիզճէ ախ-
լաքը համիտէ սահիպի պուլուն-
մաք գայտը եազէտիլտիղիմտէն
պու սուրէթլէ տէ մէվճուտ ազալ-
տը: Զաթէն 309 վէ 310 լուլարըն
մուամէլէի աքերիյէ կէօրմէլերիմէ
նազարան օնտօքուգ եաշընտան
քըրքպէշ եաշընա քատար աքեր
օլան էֆրաթ արասընա պու կիպի
էվսաֆը լազիմէյէ հաիգ ատամ
թէտարիքի փէք միւշքիլ օլանաք
հալպուքի մահքիւմին վէ էրպասը
ֆիրարին ինթիհասպըյլէ տախի
ճէլպ վէ ճէմի սասաչիշի մէմլէքթթ
տախի իտամէ վէ թէմին էտիլմիշ
օլուր:

կուսակալութեան ստիպելով որ
մէկ շաբթուան ընթացքին 200 ան-
հատներ գտնեն. Միւֆիտ Պէյի
հետ խորհրդակցելէ ետք կարգադ-
րութիւն եղաւ եւ 200 հոգիներ ար-
ձանագրուեցան պահանջուած
յատկութիւններով, սակայն ասոնք
զինուորական ծառայութեան հա-
մար ոչ մէկ յատկութիւն ունէին:
Անշուշտ ասոնց թիւը նուազեցաւ:
Թէեւ կառավարութիւնը հրամա-
չեց հաւաքել եւ դրկել նաեւ ոճրա-
գործներ եւ աւազակութիւն ընելու
վարժուած անհատներ՝ ամէն պա-
րագայի տակ նոյն իսկ մեր մէջ
այսպիսի ցած բարոյականի տեր
անհատներ պակասած ըլլալով շատ
քիչեր կան: 1893 եւ 1894ին ծնած-
ները, 1914 մինչեւ 45 տարեկան-
ները կ'ընդունուին զինուորական
ծառայութեան մէջ. այն անհատ-
ներն ալ հազուադիւրս են որոնք
կարենան այդ պահանջները լրաց-
նել ինչպէս որ հրամայուած է.
շատ դժուար պիտի ըլլայ գտնել
այդպիսի անհատներ եւ փախըս-
տականներ, որոնք վարժուած են
թալանելու եւ կողոպտելու. եթէ
այդպիսիներ արձանագրուին,
մեր երկրին կարգն ու կանոնը
պահպանելու կրնայ օգտակար
ըլլալ: 8

8. Ըսել կ'ուզէ որ եթէ նահանգի աւազակներն ու գողերը, կամ ոճրագործ-
ները հաւաքելու ըլլան, այն ատեն նահանգին մէջ կարգ ու կանոն պահպանել
աւելի դժուրին կ'ըլլայ:

Հէնիզ թահթը սիլահա ալընմայան էֆրաթլա կայրը Միւսիմ վէ էամանը Էրպատիթան օլուփ հէնիզ ճէլպէտիմէյէն կէնճլէր արասընտա փէք չօք ֆէտաքար էֆրաթ պուլունտուղունտան Հիւքիմէթին նօքթաի նազարընա կէօրէ մահքիմին վէ շէքավէթլէ մէլիֆ օլանլարլա պէրապէր թահթը սիլահա ալընմայան էֆրաթթան պէշէիզտէն պիմէ քատար շէթէ էֆրատը եալըրզ Պուրսա լիվասը տախիլինտէ ճէմ վէ թէտարիքի գապիլ օլանաղընտան գապիլ պուլորուտուղը թագտիրտէ միւմքիմսէ թէլկրաֆլա (էվէթ, խայրը) թարզընտա ճէվապ ինայէթ պուլորուտուրընա վէ գաթէն հէր իքի սուրէթլէ տէ ինգարաթթա սուլունմաքթա օլտուղում ճիհէթլէ թալիմաթնամէ միճիպիմնէ թէտարիք էտիլէճէք էֆրատըն լիսթէսի թագտիմ էտիլէճէդիմին արզըլլա թէլիտի իհթիրամ վէ միւվէտտէթ օլունուր, գարտէշլէր: 19-9-330

Օսմանլը Իթթիհաթ վէ Թէրաքքի Ճէմիյէթի Պուրսա Վիլայէթի Հէյէթի Մէրքէգիյէսիմին ՄԻԻՀՐԻԻ

ԻՊՐԱՀԻՄ 9

9. Թագտիմը Վազայի, Թիւ 3557, Պատերազմական Ատեանի վեցերորդ նիստ 14 Մայիս 1919ին, հրատարակուած 25 Մայիս 1919ին, էջ 98: Վերեւի գրութիւնը կարգացուեցաւ Միութենական վեց ամբաստանուած ղեկավարներու առջեւ առանձին առանձին եւ իբր եզրակացութիւն Ատեանը հաստատեց թէ հաւաքուած եւ հաւաքուելիք գողերն, աւազակներն եւ ոճրագործները գործածուեցան Հայ կարաւանները կոտորելու:

Ներկայիս՝ անոնք որոնք զէնքի տակ չեն, ոչ-իւլամ անհատներ դիրաւ կը գտնուին, ճիշդ հիմա երիտասարդներու մէջ որոնք անմիջապէս չեն հաւաքուիր, կան անձնուրաց անհատներ, կառավարութեան տեսակէտին համաձայն, դատապարտուածներ եւ աւազակներ որոնք ընտելացած են կողոպուտի եւ գողութեան, այսպիսիներ զէնքի տակ չեն կրնար առնուիլ. կարելի պիտի ըլլայ զանոնք հաւաքել եւ իրարու մօտ բերել 500էն 1000 անհատներ Պուրսայի նահանգէն: Եթէ կը հաւանիք եւ կ'ընդունիք այսպիսի անհատներ հաճէիք հաղորդել մեզի պարգապէս (Այո՛, Ո՛չ) ըսելով ձեր պատասխանին մէջ: Եւ այս երկու պարագաներուն ալ, ձեր հրահանգներով տրուած այդպիսի անհատներու ցանկը պիտի հաստատէ ձեր պատասխանը:

Յարգանքներով՝

Եղբայրներ,

19 Սեպտեմբեր 1914:

Պուրսայի Միութիւն եւ Յառաջդիմութիւն Կուսակցութեան Կեդրոնական Մարմնի Կնիք.

Ստորագրուած՝ Իպրահիմ:

Պոլսոյ մէջ Երիտասարդ Թուրքերու կուսակցութեան ակումբը Նուր էլ Օսմանիէ դարձած էր պետական որոշումներու եւ գործունէութեան ընդհանուր կեդրոն կամ կառավարական զանազան վարչական մասնաճիւղերու գործատեղի: Հոն էր որ վճռած էին Հայերու տեղահանութեան գործողութեան մանրամասնութիւնները, հոն էր որ ծրագրած էին Հայերու կոտորածներուն մանրամասն որոշումները եւ ոճիրներու գործադրութեան վայրերը կանխապէս նշանակակուած էին, հոն էր որ վճռած էին բանտերէն ազատ արձակել դատապարտեալ ոճրագործները: Նոյնպէս կուսակցութեան կեդրոնական կոմիտէն Օսմանեան կայսրութեան հայաբընակ նահանգներուն, գաւառներուն եւ գաւառակներուն մէջ տարածած էին կազմակերպական ցանցեր հոն նշանակելով պատասխանատու քարտուղարներ եւ պատուիրակներ, որոնք տեսակ մը լիազօրութիւն ունէին պաշտօնական վարչութեան վրայ հայերու տեղահանութեան եւ բնաջնջումի գործերուն կարգադրութեան մէջ:

Հայատառ թրքերէն բնագիր

Հայերէն թարգմանութիւն

Վէ նիհայէթ մէտաիլի հայաթիյէ-ի տէվլէթին մահալլի աքթ վէ հալլի օլան Իթթիհաթ վէ Թէրաքգի ճէմիյէթիմին Մէրքէգ-ի Ումումիսին իթթիհաթ էլլէտիղի մուգարրէրաթ-ը ճիհայէթքէարանլէրիմէ իշթիրաք վէ պիլհասսա թէհիմիր վէ կասալը էմվալ իլէ իթհարը սէրվէթ ճիւրիմլէրիմ իթթիգապա օլունմուշ վէ 14 Մայրս 331 թարիլլի գանունու մուվազգաթ մուճիպիմնէ ինրա էտիլէն թէհիթրէյֆիյէթի մէնաֆիի շախսիյէյէ վէ սիլ իթթիհաթ էտիլէրէք մէգքիւր Մէրքէգ-ի Ումումիմին շէպէթէ-ի թէշքիլաթլարը տախիլէսիմտէ թէրթիփ վէ ինգար էլլէտիքլէրի կիւրուհու պաշիյէ վէ տալէ վասը-

Վերջապէս Միութիւն եւ Յառաջդիմութիւն կուսակցութեան Ընդհանուր Կեդրոնավայրը (Նուր էլ Օսմանիյէ Գ) ընտրեցին պետութեան կենսական հարցերը լուծելու իբր կեդրոնավայր. հոն բանակցութիւններ կը կատարէին, հոն դաշինքներ կը կնքէին. հոն կ'որոշէին գործուելիք ոճիրներուն մանրամասնութիւնները ժողովականներու ներկայութեան. յատկապէս յանդգնեցան տեղահանութեան, կոտորածի, կալուածներու գրաւումի որոշումները հոն վճռել, հարստութիւն դիզելու կերպերը եւ գործելու ոճիրներ եւ շարաշահութիւններ:

Անոնք 14 Մայիս 1915ի ժամա-

թասըլլա պիլխասաա էրմէնիլէրին
թագթիլ վէ իմհասը վէ էմվալ վէ
էշեալարընը նէհպ վէ եաղմասը
հուզուրունտա մարէլպէյան քեա-
թիպ վէ մուրրախիսասը մէտուլլա-
րըն պագըլարըննա թէշքիլաթ-ը
լագիմէյէ թէվէսիլ վէ թէատի վէ
պիլֆիիլ էմվալ-ը մէթորութէյէ տէ
իսալը տէսթի թէատի էտիլմիշ օլ-
տուղու զահիր վէ միւմայան օլ-
մուշ... ¹⁰

նակաւոր օրէնքի տրամադրու-
թեան համաձայն տեղահանու-
թեան միջոցները եւ պատեհու-
թիւնները յարմարցուցին իրենց
անհատական շահերուն:

Վերեւ յիշուած Ընդհանուր Կեդ-
րոնը լարած էր մասնաւոր կազ-
մակերպական ցանց մը. կազմած
էր ոճրագործներու հրոսախում-
բեր, ամբոխային խուժաններ,
չատկապէս իրագործելու համար
Հայերու կոտորածը եւ բնաջնջու-
մը, եւ անոնց կալուածներուն եւ
հարստութեան կողոպուտը: Վերեւ
յիշուած պատասխանատու քար-
տուղարները կատարեցին կողո-
պուտի գործերը: Ոմանց դիրու-
թիւն ընծայելու պատրուակով դա-
ւադրութեամբ անոնց լքած ինչքե-
րը ձեռք անցուցին: Այս ամէնը
քննուելէ ետք հաստատուած է:

10. Թագուիմ-ը Վագայի... Պատերազմական Ատեանի պաշտօնաթերթ, թիւ
3772, էջ 2, սիւն 2 եւ էջ 3, սիւն 1:

Այս հատուածը մաս մըն է այն դատավճիռէն, որ տրուեցաւ 8 Յունուար
1920ին Երիտասարդ Թուրքերու պատասխանատու քարտուղարներուն եւ
պատուիրակներուն դէմ:

Պոլսոյ թիւ մէկ Թուրք Պատերազմական Արտակարգ Ատեանի
Նախագահի վարպետօրէն զգուշաւոր հարցումները ուղղուած ամ-
բաստանուած Երիտասարդ Թուրք ղեկավարներուն աստիճանա-
բար քակեցին Թէշքիլաթը Մախսուսայի նպատակին եւ գործունէու-
թեան գլխաւոր գաղտնիքի կծիկները:

Հաստատելու համար թուրք պաշտօնական վաւերագրերու վա-
ւերականութիւնը նոյնինքն զանոնք ստորագրող հեղինակներու
խոստովանութեամբ, Ատեանի առջեւ կը կարդացուին ամբաստան-
եալներու ստորագրութեամբ վաւերագրեր, որոնք կը պարզեն մի-
եւնոյն նիւթին զանազան հանգամանքները:

Կանխապէս Ատեանը իր տրամադրութեան տակ գտնուած վա-
ւերագրերէն եւ Հարցաքննիչ Յանձնախումբի աստիճանագրութիւն-
ներէն եւ պաշտօնական վկայութիւններէն կրցած է հասնիլ որոշ
եզրակացութեան եւ հաստատ ապացոյցներու, սակայն կ'ուզէ ու-
նենալ նաեւ ամբաստանեալներու խոստովանութիւնն ալ եւ կամ
ասոնց կողմէ կատարուած հաւաստումներն ու յայտնութիւնները:

Ամէն մէկ ամբաստանեալի առանձին կերպով կ'ուղղուին զրե-
թէ միեւնոյն հարցումները եւ կը կարդացուին վաւերագրերը ա-
ռանձին առանձին իւրաքանչիւրի պաշտօնի աստիճանին կարեւո-
րութեան համեմատ: Ատեանի նպատակն էր երեւան հանել Երիտա-
սարգ Թուրքերու Կուսակցութեան եւ Կեդրոնական Կոմիտէին
կազմակերպած եւ գոյութեան բերած Թէշքիլաթը Մախսուսայի
բուն գաղտնի պահուելիք գործունէութիւնը, որ եղած է Հայ ցեղի
բնաջնջումին իրագործումի գլխաւոր եւ առաջնակարգ մեքենան:

Ատեանի Նախագահը նախ ամէն մէկ ամբաստանեալի կը հար-
ցընէ յստակ բառերով թէ ի'նչ է Թէշքիլաթը Մախսուսան, թէ Թէշքի-
լաթը Մախսուսան ինչ կապ եւ առընչութիւն ունի Երիտասարգ
Թուրքերու կուսակցութեան եւ Կեդրոնական Կոմիտէի հետ, թէ
որո'նք են նոյն Թէշքիլաթը Մախսուսայի հիմնադիրները, թէ ինչ
եղած է Թէշքիլաթը Մախսուսայի գլխաւոր եւ առաջնակարգ նպատա-
կը, թէ նոյն Թէշքիլաթը Մախսուսան ինչպիսի առընչութիւն ունի
Հայերու տեղահանութեան եւ կոտորածի հետ:

Ամբաստանեալները կը ջանան ուրանալ գոյութիւնը երկու
տեսակ Թէշքիլաթը Մախսուսաներու եւ կը փորձեն հաստատել Ատ-
եանի առջեւ թէ միայն մէկ Թէշքիլաթը Մախսուսա կար հիմնուած

Պատերազմական Նախարար Էնվեր Փաշայի կողմէ եւ թէ այս Թէշ-
քիլաթը Մախսուսան կախում ունէր պատերազմական նախարարու-
թենէն որմէ կը ստանար իր հրահանգներն ու հրամանները, կը ղե-
կավարուէր Օսմանեան բանակէն նշանակուած որոշ սպաներէ, թէ
իր գոյութիւնը կը պահէր նոյն նախարարութեան տնտեսական
վարկով, եւ նպատակ ունէր խափանարարութեանմբ եւ լրտեսու-
թեամբ Օսմանեան բանակի յաղթանակին ծառայել. թէ նպատա-
կէն դուրս չէին նաեւ սպանութիւններ կատարել:

Թուրք Ատեանի Նախագահը յատկապէս կը շեշտէ որ եթէ Թէշ-
քիլաթը Մախսուսան պաշտօնապէս զինուորական կազմակերպու-
թիւն մը ըլլար եւ կախում ունենար միայն պատերազմական նա-
խարարութեանէն, պէտք չէր այն ատեն կապ ունենար Երիտասարդ
Թուրքերու կուսակցութեան Կեդրոնի հետ որմէ կը ստանար զէնքեր
ու դրամ, զգեստեղէն, համազգեստ, եւ պէտք չէր ղեկավարուեր
քաղաքային եւ ոչ-զինուորական պետերէ եւ մասնաւորապէս պէտք
չէր գործածեր ներքին գործերու նախարարութեան ծածկագրի
բանալին ինչպէս նաեւ ծածկագիր բանալիները նահանգներու կու-
սակալներուն:

Աստիճանաբար առաջ երթալով, Ատեանի Նախագահը հիմ-
նուելով պաշտօնական վաւերագրերու վրայ երեւան կը բերէ որ
Թէշքիլաթը Մախսուսայի պետերն ու ղեկավարները ուղղակի եւ ա-
նուղղակի յարաբերութեան մէջ եղած են ոչ թէ միայն Կեդրոնա-
կան Կիմիտէի հետ, այլ ներքին գործերու նախարարութեան հետ
որոնք իրարու հակառակ հրամաններ կու տային երբեմն, մաս-
նաւորապէս բանտերէն ազատ արձակելու դատապարտուած ոճրա-
գործները. այս հանգամանքը եւ առնչութիւնը կ'ապացուցանեն
թէ Թէշքիլաթը Մախսուսան միայն զինուորական կազմակերպու-
թիւն չէր, այլ երկու տեսակ Թէշքիլաթը Մախսուսաներ կային ո-
րոնցմէ մին կապուած էր Պատերազմական Նախարարութեան,
միւսը կապուած էր Երիտասարդ Թուրքերու Ընդհանուր Կեդրոնին
եւ ներքին գործերու նախարարութեան հետ:

Բէիս. Թէշքիլաթ-ը Մախսուսա-
նըն իբի շէքիլտէ օլտուղունու,
պիրիսի տօղրուտան տօղրույա
Հարպիյէ Նեզարէթինէ մերպութ,
տիկերի տէ Իթթիհաթ վէ Թէրագ-
գի ֆըրգասընա մէնուսի օլտու-
ղունու սեօյլէյօրլար: Պիզէ իզա-
հաթ էտիմիզ:

Ճէվաթ պէյ. Պէնտէնիզ եպըրզ
Հարպիյէ Նեզարէթինէ մերպութ
օլան Թէշքիլաթը Մախսուսայը
պիլիյօրում, Փաշա Հազրէթլերի,
պաշքա պիր Թէշքիլաթ օլուսի օլ-
մատըրընը վուգֆում եօքտուր:

Բէիս. Հարպիյէ Նեզարէթին-
տէն սեօյլէտիլէր. թահրիթինտ
կէլէճէք...

Բէիս. Փէք իյի. Հարպիյէ Նե-
զարէթինէ մերպութ պիր միֆրէ-
զէյէ չէթէ թապիրի իթլաքը սահի-
մի"տիր. վէ պունա վերիլէն էմիր-
տէ չէթէճէ թէճգիյէ էտիմիզ տէնի-
լիրմի":

Ճէվաթ Պէյ. Վալլահի, կէչէն
մուամելէ իզերիցէ պիր թէլաքքի-
լերիցնտէնտիր, էֆէնտիմ:

Բէիս. Ճագաթ Հարպիյէ Նեզա-
րէթի ռեսմէն պու Թէշքիլաթը
եափմատան էվվէլ Իթթիհաթ վէ
Թէրագգի տէ թէշէպիս օլուն-
մուշ վէ ֆաալիյէթ տէ պաղլանը-
մըշ օլտուղունու սեօյլիյօր...

Բէիս. Շուպէսի գի"մ տիր:

Ճէվաթ Պէյ. Չապըթան վար,
էֆէնտիմ:

Նախագահ. Կ'ըսուի թէ Թէշքի-
լաթը Մախսուսան երկու տեսակ
էր, մին՝ ուղղակի կախում ունէր
Պատերազմական Նախարարու-
թենէն, երկրորդը՝ Միութիւն եւ
իսթիզան էյլէյէն ամիրիսէ գարշը,
քէթմի հագիգաթլա վուգուաթըն
մանիսէ սէտտ չէքմէք, վե Էշխասը
ղայրը մէտուիյէ մէտուլ օլան մե-
մուր, վե մուհաֆըզլար իզէրիսէ
ամիր օլարագ, պիլ իզամ մէգա-
սիտը լէյմէնիս հուսուլունը թէ'յիտ
վե թէսիլ էյլէմէք սուրէթիյլէ հըս-
սիյաթը ինսանիյէ, վե մէտէնիյէ ի-
լէ, վէշիսէն միսն էլ վուճուհ գապի-
լի թէլլիֆ օլանմայան վե թախրի-
սը ինտէլ իսլամ քէպիրը ճիւնա-
յաթթան մաստուտ օլան Էնվար
գըթալ, վե նէհպ ու ղարաթա սէ-
պէպիյէթ վէրմիշ օլտուգլարը
իսթիմա օլունան շուհուտուն ալէլ
տէրէնաթ վագը օլան գանասթ-
պահշ շէհատաթընտան, վե պազը

րու դրամները, գարդէղէնները եւ
արժէքաւոր իրէղէնները՝ իրենց
անձնական քմահանոյքին համա-
ձայն քշած են, ապօրինի եւ գաղտ-
նի հրահանգներ եւ հրամաններ
հաղորդած են բազմաթիւ չարա-
գործներու: Մինչ յիշեալ(Քէմալ
եւ Թէվֆիգ) պարտական էին ձեռք
առնել անհրաժեշտ միջոցներ կա-
րաւանները հանգիստ ու ապահով
ճամբելու, առանց նկատի առնելու
այս կէտը եւ կանխամտածու-
թեամբ չեն համաձայնած ոչ թէ մի-
այն զանոնք պաշտպանելու մի-
ջոցներ ձեռք առնել, այլ նաեւ ընդ-
հակառակը զանոնք ինքնապաշտ-
պանութեան ամէն միջոցներէ զըր-
կած են, այրերու թեւերը իրարու
կապկպելով, ոճիրներ գործելու
դիրութիւն տուած են: Նոյն իսկ ի-
մանալէ ետք գործուած ոճիրները,
երբ իրենցմէ բացատրութիւն պա-
հանջուած է, ծածկած են ճշմար-
տութիւնը եւ փոխանակ արգիլելու
ոճրագործութիւնը, հրամայած են
որ անպատասխանատու զինաչրե-
րը ոճիրներ գործեն: Եւ իրենք իսկ
դիրացուցած են եւ քաջալերած
ոճրագործութիւնը: Գործուած ո-
ճիրները մարդկային զգացումնե-
րու եւ քաղաքակրթութեան բոլոր-
րովին հակառակ են, եւ անոնք
պատճառ եղած են կոտորածի, կո-
ղոպուտի եւ թալանի, որոնք իսլա-
մական տեսակէտով ալ մեծագոյն
ոճիր կը նկատուին:

Լսուած անձերու վկայութիւննե-

մեմորիանը ասքերիյէ պէյիւնլերին-
թէ թեատի էտիլէն մուխապէրաթը
րէսմիյէի թէլկրաֆիյէ միւնտերէ-
նաթընտան վէ մագնունիյէ մի-
մաիլէյիմանըն րէտտ վէ ճերհի
թէզամմուն էթմէյէն էնվապէ
ատիտէլերի թէտգիգաթընտան,
վէ թէհնիր գաֆիլէլերիմտէքի սու-
ղար վէ նիսվանը վէի, վէ մու
գարիպլերիմտէն թէֆրիգ էթթիր-
մէլերի էֆա'ալը մէպսութտէքի
մէնվէյաթ վէ մագասիտլերիմի
իգհար էյլէտիյիմտէն, վէ էն
նիհայէթ միտաֆա'ա վէքիլէ-
րիմին, վէ մագնունլարընըն իսթի-
մա օլունան սօն միտաֆա'ալա-
րընտան տարիլհարէքէաթթա, վէ
պախուսու տիշման իլքէսիմտէ
վէ թահթը իշղալընտա պուլունան
մահէլլերիմտէ պազը սէպիք-մադ-
զան գօմիթէնիլերիմին թէշվիգ, վէ
թէհնիթլերիմէ գափըլարագ տիշ-
ման թարաֆընա թէվէննիս վէ
հարէքէաթը իսթիլալիէյէ իշթի-
րագ վէ գըյամ էյլէմէնէրի մէմա-
լիքի Օսմանիյէնին տիկեր թարա-
ֆլարընտա պուլունան միլլէթ-
պաշլարընըն էֆքէարը ֆասիտի
մէզպուրէյի միւրէվվիճ օլամալա-
րընա տէլիլ օլամայանաղընը գա-
ման գաման գուհուր էտէն պու կի-
պի թէշէպպիսաթը միֆասաթ-
քէարանէյէ էրմէնի միլլէթիմին
պիր ճիգի իշթիրագ էյլէմիշ վէ
միթէպագիսիմըն սուվերի ատիտէ
իլէ, իսպաթը սատագաթ վէ մեր-
պութիյէթ էթմիշ օլմագլարըլա

րը բացաչայտօրէն կ'ապացուցա-
նեն որ կարգ մը զինուորական
պաշտօնեաներ իրարու հետ փո-
խանակած են հեռագրային հա-
ղորդակցութիւն. ամբաստանեալ-
ները այս հեռագիրներու բովան-
դակութիւնը ուրացան իրենց տը-
ւած շատ մը պատասխաններով:

Կատարուած քննութենէն հաս-
տատուեցաւ թէ տարագրուած կա-
րաւաններու մէջ կիներն ու մա-
նուկները զրկուած են իրենց ծնող-
ներէն եւ պաշտպաններէն, եւ վե-
րեւ յիշուած ոճիրները գործուած
են իրենց (պաշտօնեաներու) նը-
պատակին համար:

Հուսկ լսուեցան փաստաբաննե-
րու եւ ամբաստանեալներու պաշտ-
պանողականները, որոնց մէջ
ըսուեցաւ, Հայերու ըմբոստութեան
ակնարկելով, թէ թշնամիէն գրաւ-
ուած հողամասերու մէջ խումբ մը
թէթեւամիտ կուսակցութիւններու
դրդումով եւ քաջալերանքով, Հա-
յեր անցած են թշնամիի կողմը եւ
մասնակցած են խափանարար շար-
ժումներու, դիմելով ըմբոստու-
թեան եւ հետեւած են Օսմանեան
սահմանին միւս կողմը գտնուող
իրենց ազգակիցներու դրդումնե-
րուն: Վերեւ յիշուած բոլոր պարա-
գաները այդ տեսակ ոճիրներ գոր-
ծելու արդարացումի փաստեր չեն,
քանի որ հայ ժողովուրդի մէկ մա-
սը, նոյնիսկ մասնակից եղած ըլ-
լար, մնացած մասին հաւատար-
մութիւնը փաստօրէն ապացուց-

մա պերահին վէ հեր մեմորըն
պալատէ մուհարրէր օլտուղը
վէշհիլէ հիսսիյաթը միլլիյէ,
վէ իղթագը շախսիյէտէն նէֆսիմի
թէնրիտ էտերէք, պիհասէպիլ մե-
մուրիյէ ետ էմանէթիմէ մէվտու
ահալիին պիլա թէֆրիգի ճիւն վէ
մէզհէպ փէտերի միշֆիքլերի կի-
պի մուհաֆագաի հայաթ, վէ հու-
գուզարընա հասրը վիճուտ էթմէ-
սի պիր էմրի մութլաք օլտուղը
հալտէ միմաիլէյի Քէմալ պէյին
միտաֆա'աթընտա տերմէյան էթ-
թիյի կիպի, Վան վէ էրգուրում
վէ Պիթլիս ճիհէթլերիմտէքի էրմէ-
նիլերին Միւսլիմանլարա գարշը
րէվա կէօրտիքլերի մէզալիմին
մէտուլիյէթիմի շայանը էհէմիյէթ
հարէքէաթը իսթիլալիյէտէ պու-
լունմատըզլարը անլաշըլան Եօզ-
դաթթա մութալաաթըն էրմէնիլէ-
րէ թահմիլէ հիշ պիր ճէվագը
գանունի վէ վիճտանի պուլուն-
մատըղը հալտէ, մէրգումուն
հագլարընտա հիսսէ ինթիգամ,
վէ իղրագը շախսիյէ իգհարը,
վէ հաթթա էալընըզ գիրի իտարէ-
սին տէ պուլունան սանճագ ահա-
լիի իսլամիյէսիմի տէյիլ, պիլ
ումում Իսլամլարըն միլլէթի մեր-
գումէ ալէյիմէ պիլ միգապէլէ
թագթիլ ֆիքրի սագըմիմտէ պու-
լունմալարընը թապիի, վէ ատէթա
լագըմ կէօրմէսի, էվրագը մէվճու-
տէ մէյեանընտա պուլունան, վէ
միւնտերէնաթը իւշ շախսը դայրը
մէտուլըն, մեմուրը րէսմի իւզերիմէ,

ուած է, եւ բոլոր պաշտօնեաները,
ինչպէս վերեւ ըսուեցաւ, հեռու կե-
նալու էին չարամտութենէ, անձնա-
կան վրիժառութեան միտումներէ,
եւ պաշտպանելու էին, գթառատ
հօր մը պէս, իրենց պաշտօնեա-
լեան ընթացքին իրենց յանձնուած
ժողովուրդին կեանքն ու իրաւուն-
քը՝ առանց ցեղային եւ կրօնական
խտրութեան, ինչ որ բացարձակ
հրաման մըն է:

Իր պաշտպանողականով յիշեալ
Քէմալ Պէյ ուզած է Վանի, Կարի-
նի եւ Պիթլիսի իսլամներու դէմ
Հայերու գործած անգթութիւններու
պատասխանատուութիւնը բեռցնել
Եոզղատի Հայերուն վրայ, որոնք
որեւէ յայտնի ապստամբական
շարժում չեն ըրած. ասիկա օրէնքի
եւ խղճի անհամաձայն է: Վրիժա-
ռութեան եւ անձնական շահու դր-
դումով յիշեալ ամբաստանեալները
գրգռած են, ոչ թէ միայն գաւառի
իսլամները, այլ նաեւ բոլոր Իսլամ-
ները մղած են կանխամտածուած
ջարդ կատարելու ժողովուրդին
դէմ, եւ ջարդերը նկատած են բնա-
կան եւ անհրաժեշտ: Վաւերագրե-
րու բովանդակութիւնը ցոյց կու
տայ թէ երէք անպատասխանա-
տու անձեր եղած են կառավարու-
թեան պաշտօնեաներու վերահը-
կիչները եւ անոնց պարտադրած
են իրենց հրամանները կատարել:
Ասոնց ձեռքով ստորագրուած վա-
ւերագրերը կը հաստատեն թէ Հա-
յերու կարաւաններուն ընկերացած

ամիր վե հեր կեօնա էմիրլերինէ
իրա'աթա գաֆիլէ մուհաֆըզլարը-
նը մեճպուր գըլմըջ օլան, խաթթը
տէսթիլէ մուհարրեր վէսիքանըն
իրսալընտան մաքսատը գաֆիլէ
էշխասընըն թագթիլի օլունտու-
ղունտան շիպհէ վէ թերէտտիստ
պրագմատըղընտան տէլաիլի
մէպուրթ, վէ պէրահիհնի գաթիլէն
մէգքիլէլէ գարշը մազնունանը
միմաիլէլիհիմա իլէ, միտաֆա'ա
վէքիլէլիհիմն տէրմէլան էթմիշ
օլտուգլարը միտաֆա'աթ քիլլի-
լէն պաթըլ կէօրիլմիշ, վէ միտ-
տէլի ումումիլիլիհիմն միլքիլէ
ճէզա գանունամէսիհն 56նը
մատտէսիհն թաթպիգի էօլուն-
տաթի թալէպի տախի դայրը մու-
վաֆըզ պուլունմուշ օլմագլա մի-
մաիլէլիհիմա Քէմալ վէ Թէվֆիգ
Պէլլերին, միլքիլէ ճէզա գանուն-
նամէի հիմայունունըն 45իննի
մատտէսի մուհիպիհնէ միմիմիլէթ
լէրինէ միթթէֆիգէն գարար
վէրիլտիքտէն սօնրա, թայիհի
ճէզալարը հագգընտա ճէրէլան
էտէն միզաքթէրէ ճէթիճէսիտէ
իրթիքէապ էլլէտիքլէրի էֆա'-
ալը ճիհնիլէ մէգքիլ 45շիննի
մատտէտէ զիքր օլունտուղը վէշ-
հիլէ հէմ ֆիլի աստ օլունարագ,
միմիմիլէլի մէրգումիհն հեր
պիրի ֆաիլի միսթագիլ աստը, վէ
անճագ Քէմալ Պէլլին մէգքիլ սան-
ճաղընըն էն պէօլիք միլքիլէ մէ-
մուրը օլտուղը հալտէ, թագթիլ վէ
ճէհպ վէ դարաթ էֆա'ալը ճիհնի-

էն զինայրեր գանոնք ջարդելու
նպատակով, եւ կարելի չէ այս մա-
սին որեւէ տարակոյս ունենալ: Վե-
րեւ յիշուած փաստերով եւ վաւե-
րաթուղթերով բացարձակապէս կը
հաստատուի թէ ամբաստանեալ-
ները յանցաւոր են եւ թէ իրենց
փաստաբաններուն պաշտպանո-
ղականները բացարձակապէս ոչ
մէկ արժէք կը ներկայացնեն:

Ընդհանուր Դատախազը կը
պահանջէ կիրարկել պետութեան
Պատժական Օրինագրի 56րդ յօդ-
ուածի տրամադրութիւնը, սակայն
ասիկա յարմար չէ: Յիշեալ ամ-
բաստանեալ Քէմալ Պէլլ եւ Թէվ-
ֆիգ Պէլլ կը դատապարտուին պե-
տութեան Պատժական Օրինագրը-
քի 45րդ յօդուածի տրամադրու-
թեան համեմատ: Միաձայնութե-
ամբ որոշուեցաւ թէ անոնք յան-
ցաւոր են: Անոնց գործած ոճիրնե-
րուն համեմատ պատիժներ սահ-
մանելու համար 45րդ յօդուածին
տրամադրութիւնը հետեւեալն է.
«Մեղսակից գլխաւոր ոճրագործ-
ներէն ամէն մէկը անկախ ոճրա-
գործ կը նկատուի», եւ Քէմալ Պէլլ,
որ գաւառի քաղաքային բարձրա-
գոյն պաշտօնեան էր, կազմակեր-
պած է մարդասպանութիւն, կողո-
պուտ եւ գողութիւն, եւ տեղահան-
ուած կարաւաններուն ընկերացու-
ցած է տեսակ մը անպատասխա-
նատու անձեր, յարգած չէ պաշ-
տօնեաներու աստիճանները, եւ
ուղղակի կարաւանապետ նշանա-

լէսինին թարգը իճրասընը թեր-
թիպ, վէ պիր թագըմ դայրը մէտուլ
էշխասը թէհնիր գաֆիլէլէրինէ
թերֆիք էթմէք, միլքթթէպէ թիշա-
լէթ էլլէմէլէ պիլէ լիզում կէօրմէ-
լէրէք, տօղրուտան տօղրույա գա-
ֆիլէ մէմուրը ռէսմիսի Ծիքրի շա-
վուշ էշխասը մէրգումիհն էմրինէ
իրա'աթա սէվգէթմէսի հասէպիլլէ
ֆաիլի ասիլ, մէ մէրգում Թէվֆիգ
Պէլլինտէ ֆէրէն զի մէտիսալ օլտու-
ղունա գանա'աթը թամմէի վիճ-
տանիլէ հասըլ օլմագլա թագթիլ
վէ ճէհպ վէ դարաթթան թէհատ-
տիս էտէն էֆա'ալը մէգքիլէ պիր
վէշի պալա 45ննի մատտէլէ թաթ-
պիգէն, հէմ ֆիլի օլուպ ասքէրի
ճէզա գանուննամէի հիմայունու-
նըն 171րիննի վէ միլքիլէ ճէզա
գանուննամէի հիմայունունըն 170-
իննի մատտէլէրինէ միթապըզ, վէ
մէգքիլ 171իննի մատտէ իսէ, «Վե-
րէք միսալլահ, վէ կէրէք դայրը
միսալլահ, ալէնէն թէհանիմ իլէ,
վէ կէրէք քէսի սուր վէ էպվապ-
լա, վէ էշխաս իզէրինէ իճրաի թա-
գրիքլէ, միմիթմիլլէն զախիլէ վէ
էրզագ վէ էմթիա վէ էշիայը էաղ-
մա վէ թախրիպ էթմէք... իտամ».
վէ միլքիլէ ճէզա գանուննամէի
հիմայունունըն 170իննի մատտէի
զաիմէսի տախի, «թէամմիտէն պիր
շախս էտէն վէ էա սպա վէ էճ-
տատ, վէ ումմէհաթ վէ ճիտտա-
թընտան պիրիհնի, վէ լէվ մին դայ-
րը թէամմիտ գասթէն գաթլ էլլէ-
լէն քիմսէ իտամ օլուր», պիլ իպա-

կած է Ծիքրի Չավուշը, որուն
յանձնած է կարաւանները. Քէմալ
Պէլլ նկատուած է գլխաւոր ոճրա-
գործ: Ատեանը համոզուած է որ
յիշեալ Թէվֆիգ Պէլլ երկրորդական
մեղսակից է:

Կոտորածի, կողոպուտի եւ գո-
ղութեան արարքներուն (մեղսա-
կից) կը նկատուին Զինուորական
Պատժական Օրէնքի 171րորդ եւ
Քաղաքային Պատժական Օրինա-
գրքի 170րդ յօդուածի տրամադ-
րութեան համաձայն:

Յիշուած 171րդ յօդուածը կ'ըսէ.
«Անձերու վրայ զինեալ կամ ան-
զէն, խմբովին կամ ընկերովի, հը-
րապարակային յարձակում գոր-
ծողները, ուտեստեղէն կամ սպ-
րանք կողոպտողները, մահապա-
տիժ կը ստանան:»

Իսկ կայսերական Քաղաքա-
կան Պատժական Օրինագրքի 170
յօդուածը կ'ըսէ. «Ան որ կանխա-
մըտածութեամբ կամ առանց կան-
խամտածումի՝ կը սպաննէ անձ մը,
եւ կամ հայր մը կամ մեծ հայր մը,
մայր մը կամ մեծ մայր մը, մահ-
ուան կը դատապարտուի որովհե-
տեւ ոճիրը կանխամտածութեամբ
գործած կը նկատուի»:

Վերեւ յիշուած յօդուածներու
տրամադրութեան համաձայն Քէ-
մալ Պէլլ մահուան կը դատապար-
տուի:

Եւ վերեւ յիշուած 45րդ յօդու-
ածի երկրորդ պարբերութիւնը կ'ը-
սէ. «Եթէ գլխաւոր ոճրագործը

րէթիմա նաթըգ պուլունտուղուն-
տան միւճրիմինի մէրգումունտան
Քէմալըն իտամ, վէ սալիֆ իւ զիքր
45ննի մատտէնին ֆըգրար սանի-
լէսի տախի, «էկէր ֆիլիի սալի ի-
տամ վէ եա միւէպպէտ քիւրէք ճէ-
զալարընը միւթէլզէմ իսէ, ֆէրէն
զի մէտիսէլ օլանլար հագգընտա
օն սէնէտէն աշաղը օլմամագ իւզ-
րէ մուվագգաթ քիւրէք», տիյի մու-
հարրէր պուլունտուղունա պիւնա-
լէն Թէվֆիզին տախի օնպէշ սէնէ
մուվագգաթ քիւրէք ճէզալարըլլա
թէնզիլէլէրինէ գարար վէրիլտի:

6 Բէնէպ 337 8 Նիսան 336.
Նագըմ, Ջէքի, Մուսթաֆա,
Ալի Նագըմ, Բէնէպ Ֆէրտի.

Տիվանը Հարպը Էօրֆի Չապթ
Հէլէթի ամիրի՝
Ապիտին Տավէր: 1

մահուան կամ մշտնջենաւոր թիա-
պարտութեան դատապարտի, ա-
նոր մեղսակիցը կը դատապար-
տուի ժամանակաւոր թիապարտու-
թեան պայմանով որ այս պատիժը
տաս տարիէն նուազ չըլլայ:»

Թէվֆիզ ալ այս տրամադրու-
թեան համաձայն 15 տարուան ժա-
մանակաւոր թիապարտութեան կը
դատապարտուի:

Այս վճիռը տրուեցաւ միաձայ-
նութեամբ:

8 Ապրիլ 1919

Ստորագրութիւն՝

Նագըմ, Ջէքի, Մուսթաֆա,

Ալի Նագըմ, Բէնէպ Ֆէրտի.

Պատերազմական Ատեանի

Ատենագրութեան Պետ՝

Ապիտին Տավէր:

Թագուիմը Վագայի, թիւ 3617,

հրատարակուած՝

7 Օգոստոս 1919ին:

1. 3617 նումարալու Թագուիմը Վագայիէ մէրպուլէ Թուր:

ԳԼՈՒԽ ԺԸ.

Թուրք Պատերազմական Ատեանի Մահապալատի
Վերլուծումը.

Ինչ ինչ բացատրութիւններ անշուշտ պիտի սփռեն աւելի յըս-
տակ լոյս թէ՛ Եոզղատի եւ Պողազլեանի Հայերու կոտորածին եւ
թէ՛ Թուրք Արտասովոր Պատերազմական Ատեանի գործադրած մի-
ակողմանի արդարութեան վրայ: Նախ քանի մը հատուածներ Թուրք
Պատերազմական Ատեանի Ընդհանուր Դատախազ Սամի Պէյի ամ-
բաստանագրէն, որ դատաւարութեան առաջին օրը, 5 Փետրուար
1919ին, լսուեցաւ դատարանի մէջ ամէնուն ներկայութեան:

«Արդարութիւնը լիովին գործադրելու է քաղաքակրթութեան
հակառակ այս դէպքերուն (կարդա՛ ջարդերուն Գ) հեղինակներուն
դէմ. որպէսզի սրբուին նոյն արիւնոտ արատները գործնք ուզած
են քսել ամբողջ (Թուրք) ժողովուրդի ճակտին եւ երեւան գան
իրենց ամբողջ մերկութեամբ հանրութեան աչքերուն առջեւ, եւ
այդպէսով ժողովուրդի իրաւունքներուն պաշտպանութեան ծա-
ռայելու եւ պետութեան հիմերը ամբապնդելու համար, այդ զազ-
րելի դէպքերուն հեղինակները որոնք այս երկրին երջանկութիւնն
ու ապահովութիւնը զոհեցին իրենց անձնական ցանկութիւններուն
եւ շահերուն արդարութիւնը գործնականապէս ցոյց տրուի: . . .

«Օրինական իմաստով տեղահանութիւն կը նշանակէ հեռացը-
նել անձ մը իր բնակավայրէն, ուր ծնած է, տարիներէ իվեր ապրած
է եւ ուր ինքզինք երջանիկ նկատած է:

«Ասիկա ամենամեծ պատիժն է որ երկրին տնտեսութեան պատ-
ճառած մեծագոյն վնասներու հետեւանքով կը կիրարկուի, իբր
վարչական եւ պատժական միջոց, միայն կասկածելի, վատթար եւ
վտանգաւոր անձերու: . . .

«Ասկէ զատ, իրենց (պաշտօնեաներու) ձեռքին տակ կարգ մը
ստորին մարդեր գործիք ըրին եւ տարագրութեան գործը այն աս-
տիճան ամօթալի եւ եղբրական վիճակի մը հասցուցին, որ անկա-

րելի է մարդկային լեզուով պատմել անոր մանրամասնութիւնները: . . .

«Նեղձերուն վրայ գտնուած հացի դրամն իսկ առին բռնութեամբ:

(Կառավարութեան Գ) Հրամանն ըլլալու է օրինական եւ ընդունելի:

«Ոմանք քաղաքացիական արիութիւն ցոյց տալով հրաժարեցան, ուրիշներ գործնականապէս հակառակեցան տրուած հրամաններու գործադրութեան:

«Այս ցաւալի արարքները որ մէկ տեսանկիւնէ ալ դիտուին, միշտ յանցանքներ են. հրամայողները, գործադրողները եւ պատճառ եղողները հետզհետէ պիտի յանձնուին այս դատարանին, որ պիտի հաստատէ օրինական թուղթերով անոնց ինքնութիւնը եւ զանոնք պիտի ենթարկէ արդարութեան կշիռին: . . .

«Բայց որովհետեւ այս ոճիրները բացառիկ հանգամանք ունին, ուստի յարմար դատուած է որ այս Արտասովոր Պատերազմական Ատեանին առջեւ դատուին Պողազլեանի մէջ գործուած ոճիրներու պատասխանատու այս երեք անձերը եւ թէ ասոնց մեղսակիցները՝ որոնք պիտի ձերբակալուին: . . .

«Ահաւասիկ այս դատարանը պաշտօն ունի երեւան հանելու Օսմանեան ազգին արդարութիւնը: . . .

«Ճիշդ է որ ամէն պաշտօնեայ ենթակայ է վերին հրամանի մը, բայց պաշտօնեայ մը պէտք է քննէ թէ (բարձրագոյն իշխանութենէ Գ) իրեն տրուած հրամանը որ աստիճան կը համապատասխանէ արդարութեան եւ օրէնքի տրամադրութեան, եւ թէ տրուած այդ հրամանը գործադրելի¹ է:

«Այս սկզբունքէն մեկնելով քանի մը պաշտօնեաներ չեն գործադրած իրենց տրուած հրամանները եւ ընդդիմացած են: . . .

«Ահաւասիկ այս դատարանին առջեւ կան գործուած այս ոճիրներուն պատասխանատու երեք ամբաստանեալներ, որոնք իրենք միայն պատասխանատու չեն, այլ կան ուրիշ ընկերներ եւ գործակիցներ ալ, որոնց պատասխանատուութիւնը ճշդելու զբաղած ենք, բայց արդարութիւնը չուշացնելու համար, հարկ է նախ ասոնց դատավարութիւնը կատարել եւ սահմանել ասոնց պատիժները:»

Քէմալ Պէյ, Թէվֆիգ Պէյ, եւ Ֆէյեազ Պէյ: ¹

1. Մակառարար, թիւ 78, (1894), Եջ. 6 Փետրուար 1919:

Նախ հարկ է ճշդել թէ շատ քիչ էր թիւը այն թուրքերուն, որոնք իսկապէս հակառակ էին Հայերուն կոտորածին, եւ այս տեսակի թուրքերէն դատաւորներ չկային Հայերու կոտորածին պատասխանատուները դատելու համար:

Ոչ մէկ թուրք կրնար եւ ոչ մէկ թուրք կրնայ արդարութեամբ դատել եւ անկողմնակալութեամբ գործադրել արդարութիւնը:

Թուրք կառավարութիւնը անկեղծօրէն չէր ուզեր կոտորածի պատասխանատուները դատել արդարութեամբ, այլ կ'ուզէր, ճշունամի տակ, օտար պետութիւններու, յատկապէս դաշնակիցներու ցոյց տալ թէ թուրքիոյ մէջ դեռ գոյութիւն ունի արդարութիւնը:

Դաշնակիցներն ալ, որոնք կը ճնշէին թուրք պետութեան վրայ իսկապէս համաձայն չէին որ թուրք բոլոր պատասխանատուները դատուին, այլ քանի մը գլխաւորներ պատժուին միայն՝ օրինակ ըլլալու համար:

Պատերազմական Ատեանի այն անդամները որոնք իրապէս կը փափաքէին անկեղծօրէն արդարութեան օրէնքը կիրարկել ոճրագործներու նկատմամբ, վախի եւ սպառնալիքի տակ էին, ինչպէս Զօրավար Քիւրտ Մուսթաֆա Փաշա, որ բանտարկուեցաւ իր յանդրգնութեան համար, որովհետեւ խստօրէն հարցաքննած էր Մովսային Նախարար Աւնի Փաշան, որուն աներհայրը այն ատեն պատերազմական նախարար էր:

Թուրք պատերազմական ատեանի կողմնակալութիւնը անպարտելի էր:

Սակայն ատեանի մէջ գլխաւոր դեր ունեցողը ընդհանուր դատախազն էր. Եողղատի հայասպանութեան դատավարութեան առաջին նիստին իսկ, ան իր երկար ճառով արդարութեան մէջ խառնեց քաղաքականութիւն, փորձեց հաստատել որ Հայերը իրենց ըմբոստական շարժումներով կոտորածի առիթ տուած էին: Ինչ ալ եղած ըլլայ Հայերու բռնած դիրքը, նոյնիսկ եթէ իրական եւ ճշմարիտ ըլլան թուրք բոլոր ամբաստանութիւնները, ասիկա նուազագոյն չափով իսկ չի կրնար արդարացնել թուրք կառավարութեան պատրաստած տեղահանութեան օրէնքը եւ կոտորածի գաղտնի հրամանները:

Նոյն իսկ Մազհար Պէյի նախագահած Հարցաքննիչ Յանձնախումբը 1918 Նոյեմբերի կէսէն մինչեւ 5 Փետրուար 1919, կրցաւ միայն երեք հոգիներու թղթածրարները յանձնել Պատերազմական Ատեանին՝ դատավարութեան համար: Անբացատրելի երկարածը-

գումներ կային գործին մէջ այնպէս որ Պատերազմական Ատեանի նախագահը բողոքեց առ որ անկ էր:

Հարկ է նաեւ նկատել որ միայն թուրք կառավարութիւնն էր որ իրաւասու էր դատելու հայասպանութեան ոճրագործները. ո՛չ Անգլիացիք ո՛չ ալ միւս դաշնակիցները իրաւունք ունէին դատելու զանոնք որքան ատեն որ Դաշնակից Չորս Գլխաւոր Պետերու Սաղաղութեան Վեհաժողովը այդ մասին որոշում տուած չէր. եւ այս որոշումը տրուեցաւ այնքան ուշ եւ այնքան յապաղած՝ որ 1920 Օգոստոս 10ին ստորագրուած Սելուի Դաշնագիրը ծնունդ առնելէ առաջ մեռեալ տառ էր արդէն, որ կը հաստատէր միայն տեսական իրաւունքներ որոնց գործադրութիւնը կախում ունէր դաշնագրի յօդուածներուն վաւերացումէն, եւ հայասպանութեան պատասխանատուները պիտի դատուէին միայն այդ վաւերացումէն ետք. իսկ Սաղաղութեան Դաշինքը ստորագրող Դաշնակից պետութիւնները երբեք միտք չունէին վաւերացնելու Սելուի Դաշինքը, եւ կազմելու Միջազգային Ատեան մը:

Գալով թուրք Պատերազմական Ատեանի գործունէութեան, հարկ է նկատի առնել որ այդ ատեանը իբր արդարութեան ատեան կախում ունէր շատ մը ճնշումներէ. թուրք դահլիճները ստէպ կը փոխուէին եւ ատեանի գործունէութիւնը կը տուժէր կամ կը դանդաղէր այս փոփոխութեանց հետեւանքով: Կար նաեւ ատեանի անձնակազմի փոփոխութեան, հրաժարականի կամ պաշտօնանկութեան խնդիրը որ կը խափանէր ատեանի գործունէութեան յառաջացումը եւ ոճրագործներու դատավարութիւնը կը ձգձգուէր: Քանի մը ամսուան ընթացքին Պատերազմական Ատեանը չորս անգամ փոփոխութեան ենթարկուեցաւ: Նոյն իսկ Քուրտ Մուսթաֆա Փաշա, որ անկեղծօրէն կը փափաքէր արդարութեան օրէնքի տրամադրութիւնները կիրարկել, ստիպուեցաւ Փէյեսամ թուրք թերթին ընել հետեւեալ յայտարարութիւնը.

«Քննիչ Յանձնախումբերը նախապէս նշանակուեցան Արդարութեան, Պատերազմական եւ Ներքին Գործերու նախարարներու կողմէ եւ վաւերացուեցաւ Վարչապետին կամ Մեծ Եպարքոսին կողմէ:

«Մենք Ատեանի անդամներս, իրաւունք չունէինք միջամտելու անոնց իրաւասութեան մէջ: Այս Յանձնախումբերը մեր քննարկութեան կը յանձնէին իրենց քննութեան թղթածրարները, զորոնք մենք աչքէ կ'անցնէինք ընելու համար անհրաժեշտը անմիջապէս:

«Ոչ մէկ թուղթ անտեսուեցաւ Ատեանի կողմէ: Միայն, երբ մենք դատի մը կը սկսէինք (ամբաստանուած Գ) պաշտօնեայի մը դէմ, զեկոյցի եւ թղթակցութեան փոխանակութիւնը կարեւոր յապաղումներ կը պատճառէր եւ կը խափանէր դատավարութեան բընականոն ընթացքը:

«Ատեանի առջեւ կանչուած ամբաստանեալներէն շատեր մեզի չյանձնուեցան եւ կամ յանձնումը ուշացաւ: Միւս կողմէ Պատերազմական նախարարութեան բանտէն ցաւալի փախուստներու հետեւանքով, մենք ստիպուեցանք կարգ մը դատեր յետաձգել եւ յապաղումներ կատարել:

«Շատ լաւ կը յիշեմ որ հրամաններ ղրկեցինք որ քանի մը զինուորական սպաներ Ատեանի առջեւ ներկայանան. այս սպաները Պէոյիք Տէրէի տեղահանութեան խնդրով ամբաստանուած էին: Եւ այս զինուորական ամբաստանեալները երբեք մեզի չյանձնուեցան: Ասիկա փոքր օրինակ մըն է միայն: Շատ աւելի ծանրները կան:»²

Ասոնք Ատեանէ դուրս եղած դժուարութիւններն են. ատեանէ ներս կը կատարուէին շատ մը դաւադրական խաղեր երկարաձգելու համար դատավարութիւնը: Քէմալի եւ Թէվֆիզի թուրք պաշտպան փաստաբանները ամէն նիստի ընթացքին կը գտնէին առարկութիւն մը յետաձգելու համար դատը:

Դատավարութեան առաջին նիստէն իսկ, 5 Փետրուար 1919ին, Քէմալ Պէյի պաշտպան փաստաբան Սաստէտտին Պէյ Արտասովոր Պատերազմական Ատեանի ձեռնհասութիւնը ժխտեց առարկելով թէ Սուլթանական հրովարտակով հաստատուած են Օսմանեան Կայսրութեան տասն զանազան շրջաններու մէջ տասն տարբեր պատերազմական ատեաններ դատելու համար Հայերու տեղահանութեան եւ կոտորածի պատասխանատուները, եւ թէ օրէնքի համաձայն դատավարութիւնը պէտք է տեղի ունենայ հոն ուր ոճիրը գործուած է եւ կամ հոն ուր ոճրագործը ձերբակալուած է, քանի որ Քէմալ Պէյ ամբաստանուած է Պողազլեանի եւ Եոզղատի Հայերու տեղահանութեան եւ կոտորածի մեղադրութեամբ, Քէմալ պէտք է դատուի Եոզղատի պատերազմական ատեանի կողմէ, եւ կամ քանի որ Քէմալ ձերբակալուած է Գոնիայի նահանգին մէջ, Քէմալ դատ-

2. Լա Բընէսան, թիւ 232, Եջ. 31 Օգոստոս 1919:

ուելու է Գոնիայի պատերազմական ատեանին առջեւ:

Պոլսոյ արտասովոր Պատերազմական Ատեանը ձեռնհաս չէ դատելու Քէմալ Պէյը Պոլսոյ մէջ: Ատեանի անդամները ստիպուեցան քաշուիլ խորհրդակցելու համար եւ ապա եկան դատարան հռչակելու համար իրենց արտասովոր իրաւասութիւնը դատելու որեւէ ամբաստանեալ, ուր ալ գործած ըլլայ ոճիրները, ուր ալ ձերբակալուած ըլլայ, առանց ունէ խտրութեան՝ նախարարապետէն մինչեւ ամէնայետին պաշտօնեան իբր սովորական ոճրագործ: ³

Ուրիշ անգամ մը Քէմալի եւ Թէվֆիգի պաշտպան փաստաբանները առարկեցին դարձեալ որ անձնական իրաւունք պաշտպանող հայ փաստաբանները չեն կրնար ատեանի առջեւ պաշտօնապէս իրաւունք պաշտպանել քանի որ անոնք զուրկ են պաշտօնական փոխանորդութենէ:

Այս առարկութիւնները տեղի ունեցան երբ փաստաբան Հայկ Խոսրովեան առաջարկեց մանրամասնութիւններ տալ եւ ներկայացնել նոր վկաներ:

Իր խնդրագիրը կարդացուեցաւ Ատեանի առջեւ. այս առթիւ Թուրք փաստաբանները բողոքեցին թէ Հայկ Խոսրովեան իր պաշտպաններէն օրինաւոր փոխանորդութիւն ստացած չէ եւ չի կրնար նոր վկաներ ներկայացնել Ատեանին:

Ատեանի անդամները առանձնացան իրարու հետ խորհրդակցելու եւ վերադարձան դատարան, ուր կարդացուեցաւ իրենց որոշումը. «Նկատելով որ այս ատեանը լոկ զինուորական Ատեանի մը բնոյթը չունի, որ միայն կը դատէ զինուորական սպաներ եւ կը հաստատէ պատասխանատուութիւնը եւ տրուելիք պատիժները:

«Նկատելով որ այս Ատեանը կազմուած է կիսովին զինուորական սպաներէ եւ կիսովին քաղաքային արդարութեան պաշտօնեաներէ, դատելու համար կոտորածներն ու կողոպուտները, որոնք տեղի ունեցան տեղահանութեան ընթացքին, հետեւաբար այս ատեանի բնոյթը ո՛չ բոլորովին զինուորական է ո՛չ բոլորովին քաղաքային, եւ դատավարութիւն տեղի չ'ունենար միայն զինուորական օրէնքով այլ նաեւ քաղաքային պատժական օրէնքի համաձայն ալ:

«Նկատելով որ այս Ատեանի առջեւ արդէն պաշտօնապէս ընդունուած են անձնական իրաւունքի պաշտպան փաստաբաններ,

որոնց ներկայացուցած վկաները արդէն լսուեցան,

«Ատեանը որոշեց դատավարութիւնը շարունակել ի ներկայութեան անձնական իրաւունքի փաստաբաններու եւ լսել անոնց ներկայացնելիք վկաները որոնք կը գտնուին Պոլիս եւ որոնք պիտի ներկայացուին այս Ատեանին առջեւ, որովհետեւ արդար չէ որ իրաւունքէ զրկուածները չլսենք եւ արգիլենք որ անոնք իրենց դատը ներկայացնեն այս ատեանին եւ արդարութիւն պահանջեն:» ⁴

Թուրք փաստաբաններու ներկայացուցած առարկութիւնը այն էր թէ Հայ փաստաբանները պաշտօնական եւ օրինաւոր փոխանորդութիւն ստացած չէին այն Հայերէն որոնց իրաւունքները կը պաշտպանէին Պատերազմական Ատեանի առջեւ, որովհետեւ պարզապէս անոնց պաշտպանած Հայերը կոտորուած ըլլալով չէին կրնար փոխանորդութիւն ստորագրած ըլլալ: Թուրք փաստաբաններու առարկութիւնը կը նմանէր երկսայրի սուրի մը, որուն հարւածներէն ազատիլ կարելի չէր օրինաւորապէս, որովհետեւ Հայ փաստաբանները իսկապէս կը պաշտպանէին ջարդուած Հայերու իրաւունքները, եւ երկրորդ՝ քանի որ Թուրք Կառավարութեան կերպական հրամանով Հայերը տեղահանուած եւ կոտորուած էին, հայ փաստաբանները Թուրք Կառավարութեան պատկան իշխանութիւններուն չէին կրնար մօտենալ կատարելու համար պաշտօնական փոխանորդագրութեան ձեւակերպութիւնները, որոնք պարզապէս պիտի մերժուին իրենց:

Թուրք Արտասովոր Պատերազմական Ատեանը կանխապէս ընդունելով անձնական իրաւունք պաշտպանող Հայ փաստաբաններու ներկայութիւնը Ատեանի առջեւ առանց պաշտօնական փոխանորդութեան՝ ստեղծած էր նոր իրաւախոհութիւն մը միջազգային իրաւագիտութեան մէջ: Նկատելի է որ Թուրք Կառավարութեան պատկան իշխանութիւններն ալ իրաւունք ունէին Հայ պաշտպան փաստաբաններու մերժելու պաշտօնական վկայագիր ստորագրել կոտորուած հայերու մահը ստուգելու համար, որովհետեւ կարելի չէր իւրաքանչիւր ջարդուած կամ մեռած Հայու մահուան թուականը եւ վայրը հաստատել, ոչ ալ ստուգել զայն ջարդողին ինքնութիւնը: ⁵

3. Ժամանակ, Ճակատամարտ, 6 Փետրուար 1919.

4. Ժամանակ, 16 Փետրուար 1919:

5. Թուրք պաշտօնական վաւերագրերը կը պարունակեն ջարդուելիք հայեր

Անձնական իրաւունքի պաշտպան Հայ փաստաբան Լեւոն Բէմ-
զի Թուրք Արտասովոր Պատերազմական Ատեանին առջեւ ներկա-
յացուց իր տեսակէտը եւ հաստատեց թէ իր ընտանիքէն եւ ազգա-
կաններէն հարիւր տասնեւեօթն հոգիներ կոտորուած էին Անգա-
րայի նահանգին մէջ եւ ինքն իբր վերապրող կը ներկայացնէր
իր ազգականները եւ կը պահանջէր մէկ ու կէս միլիոն թրքական
ոսկի վնասուց հատուցում:

Թուրք Պատերազմական Ատեանի Ընդհանուր Դատախազն ալ
դիտել տուաւ թուրք պաշտպան փաստաբաններուն թէ իրենց առար-
կութիւնը չի կրնար ի զօրու ըլլալ, քանի որ կոտորածէն առաջ Եոզ-
ղատի ութ հազար հայերէն այժմ միայն ութսուն հոգի կ'ապրին:

Թուրք Պատերազմական Արտասովոր Ատեանը 24 Մարտ 1919
ին նիստին ներկայացաւ բոլորովին նոր անձնակազմով: Զօրավար
Նազըմ Փաշա Նախագահ էր, եւ Ատեանի քաղաքային անդամները
փոխարինուած էին զինուորական սպաներով: Նախկին անդամնե-
րէն մնացած էր միայն Զօրավար Քուրտ Մուսթաֆա Փաշա:

Ընդհանուր Դատախազ Յոյն Խարալամպիտիս նիստի ընթաց-
քին պահանջեց որ դատարանէն դուրս ելլեն անձնական իրաւունքի
պաշտպան Հայ փաստաբանները, որովհետեւ Ատեանը այլեւս զուտ
զինուորական հանգամանք ստացած էր եւ թէ ինք իբր ընդհանուր
դատախազ անձամբ կը ստանձնէր անձնական իրաւունքի փաստա-
բաններու գործը եւ պաշտօնը:

Անձնական իրաւունքի պաշտպան Հայ փաստաբան Լեւոն Բէմ-
զի պատասխանեց թէ Թուրք Արտակարգ Պատերազմական Ատեա-
նը երբեք զինուորական բնոյթ չունէր, թէեւ բոլոր անդամները
զինուորական էին, քանի որ այս Ատեանը միայն զինուորական-
ներ չէր որ կը դատէր միայն զինուորական օրէնքի յօդուածներու
տրամադրութեան համաձայն այլ նաեւ քաղաքային օրէնքներու
տրամադրութեան համաձայն կը դատէր նաեւ քաղաքային պաշ-
տօնեաներ եւ թէ զինուորականներուն եւ թէ՛ քաղաքային պաշտօն-
եաներուն կը կիրարկէր Օսմանեան պատժական Օրինագրքի յօդ-
ուածներուն տրամադրութիւնները, որոնք ըլլան զինուորական թէ
քաղաքային պաշտօնեաներ մասնակցած են հայերու տեղահանու-

թեան եւ կոտորածի հասարակաց ոճիրներու գործադրութեան:

Լեւոն Բէմզի յստակօրէն Ատեանի առջեւ պարզեց թէ Սուլթա-
նական հրովարտակը կազմած էր Արտակարգ Պատերազմական
Ատեան մը արտակարգ իրաւասութիւններով դատելու պետական
քաղաքային պաշտօնեաները վարչապետէն սկսեալ մինչեւ կառա-
վարութեան ամէնէն յետին սպասաւորը, ինչպէս նաեւ բանակի
բարձրագոյն սպարապետէն սկսեալ մինչեւ ամէնէն պարզ զինուո-
րը, որոնք որեւէ կերպով պատասխանատու էին հայերու տեղահա-
նութեան եւ կոտորածին:

Թուրք Արտասովոր Պատերազմական Ատեանը նորէն առանձ-
նացաւ եւ երկար խորհրդակցութենէ ետք՝ դատարանին մէջ պաշ-
տօնապէս յայտարարեց թէ անհրաժեշտ չէ անձնական իրաւունքի
պաշտպան Հայ փաստաբաններու ներկայութիւնը դատասրահին մէջ
քանի որ նոյնինքն Ատեանի Ընդհանուր Դատախազը յանձն առած
է անձնական իրաւունքներու պաշտօնական պաշտպանութիւնը:

Փաստաբան Լեւոն Բէմզի բողոքեց եւ Ատեանը լքելով դատա-
րանէն դուրս ելաւ: ⁶

ՀԱՄԱՌՕՏ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ

Թուրք Արտակարգ Պատերազմական Ատեանի արձակած
8 Ապրիլ 1919ի Վճռին

1. ԻՍԼԱՄԱԿԱՆ ՕՐԷՆՔԸ

Օսմանեան Սահմանադրութեան եւ օրէնքի տրամադրութիւն-
ները կը պարտադրեն պաշտպանել եւ պահպանել բոլոր Օսմանեան
հպատակներու կեանքը, ինչքը եւ պատիւը՝ առանց կրօնական եւ
ցեղային խտրութեան:

Այս պէտք է ըլլայ պետական պաշտօնեաներու առաջնակարգ
պարտականութիւնը:

րու անունները, բայց անձանօթ են անոնց մահուան թուականը եւ սպաննու-
թեան վայրը, ինչպէս նաեւ զանոնք ջարդողներու անունները:

6. Փամսուակ, 25 Մարտ 1919, էջ 4, սիւնակ 1 եւ 3.

2. ԽՂՃԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ՝ ՆԱԽ

Պետական պաշտոնեաները, քաղաքային կամ զինուորական, պարտաւոր չեն գործադրել բարձրագոյն հրամանները երբ ասոնք հակառակ են խղճի, օրէնքի եւ սահմանադրութեան:

Պաշտոնեաները պարտաւոր են հրաժարիլ քան գործադրել այդպիսի հրամանները:

3. ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐ ԵՒ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՆԵՐ

Թուրք Կառավարութիւնը հրամայեց տեղահանել եւ աքսորել Հայերը՝ տեղահանել եւ աքսորել կիներ, մանուկներ, անկարներ, եւ նոյնիսկ այրեր՝ առանց կանխորոշ դատապարտութեան հակառակ է խղճի, օրէնքի եւ սահմանադրութեան: Քաղաքային եւ զինուորական ստորակարգ պաշտոնեաները պարտաւոր չէին գործադրել Հայերու տեղահանութեան եւ աքսորի բարձրագոյն հրամանները, ինչպէս արդէն կառավարիչներ եւ զինուորական հրամանատարներ եղան որոնք մերժեցին գործադրել այդպիսի հրամաններ:

4. ԿՈՂՈՊՈՒՏԸ ՀՐԱՄԱՅՈՒԱԾ

Պետական պաշտոնեաներ հրամայած են աքսորուած Հայերու կարաւանները կողոպտել եւ չարագործներ իսկապէս կողոպտած են Հայերը:

5. ԿՈՂՈՊՈՒՏԸ ԿԱՆԽԱՄՏԱԾՈՒԹԻՒՆ՝ ՄԱՀՈՒԱՆ

Պետական պաշտոնեաները «կանխամտածութեամբ» զրկած են տեղահանուած Հայերը ամէն տեսակի ինքնապաշտպանութենէ եւ ապրելու անհրաժեշտ միջոցներէ, եւ այդպէսով դիւրացուցած են ոճրագործութիւնը եւ տեղահանուած Հայերու մահը:

6. ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ԵՂԱԾ Է ԱՆՊԱՏԻԺ

Թուրք պետութիւնը եւ պետական պաշտոնեաները տեղահանուած Հայերու սպանութենէն եւ ոճրագործութենէ ետք ոչ թէ միայն չեն պատժած ոճրագործները այլ եւ զինուորներուն եւ զինայրերուն հրամայած են գործել ոճիրներ:

7. ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ԴԷՄ

Թուրք Արտակարգ Պատերազմական Ատեանը կը հաստատէ թէ տեղահանութեան ընթացքին գործուած ոճիրները հակառակ են մարդկութեան եւ քաղաքակրթութեան:

8. ՀՐԱՄԱՆՆԵՐ՝ ԾԱԾԿԱԳԻՐ ՀԵՌԱԳԻՐՆԵՐՈՎ

Թուրք զինուորական պաշտոնեաները ծածկագիր հեռագիրներով հաղորդած են հրամաններ եւ հրահանգներ՝ Հայերու տեղահանութենէն շատ առաջ եւ անոնց աքսորի ընթացքին:

9. ԿՈՏՈՐԱԾԻ ԹՐՔԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ամբաստանեալները եւ անոնց փաստաբանները ամբաստանած են թէ Հայերը ապստամբած եւ թշնամիի կողմը անցած են, եւ հետեւաբար արժանի են տեղահանութեան եւ կոտորածի, սակայն Պատերազմական Ատեանը կը հաստատէ թէ այս փաստերը չեն կրնար արդարացնել գործուած ոճիրները, եւ կը զանազանէ թէ հայ ժողովուրդի մէկ մասը միայն ապստամբած եւ թշնամիի կողմը անցած է, միւս մասը ապստամբած չէ, ոչ ալ թշնամիի կողմը անցած:

10. ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐՈՒ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ

Կառավարութեան երեք պաշտօնեաներ Քէմալ, Թէվֆիգ եւ Ֆէյեազ իրենց ստորակարգներուն պարտադրած են կատարել իրենց տուած հրամանները՝ տեղահանել, կողոպտել եւ սպաննել Հայերը: Ատեանը կը հաստատէ թէ այս հրամանները կը կրեն կառավարութեան երեք պաշտօնեաներու ստորագրութիւնները, թէ այս վաւերագրերը բացարձակապէս ստոյգ են եւ թէ ամբաստանեալներու եւ անոնց փաստաբաններու առաջ բերած պաշտպանողականները բացարձակապէս անարժէք են:

11. ՊԱՏԺԱԿԱՆ ՕՐԷՆՔԻ 45րդ ՅՕԴՈՒԱԾԸ (ա)

«Մեղսակից ոճրագործներէն ամէն մէկը անկախ ոճրագործ կը նկատուի:» Երկրորդ գաւառին քաղաքային բարձրագոյն պաշտօնեայ Քէմալ Պէյ կազմակերպած է «մարդասպանութիւն, կողոպուտ եւ գողութիւն», իսկ Թէվֆիգ Պէյ «երկրորդական մեղսակից» է Քէմալի:

12. ՊԱՏԺԱԿԱՆ ՕՐԷՆՔԻ 45րդ ՅՕԴՈՒԱԾԸ (բ)

«Եթէ գլխաւոր ոճրագործը մահուան կամ մշտնջենաւոր թիապարտութեան դատապարտուի, անոր մեղսակիցը կը դատապարտուի ժամանակաւոր թիապարտութեան՝ պայմանով որ այս պատիժը տասն տարիէն նուազ չըլլայ:»

13. ՄԱՀԱՎՃԻՌ՝ ՔԷՄԱԼԻ

Պողազլեանի Գայմագամ եւ Երկրորդ Միւթէսարըֆի փոխանորդ Քէմալ պէյ իբր գլխաւոր ոճրագործ՝ Երկրորդ գաւառի Հայերու կոտորածին կը դատապարտուի մահուան, միաձայնութեամբ:

14. ԹԻԱՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՎՃԻՌ

Երկրորդ գլխաւոր գլխաւոր գուշակին հրամանատար Հազարապետ Թէվֆիգ Պէյ իբր մեղսակից Քէմալի՝ կը դատապարտուի տասնեւհինգ տարուան ժամանակաւոր թիապարտութեան:

15. ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՅԵՏԱԶԳՈՒՄ

Երկրորդ գաւառի Հայերու կալուածներուն եւ լքեալ գոյքերու Յանձնախումբի նախագահ Ֆէյեազ Պէյի դատապարտութիւնը եւ դատապարտութիւնը կը յետաձգուին եւ անոր թղթածրարը կը կցուի ուրիշ շատ մը ոճրագործներուն թղթածրարներուն հետ որոնք պիտի դատուին . . . դեռ:

Թուրք Պատերազմական Ատեանը միաձայնութեամբ ընդունած է թէ Քէմալ եւ Թէվֆիգ յանցաւոր են Պողազլեանի, Ագտաղ Մատէնի, Երկրորդ եւ գիւղերու հայ ժողովուրդի տեղահանութեան, աքսորին եւ կոտորածին:

Քէմալ իբր Գայմագամ Պողազլեանի եւ իբր Երկրորդ Միւթէսարըֆի Փոխանորդ, տեղական կառավարութեան ամենաբարձր քաղաքային պաշտօնեան էր, իսկ Թէվֆիգ ալ նոյն գաւառի ոստիկանութեան հրամանատար հազարապետն էր:

Սակայն Պատերազմական Ատեանի թղթածրարի պաշտօնական վաւերագրերը բացարձակապէս կը հաստատեն որ թէ՛ Քէմալ եւ թէ՛ Թէվֆիգ գործած են, իրենց պաշտօնական հանգամանքով, զանազան հազարաւոր ոճիրներ, մարդասպանութիւն, կողոպուտ եւ գողութիւն, եւ հրամայած են եւ իրենց կազմակերպած ստորակարգ ոճրագործներու հրոսախումբերուն գործել տուած են ոճիրներ, մարդասպանութիւն, կողոպուտ, գողութիւն եւ բռնաբարութիւններ:

Երկուքն ալ անձամբ առանձին առանձին սպաննած են եւ սպաննել տուած են հայ այրեր, կիներ, մանուկներ: Քէմալի սպաննածները Թէվֆիգ սպաննած չէ, Թէվֆիգի սպաննածները Քէմալ սպաննած չէ, Քէմալի կողոպտած դրամները ու գոհարեղէնները Թէվֆիգ կողոպտած չէ, Թէվֆիգի կողոպտած դրամներն ու գոհարեղէնները Քէմալ կողոպտած չէ, իսկ Քէմալի յափշտակած կալուածները Թէվֆիգ յափշտակած չէ, եւ Թէվֆիգի յափշտակած կալուածները Քէմալ յափշտակած չէ:

Այս ընդհանուր ոճրագործութեան իրագործումին համար երկուքն ալ համաձայն են, սակայն մէկուն գործած ոճիրը միւսին գործած ոճիրը չէ, տարբեր են ոճիրները, տարբեր են ոճրագործները, տարբեր է գործուած ոճիրին առարկան, ճիշդ է որ համաձայն են ոճիր գործելու, բայց երկուքն ալ գլխաւոր ոճրագործներ են, ոչ թէ մեղսակիցներ: Երկուքին համաձայնութիւնը Հայերուն բնաջնջումն է, երկուքն ալ կը միտին իրարմէ աւելի սպաննել, աւելի կողոպտել, եւ շատ աւելի փառքի տիրանալ, Քէմալ կ'ուզէ միւթէսարիք եւ վալի ըլլալ ջարդելով, Թէվֆիգ կ'ուզէ փաշա ըլլալ:

Նկատել որ Թուրք Պատերազմական Ատեանի դատաւորները կիրարկելով զանազան պատժական օրէնքի յօդուածները արդէն կ'ընդունին թէ «մեղսակից ոճրագործներէն մէկը անկախ ոճրագործ կը նկատուի» եւ թէ «մահուան կը դատապարտուի», ոճիր գործողը կանխամտածութեամբ կամ առանց կանխամտածութեան՝ գործած ըլլայ մարդասպանութիւնը:

Թէվֆիգ մեծագոյն կողոպտիչը եղաւ եւ մեծագոյն մարդասպանը, միայն յիշելու համար, ինքն էր որ այրել տուաւ Գում Գույու հայ գիւղի 150 տունները եւ 700 բնակիչներ, եւ ողջ մնացած՝ օրօրոցի մանուկները ինք անձամբ բզիկ բզիկ ըրաւ եւ բզիկ բզիկ ընել տուաւ: Եւ Պատերազմական Ատեանը հաստատեց այս դէպքերը եւ եղելութիւնները պաշտօնական վաւերագրերով:

Գլխաւոր ոճրագործի եւ մեղսակցի զանազանութիւնը, ինչպէս որ կիրարկուած է 8 Ապրիլ 1919ի վճռագրին մէջ, եթէ կիրարկուի նաեւ պատասխանատուներուն, այն ատեն օրէնքի այս տրամադրութիւնը կրնայ մահէն ազատել բազմահազար ջարդարարներ. այս պարագային միայն Թալէաթ, Էնվէր, Ճէմալ, Իպրահիմ Պէյ, Պէհաէտտին Շաքիր, Բժ. Նազըմ եւ ուրիշ քանի մը հոգիներ մահուան պիտի դատապարտուէին իբր յղացող, կանխամտածող, կազմակերպող եւ հրամայող, իսկ մնացած հազարաւոր պատասխանատուներ պիտի ըլլային միայն մեղսակիցներ: Քէմալ Պէյ ալ, որ իբր գլխաւոր ոճրագործ՝ մահուան դատապարտուեցաւ, պարզապէս մեղսակից պիտի ըլլար այդ գլխաւոր ոճրագործներուն, ինչպէս Քէմալի փաստաբանը արդէն առաջին դատավարութեան ընթացքին առարկած էր թէ իր պաշտպանեալը աննշան պարզ պաշտօնեայ մըն է որ կատարած է բարձրէն ստացած իր հրամանները: Սակայն Պատերազմական Ատեանը զայն կը նկատէ Եոզղատ գաւառի Հայերու

կոտորածի պատասխանատու գլխաւոր եւ առաջին քաղաքային բարձրագոյն պաշտօնեան եւ իշխանաւորը, եւ Թէվֆիգ Պէյ այդ իշխանաւորին ենթակայ ոստիկանապետ մը:

Եոզղատի Հայերու տարագրութեան եւ կոտորածի, ինչպէս նաեւ ինչքերու եւ կալուածներու գրաւումին, պատասխանատու են Սուլթան Բէշատէն սկսեալ մինչեւ ամէնափոքր քաղաքային եւ զինուորական իշխանութեան պաշտօնեաները, ինչպէս նաեւ Միութիւն եւ Յառաջդիմութիւն Կուսակցութեան Կեդրոնական Կոմիտէի անդամները, նոյն Կոմիտէի ներկայացուցիչ Պատասխանատու պատուիրակներն ու քարտուղարները, նոյն Կուսակցութեան Ակումբներու Նախագահները, Նախարարներու Խորհուրդի անդամները, Պետական Խորհուրդի անդամները, Ծերակուտականները եւ Երեսփոխանական Ժողովի անդամները, եւ տեղական քաղաքային եւ զինուորական պաշտօնեաները, որոնք չեն հրաժարած եւ գործադրած են իրենց տրուած հրամանները՝ տարագրութեան եւ կոտորածի:

Եոզղատի դատավարութիւնը սկսաւ 5 Փետրուար 1919ին, իսկ Պոլսոյ Ընդհանուր Ապահովութեան պաշտօնատան կից, Պատերազմական Ատեանի Հարցաքննիչ յանձնախումբը լրացուցած էր արդէն 5 Փետրուար 1919ին՝ Եոզղատի կոտորածին եւ կողոպուտին պատասխանատու ուրիշ տասնեւհինգ ամբաստանեալներու թղթածրարները. այս ամբաստանեալները հսկողութեան տակ բերուած էին Պոլիս յանձնուելու համար Ատեանին՝ իրենց թղթածրարներով միասին: Սակայն Պատերազմական Ատեանը ձգձգեց դատավարութիւնը: ⁸

Պատերազմական Ատեանը կը յայտնէ վճիռին մէջ թէ Ընդհանուր Դատախազը պահանջած էր ամբաստանեալները դատել եւ պատժել Օսմանեան Պատժական Օրինագրքի 56րդ Յօդուածի տրամադրութեան համաձայն: Ատեանը մերժեց ընդհանուր դատախազի առաջարկը եւ կիրարկեց ուրիշ յօդուածներ:

Ահա 56րդ յօդուածի տրամադրութիւնը. «Ան որ կը յանդգնի զինել Օսմանեան Տիրապետութեան բնակիչները իրարու դէմ, զըրբըր եւ դրդել զանոնք փոխադարձ ոճրագործութեան, կամ զանոնք մղել գործադրելու բռնաբարութիւն, կողոպուտ, երկրի աւե-

8. Լա Բրնէսան, թիւ 75, Եջ. 27 Փետրուար 1919:

րածութիւն կամ մարդասպանութեան արարքներ, զանազան վայրերու մէջ, եթէ անկարգութեան արարքը գործադրուի ամբողջապէս կամ անկարգութեան արարքը սկսի գործադրուիլ՝ այնպիսին նմանապէս մահուան կը դատապարտուի:»⁹

Մինչդեռ Ատեանը կիրարկեց նոյն պատժական օրինագրքին 45րդ յօդուածը. «Այն պարագային երբ օրէնքի բացայայտ տրամադրութիւն չկայ, ոճիրի մը միացեալ գործադրողները կը պատժուին իբր մէկ գործադրող նոյն ոճիրին»:

Այս յօդուածը 4 Յունիս 1911ին փոխանակուեցաւ ուրիշ երկար յօդուածով մը, որուն առաջին մասը ունի հետեւեալ տրամադրութիւնները. «Եթէ զանազան անձեր միացած գործեն յանցանք մը կամ ոճիր մը, կամ յանցանք մը կամ ոճիր մը բաղկանայ զանազան արարքներէ եւ գործողութիւններէ ամէն մէկ հրոսակը գործէ այդ արարքներէն մէկը կամ քանի մը հատը, ոճիրը իրագործելու դիտաւորութեամբ, այդ անձերը իրարու որակաւոր մեղսակիցներ կ'ըլլան եւ ամէնքը կը պատժուին իբր մէկ ոճրագործ»:

«Անոնք որոնք յանցանքի մը կամ ոճիրի մը գործադրութեան գործակիցներ են պատիժի ենթակայ կ'ըլլան հետեւեալ կերպով հոն ուր օրէնքի բացայայտութիւն չկայ:

«Մեղմացում կ'ըլլայ հանդէպ անոնց որոնք երկրորդական մեղսակիցներ են. պատիժը կ'ըլլայ ոչ նուազ քան տասն տարուան ժամանակաւոր թիապարտութիւն՝ եթէ արարքը պահանջէ մահուան կամ մշտնջենաւոր թիապարտութիւն:» եւն¹⁰

Պատժական օրինագրքի 170րդ յօդուածը բանաձեւուած է հետեւեալ կերպով. «Եթէ ապացուցուի թէ անձ մը օրէնքի համաձայն մարդասպան է, մահուան վճիռ կը տրուի օրէնքի համաձայն:»

Այս օրէնքն ալ փոխուեցաւ 4 Յունիս 1911ին, եւ եղաւ «Այն անձը որ կանխամտածութեամբ կը սպաննէ անհատ մը կամ կամովին կը սպաննէ իր երկսեռ նախնիքներէն մէկը նոյնիսկ առանց կանխամտածութեան, մահուան վճիռ կը տրուի:»¹¹

Օսմանեան Պետութեան կառավարութիւնները ստէպ հրամայած էին կոտորածներ կատարել, սակայն թուրք օրէնսդիրներ երբեք չէին մտածած բանաձեւել եւ օրէնքի կարգ անցընել կատարուած կոտորածներու հեղինակները պատժելու համար օրէնքի տրամադրութիւն մը որովհետեւ չէին կրնար եւ թոյլատրուած ալ չէին հաստատել այդպիսի օրէնք մը քանի որ կառավարութիւնն էր որ կը հրամայէր կոտորածները եւ կոտորածի գործադրութիւնը: Մէկ խօսքով կոտորածը պետական քաղաքականութիւն էր:

9. THE IMPERIAL OTTOMAN PENAL CODE. A translation from the Turkish text, with latest changes, modifications, additions, etc. by J. A. S. Becknill and H. A. S. Utidjian, London, H. Milford, 1913, XIX.

10. Օսմանեան Պատժագրք, ինչպէս վերել յիշուեցաւ:

11. Նոյն:

ԳԼՈՒԽ ԺԹ.

Կառավարիչ Քէմալ Պէյի Կախաղանը

Պողազլեանի Զօրակայքի հրամանատար Գնդապետ Մուսթաֆա Պէյ 12 Յուլիս 1915ին տեղական կառավարութենէն գրաւորապէս պահանջած էր որ իրեն յանձնուի այն տետրակը որ կը պարունակէր հազար հինգ հարիւրէ աւելի հայ այրերու անուանացանկը: Այս Հայերը կոտորուած էին Պողազլեանի Գայմազամ Քէմալ Պէյի հրամանով: ¹

Գնդապետ Մուսթաֆա պատասխան չստացաւ իր գրաւոր պահանջին:

Նորէն 13 Յուլիս 1915ին պաշտօնական զեկոյցով մը պահանջեց միեւնոյն տետրակը որ պիտի յանձնուէր զինուորական բարձրագոյն իշխանութեան:

Իր պահանջը նորէն մնաց անպատասխան:

Մուսթաֆա 14 Յուլիս 1915ին ծածկագիր հեռագրով մը տեղեկագրեց Կեսարիոյ Տասնեւհինգերորդ Զօրաբաժնի Հրամանատար Հազարապետ Շէհապէտին Պէյի. առարկայօրէն անոր բացատրեց Պողազլեանի քաղաքային իշխանութեան բռնած դիրքը, քանի որ զեռ այդ շրջանին զինուորական իշխանութիւնը պատասխանատու էր Հայերու տեղահանութեան եւ կոտորածին:

Քէմալ պարծանքով շատ անգամներ յայտարարած էր թէ իսկապէս հազար հինգ հարիւր հայեր ջարդուած էին եւ հանրութիւնը ծանօթ էր այս եղելութեան:

Պոլսոյ Թուրք Պատերազմական Ատեանի Նախագահը 22 Փետրուար 1919 թուակիր ծածկագիր հեռագրով Անգարայի իշխանութենէն պահանջեց որ առաջին թղթատարով Պոլիս ղրկուի Պողազլեան գաւառակին եւ շրջականերու մէջ կոտորուած հազար հինգ

հարիւր Հայերու անուանացանկը բովանդակող տետրակը, զոր Պողազլեանի զօրակայքի Գնդապետ Մուսթաֆա պէյ նոյն գաւառակի Գայմազամ Քէմալ Պէյէն խնդրած էր նախ 12 Յուլիս 1915ին եւ ապա 13 Յուլիս 1915ի զեկուցագրով, եւ վերջին անգամ ըլլալով 14 Յուլիս 1915ին ծածկագիր հեռագրով կացութիւնը հաղորդած էր Շէհապէտին պէյի: ²

Հայաստան թրքերէն բնագիր

Հայերէն թարգմանութիւն

Անգարա Վիլայեթինէ թէլկրաֆ.

Հեռագիր Անգարայի Կուսակալութեան.

Պողազլեանի շուպէ ռէիսի Մուսթաֆա Էֆէնտի թարաֆընտան Օնպէշիննի ֆըրգայա շէքիմիշ օլան 18 նումարալը 14 Թէմնուզ 331 թարիխի շիֆրէ մահլուլունտա պէյան օլունան պին պէշեիզտէն ֆազլա մագթուլիննի Էսամիսիննի հավի տէֆթըրիննի Գօլթօրտուտան պիլախազ իլք փօսթա իլէ իրսալը Էհէմմիլթէլէ թիմա օլունուր:

Պողազլեանի Զօրակայքի պետ Մուսթաֆա Էֆէնտի կողմէ տասնեհինգերորդ Զօրաբաժնի բաշուած 18 թուահամար 14 Յուլիս 1915 թուակիր ծածկագրի լուծումէն յայտնի է որ հազար հինգ հարիւրէ աւելի ջարդուածներու անունները կրող տետրակը Զօրաբանակէն առնել եւ առաջին թղթատարով մեզի ղրկել, պարտադիր կերպով կը խնդրենք:

22 Շուպաթ 335.

22 Փետրուար 1919.

Թէհնի Տիվանը Հարպը Էօրֆի Բէիսի: ³

Տեղահանութեան Պատերազմական Ատեանի Նախագահ:

Թուրք Պատերազմական Ատեանի համաձայն Անգարայի զինուորական իշխանութենէն առնուեցաւ եւ Պոլիս ղրկուեցաւ պահանջուած տետրակը: Ատեանի Նախագահին ղրկուեցան նաեւ յարակից վաւերագրերը պաշտօնապէս վաւերացուած պատճէններով:

1. Դ.Ե. Թիւ Մ 266. 22 Մարտ 1919ին Ատեանի առջեւ կարդացուեցաւ հեռագիրը:

2. Դ.Ե. Թիւ Մ 475:

3. Դ.Ե. Թիւ Մ 266:

**Պողազլեանի Զօրակայքի պետ Մուսթաֆա
Էֆէնտիի Հեռագիրը**

Հայաստան թրքերէն բնագիր

Հայերէն թարգմանութիւն

Ծիֆրէ Մահլուլու

Գազա գայմագամլըգուան թէն-
քիլ էտիլէն էրմէնիլէրին մըքտա-
րըլլա պիր գըթա տէֆթէրինն մա-
գամը ալիլէրինէ թագտիմ էտիլմէք
իւզրէ, 12 թէմնուզ 331 թարիխ վէ
377 նումարալը, 13 թահրիրաթլա
թալէպ էտիլիպ, 13 Թէմնուզ 331
վէ 379 նումարալը միւզէքքէրէ ի-
լէտէ թէնքիտ էտիլտիլի հալտէ,
մէգքիւր տէֆթէրին էլէէվմ վու-
րուտ էթմէսի վէ գայմագամը մի-
մահիլէլիհնտէ լիսանէն գասապա
վէ գուրատա 1500 պինպէշէիւզ
միւթէնավիզ էրմէնի գաթլէտիլմիշ
օլտուղանա իֆատէ էթմիշ իսէտէ,
տէֆթէրին էլէէվմ վուրուտ էթմէ-
տիլի:

14 Թէմնուզ 331.

Պողազլըյան Շուպէ Բէիսի՝
Մուսթաֆա: 4

Ծածկագրի լուծում

Բարձրագոյն իշխանութեան
յանձնելու նպատակով գաւառակի
կառավարութեանն խնդրուած էր
Հայերու անունները եւ թիւը պա-
րունակող տետրակ մը, 12 Յուլիս
1915 թուակիր եւ 377 թուահամար
գրութեամբ, ինչպէս նաեւ 13 Յու-
լիս 1915 թուակիր եւ 379 թուահա-
մար յուշագրով հաստատուած էր
խնդրանքը, սակայն մինչեւ այսօր
նոյն տետրակը դեռ չէ հասած եւ
վերոյիշեալ գայմագամը արդէն
բերանացի յայտնած է թէ աւանին
մէջ եւ շրջականները հազար հինգ
հարիւր (1500) Հայեր ջարդուած
են, սակայն դեռ տետրակը դրկը-
ւած չէ մինչեւ այսօր:

14 Յուլիս 1915.

Պողազլեանի Կայքի պետ՝
Մուսթաֆա:

4. Դ.Ե. Թիւ Մ 511 եւ Մ 544:

Շէհապէտտին պէյ Գնդապետ Մուսթաֆայէն ստացաւ ուրիշ
ծածկագիր հեռագիր մը որով 23 Յուլիս 1915ին իրեն կը տեղեկա-
գրէր թէ Քէմալի հրամանով երեք հազար վեց հարիւր վաթսուն
Հայեր ջարդուած են:

Իր կարգին Շէհապէտտին Պէյ նոյն հեռագիրը զրկեց իր զին-
ուորական անմիջական մեծաւորին, Անգարայի Հինգերորդ Զօրա-
բանակի Հրամանատար Միրալայ Խալիլ Բէճալի Պէյի:

Գայմագամ Քէմալի հրամանով մինչեւ 23 Յուլիս 1915 Եոզղատի եւ
Պողազլեանի միջեւ կոտորուած են երեք հազար վեց հարիւր վաթսուն
հայ այրեր:

Հայաստան թրքերէն բնագիր

Հայերէն թարգմանութիւն

Ատէտ 207.

Ծիֆրէ մահլուլը, Անգարա

Գօլթօրտու Գումանտանլըղնա.

Շիմտիլէ գատար Պողազլըյան
գասապարլլա գուրաւը տախի-
լիստէ պուլունան էրմէնիլէրինն
Պողազլըյան Գայմագամը վասի-
թարլլա 3660 իւշպինալթընիւզ-
ալթմըշ էրմէնինի գաթլ էտիլմիշ
օլտուղը շուպէ ռիյասէթինն իշա-
րը թէլկրաֆիսինն աթֆէն մա՛ա-
րուզտուր:

23 Թէմնուզ 331.

Ճըրգա Օնպէշ Գումանտան

Վէքիլի՝

Շէհապէթթին: 5

Թուահամար 207.

Ծածկագրի լուծում

Անգարայի Զօրաբանակի

Հրամանատարին.

Պատի ունիմ ձեզի իմացնելու
թէ զօրակայքի պետին հեռագրա-
լին հաղորդագրութեան համաձայն
մինչեւ հիմա Պողազլեանի գայմա-
գամին հոգատարութեամբ Պո-
ղազլեանի եւ շրջականերու մէջ ե-
րեք հազար վեց հարիւր վաթսուն
(3660) Հայեր կոտորուած են:

23 Յուլիս 1915.

Տասնեհինգերորդ Զօրաբանի

Հրամանատարի Փոխանորդ՝

Շէհապէտտին:

5. Դ.Ե. Թիւ Մ 255:

Անգարայի Զորաբանակի Հրամանատարը Խալիլ Բէճաի Պէյ 16 Յուլիս 1915ին Օսմանեան Ընդհանուր Սպայակոյտի Պետ Զորավար Ֆրից Պոնդարդ Ֆոն Շէլլէնտորֆէն ստացած էր ծածկագիր հեռագիր մը որով հրաման կը տրուէր տեղահանուած Հայերու կեանքը, պատիւը եւ ինչքերը պաշտպանել:

Ի պատասխան այս բարձրագոյն հրամանին, Միրալայ Խալիլ Բէճաի Պէյ Պուլիս զրկեց իր ստացած 23 Յուլիս 1915 թուակիր հեռագիրը նոյնութեամբ եւ խնդրեց որ հրահանգուի ձեռնարկելու անհրաժեշտ միջոցներու: Սակայն Հինգերորդ Զորաբանակի Հրամանատար Խալիլ Բէճաի իր խնդրանքին ոչ մէկ պատասխան ստացաւ, ինչ որ 1919ին Թուրք Պատերազմական Ատեանի առջեւ վկայելով հաստատեց:

Անգարայի Հինգերորդ Զորաբանակի Հրամանատար
Խալիլ Բէճաի Պէյի ծածկագիր հեռագիրը
զրկուած էնվէր Փաշայի:

Հայաստան թրքերէն բնագիր

Հայերէն թարգմանութիւն

Ատէտ 528.

Թուհամար 528.

Ղայէթ մուհիմ վէ մախսուստուր.

Խիստ կարեւոր եւ մասնաշատուկ

Պաշ Գումանտանլըգ վէքալէթիմէ.

Ընդհանուր Հրամանատարի

թիմէ.

Փոխանորդութեան.

(Օնպէշ Ֆըրգատան շիֆրէ

(Տասնէնհինգերորդ Զորաբանակի

մահլուլուլը այնէն պալայէ

ծածկագիր հեռագիրը նոյնու-

չըգարըլանագտըր).

թեամբ տրուած է).

Ճէվապ 16 Թէմմուգ 331 շիֆրէլէ.

Պատասխան՝ 16 Յուլիս 1915

Օնպէշ ֆըրգա Գումանտանլըղը

ծածկագրին:

Վէքալէթիմտէն ալընան թէլկրաֆ-

Տասնէնհինգերորդ Զորաբանակի

նամէ սուրէթի այնէն պալայէ չը-

Հրամանատարի Փոխանորդէն ըս-

գարըլմըշ օլմագլէ, ինսպընըն է-

տացուած ծածկագիր հեռագրի լու-

միր վէ իմպա պուլուրուլմասը:

ծումը նոյնութեամբ ընդօրինա-

24 Թէմմուգ 331.

կուած է: Հաճեցէք անհրաժեշտ

Պէշիմնի Գօլօրտու Գումանտան

հրամանը տալ եւ ընել ինչ որ

Վէքիլի՝

պէտք է: 24 Յուլիս 1915.

Միրալայ Խալիլ Բէճայի: 6

Հինգերորդ Զորաբանակի

Հրամանատարի փոխանորդ՝

Միրալայ Խալիլ Բէճայի:

6. Դ.Ե. Թիւ Մ 541:

Հրամանատար Խալիլ Բէճաի ի զուր սպասեց պատասխանի:

Մինչ Ընդհանուր Սպայակոյտը լուռ կը մնար այսպէս, երիտասարդ թուրքերու Կուսակցութիւնը եւ քաղաքային իշխանութիւնը Գայմազամ Քէմալ Պէյը վարձատրելով անոր պաշտօնը բարձրացուցին. զայն Եոզղատի Միւթէսարըֆի փոխանորդ ըրին:

Եոզղատի Երեսփոխան Շաքիր Պէյ 10 Դեկտեմբեր 1918ին Պուսոյ Հարցաքննիչ Յանձնախումբի Նախագահին առջեւ պաշտօնապէս վկայեց եւ յստակօրէն պարզեց որ Քէմալ գինարբուքի սեղանի մը շուրջ պարծանքով յայտնած է թէ ինք Պողազլեանի Հայերը կոտորելով եւ ջարդել տալով բարձրացած էր Եոզղատի Միւթէսարըֆի փոխանորդութեան. հիմա ալ Եոզղատի Հայերը կոտորելով եւ ջարդել տալով կը յուսար աւելի բարձրանալ Միւթէսարըֆի պաշտօնին եւ կամ վալի ըլլալ:

Հայաստան թրքերէն բնագիր

Հայերէն թարգմանութիւն

Մէկեր պու Քէմալ Պէյ Եօզղաթթան տահա էվվէլ պաշլայան Պողազլըյան գազասը թէհնիր մուամալէսիմնի ինրասը սըրասընտա էրմէնիլերի փէք չօք գաթլէլէմիշ վէ էթթիրմիշ. ճէլլաթ կիպի պիր շախս իմիշ...

Եոզղատ գալէ առաջ Քէմալ Պէյ արագ ընթացք տուած էր Պողազլեան գաւառակի տեղահանութեան գործին եւ տարագրութեան ընթացքին բազմաթիւ Հայեր ջարդած էր եւ ջարդել տուած էր...:

Պողազլըյանտա էրմէնիլերի քէստիմ, Միթէսարըֆ վէքիլի օլտում, պուրատա տէ քէսերիմ, միթէսարըֆ, պէլքէ տէ վալի օլուրում: 7

«Ես Պողազլեանի Հայերը կոտորել տուի եւ բարձրացայ Եոզղատի Միթէսարըֆի փոխանորդութեան. հոս ալ (Եոզղատի մէջ) կը կոտորեմ եւ կը բարձրանամ Միթէսարըֆի կամ վալիի պաշտօնին:

7. Դ.Ե. Թիւ Մ 494:

Քէմալ Պէյի ուղղուած հարցարանին մաս կը կազմէ նաեւ ծածկագիր հեռագիրներու ընթերցումը: Այդ հարցարանէն երեք հարցումներ կը վերաբերին Պողազլեանի Հայերու կոտորածին:

Հայաստան թրքերէն բնագիր

Հայերէն թարգմանութիւն

Քէմալ Պէյէ

Քէմալ Պէյի՝

Սուալ.— Պողազլեան գասապարը գարիշէրտէ պինպէշեիզտէն ֆազլա էրմէնի քաթլետիլմիշ օլտուղունը իֆատէնիզ աթֆէն Պողազլեան Շուպէ Րէիսի Մուսթաֆա Պէյ թարաֆընտան ֆըրքա Գումանտանըղընա պիտիրիլմիշ. Գայսէրի ֆըրքա Գումանտանը տէ Գօլօրտույա պիտիրմիշ:

Հարցում.— Պողազլեանի քաղաքէն եւ գիղերէն հազար հինգ հարիւրէ աւելի Հայեր կոտորուած են. Պողազլեանի Զօրակայքի Պետ Մուսթաֆա Պէյ այս մասին ձեր յայտարարութիւնը տեղեկագրած է Զօրաբաժնի Հրամանատարին. Կեսարիոյ Զօրաբաժնի Հրամանատարն ալ տեղեկագրած է գօրաբանակին:

Պողազլեան Շուպէ Րէիսին 18 նոյնարիւն 14 Թէմնուզ 331 թարիլի, Շէհապէտտին Պէյին 17 նոյնարիւն 14 Թէմնուզ 331 թարիլի շիֆրէլէրի մահուլը օգունսուն:

Թո՛ղ կարդացուին Զօրակայքի Պետի 18 թուահամար 14 Յուլիս 1915 թուակիր հեռագիրը, եւ Շէհապէտտին Պէյի 17 թուահամար 14 Յուլիս 1915 թուակիր հեռագրի լուծումը:

Ճըրքա Գումանտան Պէյին Գօլօրտույա չէքտիլի 169 նոյնարիւն 14 Թէմնուզ 331 թարիլի շիֆրէ մահուլը օգունսուն: ⁸

Թո՛ղ Զօրաբաժնի Հրամանատարին գօրաբանակին դրկած թիւ 169, 14 Յուլիս 1915 թուակիր ծածկագրի լուծումը կարդացուի:

8. Դ.Ե. Թիւ Մ 240:

Պոլսոյ Հարցաքննիչ Յանձնախումբի Նախագահ Մազհար Պէյ կառավարիչ Քէմալ Պէյի ուղղեց նաեւ հետեւեալ հարցումը:

Հայաստան թրքերէն բնագիր

Հայերէն թարգմանութիւն

Քէմալ Պէյէ

Քէմալ Պէյի՝

Սուալ.— 23 Թէմնուզ 331 թարիլի գատար Պողազլեան գասապարը գարիշէրտէ սէնին իւշպին ալթընիզալթմըշ էրմէնի գաթլ էթթիրմիշ օլտուղուն Ճըրքա Գումանտանը Շէհապէտտին Պէյին Գօլօրտույա չէքտիլի 207 նոյնարիւն 23 Թէմնուզ 331 թարիլի շիֆրէ մահուլունտա մուհարրէտիր. իշպու մըգտար աննագ 23 Թէմնուզ գատար գաթլօլունան էրմէնիլէրին մըգտարըտըր: ⁹

Հարցում.— Մինչեւ 23 Յուլիս 1915 թուականը Պողազլեանի քաղաքին եւ գիղերուն մէջ դուն երեք հազար վեց հարիւր վաթսուն Հայեր կոտորել տուած եւ. Զօրաբաժնի Հրամանատար Շէհապէտտին Պէյի կողմէ Զօրաբանակին դրկուած 207 թուահամար եւ 23 Յուլիս 1915 թուակիր ծածկագիր հեռագրի լուծումէն յայտնի է:

Այս թիւը միայն մինչեւ 23 Յուլիս ջարդուած Հայերու թիւն է:

Թուրք պատերազմական Ատեանը տասնեւմէկերորդ նիստը յատկացուց Թուրք պաշտօնական վաւերագրերու ընթերցումին յատկապէս ամբաստանեալներու առջեւ, Քէմալ Պէյի ներկայութեան: Նիստը տեղի ունեցաւ 22 Փետրուար 1919ին:

Ատեանի Նախագահ Հայրէթ Փաշա հարցուց Քէմալ Պէյի. «Քէմալ Պէյ, հիմա պիտի լսես այն հեռագրին ընթերցումը զոր Պողազլեանի զինուորագրութեան պետը դրկած է 14 Յուլիս 1915ին, հաստատելով որ հազար հինգ հարիւր Հայեր կոտորուած են Պողազլեանի եւ շրջակայքի մէջ, մինչ դուն կառավարիչ էիր:

Քէմալ Պէյ.— Չեմ գիտեր:» ¹⁰

Նախագահի հրամանով Ատեանի քարտուղարը կարդաց նաեւ հեռագիրը որ կը հաստատէր թէ Քէմալի հրամանով երեք հազար վեց

9. Դ.Ե. Մ 272:

10. Ճակատամարտ, 23 Փետրուար 1919: Հայ թերթերը սխալմամբ 3160 թիւը տուած են, մինչ թրքերէն բնագրին մէջ տառերով դրուած է 3660, որ է ջարդուածներու թիւը:

հարիւր վաթսուըն Հայեր կոտորուած են մինչեւ 23 Յուլիս 1915:

Քէմալ փորձեց ուրանալ եւ կմկմալ:

